245
U-16

Nro
7/1
486

245 / II-16
1381-ԱՀ

# ՍԱՂՄՈՍ ԴԱՒԹԻ

* * *

Տպագրեալ
Յամի Տն, 1805
'ի Թուին հայոց ՌՄԾԴ :

'Ի ՎԵՆԵՏԻԿ

'Ի Վանս սրբոյն
Ղազարու :

Նուէր

[illegible]

[illegible]

[illegible]

19-12-73



ՄԱՇՏՈՑ - ՄԵՍՐՈՊԵԱՆ
1877
ԱԶԳ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

[illegible]

[illegible]



Դաւիթ մարգարէն :

5114-ակ

# ԳԻՐՔ
## ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՒԹԻ.

1877

### ՍԱՂՄՈՍ. Ա.

1 ԵՐԱՆԵԱԼ Է ԱՅՐ
որ ոչ գնաց 'ի խորհուր-
դըս ամպարշտաց. 'ի ճա-
նապարհի մեղաւորաց
նա ոչ եկաց, և յաթոռս ժանտից
ոչ նստաւ:
2 Այլ յօրէնս տն̃ են կամք նորա.
և յօրէնս նր̃ խորհեսցի նա 'ի տուէ
և 'ի գիշերի. և եղիցի նա ոպ̃ ծառ
որ տնկեալ է 'ի գնացս ջուրց:
3 Որ զպտուղ իւր 'ի ժամու տացէ, և
տերև նր̃ մի' թափեսցի. և զամենայն
զոր ինչ արասցէ, յաջողեսցի նմա:



211-74

Ո՛չ այսպէս են ամպարիշտք, և ո՛չ 4
այսպէս. այլ որպէս փոշի, զոր հո-
սէ հողմ 'ի վ̄ր երեսաց երկրի։
Վասն այսորիկ ո՛չ յարիցեն ամպա- 5
րիշտք 'ի դատաստան, և ո՛չ մեղա-
ւորք 'ի խորհուրդս արդարոց։
Քանզի ճանաչէ Տ̄ր զճանապարհս 6
արդարոց. ճանապարհք ամբարշշ-
տաց կորիցեն։

## ՍԱՂՄՈՍ. Բ։

Անվերնագիր 'ի հեբրայեցւոց, երկոքին
առաջ ընդ մի համար են։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. և 1
ժողովուրդք խորհեցան 'ի սը-
նոտիս։
Յարեան եղեն թագաւորք երկ- 2
րի. և իշխանք ժողովեցան 'ի միա-
սին՝ վ̄ս Տ̄ն և վ̄ս օծելոյ նորա։
Խզեսցուք զկապանս ն̄ց. և ընկեսս 3
ցուք 'ի մէնջ զլուծ նոցա։
Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զղ- 4
նոքօք. և Տ̄ր արհամարհեսցէ զն̄ս։
Յայնժամ խօսեսցի ը̄ն̄ ն̄ս բարկու- 5
թ̄բ իւրով, և սրտմտութ̄բ իւրով խը-
ռովեցուսցէ զնոսա։
Ես կացի թագաւոր 'ի նմանէ, 'ի 6
վե-

վերայ լերին սիովնի սրբոյ նր , 'ի
պատմել ինձ զհրամանս տն :
7 Տր ասաց ցիս՝ որդի իմ ես դու ,
և ես այսօր ծնայ զքեզ :
8 Խնդրեա՛ յինէն , և տաց քեզ զհե-
թանոսս 'ի ժառանգութի , և իշխա-
նութի քեզ ը ամ ծագս երկրի :
9 Հովուեսցես զնոսա գաւազանաւ
երկաթեաւ • և որպէս զանօթ բրու-
տի փշրեսցես զնոսա :
10 Արդ թագաւորք՝ զայս 'ի միտ ա-
ռէք. և խրատեցարո՛ւք ամենեքեան,
որք դատէք զերկիր :
11 Ծառայեցէ՛ք տն երկիւղիւ • և ցըն-
ծացէք առաջի նորա դողութբ :
12 Ընկալարո՛ւք զխրատ նորա՝ զի մի՛
բարկասցի տր • և կորնչիցիք 'ի ճա-
նապարհացն արդարութե :
13 'Ի ժամանակի , յորժամ բորբոքես-
ցի բարկութի նորա :
14 Երանի՜ ամենեցուն՝ որք յուսացեալ
են 'ի տր :

# ՍԱՂՄՈՍ. Գ։

Սաղմոս 'ի դաւիթ. 'ի ժամանակի՝ յոր փա֊ 1
խուցեալ էր նա յերեսաց աբիսողոմայ որդ֊
ւոյ իւրոյ ։

Տէր զի բազում եղեն նեղիչք իմ. 2
և բազումք յարեան 'ի վր̄ իմ։
Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ 3
չիք փրկութիւն սորա առ ա̄ծ իւր ։
Այլ դու տէր օգնական իմ ես, փառք 4
իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ ։
Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի, 5
և լուաւ ինձ 'ի լեռնէ սրբոյ իւրմէ։
Ես ննջեցի և 'ի քուն եղէ. զար֊ 6
թեայ՝ և տէր ընդունելի իմ է ։
Ո՛չ երկեայց ես 'ի բիւրուց զօրաց 7
ժողովրդեան. որք շուրջանակի պատեալ պա֊
շարեալ՝ պահէին զիս ։
Արի՛ տէր՝ և փրկեա՛ զիս աստուած իմ. զի 8
դու հարեր զամենեսեան, որք էին
ընդ իս թշնամութի̄ն 'ի տարապար֊
տուց. և զատամունս մեղաւորաց
փշրեցեր ։
Տեառն է փրկութիւն. 'ի վերայ ժո֊ 9
ղովրդեան քոյ՝ օրհնութիւն քո ։

# ՍԱՂՄՈՍ. Դ:

1 'Ի կատարած օրհնութեան. սաղմոս երգոյ 'ի
դաւթի :

2 Ի կարդալ իմում լուաւ ինձ Ած
ըստ արդարութեան. 'ի նեղութեան
ինձ անդորր արարեր. ողոր-
մեա՛ ինձ և լո՛ւր աղօթից իմոց :
3 Որդի՛ք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խս-
տասիրտք. ընդէ՞ր սիրէք զունայնու-
թիւն, և խնդրէք զստութիւն :
4 Ծաներո՛ւք զի՛ սքանչելիս արար Տր
սրբոյ իւրում. և Տր լուիցէ ինձ
'ի կարդալ իմում՝ առ նա :
5 Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. զոր
ինչ ասէք 'ի սիրտս ձեր, յանկողինս
ձեր զղջացարո՛ւք :
6 Մատուցէ՛ք պատարագ արդարու-
թեան. և յուսացարո՛ւք 'ի Տր :
7 Բազումք ասեն, թէ ո՛ ցուցցէ մեզ
զբարութիւն Տն. նշանեցաւ առ մեզ
լոյս երեսաց քոց. և ետուր ուրա-
խութիւն սրտից մերոց :
8 'Ի պտղոյ ցորենոյ գինւոյ՝ ձիթոյ իւր-
եանց լցուցեր զնոսա :
9 Խաղաղութեամբ յայս և 'ի նոյն ննջես-

ցուք է զարթիցուք · զի դու Տէր մի_
այն առանձին յուսով քո բնակեցու_
ցեր զմեզ ։

## ՍԱՂՄՈՍ · Ե ։

՚Ի չափաւորած վասն վիճակելոյն · սաղմոս 1
՚ի դաւիթ ։

Բանից իմոց ունկն դիր Տէր , և ՚ի 2
միտ առ զաղաղակ իմ ։
Նայեա՛ ՚ի ձայն աղօթից իմոց , Թա_ 3
գաւոր իմ և Ած իմ ։
Ես զքեզ աղաչեմ Տր , ը̃ առաւօտս 4
լուիցես ձայնի իմում · ը̃ առաւօտս
պատրաստ եղէց , յանդիմանն լինել
առ քեզ ։
Ո՛չ թէ դու Ած կամիս զանօրէնու_ 5
թի̃ · և ոչ բնակին առ քեզ չարք ,
և անօրէնք մի՛ բնակեսցին առաջի
աչաց քոց ։
Ատեցեր զայնոսիկ , որ գործեն զա_ 6
նօրէնութի̃ · կորուսանես զամենե_
սեան՝ ոյք խօսին սուտ ։
Զայր արիւնահեղ և զնենգաւոր 7
պիղծ առնես դու Տր · այլ ես ըստ
բազում ողորմութե̃ քում մտից ՚ի
տուն քո · և երկիր պագից ՚ի տա_
ճար սուրբ քո երկիւղիւ̃ քո ։

8 Տէր առաջնորդեա ինձ յարդարու-
թեան քում. վս̃ թշնամեաց իմոց՝ ուղիղ
արա առաջի իմ զճանապարհս քո ։
9 Զի ոչ գոյ՝ ի բերանս նց̃ ճշմարտու-
թիւն. և սիրտք նոցա նանրեալ են ։
10 Որ̃ գերեզման բաց է կոկորդն նց̃. և
լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն ։
11 Դատեա զնոսա ած̃՝ զի անկցին ՝ի
խորհրդոց իւրեանց. ըստ բազում
ամբարշտութեն նոցա մերժեա զնո-
սա. զի դառնացուցին զքեզ ։
12 Ուրախ լիցին ամենեքեան՝ որք յու-
սացեալ են ՝ի քեզ. յաւիտեան ցըն-
ծասցեն. և բնակեսցես դու ՝ի նս̃ ։
13 Պարծեսցին ՝ի քեզ սիրելիք ան-
ուան քո, զի օրհնեսցես դու զար-
դարն. տր̃՝ որպէս զինու հաճութ̃
քո պսակեցեր զն̃մ ։

## ՍԱՂՄՈՍ. Զ։

1 'Ի կատարածն ընդ օրհնութե վասն ութերոր-
դաց. սաղմոս 'ի Դաւիթ ։

2 Տէր մի՛ սրտմտութբ̃ քով յանդի-
մաներ զիս. և մի՛ բարկութբ̃
քով խրատեր զիս ։
3 Ողորմեա ինձ տր̃ զի հիւանդ եմ
եմ. բժշկեա զանձն իմ, զի խռո-

վեցան ոսկերք իմ։
Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու 4
տ̃ր մինչև յերբ։
Դա՛րձ տ̃ր և փրկեա՛ զանձն իմ. 5
կեցո՛ զիս տ̃ր ըստ ողորմութեան քում։
Զի ոչ ո՛ք է որ ՚ի մահու յիշէ զքեզ. կմ̃ 6
՚ի դժոխս խոստովան առնի առ քեզ։
Վաստակեցայ ես ՚ի հեծութե̃ ի֊ 7
մում. լուացի զա̃մ գիշեր զմահիճս
իմ. և արտասուօք իմովք զանկո֊
ղինս իմ թացի։
Խռովեցաւ ՚ի սրտմտութէ̃ ակն իմ. 8
և մաշեցայ ես ՚ի վերայ ամենայն թշ֊
նամեաց իմոց։
՚Ի բաց կացէք յինէն ամենեքեան. 9
որք գործէք զանօրէնութի̃։
Լուաւ տ̃ր ձայնի լալոյ իմոյ. լուաւ 10
տ̃ր աղօթից իմոց. և տ̃ր զխնդրուածս
իմ ընկալաւ։
Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ա֊ 11
մենայն թշնամիք իմ. դարձցին յետս
և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և
խռովեսցին։

# ՍԱՂՄՈՍ. Է.

1 Սաղմոս ՚ի դաւիթ. զոր ասաց տն̃ վասն
բանիցն քուսեայ որդւոյ
յեմենեայ:

2 Տր̃ ած̃ իմ՝ ի քեզ յուսացայ,
փրկեա՛ զիս. և յամ̃ հա-
լածչաց իմոց ապրեցո՛
զիս:

3 Գուցէ երբէք յափշտակիցէ ոպ̃ ա-
ռիւծ զանձն իմ. ո՛չ ոք իցէ որ փրկ-
կիցէ, և ո՛չ այն՝ որ ապրեցուցանիցէ:

4 Տր̃ ած̃ իմ՝ թէ արարի զայս. և թէ
իցեն անօրէնութիւնք ՚ի ձեռս իմ:

5 Թէ հատուցի երբէք այնոցիկ, ոյք
հատուցին ինձ չար. անկեայց և ես
՚ի թշնամեաց իմոց ընդունայն:

6 Հալածեսցէ ապա թշնամին զանձն
իմ. հասցէ և կոխեսցէ յերկիր
զկեանս իմ. և զփառս իմ՝ ՚ի հող
բնակեցուսցէ:

7 Արի՛ տր̃ բարկութե̃ քով. և բա՛րձր
լեր ՚ի սպառել թշնամեաց իմոց:

8 Զարթի՛ր տր̃ ած̃ իմ՝ ՚ի հրամանս
քո՝ զոր պատուիրեցեր. և ժողովք
ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ:

Վասն

Վասն այսորիկ 'ի բարձունս դարձ 9
Տ̅ր. և Տ̅ր դատէ զժողովուրդս իւր։
Դատ արա ինձ Տ̅ր ըստ արդարու_ 10
թե̅ իմում. ըստ անմեղութե̅ իմում՝
որ յիս ։
Կատարեսցին չարիք 'ի վ̅ր մեղաւո_ 11
րաց, և յաջողեսցես դու արդարոյն։
Որ քննէ զսիրտս և զերիկամունս 12
Ա̅ծ արդար. յիրաւի է ինձ օգնութի̅
յԱ̅յ՝ որ ապրեցուցանէ զայնոսիկ,
որք ուղիղ են սրտիւք ։
Ա̅ծ դատաւոր արդար՝ հզօր և եր_ 13
կայնամիտ. որ ոչ ածէ զբարկութի̅
իւր զօրհանապազ։
Ապա թէ ոչ դառնայք առ նա, ըղ_ 14
սուր իւր սրեալ է՝ և զաղեղն իւր
լարեալ. և 'ի նմա պատրաստեալ
է զանօթս մահու. և զնետս իւր
այրեցելովք է գործեալ ։
Ահաւասիկ երկնեաց զանօրէնութի̅. 15
յղացաւ զցաւս, և ծնաւ զանիրա_
ւութի̅ ։
Գուբ՝ զոր փորեաց և պեղեաց, 16
'ի նոյն անկցի 'ի խորխորատ՝ զոր
և գործեաց։
Դարձցին ցաւք 'ի գլուխ նորա. 17
և 'ի վերայ գագաթան նր̅ անօրէնու_
թի̅ք

Թէք իւր իջցէն :

18 Խոստովան եղէց տն ըստ արդա-
րութե նր · սաղմոս ասացից անուան
տն բարձրելոյ :

## ՍԱՂՄՈՍ · Ը :

1 Ի կատարած ի վերայ հնձանացն · սաղմոս
ի դաւթի :

2 Տէր տր մեր · զի՞ սքանչելի է ա-
նուն քո ի վերայ ամ երկրի :
3 Համբարձաւ մեծ վայելչութիւն քո ի
վերոյ քան զերկինս · ի բերանոյ
մանկանց տղայոց ստնդիեցաց հաս-
տատեցեր զօրհնութիւն :
4 Վասն թշնամեաց քոց տր · զի եղծ-
ցի թշնամին և հակառակորդն :
5 Տեսից զերկինս զգործս մատանց
քոց · զլուսին և զաստեղս՝ զորս
դու հաստատեցեր :
6 Ո՞վ է մարդ՝ զի յիշես դու զնա · կամ
որդի մարդոյ · թէ այց ինչ արա-
ցես դու նմա :
7 Փոքր ինչ խոնարհ արարեր զնա
քան զհրեշտակս քո · փառօք և պա-
տուով պսակեցեր զնա · և կացուցեր
զնա ի վր ամ ձեռակերտաց քոց :
8 Զամ ինչ հնազանդ արարեր ի ներ-
քոյ

քոյ ոտից նորա, զխաշն և զարջառ՝
և զամենայն ինչ։

Եւս և զերէ վայրի, զթռչունս երկ- 9
նից և զձկունս ծովու՝ որ շրջին
ընդ շաւիղս ծովու։

Տ՟Ր տ՟ր մեր, զի՞ սքանչելի է ա- 10
նուն քո յամենայն երկրի։

## ՍԱՂՄՈՍ. Թ.

՚Ի կատարած. վասն գաղտ- 1
նեացն որդւոյ։

Գոհացայց զքեն տ՟ր բոլորով 2
սրտիւ իմով. պատմեցից
զա՟մ սքանչելիս քո։

Ուրախ եղէց և ցնծացայց ՚ի քեզ. 3
սաղմոս ասացից անուան քում
բարձրեալ։

՚Ի դառնալ յետս թշնամեաց իմոց, 4
տկարասցին և կորիցեն յերեսաց
քոց։

Արարեր զդատաստանս իմ, և զի- 5
րաւունս. նստար յաթոռ՝ դատա-
ւոր արդարութ՟ե։

Սաստեցեր ՚ի հեթանոսս, և կո- 6
րեաւ ամբարիշտն. զանուանս նոցա
ջնջեցեր յաւիտեանս յաւիտենից.

և

և թշնամւոյն զէն պակասեաց մինչ
իսպառ :
7 Զքաղաքս աւերեցեր. և կորեաւ
յիշատակ նոցա աղաղակաւ :
8 Այն կայ՝ և մնայ յաւիտեան. պատ_
րաստ արար զաթոռ իւր ՚ի դա_
տաստանի :
9 Ինքն դատէ զաշխարհս արդարու_
թբ , և զժողովուրդս իւր ուղղութբ :
10 Եղև տր ապաւէն տնանկի , օգնա_
կան՝ ՚ի նեղութե՛ ՚ի դէպ ժամանակի :
11 Յուսասցին ՚ի քեզ ամենեքեան՝ որք
գիտեն զանուն քո. զի ոչ թողեր
զայնոսիկ , որք խնդրեն զքեզ տր :
12 Սաղմոս ասացէք տն՝ որ բնակեալն
է ՚ի սիոն. պատմեցէք ՚ի հեթանոսս
զգործս նր :
13 ՚Ի խնդրել զարիւնն նց՝ յիշեաց. և
ոչ մոռացաւ տր զաղօթս տնանկաց:
14 Ողորմեա ինձ տր՝ և տես զխոնար_
հութի իմ ՚ի թշնամեաց իմոց. ո
բարձր արարեր զիս ՚ի դրանց ՚ի
մահուանէ :
15 Որպէս պատմեցից զամ օրհնութիս
քո ՚ի դրունս դստեր սիոնի , և ցն_
ծացայց ՚ի փրկութե քում:
16 Ընկլան հեթանոսք յապականութե
իւր.

ZUUՌ-Арм ССР

իւրեանց՝ զոր արարին. և որոգայթ՝
զոր թաքուցին, առցէ զոտս նց̅ ։
Ճանաչի տր̅ յառնել զդատաստանս 17
իւր. և 'ի գործս ձեռաց իւրեանց
կալեացին մեղաւորք ։
Դարձցին մեղաւորք անդրէն 'ի դը- 18
ժոխս. և ամ̅ հեթանոսք որք մոռա-
ցան զա̅ծ ։
Ո՛չ իսպառ մոռանայ տր̅ զաղքատն. 19
համբերութի̅ տնանկաց մի՛ կորիցէ
իսպառ ։
Արի՛ տր̅՝ և մի՛ զօրասցի մարդ. 20
դատեսցին հեթանոսք առաջի քո ։
Կացո՛ տր̅՝ օրէնսդիր 'ի վ̅ր նց̅. և 21
ծանիցեն հեթանոսք՝ թէ մարդիկ են ։
Ընդէ՞ր տր̅՝ կայցես 'ի հեռաստանէ. 22
անտես արարեր 'ի դէպ նեղութեան
ժամանակի ։
Յամբարտաւանել ամբարշտին՝ այրի 23
աղքատն. արգելցին 'ի խորհուրդս
իւրեանց, զոր և խորհեցան ։
Զի գովի մեղաւորն 'ի ցանկութի̅ ան- 24
ձին իւրոյ. որ զրկէն, և նա գովի ։
Խայծ ընդէր բարկացոյց մեղաւորն 25
զա̅ծ, ըստ բազում բարկութե̅ իւ-
րում, թէ ոչ խնդրի ։
Ո՛չ է ա̅ծ առաջի աչաց նր̅. պղծ- 26
են

են Ճանապարհք նր̃ յմ̃ ժամ:
27Բարձեալ են իրաւունք յերեսաց
նորա. 'ի վերայ ա̃մ թշնամեաց իւ-
րոց տիրեսցէ:
28Ասաց 'ի սրտի իւրում, թէ ոչ
սասանեցայց ազգէ յազգ առանց
չարի:
29Անիծիւք և դառնութ̃ք և նենգու-
թ̃ք լի՛ է բերան նր̃. և 'ի ներքոյ
լեզուի նր̃ ցաւք և վաստակք:
30Նստի դարանեալ ընդ մեծամեծս
'ի գաղտնիս՝ սպանանել զամբիծն:
31Աչք նր̃ 'ի տնանկս հային. դարանի
'ի գաղտնիս, որպէս առիւծ 'ի
մորւոջ իւրում:
32Դարանի յափշտակել զաղքատն,
յափշտակել զաղքատն և ձգել զնա:
33Յորոգայթ իւր խոնարհեցուցէ
զնա. խոնարհեսցի և անկցի 'ի տի-
րել իւրում 'ի վերայ տնանկաց:
34Զի ասաց 'ի սրտի իւրում թէ մո-
ռացաւ ա̃ծ. դարձոյց զերեսս իւր՝
զի մի՛ տեսցէ իսպառ:
35Արի՛ տ̃ր ա̃ծ իմ. բա՛րձր եղիցի
ձեռն քո. և մի՛ մոռանար զտնանկս:
36Իսկ՝ ընդէ՞ր բարկացոյց ամբարիշտն
զա̃ծ. զի ասաց 'ի սրտի իւրում թէ
ոչ

ո՛չ քննի ։

Տեսանես դու զնա 'ի ցաւս, և 'ի 37
սրտմտութիւնս հայիս. 'ի քեզ թողեալ
է աղքատն, և որբոյն դու ես օգնա_
կան ։

Խորտակեսցի բազուկ մեղաւորի՝ և 38
չարի. խնդրեսցին մեղք նորա, և
նա մի՛ գտցի ։

Տր թագաւոր յաւիտեանս յաւի_ 39
տենից. կորիցեն հեթանոսք յերկ_
րէ նր ։

Զցանկութի անանկաց լուաւ Տր, 40
'ի պատրաստութի սրտից նոցա հայե_
ցաւ ունկն քո ։

Դատ առնել որբոյն և տնանկի. զի 41
մի՛ ևս յաւելուցու մարդ, 'ի մեծա_
բանել լեռնամ՝ 'ի վր երեսաց երկրի ։

# ՍԱՂՄՈՍ. Ժ ։

'Ի կատարած. սաղմոս
'ի Դաւիթ ։

Ի Տր յուսացայ. որպէս ասի_ 1
ցէք ցանձն իմ, փոխեաց
'ի լերինս որպէս ճնճղուկ ։

Զի ահա մեղաւորք լարեցին զաղե_ 2
ղունս

ղունս իւրեանց• պատրաստ արարին
զնետս 'ի կապարճս, ձգել ընդ խա-
ւար՝ այնոցիկ որք ուղիղ են սրտիւք:
3 Զի զոր դուն շինեցեր՝ նոքա աւե-
րեցին• իսկ արդարն զի՞ արար:
4 Տէր 'ի տաճար սուրբ իւրում• Տէր
յերկինս յաթոռ իւրում:
5 Աչք նորա 'ի տնանկս հային, արտե-
անունք նորա քննեն զորդիս մարդկան:
6 Տէր քննէ զարդարն և զամբարիշտն•
որ սիրէ զմեղս, ատեայ զանձն իւր:
7 Տեղասցէ 'ի վերայ մեղաւորաց որո-
գայթ՝ հուր և ծծումբ• այս մրրիկ՝
բաժին բաժակի նոցա:
8 Արդար է Տէր՝ և զարդարութիւն սի-
րէ• զուղղութիւն տեսանեն երեսք
նորա:

## ՍԱՂՄՈՍ• ԺԱ:

1 'Ի կատարած 'ի վերայ ութերորդին• սաղ-
մոս 'ի Դաւթի:

2 Ապրեցո՛ զիս Տէր՝ զի նուաղեաց
սուրբ• նուաղեցին ճշմարտութիւնք
յորդւոց 'ի մարդկանէ:
3 'Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի
իւրում. շրթամբք նենգաւորօք սըր-

տէ՛ ՚ի սիրտ խօսեցաւ :
Սատակէ տ̃ր զա̃մ շրթունս նենգա- 4
ւորս, և զլեզուս մեծաբանս :
Ովք ասացին . զլեզուս մեր մեծս 5
արասցուք, շրթունք մեր առ մեզ
են, և արդ՝ մեր ո՞վ է տ̃ր :
Վ̃ս տառապանաց աղքատին՝ և հե- 6
ծութեն տնանկին, այժմ յարեայց
ասէ՝ տ̃ր . եդից զփրկութի̃ իմ, և
համարձակեցայց ՚ի նոսա :
Բանք տ̃ն են բանք ս̃բ, ո̃պ զարծաթ 7
ընտրեալ և փորձեալ յերկրէ . սըր-
բեալ և սպարզեալ եօթնպատիկ ՚ի
հողոյ :
Դու տ̃ր պահեսցես զմեզ, և ապրե- 8
ցուցես զմեզ յազգէ յայսմանէ մին-
չև յաւիտեան :
Շուրջանակի ամբարիշտք շրջին . ը̃ս 9
բարձրութե̃ քում մեծ արասցես
դու զորդիս մարդկան :

## ՍԱՂՄՈՍ. ԺԲ :

՚Ի կատարած . սաղմոս ՚ի Դաւթի :

Մինչև յե՞րբ տէր մոռանաս զիս 1
իսպառ . մինչև յե՞րբ դարձու-
ցանես զերեսս քո յինէն :

Մինչև

2 Մինչև յե՞րբ դնեմ զխորհուրդս
յանձն իմ. և ցաւք սրտի իմոյ զա-
ւուրս։
3 Մինչև յե՞րբ բարձրանայ թշնամին
՚ի վերայ իմ. նայեա՛ և լո՛ւր ինձ
Տ̃ր Ա̃ծ իմ։
4 Լո՛յս տուր Տ̃ր աչաց իմոց, զի մի՛
երբէք ննջեցից ՚ի մահ։
5 Մի՛ ասասցէ թշնամին՝ թէ յաղթե-
ցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն,
թէ ես սասանեցայց։
6 Ես յողորմութիւն քո Տ̃ր յուսացայ,
ցնծասցէ սիրտ իմ ՚ի փրկութեան
քում. օրհնեցից զՏ̃ր՝ զբարերարդ
իմ։

## ՍԱՂՄՈՍ. ԺԳ.

՚Ի կատարած. սաղմոս ՚ի Դաւիթ։

1 Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում,
թէ ոչ գոյ Ա̃ծ։
2 Ապականեցան և պղծեցան յանօրէ-
նութեան իւրեանց. և ոչ ո՛ք է՝ որ առ-
նէ զքաղցրութիւն։
3 Տ̃ր յերկնից նայեցաւ յա̃մ որդիս
մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք ի-
մաստուն, որ խնդրիցէ զԱ̃ծ։

Ա-

Ամենքեան խոտորեցան ՚ի միասին՝ 4
և անպիտանացան ։
Ոչ ո՛ք է որ առնէ զքաղցրութիւն . և 5
չէ՛ ոք՝ մինչև ՚ի մի ։
Որպէս ո՛չ ծանիցեն ամենեքեան , 6
որք գործեն զանօրէնութիւն ։
Որք ուտէին զժողովուրդ իմ ո̃պ 7
կերակուր հացի , և առ տ̃ր ո՛չ կար-
դացին ։
Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ո՛չ իցէ 8
երկիւղ . զի տ̃ր է յազգս արդարոց ։
Զխորհուրդ աղքատի յամօթ արա- 9
րին . զի տ̃ր է յոյս նորա ։
Ո՞ տացէ ՚ի սիոնէ զփրկութի̃ իսրայ- 10
էլի . ՚ի դարձուցանել տ̃ն զգերութի̃
ժողովրդեան իւրոյ , ցնծասցէ յա-
կոբ՝ և ուրախ եղիցի իսրայէլ ։

## ՍԱՂՄՈՍ . ԺԴ ։

՚ի կատարած . սաղմոս ՚ի
դաւիթ ։

Տ
ո՛վ կայցէ ՚ի խորանի 1
քում . կամ ո՛վ բնակես-
ցէ ՚ի լեառն սուրբ քո ։
Որ գնայ անբիծ՝ գործէ 2
զարդարութիւն . խօսի զճշմարտութիւն

տ̃ր ՚ի

'ի սրտի իւրում։

3 Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւ-
րով, և չար ընկերի իւրում ոչ արար։
4 Նախատինս 'ի մերձաւորաց ոչ առ-
նու. արհամարհեալ է առաջի ն̃ր
չարագործն։
5 Զերկիւղածս տ̃ն փառաւոր առնէ.
որ երդնու ընկերի իւրում, և ոչ
ստէ։
6 Զարծաթ իւր 'ի վաշխս ոչ տայ,
և կաշառս 'ի վերայ իրաւանց ոչ
առնու. որ զայս արասցէ, նա մի՛
սասանեսցի յաւիտեան։

## ՍԱՂՄՈՍ. ԺԵ։

1 Յարձանագիր Դաւթի։

2 Պահեա՛ զիս տ̃ր իմ, զի ես 'ի քեզ
յուսացայ, ասացի տ̃ն, տ̃ր իմ
ես դու՝ և բարիք իմ ինձ 'ի քէն են։
3 Սրբոց՝ որք են յերկրի քում. սքան-
չելի արարեր զա̃մ կամս իմ 'ի ն̃ս։
4 Յաճախեցին հիւանդութիւնք ն̃ց.
յետ այսորիկ աղա վաղվաղեցին։
5 Ո՛չ ժողովեցայց 'ի ժողովս նոցա յա-
րեանց. և ոչ յիշեցից զանուանս նո-
ցա 'ի շրթունս իմ։

Տէր բաժին ժառանգութեան իմոյ՝ և բա- 6
ժակի իմոյ դու ես, որ այսրէն դար-
ձուցանես զժառանգութիւն իմ յիս ։
Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և 7
ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ ։
Օրհնեցից զՏէր՝ որ իմաստուն արար 8
զիս, մինչ 'ի գիշերի ևս խրատեցին
զիս երիկամունք իմ ։
Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի 9
իմ յամենայն ժամ. զի է ընդ աջմէ իմմէ,
զի մի՛ սասանեցայց ։
Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ. 10
և ցնծացաւ լեզու իմ, ևս և մար-
մին իմ բնակեսցէ յուսով ։
Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս 11
և ոչ տացես սրբոյ քում տեսանել
զապականութիւն ։
Ցուցեր ինձ զճանապարհս կենաց, 12
լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց
քոց 'ի քաղցրութիւն վայելչութեան աջոյ
քո մինչև իսպառ ։

## ՍԱՂՄՈՍ. ԺԶ.

Աղօթք 'ի Դաւիթ ։

Լուր Տէր արդարութեան. և նայեա՛ 1
'ի խնդրուածս իմ. ունկն դիր
աղօ

աղօթից իմոց՝ զի ոչ շրթամբք նեն-
գաւորօք ։
2 Յերեսաց քոց իրաւունք իմ ելցեն,
և աչք իմ տեսցեն զուղղութիւն ։
3 Փորձեցեր զսիրտ իմ, և քննեցեր
՚ի գիշերի ․ փորձեցեր զիս՝ և ոչ գը-
տաւ յիս անիրաւութիւն ։
4 Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս
որդւոց մարդկան ․ վասն բանից
շրթանց քոց ես պահեցից զճանա-
պարհս խիստս ։
5 Հաստատեա՛ զշաւիղս իմ ՚ի ճանա-
պարհի քում․ զի մի՛ գայթագղեսցին
գնացք իմ ։
6 Ես առ քեզ տ̄ր կարդացի՝ զի լուար
ինձ ա̄ծ, խոնարհեցո՛ առ իս զունկն
քո ․ և լո՛ւր բանից իմոց ։
7 Սքանչելի արարեր զողորմութիւնս
քո՝ ո՛ փրկես զայնոսիկ, որք յու-
սացեալ են ՚ի քեզ՝ յայնցանէ, որք
հակառակ կան աջոյ քո ։
8 Պահեա՛ զիս որպէս բիբ ական ․ ընդ-
հովանեաւ թևոց քոց ծածկեսցես
զիս, յերեսաց ամբարշտաց, որք
տառապեցուցին զիս ։
9 Թշնամիք զանձն իմ պաշարեցին ․
և ՚ի ճարպս իւրեանց արգելին ․ և

բերանք նց խօսեցան զամբարտա-
ւանութիւն:
Մերժեցին զիս, և այժմ դարձեալ 10
պատեցան զինև. ուշ եդին խոնար-
հեցուցանել զիս յերկիր:
Համարեցան ինձ որպ առիւծ՝ զի 11
պատրաստ է յորս. և որպ կորիւն առ-
իւծու, զի նստի դարանեալ:
Արի՛ տր՝ ժամանեա՛ նց, և խափա- 12
նեա՛ զնս. փրկեա՛ զանձն իմ յամպա-
րշտաց, ՚ի սրոյ՝ և ՚ի ձեռաց թշ-
նամւոյն:
Տր կորո՛ զնս յերկրէ. բաժանեա՛ և 13
խափանեա՛ զնս ՚ի կեանս իւրեանց:
Գաղտնեօք քովք լցան որովայնք 14
նոցա. յագեցան կերակրովք. և թո-
ղին զմնացուածս տղայոց իւրեանց:
Ես արդարութբ երևեցայց երեսաց 15
քոց. յագեցայց յերևել փառաց
քոց:

# ՍԱՂՄՈՍ. ԺԷ։

1 'Ի կատարած 'ի ձեռայ պատերազմօղնահա-
պահէ ծառայէն Տն Դաւթի . զոր խօսե-
ցաւ ընդ Տն զբանս օրհնութե . յաւուր
յորում փրկեաց զնա Տր 'ի ձեռաց ամ թշ-
նամեաց . և 'ի ձեռաց Սա-
ւուղայ և ասէ ։

2 Սիրեցից զքեզ՝ Տր զօրութիւն
իմ . Տր հաստատիչ իմ, ա-
պաւէն իմ՝ և փրկիչ իմ ։
3 Այ օգնական իմ, և ես յուսամ 'ի
նա . ապաւէն իմ, եղջիւր փրկութե
իմոյ՝ ընդունելի իմ է ։
4 Օրհնելով կարդացից առ Տր , և 'ի
թշնամեաց իմոց ապրեցայց ։
5 Շուրջ եղեն զինև երկունք մահու .
և ուղխք անօրէնութե խռովեցու-
ցին զիս ։
6 Վիշտք դժոխոց պաշարեցին զիս . և
ժամանեցին ինձ որոգայթք մահու ։
7 'Ի նեղութե իմում ես առ Տր կար-
դացի , և առ Ած իմ աղաղակեցի ։
8 Լուաւ ինձ 'ի տաճարէ սրբոյ իւրմէ
ձայնի աղօթից իմոց . և աղաղակ իմ
առաջի նր , մտցէ յականջս նր ։

Խռովեցաւ եւ դողաց երկիր՝ եւ հի֊ 9
մունք լերանց սասանեցան եւ խռո֊
վեցան • զի բարկացաւ ՚ի վ̄ր̄ ն̄ց̄ տծ ։
Եւ ծուխ ՚ի բարկուէ ն̄ր̄ • եւ հուր 10
յերեսաց ն̄ր̄ բորբոքեցաւ , եւ փայ֊
լատակունք հատան ՚ի նմանէ ։
Խոնարհեցոյց զերկինս եւ էջ • եւ մէգ 11
՚ի ներքոյ ոտից նորա ։
Եւ ՚ի քրովբէս եւ թռեաւ • սլացաւ 12
նա ՚ի թեւս հողմոց ։
Եդ զխաւար ՚ի ծածկոյթ իւր , եւ 13
շուրջ զնովաւ են յարկք իւր • եւ
խաւարային ջուրք՝ մինչեւ յամպս
օդոց ։
՚Ի փայլատակել ն̄ր̄ առաջի նոցա , 14
ամպք անցուցին զկարկուտ՝ եւ ըզ֊
կայծակունս հուր ։
Որոտաց տ̄ր̄ յերկնից , եւ բարձ֊ 15
րեալն ետ զձայն իւր ՚ի կարկուտ՝ եւ
՚ի կայծակունս հուր ։
Առաքեաց զնետս իւր՝ եւ ցրուեաց 16
զն̄ս̄ • յաճախեաց զփայլատակունս
իւր՝ եւ խռովեցոյց զնոսա ։
Երեւեցան աղբերք ջուրց • եւ յայտ֊ 17
նեցան հիմունք աշխարհի ։
՚Ի սաստէ քումմէ տ̄ր̄ , եւ ՚ի շնչել 18
հողւոյ բարկութե̄ քո ։

19Առաքեաց 'ի բարձանց՝ եւ ընկալաւ
զիս. ընկալաւ զիս 'ի ջուրց բազմաց:
20Փրկեսցէ զիս տր 'ի թշնամեաց ի-
մոց հզօրաց՝ եւ յատելեաց իմոց, զի
հզօր եղեն քան զիս:
21Կանխեցին ինձ յաւուր չարչարա-
նաց իմոց. եղեւ տր հզօրիչ իմ, եւ
եհան զիս յանդորր, եւ փրկեաց զիս
տր՝ զի կամեցաւ զիս:
22Հատուսցէ ինձ տր ըստ արդա-
րութեան իմում. ըստ ամբծութեան ի-
մում հատուսցէ ինձ:
23Զի պահեցից զճանապարհս տն, եւ
ոչ ամպարշտեցայց յայ իմմէ:
24Ամենայն իրաւունք նր առաջի իմ
են. եւ զարդարութիւն իւր ոչ 'ի բա-
ցէ արար յինէն:
25Եղէց եւ ես ամբիծ ընդ նմա. եւ
զգուշացայց յանօրէնութէ իմմէ:
26Հատուսցէ ինձ տր ըստ արդարու-
թեան իմում. ըստ սրբութեան ձեռաց
իմոց՝ առաջի աչաց իւրոց:
27Ընդ սրբոյն սբ եղիցիս, ընդ առն
ամբծի՝ ամբիծ եղիցիս, ընդ ընտ-
րելոյն՝ ընտրեալ եղիցիս. եւ ընդ-
թիւրսն կործանեսցես:
28Դու զժողովուրդս խոնարհս կե-
ցու.

ցուցանես • և զաչս ամբարտաւա_
նից դու խոնարհեցուցանես ։
Դու լուսաւոր առնես զճրագ իմ • 29
տր̅ ած̅ իմ, լո՛յս արա ինձ 'ի խաւարի։
Քև փրկեցայց 'ի փորձութենէ • աս_ 30
տուծով իմով անցից ը̅ պարիսպս ։
Ած̅ իմ, անբիծ են ճանապարհք 31
նր̅ • և բանք տն̅ ընտրեալ են • և ա_
պաւէն ամ̅ենուն որք յուսան 'ի նա ։
Վասն զի ով է ած̅ բաց 'ի տնէ • 32
կամ ով է ած, բաց յա̅յ մերմէ ։
Ած̅ • որ զգեցուցեր ինձ զօրութիւն • և 33
եդիր յամբծութեան զճանապարհս իմ ։
Հաստատեցեր զոտս իմ որպէս զեղ_ 34
ջերուին • և 'ի վերայ բարձանց կա_
ցուցեր զիս ։
Ուսուցեր զձեռս իմ 'ի պատերազմ • 35
և արարեր զբազուկ իմ ոպ̅ զաղեղն
հաստ • և ետուր ինձ զպաշտպա_
նութիւն փրկութեան քոյ ։
Աջ քո ընկալաւ զիս՝ և խրատ քո 36
կանգնեաց զիս իսպառ • և խրատ
քո ուսուսցէ զիս ։
Ընդարձակեցեր զգնացս իմ 'ի ըս_ 37
տորէ իմմէ • և ո՛չ տկարացան շա_
ւիղք իմ ։
Հալածեցից զթշնամիս իմ՝ և հասից 38
նց̅ •

նջ. և ո՛չ դարձայց 'ի նոցանէ՝ մին֊
չև սպառեցից զնոսա ։
39 Նեղեցից զնոսա , և այլ մի՛ կարա֊
ցեն կեալ . և անկցին 'ի ներքոյ ոտից
իմոց ։
40 Զգեցուցեր ինձ զօրութի՛ 'ի պա֊
տերազմի . զյարուցեալսն 'ի վերայ
իմ՝ ներքոյ իմ արարեր ։
41 Զթշնամիս իմ հալածականս արա֊
րեր . և զատելիս իմ սատակեցեր ։
42 Աղաղակեցին , և ոչ ոք էր որ փրր֊
կէր զնս . կարդացին առ տր , և ո՛չ
լուաւ նց ։
43 Մանրեցից զնոսա ոպ փոշի առաջի
հողմոյ . և ոպ կաւ դուեհաց կոխե֊
ցից զնոսա ։
44 Փրկեսցես զիս տր 'ի հակառակութե֊
ժողովրդոց . և կացուսցես զիս գլուխ
հեթանոսաց ։
45 Ժողովուրդ՝ զոր ո՛չ գիտէի, ծառայ֊
եաց ինձ . և 'ի լսել ականջաց լուաւ
ինձ ։
46 Որդիք օտարաց ստեցին ինձ . որդիք
օտարաց մաշեցան , և կաղացան 'ի
շաւղաց իւրեանց ։
47 Կենդանի է տր և օրհնեալ է ած .
և բարձր եղիցի ած փրկութե՛ իմոյ ։

Ա՛ծ է որ խնդրէ զվրէժ իմ. և հնա_ 48
զանդ առնէ զժողովուրդս ընդ ինև:
Փրկիչ իմ 'ի թշնամեաց իմոց բար_ 49
կացողաց. յայնցանէ՝ որ յարուցեալ
են 'ի վ՛ր իմ՝ բարձր արարեր զիս.
և յառնէ անիրաւէ փրկեցեր զիս:
Վասն այսորիկ՝ խոստովան եղէց 50
քեզ 'ի հեթանոսս. և անուանքում
սաղմոս ասացից:
Մեծ արարեր զփրկութին թագա_ 51
ւորի նորա. առնել ողորմութին ընդ
օծելոյ նր ընդ դաւթի. և ընդ զա_
ւակի նորա ազգէ մինչև յազգ:

Օրհնութին մովսէսի և որդւոցն
Իսրայէլի: Ելից. ԺԵ:

Օրհնեսցուք զՏր, զի փառօք 1
է փառաւորեալ:
Զհեծեալս և զերիվարսըն 2
կէց 'ի ծով. օգնական ընդունելի իմ
Տր, և եղև ինձ 'ի փրկութին:
Սա՛ է իմ Ած՝ և փառաւոր առնեմ 3
զնա. Ած հօր իմոյ և բարձր արա_
րից զնա:

4 Տր խորտակէ զպատերազմունս, և
տր է անուն նր:
5 Զընտիրս արանց՝ և զընտիրս սպառ-
ազինաց. զկառս և զերիվարս, և
զամ զօրուն փարաւոնի ընկեց ՚ի ծով:
6 Ծով ծածկեաց զնս. ընկլան յան-
դունդս խորոց իբրև զկէմս:
7 Աջ քո տր՝ փառաւորեալ է զօրու-
թբ իւրով. և աջ քո տր՝ խորտա-
կեաց զթշնամիս քո:
8 Եւ մեծութբ փառաց քոց մանրե-
ցեր զհակառակորդս քո. առաքե-
ցեր զբարկութն սրտմտութե քոյ.
և եկեր զնոսա որպէս զեղէգն:
9 Հոգւով զօրութե սրտմտութե քո
պատառեցան ջուրք. դիզան կացին
որպէս պարիսպ քարեայ ջուրք ծո-
վուն. և պաղեցան՝ դիզան ալիք
ջուրցն ՚ի մէջ ծովուն:
10 Ասաց թշնամին. ասէ, հալածեցից՝
հասից՝ հարից. բաժանեցից զաւա-
րն՝ և լցուցից ՚ի նոցանէ զանձն իմ:
11 ՚Ի սուր իմ արկից զնս. տիրեսցէ
և բարձրասցի ՚ի վերայ նց աջ իմ:
12 Առաքեցեր զհոգին քո, և ծած-
կեաց զնս ծով. ընկղմեցան, և իջին
որպէս կապար՝ ՚ի ջուրս սաստիկս.

Ո՞

Ո՞նման է քեզ յածս Տր, կամ ով 13
նմանիցի քեզ՝ փառաւորեալդ ՚ի սրբս:
Սքանչելի փառաւորեալ՝ որ առնես 14
զնշանս և զարուեստս. ձգեցեր զաջ-
ձեռն քո, և եկուլ զնս երկիր:
Առաջնորդեցեր արդարութբ ժո- 15
ղովրդեան քո այսմ, զոր և փրկեցեր:
Մխիթարեցեր զնոսա զօրութբ քով 16
՚ի բանակետղ սրբութն քո. լուան
ազգք՝ և բարկացան, և երկունք կա-
լան զբնակիչսն փղշտացւոց:
Յայնժամ փութացան դատաւորքն 17
եդովմայ, և իշխանք մովաբացւոց:
Կալաւ զնոսա դողումն. հալեցան 18
ամ բնակիչք քանանացւոց:
Անկցի ՚ի վերայ նց ահ և դողումն. 19
և ՚ի զօր[illegible]է բազկի քո քարասցին:
Մինչև անցցէ ժողովուրդ քո Տր, 20
մինչև անցցէ ժողովուրդ քո այս՝
զոր ստացար:
Տարեալ անկեսցես զնս ՚ի լերին ժա- 21
ռանգութն քոյ, ՚ի պատրաստութն
բնակութն ժառանգութն քոյ:
Զոր ստացար ՚ի սկզբանէ Տր, ըս- 22
տացար սրբութբ՝ զոր պատրաստե-
ցին ձեռք քո. Տր թագաւոր յաւի-
տեանս յաւիտենից, և ևս:

23 Զի եմուտ փարաւոն կառօք և ե֊
րիվարօք, և ընտիր սպառազինօք 'ի
մէջ ծովուն:

24 Եւ եած 'ի վերայ նր̃ տր̃ զջուրս
ծովուն. և որդիքն իսրայէլի գնա֊
ցին ընդ ցամաք 'ի մէջ ծովուն:

### Մաղթանք:

Քս̃ է իմ ած, և փառաւոր առ֊
նեմ զնա. ած հօր իմոյ՝ և
բարձր արարից զնա:

Մարդասէր տր̃՝ վասն սրբուհւոյ ա֊
նարատ մօր քոյ և կուսի. և վասն խա֊
չի քոյ պատուականի, տր̃ ընկալ զա֊
ղաչանս մեր, և կեցո զմեզ:

### Քարոզ և աղօթք՝ Երանեալ և իբրև նմանոյն:

Վասն 'ի վերուստ խաղաղութե̃՝ և
փրկութե̃ անձանց մերոց՝ զտր̃ ա֊
ղաչեսցուք: տր̃ ողորմեա:

Վասն լսելի լինելոյ առ̃ն ա̃յ ձայնի ա֊
ղաչանաց մերոց՝ զտր̃ աղա:

Վասն քաւիչ և ներող լինելոյ ա̃յ 'ի
վերայ մեղաց մերոց՝ զտր̃ աղա:

Վասն թողլոյ մեզ զա̃մ յանցանս մեր,
զկամայ և զակամայ, զտր̃:

Վասն՝ զի մի՛ է խոստանան գտանիցիմք յաւուրն պատասխանատուութե. զՏր։

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով՝ 'ի քն ննջե-ցին. զՏր աղաչեսցուք ։

Եւ ևս՝ միաբան վասն ճշմարիտ և սբ հաւատոյս մերոյ զՏր ։

Զանձինս մեր՝ և զմիմեանս , Տն Այ ամենակալին յանձն արասցուք ։

Ողորմեա՛ց մեզ Տր Ած մեր ըստ մեծի ողորմութե քում. ասասցուք ամենե-քեան միաբանութեամբ ։

Տր ողորմեա՛. Տր ողորմեա՛. Տր ողոր-մեա՛ ։

Աղօթք ։

ՏՐ տուընջեան՝ և գոյացուցիչ գի-շերոյ. որ արարեր զտիւ 'ի զբօ-սանս բարեգործութե՝ 'ի փրկութի ան-ձանց մերոց , և զգիշեր 'ի հանգիստ քնոյ՝ տկարացեալ բնութե մերոյ։ Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր յօրհնաբանութի՝ ահաւոր և փա-ռաւորեալ անուանդ քում սրբոյ։ Ըն-կալ և այժմ զաղաչանս մեր , և յաջո-ղեա՛ մեզ ուղիղ հաւատով և առաքի-նասէր վարուք 'ի նոյն պաշտօնքս կան-խել միշտ. և նովին կանոնիւս անդա-դար

դար փառաւորել զՀայր և զորդի և
զսուրբ Հոգին․ այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից․ ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Աստուծոյ երկիր պագեսցուք ։

Օ քեզ, որ յամի գթած և մարդա-
սէր տր ես, աղաչեմք Հանապազ,
զի զօրացուսցես զմեզ, որ ըստ օրէ կալ
'ի կարգի կրօնաւորութեան մերում։ Թե-
Թևացո՛ տր զքաղցր լուծքդ՝ զոր եդեր
'ի վերայ մեր․ զի կարասցուք կալ 'ի
պատուիրանի քում, և զՀամձոյսն առ-
նել առաջի քո յամ ժամ, 'ի տուէ և 'ի
գիշերի։ Հրեշտակային երգակցութբ
զքեզ օրհնել՝ զքեզ գովել, և քեզ գո-
Հութիւն և փառս մատուցանել ամենա-
զօր տրութեամբ, այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից․ Ամէն ։

Մաղթանք ։

Սաղմոսիւք և օրհնութբ և երգօք հո-
գևորօք անդադար փառաւորեսցուք
զՀայր և զորդի և զսբ Հոգին, այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից․
ամէն ։

Օրհնեալ տր մեր յս քս․ ամէն ։

Հայր մեր որ ։



Արքայու՟ն եր՟ց:

# ՍԱՂՄՈՍ. ԺԸ:

1 'Ի կատարած . սաղմոս 'ի դաւիթ :

2 ԵՐԿԻՆՔ ՊԱՏՄԵՆ զփառս այ, և զարարածս ձեռաց նր պատմէ հաստատութի :

3 Օր աւուր բղխէ զբան . և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութի :

4 Ո՛չ են բանք՝ և ո՛չ են խօսք , որոց ո՛չ լսին ձայնք նոցա :

5 Ընդ ամ երկիր ել բարբառ նց , մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նց :

6 Ցարեւու եհար զխորան իւր . և ինքն որպէս փեսայ՝ զի ելանէ յառագաստէ իւրմէ . և ցնծայ նա որպ ըսկայ յընթանալ զճանապարհս իւր :

7 'Ի ծագաց երկնից են ելք նորա . և հանգիստ նորա մինչև 'ի ծագս նորուն . և ոչ ոք իցէ , որ թագիցէ

՚ի տապոյ նորա:
Օրէնք տն ամբիծ են՝ և դարձու_ 8
ցանեն զհոգիս. վկայութիւն տն հա_
ւատարիմ է, և իմաստուն առնէ
զտղայս:
Արդարութիւն տն ուղիղ է, և ուրախ 9
առնէ զսիրտս. պատուիրանք տն
լոյս են, և լոյս տան աչաց. երկիւղ
տն սուրբ է, և մնայ յաւիտեան:
Դատաստան տն ճշմարիտ է, և 10
արդար է ՚ի նոյն:
Ցանկալի է նա քան զոսկի՝ և քան 11
զականս պատուականս բազում.
քաղցր է նա քան զմեղու խորիսխ:
Քանզի՝ ծառայ քո պահեսցէ զայս. 12
՚ի պահել՚նմա հատուցումն բազում:
Զյանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ 13
՚ի միտ. ՚ի գաղտնեաց իմոց սուրբ
արա զիս տր. և յօտարէն պահեա՛
զծառայս քո:
Ապա թէ ոչ տիրեսցեն ինձ, յայն_ 14
ժամ անբիծ եղէց՝ և սուրբ եղէց
՚ի մեղաց մեծաց:
Եղիցին քեզ հաճոյ բանք բերանոյ 15
իմոյ, և խորհուրդք սրտի իմոյ առա_
ջի քո յամենայն ժամ. տր օգնական
իմ և փրկիչ իմ:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ․ ԺԹ ։

1 'Ի կատարած · սաղմոս 'ի դաւիթ ։

2 Լուիցէ քեզ տ̃ր յաւուր անձ-
կութեան · օգնական եղիցի քեզ
անուն ա̃յ յակոբայ ։
3 Առաքեսցէ քեզ տ̃ր օգնութի̃ 'ի սըր-
բութենէ իւրմէ · և 'ի սիովնէ ընկալ-
ցի զքեզ ։
4 Յիշեսցէ տ̃ր զա̃մ պատարագս քո · և
զուխտս քո ընդունելի արասցէ ։
5 Տացէ քեզ տ̃ր ը̃ սրտի քում · և զա̃մ
խորհուրդս քո նա կատարեսցէ ։
6 Ցնծասցուք մեք 'ի փրկութե̃ քում ·
յանուն ա̃յ մերոյ՝ մեք մեծք եղիցուք ։
7 Լցուսցէ տ̃ր զա̃մ խնդրուածս քո ·
այժմ ծանեայք, զի կեցոյց տ̃ր զօծ-
եալ իւր ։
8 Լուան սմա յերկնից 'ի սրբութենէ
իւրմէ · 'ի զօրութի̃ փրկութե̃ աջոյ
իւրոյ ։
9 Սոքա կառօք՝ և սոքա երիվարօք ·
այլ մեք զանուն տ̃ն ա̃յ մերոյ կար-
դասցուք ։
10 Սոքա խափանեցան և անկան · մեք
յարեաք՝ և ուղիղ եղաք ։
11 Տ̃ր կեցո՛ զթագաւորն, և լո՛ւր մեզ ·

յաւուր յորում կարդասցուք առ
քեզ:

## ՍԱՂՄՈՍ. Ի:

'Ի կատարած. սաղմոս 'ի Դաւիթ: 1

Տէր 'ի զօրութեան քում ուրախ 2
եղիցի թագաւորն. 'ի փրկութեան
քում ցնծասցէ' յոյժ:
Զցանկութիւն սրտի նորա ետուր նը- 3
մա. և զկամս շրթանց նր̃ ոչ արգե-
լեր 'ի նմանէ:
Ժամանն արարեր զնա յօրհնութիւն 4
քաղցրութեան քո. և եդիր 'ի գլուխ նր̃
պսակ 'ի քարէ պատուականէ:
Կեանս խնդրեաց 'ի քէն. և ետուր
նմա ը̃ երկայն աւուրս' յաւիտեանս
յաւիտենից:
Մեծ են փառք նորա 'ի փրկութեան 6
քում. զփառս և զմեծ վայելչութիւն
դիցես 'ի վերայ նորա:
Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս 7
յաւիտենից. և ուրախ արասցես
զնա յուրախութիւն երեսաց քոց:
Թագաւոր յուսացաւ 'ի Տր̃, յո- 8
ղորմութէ̃ բարձրելոյն նա մի սասա-
նեսցի:

Գտցի

9 Գտցի ձեռն քո ՚ի վերայ թշնամեաց
քոց. եւ աջ քո գտցէ զամենայն ատե_
լիս քո :

10 Դիցես զնոսա որպէս հնոց ՚ի հուր՝
՚ի ժամանակի երեսաց քոց :

11 Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ
զնոսա. եւ հուր կերիցէ զնոսա :

12 Պտուղ նոցա յերկրէ կորիցէ. եւ
զաւակ նոցա յորդւոց ՚ի մարդկանէ :

13 Խոտորեցան ՚ի քէն չարութեամբ. խոր_
հեցան խորհուրդ, զոր ոչ կարաս_
ցեն հաստատել :

14 Արասցես զնոսա հալածեալս. ՚ի
մնացուածս քո պատրաստեսցես
զերեսս նոցա :

15 Բարձր լեր Տէր ՚ի զօրութեան քում.
օրհնեսցուք, եւ սաղմոս ասասցուք
զօրութեանց քոց :

## ՍԱՂՄՈՍ. ԻԱ :

1 ՚Ի կատարած. վասն առաւօտին օգնակա_
նութեան. սաղմոս ՚ի Դաւիթ :

2 Ած ած իմ՝ նայեաց առ իս.
ընդէ՞ր թողեր զիս. հեռի
եղէ ՚ի փրկութենէ իմմէ՝ վասն
բանից յանցանաց իմոց :

ԱԾ իմ, 'ի տուէ կարդացի առ քեզ, 3
և ինձ ոչ լուար. 'ի գիշերի, և ինձ
ոչ անսացեր ։
Դու 'ի սուրբս բնակեալ ես. և 4
գովեալդ իսրայէլի ։
'Ի քեզ յուսացան հարքն մեր. յու֊ 5
սացան 'ի քեզ՝ և փրկեցեր զնոսա ։
Առ քեզ աղաղակեցին, և կեցին. 6
'ի քեզ յուսացան՝ և ոչ ամաչեցին ։
Այլ ես որդն եմ, և ոչ եմ մարդ. 7
նախատինք մարդկան՝ և արհամար֊
հանք ժողովրդոց ։
Ամենեքեան որք տեսանէին զիս՝ ար֊ 8
համարհէին զինև. խօսէին շրթամբք
և շարժէին զգլուխս իւրեանց ։
Յուսացաւ 'ի տր՝ և փրկեսցէ զնա. 9
կեցուսցէ զնա, զի կամի զնա ։
Դու ես՝ որ հաներ զիս յարգանդէ .10
յոյս իմ 'ի ստեանց մօր իմոյ ։
'Ի քեզ անկեալ ես յարգանդէ. յորո֊ 11
վայնէ մօր իմոյ դու ես ած իմ ։
Մի 'ի բացեայ առնիր յինէն՝ զի 12
նեղութիւնք մերձեալ են. և ոչ ոք է՝
որ օգնէ ինձ ։
Շուրջ եղեն զինև զուարակք բա֊ 13
զումք. և ցուլք գէրք պաշարեցին
զիս ։

14 Բացին ՚ի վերայ իմ զբերանս իւր-
եանց, որպէս առիւծ՝ զի մռնչէ եւ յա-
փշտակէ։
15 Եւ որպէս ջուր հեղայ՝ եւ ցրուեցան
ամենայն ոսկերք իմ. եւ եղեւ սիրտ իմ որ-
պէս մոմ հալեալ ՚ի մէջ որովայնի
իմոյ։
16 Չորացաւ որպէս խեցւոյ զօրութիւն
իմ. լեզու իմ ՚ի քիմս իմ կցեցաւ.
եւ ՚ի հող մահու իջուցին զիս։
17 Շուրջ եղեն զինեւ շունք բազումք.
եւ ժողովք չարաց պաշարեցին զիս։
18 Ծակեցին զձեռս իմ՝ եւ զոտս իմ.
եւ թուեցին զամենայն ոսկերս իմ.
նոքա հայեցան եւ տեսին զիս։
19 Բաժանեցին զհանդերձս իմ ՚ի մէջ
իւրեանց. եւ ՚ի վերայ պատմուճանի
իմոյ վիճակս արկանէին։
20 Դու Տէր մի հեռի առներ զօգնութիւն
քո յինէն. եւ Տէր յօգնել ինձ նայեաց։
21 Փրկեա ՚ի սրոյ զանձն իմ, եւ ՚ի ձե-
ռաց շանց՝ զմիամօրութիւն իմ։
22 Փրկեա զիս ՚ի բերանոյ առիւծու,
յեղջերէ միեղջերոյ զխոնարհութիւն
իմ։
23 Պատմեցից զանուն քո եղբարց իմոց.
՚ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։

Երկիւղածք տն օրհնեցէք զտր ·24
ամենայն զաւակն յակոբեան փա-
ռաւոր արասցեն զնա ։
Երկիցէ 'ի տնէ ամ զաւակն իսրայէ-25
լի , զի ոչ արհամարհեաց՝ և ոչ ա-
նարգեաց զաղօթս աղքատիս ,
և ոչ դարձոյց զերեսս իւր յինէն ·
այլ 'ի կարդալ իմում առ նա՝ լը-
ւաւ ինձ ։
Ի քէն է գովութի իմ , յեկեղեցիս 26
մեծս օրհնեցից զքեզ ։
Զուխտս իմ կատարեցից առաջի 27
ամենայն երկիւղածաց նորա ։
Կերիցեն տնանկք՝ և յագեսցին ·28
օրհնեսցեն զտր՝ որ խնդրեն զնա ։
Կեցցեն սիրտք նց յաւիտեանս յա-29
ւիտենից · յիշեսցեն , և դարձցին
առ տր ամենայն ծագք երկրի ։
Երկիր պագցեն նմա ամ տոհմք ա-30
զգաց · զի տն է արքայութի , և նա
տիրէ 'ի վերայ ամ հեթանոսաց ։
Կերան և երկիր պագին նմա ամ 31
պարարտք երկրի · առաջի նր անկ-
ցին ամենեքեան՝ որ իջանեն 'ի հող ։
Անձն իմ նմա կեայ · և զաւակ 32
իմ ծառայեսցէ նմա ։
Պատմեսցի տն ազգ՝ որ գալոցն է ·33
պատ-

պատմեսցեն զարդարութի̃ն նր̃ ժո_
ղովրդեան, որ ծնանելոցն է՝ զոր
արար տ̃ր ։

## ՍԱՂՄՈՍ. ԻԲ ։

1 'Ի կատարած · սաղմոս 'ի դաւիթ ։
2 ՏԷՐ հովուեսցէ զիս · և ինձ ինչ
ոչ պակասեսցի ։
3 'Ի վայրի դալարւոջ՝ անդ բնակե_
ցոյց զիս · և առ ջուրս հանգստեան
սնոյց զիս ։
4 Դարձոյց զանձն իմ առ իս · և ա_
ռաջնորդեաց ինձ 'ի Ճանապարհս
արդարութե̃ վասն անուան իւրոյ ։
5 Թէպէտ և գնայցից ես 'ի մէջ ստուե_
րաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ,
զի դու տ̃ր ընդ իս ես ։
6 Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխի_
թարեսցեն զիս ։
7 Պատրաստ արարեր առաջի իմ սե_
ղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց ։
8 Օծեր իւղով զգլուխ իմ · բաժակ
քո ոտ̃ անապակ արբեցոյց զիս ։
9 Ողորմութի̃ քո տ̃ր զհետ իմ եկեսցէ՝
զա̃մ աւուրս կենաց իմոց · բնակել
ինձ 'ի տան տ̃ն ընդ երկայն աւուրս ։

ՍԱՂ

# ՍԱՂՄՈՍ· ԻԳ·

Սաղմոս 'ի դաւթի · միաշաբաթուն ։ 1

Տեառն է երկիր լրիւ իւրով · աշ- 2
խարհ և ամ՟ բնակիչք նորա ։
Նա ինքն 'ի վերայ ծովու հիմունս 3
արկ նմա · 'ի վ՟ր գետոց պատրաս-
տեաց զնա ։
ՈՎ ելցէ 'ի լեառն Տ՟ն · կամ ո՞վ կաց- 4
ցէ 'ի տեղւոջ սրբութե՟ նորա ։
Որ ս՟բ է ձեռօք և անբիծ սրտիւ , 5
որ ոչ էառ զնանրութիւն յանձն իւր՝
և ոչ երդուաւ նենգութ՟բ ընկերի
իւրում ։
Սա առցէ զօգնութի 'ի Տ՟նէ , ողոր- 6
մութի յա՟յ փրկչէ իւրմէ ։
Այս ազգ է՝ որ խնդրէ զՏ՟ր · խնդ- 7
րէ տեսանել զերեսս ա՟յ յակոբայ ։
Համբարձէք իշխանք զդրունս ձեր 8
'ի վեր · համբարձցին դրունք յաւի-
տենից · և մտցէ Թագաւոր փառաց ։
ՈՎ է սա Թագաւոր փառաց · Տ՟ր 9
հզօր զօրութ՟բ իւրով · Տ՟ր հզօր 'ի
պատերազմի ։
Համբարձէք իշխանք զդրունս ձեր 10
'ի վեր · համբարձցին դրունք յաւի-

տե

տենից, և մտցէ Թագաւոր փառաց:
10 Ո՞վ է սա Թագաւոր փառաց. տէր
զօրութեանց՝ սա ինքն է Թագաւոր
փառաց.

## ՍԱՂՄՈՍ. ԻԴ:

1 'Ի կատարած. սաղմոս 'ի
Դաւիթ:

2 Առ քեզ տէր համբարձի զանձն
իմ. Աստուած իմ՝ 'ի քեզ յուսա-
ցայ, մի ամաչեցից. և
մի ծիծաղեսցին զինև թշնամիք իմ:
3 Ամենեքեան որ համբերեն քեզ՝ մի
ամաչեսցեն. այլ ամաչեսցեն անօ-
րէնք յունայնութե իւրեանց:
4 Զճանապարհս քո տէր ցոյց ինձ, և
զշաւիղս քո ուսո՛ ինձ:
5 Առաջնորդեա՛ ինձ 'ի ճշմարտութե
քում և ուսո՛ զիս, զի դու ես Աստուած
փրկիչ իմ. և ես քեզ համբերէի զօր-
հանապազ:
6 Յիշեա՛ տէր՝ զգթութիւնս քո, և զո-
ղորմութիւնս քո որ են յաւիտենից:
7 Զմեղս մանկութե իմոյ՝ և զանգի-
տութե իմոյ՝ մի յիշեր. այլ յիշեա՛ զիս
տէր ըստ ողորմութե քում՝ վն քաղց-
րութե

րուն քոյ. զի քաղցր և ուղիղ ես։
Վասն այսորիկ օրէնսդէտ առնես 8
զմեղաւորս ՚ի ճանապարհի. առաջ_
նորդես հեզոց ՚ի դատաստանի. և
ուսուցանես հեզոց զճանապարհս
քո։
Ամենայն ճանապարհք տն ողորմու_ 9
թե և ճշմարտութե են այնոցիկ, որ
խնդրեն զուխտ՝ և զվկայութի նր։
Վասն անուան քոյ տր քաւեա՛ զմեղս 10
իմ, զի բազում եղեն. ով է մարդ_
որ երկնչի ՚ի տնէ. օրէնսդէտ առնէ
զնա ՚ի ճանապարհի՝ յոր և հաճեցաւ։
Անձն նորա ՚ի բարութե հանգիցէ. 11
և զաւակ նր ժառանգեսցէ զերկիր։
Զօրութի է տր երկիւղածաց իւ_ 12
րոց. և զկտակարանս իւր ուսուցա_
նէ նց։
Աչք իմ յտմ ժամ առ տր. և նա 13
հանէ յորոգայթէ զոտս իմ։
Նայեա՛ առ իս՝ և ողորմեա՛ ինձ. 14
զի միամօր և աղքատ եմ ես։
Նեղութիք սրտի իմոյ բազում եղեն 15
յոյժ. և ՚ի վշտաց իմոց հա՛ն զիս։
Տե՛ս զխոնարհութի իմ և զվաստակ 16
իմ. և թո՛ղ ինձ զտմ զմեղս իմ։
Տե՛ս զթշնամիսն իմ, զի բազում ե_ 17
ղեն,

շէն, ատելուն՝ զոր 'ի նանիր ատե-
ցին զիս :
20 Պահեա զանձն իմ՝ և փրկեա զիս .
և մի՛ յամօթ եղէց՝ զի յուսացայ 'ի քեզ:
21 Անմեղք և ուղիղք կցորդ եղեն ինձ.
և ես քեզ համբերի . փրկեա Ած
զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա:

## ՍԱՂՄՈՍ. ԻԵ:

1 'Ի կատարած . սաղմոս 'ի Դաւիթ :

2 Դատեա զիս տր՝ զի ես յամ-
բծութեն իմում գնացի , 'ի տր
յուսացայ՝ զի մի՛ եղէց տկարանդ :
3 Փորձեա զիս տր և քննեա զիս . փոր-
ձեա զերիկամունս իմ և զսիրտ իմ:
4 Ողորմութին քո տր առաջի աչաց ի-
մոց . և հաճոյ եղէց ճշմարտութե
քում:
5 Ո՛չ նստայց ես յաժողով նանրաց .
և ընդ անօրէնս ես ո՛չ մտից :
6 Ատեցի ես զժողովս չարաց , և ընդ
ամբարիշտս ես ո՛չ նստայց :
7 Լուացայց սրբութբ զձեռս իմ, և
շուրջ եղէց զսեղանովդ քո տր :
8 Լսել ինձ զձայն օրհնութե քո , և
պատմել զամ սքանչելիս քո :

Տր

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, 9
և զտեղի յարկի փառաց քոց։
Մի կորուսաներ ընդ ամպարշտաս 10
զանձն իմ. և մի ընդ արս արիւնա-
հեղ զկեանս իմ։
Որոց ձեռք իւրեանց յանօրէնութե 11
են. և աջ նոցա լի է կաշառօք։
Ես յամբծութե իմում գնացի. փր- 12
կեա՛ զիս տր և ողորմեա՛ ինձ։
Ոտն իմ կացցէ յուղղութե. յեկե- 13
ղեցիս մեծս օրհնեցից զքեզ։

## ՍԱՂՄՈՍ. ԻԶ։

Սաղմոս Դաւթի. մինչչև օծեալ էր։ 1

Տէր լոյս իմ և կեանք իմ՝ ես 2
յումմէ՞ երկեայց. տր ապա-
ւէն կենաց իմոց՝ ես յումմէ՞ դողա-
ցայց։
'Ի մերձենալ առ իս չարաց ուտել 3
զմարմին իմ. նեղիչք իմ և թշնամիք
իմ, նոքա տկարացան և անկան։
Թէ պատրաստեսցի 'ի վր իմ պատե- 4
րազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. թէ յարի-
ցէ 'ի վր իմ ճակատամարտ, սակայն
և այնուհետև 'ի քեզ տր յուսացայ։
Զմի խնդրեցի 'ի տնէ, և զայն ա- 5
ղա-

զայցեմ. բնակել ինձ ՚ի տան Տն զամ
աւուրս կենաց իմոց ։
6 Տեսանել ինձ զվայելչութիւն Տն. և
հրաման տալ ՚ի տաճարի նր ։
7 Ծածկեաց զիս ՚ի խորանի իւրում
յաւուր չարի. ընդ յարկաւ արար
զիս ՚ի ծածկոյթ խորանի իւրում ։
8 ՚Ի վիմէ բարձր արարեր զիս. և
այժմ բարձր արա զգլուխ իմ ՚ի
վերայ թշնամեաց իմոց ։
9 Շուրջ եղէց՝ և մատուցից ՚ի խո-
րանի նր պատարագ օրհնութե. օրհ-
նեցից և սաղմոս ասացից Տն ։
10 Լո՛ւր Տր ձայնի իմում, զի կարդա-
ցի առ քեզ. ողորմեա՛ ինձ և լո՛ւր
ինձ, զի քեզ ասաց սիրտ իմ. և խնդ-
րեցին երեսք իմ, զերեսս քո Տր
խնդրեցին ։
11 Մի՛ դարձուցաներ զերեսս քո յի-
նէն. և մի՛ խոտորիր բարկութեամբ
՚ի ծառայէ քումմէ ։
12 Օգնական իմ լե՛ր Տր՝ և մի՛ անար-
գեր զիս, և մի՛ թողուր զիս Ած փր-
կիչ իմ ։
13 Հայր իմ և մայր իմ թողին զիս.
Տր իմ ընկալաւ զիս ։
14 Օրէնսդի՛ր արա զիս Տր ՚ի ճան-
պարհի

պարհի քում. և առաջնորդեա՛ ինձ
՚ի շաւիղս քո ուղիղս ։
Վասն թշնամեաց իմոց, մի՛ մատներ 15
զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց ։
Յարեան ՚ի վերայ իմ վկայք մեղաց. 16
և ստեցին ինձ յանօրէնութեան իւրեանց։
Հաւատացի տեսանել զբարութիւ 17
Տ̃ն՝ յերկրին կենդանեաց, համբեր
Տ̃ն և քաջալերեա՛ց. զօրասցի սիրտ
քո՝ և համբեր Տ̃ն ։

## ՍԱՂՄՈՍ. ԻԷ։

Սաղմոս ՚ի Դաւիթ ։

Առ քեզ Տ̃ր կարդացի Ա̃ծ իմ. 1
մի՛ լռեր յինէն, մի՛ երբեք
լռեսցես յինէն. նմա-
նեցայց այնոցիկ՝ որ իջա-
նեն ՚ի գուբ ։
Լո՛ւր Տ̃ր ձայնի խնդրուածաց իմոց՝ 2
յաղաչել ինձ առ քեզ. ՚ի համբառ-
նալ ձեռաց իմոց ՚ի տաճար ս̃բ քո ։
Մի՛ համարիր ը̃ ամպարշտս զանձն 3
իմ. և մի՛ ընդ այնոսիկ՝ որ գործեն
զանօրէնութի̃, կորուսաներ զիս ։
Որք խօսէին զխաղաղութի̃ ը̃ ընկերս 4
իւրեանց. և չարութի̃ է ՚ի սիրտս ն̃ց ։

Տո՛ւր

5 Տո՛ւր նց տր ըստ գործս նց • ըստ
անօրէնութեն գնացից նց, հատո՛ նց ։
6 Ըստ գործոց ձեռաց նց հատո՛ նոցա՝
զհատուցումն նոցա նոցին ։
7 Ո՛չ իմացան նոքա զգործս տն • և ո՛չ
՚ի գործս ձեռաց նր հայեցան • կոր-
ծանեսցես զնս, և այլ մի՛ շինեսցեն ։
8 Օրհնեալ է տր՝ զի լուաւ ձայնի ա-
ղօթից իմոց • տր օգնական իմ և
պաշտպան իմ ։
9 ՚Ի նա յուսացաւ սիրտ իմ • օգնե-
ցաւ և զուարճացաւ մարմին իմ. և ես
կամօք իմովք խոստովան եղէց նմա ։
10 Տր զօրութի ժողովրդեան իւրոյ,
ապաւէն փրկութե օծելոյ իւրոյ ։
11 Փրկեա՛ զժողովուրդ քո • և օրհնեա՛
զժառանգութիւն քո • հովուեա՛ և
բարձրացո՛ զնս մինչև յաւիտեան ։

## ՍԱՂՄՈՍ. ԻԸ ։

1 Սաղմոս ՚ի դաւիթ • օրհնութեան նաւակա-
տեաց տաճարին ։

2 Մատուցէ՛ք տն՝ որդիք այ • մա-
տուցէ՛ք տն զորդիս խոյոց ։
3 Մատուցէ՛ք տն զփառս և զպատիւ •
մատուցէ՛ք տն զփառս անուան նո-
րա •

րա. և երկի՛ր պագէք տն 'ի սրահ
սրբութեն նրա ։
Ձայն տն 'ի վերայ ջուրց՝ և ած փա- 4
ռաց որոտաց. և տր ինքն 'ի վերայ
ջուրց բազմաց ։
Ձայն տն զօրութեց, և ձայն տն 5
մեծվայելչութեց ։
Ձայն տն փշրէ զմայրս. և մանրէ 6
տր զմայրսն լիբանանու ։
Մանրեսցէ զնս որպէս զմատաղ- 7
տուանկն լիբանանու. որ սիրելին է
որպէս զորդիս միեղջերոյ ։
Ձայն տն հատանէ զբոց 'ի հրոյ. 8
ձայն տն շարժէ զանապատն, և խռո-
վեցուցանէ տր զանապատն կադէս ։
Ձայն տն հաստատէ զեղջերուս. և 9
յայտնի առնէ զանտառս ։
'Ի տաճարի նորա ամենեքեան ա- 10
սասցեն զփառս նմա ։
Տր զջրհեղեղս նստուցանէ և զա- 11
ծուցանէ. թագաւորեսցէ տր յա-
ւիտեան ։
Տր զօրութին ժողովրդեան իւրոյ 12
տացէ. և օրհնեսցէ զժողովուրդ
իւր 'ի խաղաղութին ։

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ԽԹ:

1 Սաղմոս օրհնութեան նաւակատեաց տաճարին
՚ի դաւիթ :

2 Բարձր առնեմ զքեզ տր̃, զի ըն-
կալար զիս. և ոչ ուրախ ա-
րարեր զթշնամին իմ յիս :
3 Տր̃ ած̃ իմ՝ կարդացի առ քեզ, և
բժշկեցեր զիս. տր̃ հաներ ՚ի դժո-
խոց զանձն իմ. փրկեցեր զիս յայն-
ցանէ, որ իջանեն ՚ի գուբ :
4 Սաղմոս ասացէք տն̃ սրբք նր̃. խոս-
տովան եղերուք յիշատակի սրբու-
թեան նորա :
5 Սրտմտութի̃ է ՚ի բարկութե̃ նր̃.
և կեանք են ՚ի կամաց նորա :
6 Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. ա-
ռաւօտու եղիցի ուրախութի̃ :
7 Ես ասացի ՚ի բարեկենդանութե̃ ի-
մում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան :
8 Տր̃ ՚ի կամս քո ետուր գեղոյ իմոյ
զօրութի̃, դարձուցեր զերեսս քո
յինէն՝ և ես եղէ խռովեալ :
9 Առ քեզ տր̃ կարդացի, և առ ած̃
իմ աղաչեցի. զինչ օգուտ է քեզ
յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յա-

պա-

պականութիւն։

Միթէ հող խոստովան առնիցի 10
առ քեզ. կամ պատմեսցէ զճշմար-
տութիւն քո։

Լուաւ ինձ Տէր՝ և ողորմեցաւ. և 11
Տէր եղև ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, 12
զերծ յինէն զքուրձ. և ինձ զգեցոյց
զուրախութիւն։

Որպ սաղմոս ասասցեն քեզ փառք իմ. 13
և այլ մի՛ ևս զղջացայց. Տէր Աստուած իմ
յաւիտեան խոստովան եղէց քեզ։

# ՍԱՂՄՈՍ. Լ։

՚Ի կատարած. նահատակութեան գովութեան. 1
սաղմոս ՚ի Դաւիթ։

Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամա- 2
չեցից յաւիտեան. յարդա-
րութեամբ քում փրկեա զիս՝ և
ապրեցո զիս։

Խոնարհեցո առ իս զունկն քո. վաղ- 3
վաղեա կեցուցանել զիս։

Լեր իմ Աստուած պաշտպան՝ և տուն ա- 4
պաւինի ապրեցուցանել զիս. զի հը-
զօրիչ իմ և ապաւէն իմ դու ես։

Վասն անուան քո Տէր առաջնորդե- 5

ցեր ինձ, և սնուցեր զիս. և հան֊
ցես զիս յորոգայթէ յայսմանէ, որ
թաքուցաւ ինձ:
6 Դու ես պաշտպան իմ Տէր, և 'ի
ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ:
7 Փրկեցեր զիս Տէր Աստուած ճշմարտութե֊
քով. ատեցեր զայնոսիկ որ պահեն
զերկիւղ 'ի մնոտիս:
8 Եւ 'ի Տէր յուսացայ. ցնծացայց և
ուրախ եղէց 'ի փրկութե քում:
9 Հայեցար 'ի խոնարհութիւն իմ. և
փրկեցեր 'ի վշտաց զանձն իմ. և ոչ
մատնեցեր զիս 'ի ձեռս նեղչաց իմոց
և կացուցեր յանդորրու զոտս իմ:
10 Ողորմեա ինձ Տէր, զի նեղեալ եմ
ես. խռովեցաւ 'ի սրտմտութէ ակն
իմ՝ անձն իմ և փոր իմ:
11 Պակասեցան 'ի ցաւոց կեանք իմ.
և ամք իմ յոգւոց ելանելոյ:
12 Աղքատացաւ 'ի տկարութէ զօրու֊
թիւն իմ. և ոսկերք իմ խռովեցան:
13 Քան զամ թշնամիս իմ եղէ ես նա֊
խատ դրացեաց իմոց. յոյժ ահ և
երկիւղ ծանօթից իմոց:
14 Ամենեքեան ոյք տեսանէին զիս,
արտաքս փախչէին յինէն:
15 Մոռացեալ եղէ ես ոպ մեռեալ 'ի սըր֊

տէ . և եղէ ես ոպ̃ զանօթ կորուսեալ :
Զի լուայ ես զբամբասանս 'ի բազ_ 16
մաց՝ որ շուրջ էին զինև . 'ի ժողո_
վել նց̃ 'ի միասին , առնուլ զանձն
իմ խորհեցան . այլ ես 'ի քեզ տր̃
յուսացայ :
Ասացի դու ես ած̃ իմ . և 'ի ձեռս 17
քո է ժառանգութի̃ իմ :
Փրկեա՛ զիս 'ի ձեռաց թշնամեաց 18
իմոց , և 'ի հալածչաց իմոց :
Երևեցո՛ զերեսս քո 'ի ծառայս քո . 19
ապրեցո՛ զիս տր̃ ըստ ողորմութե̃
քում . տր̃՝ մի յամօթ եղէց , զի կար_
դացի առ քեզ :
Ամաչեսցեն ամպարիշտք , և իջցեն 20
'ի դժոխս . և համր եղիցին շրթունք
նենգաւորք , որք խօսէին զարդարոյ
զանիրաւութի̃ , յամբարտաւանել
և յանգոսնել իւրեանց :
Որպէս զի բազում է ողորմութի̃ 21
քաղցրութե̃ քո տր̃ . զոր պահեցեր
երկիւղածաց քոց :
Արարեր դու այնոցիկ , որք յուսա_ 22
ցեալ են 'ի քեզ . առաջի որդւոց
մարդկան :
Ամրացուցեր զնս̃ 'ի ծածկոյթ ե_ 23
րեսաց քոց՝ 'ի խռովութե̃ մարդկան :

Ծած_

24 Ծածկեսցես զնոսա 'ի խորանի քում,
'ի հակառակութենէ լեզուաց։
25 Օրհնեալ է Տէր, զի սքանչելիս արար
զողորմութիւն իւր 'ի քաղաքի ամուր։
26 Ես ասացի 'ի զարմանալ իմում,
Թէ ընկեցայ ուրեմն յերեսաց աչաց
քոց։
27 Վասն այսորիկ լուար ձայնի աղօթից
իմոց. յաղաղակել իմում առ քեզ։
28 Սիրեցէ՛ք զՏէր ամենայն սուրբք նորա, զի ըս-
տուգութեան խնդրէ Տէր. եւ հատու-
ցանէ այնոցիկ, որ առաւել առնեն
զամբարտաւանութիւն։
29 Քաջալերեցարո՛ւք՝ եւ զօրասցին
սիրտք ձեր, ամենեքեան՝ որք յու-
սացեալ էք 'ի Տէր։

## ՍԱՂՄՈՍ. ԼԱ։

1 Իմաստութիւն 'ի Դաւթի։

2 Երանի՛, որում թողութիւն եղեւ մե-
ղաց. եւ ծածկեցան ամենայն յան-
ցանք նորա։
3 Երանի՛ առն՝ որում ոչ համարեսցի
Տէր զմեղս նորա. եւ ո՛չ գոյ նենգու-
թիւն 'ի բերան նորա։
4 Լռեցի ես՝ եւ մաշեցան ամենայն ոսկերք

իմ, առ աղաղակել ինձ առ տր զօր-
հանապազ ՚ի տուէ և գիշերի ։
Ծանրեաց ձեռն քո ՚ի վերայ իմ․ 5
դարձայ ՚ի թշուառութիւն զի հարան
յիս փուշք ։
Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէ- 6
նութիս իմ ոչ ծածկեցից ՚ի քէն ։
Ասացի՝ թէ պատմեցից ինձէն ըզ- 7
մեղս իմ․ և դու թողցես զամ ամ-
բարշտութիս մեղաց իմոց ։
Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ 8
քեզ ամ սրք, ՚ի ժամ ընդունելի ։
Բայց միայն ՚ի ջուրցն հեղեղաց բազ- 9
մաց․ որ առ նա ինչ ոչ մերձեսցի ։
Դու ես ապաւէն իմ ՚ի նեղութէ 10
յայսմանէ, որ շուրջ եղեն զինև ։
Ցնծութի իմ, փրկեա զիս յայն- 11
ցանէ՝ որ պաշարեցին զիս ։
Իմաստուն արարից զքեզ՝ և խելա- 12
մուտ ՚ի ճանապարհ, յոր և գնաս-
ցես․ և հաստատեցից ՚ի վերայ քո
զաչս իմ ։
Մի՛ լինիք որպ զձիս և զջորիս․ զի 13
ոչ գոյ ՚ի նո իմաստութի․ ՚ի սանձս
և ՚ի դանդանաւանդս ձմլեսցես ըզ-
կզակսն, որ առ քեզ ինչ ոչ մերձեն-
ցին ։

Բա-

14 Բազում տանջանք են մեղաւորաց ․
բայց որք յուսան 'ի տր՝ ողորմութեն
տն շուրջ եղիցի զնոքօք ։
15 Ուրախ եղերուք և ցնծացէք ար-
դարք , 'ի տր պարծեցարուք ամե-
նեքեան՝ որք ուղիղ էք սրտիւք ։

## ՍԱՂՄՈՍ․ ԼԲ ։

### Սաղմոս 'ի Դաւիթ ։

1 Ցնծացէք արդարք 'ի տր
ուղղոց վայելէ օրհնութի ․
խոստովան եղերուք տն
օրհնութբ տասնաղեաւ
սաղմոսարանաւ սաղմոս ասացէք
նմա ։
2 Օրհնեցէք զտր յօրհնութեն նոր՝ զի
բարի է ․ սաղմոս ասացէք նմա օրհ-
նութբ ։
3 Ուղիղ են պատգամք տեառն ․ և ամ
գործք նորա հաւատովք են ․ և սիրէ
զողորմութի և զիրաւունս տր ։
4 Ողորմութբ տն լի եղև երկիր , և
բանիւ տն երկինք հաստատեցան ․ և
հոգւով բերանոյ նր ամ զօրութիք նց ։
5 Ժողովեաց ովք 'ի տիկս զջուրս ծո-
վու ․ և դնէ 'ի խորս զգանձս իւր ։

Երկիցէ 'ի Տ՟նէ ա՟մ երկիր. և 'ի նմա- 6
նէ դողասցեն ա՟մ բնակիչք աշխարհի։
Զի նա ասաց՝ և եղեն. ինքն հրա- 7
մայեաց՝ և հաստատեցան։
Տ՟ր ցրուէ զխորհուրդս հեթանո- 8
սաց. անարգէ Տ՟ր զխորհուրդս ժո-
ղովրդոց. և արհամարհէ Տ՟ր զխոր-
հուրդս իշխանաց։
Խորհուրդ տեառն յաւիտեան մնայ, 9
խորհուրդք սրտի նորա ազգէ մինչև
յազգ։
Երանի՜ ազգի՝ որոյ Տ՟ր Ա՟ծ օգնա- 10
կան է նմա. ժողովուրդ զոր ընտ-
րեաց 'ի ժառանգութի՟ իւր։
Յերկնից նայեցաւ Տ՟ր յա՟մ որդիս 11
մարդկան. 'ի պատրաստ բնակու-
թենէ իւրմէ հայեցաւ յա՟մ բնակիչս
աշխարհի։
Ո՟ստեղծ առանձին զսիրտս նոցա, 12
'ի միտ առնու զա՟մ գործս ն՟ց։
Ո՛չ թէ 'ի բազում զօրս իւր ապրես- 13
ցի թագաւոր, և ոչ սկայ 'ի բա-
զում զօրութե՟ իւրում.
Սուտ է ձի 'ի փրկութե՟ իւրում. 14
'ի բազում զօրութե՟ իւրում ոչ ապ-
րեցուցանէ զհեծեալն։
Աչք Տ՟ն 'ի վերայ երկիւղածաց 15
իւ.

իւրոց • և ոյք յուսան յողորմութիւն նմա :
16 Փրկել ի մահուանէ զանձինս նոցա •
կերակրել զնս՟ ի սովի :
17 Անձինք մեր համբերեսցեն տն՟ • զի
օգնական և պաշտպան մեր է :
18 Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր ,
և յանուն սբ՟ նորա յուսասցուք :
19 Եղիցի ողորմութիւն քո տր՟ ի վերայ
մեր • ոպ՟ յուսացաք ի քեզ :

## ՍԱՂՄՈՍ • ԼԳ :

1 Սաղմոս Դաւթի • ի ժամանակի յորժամ այ_
լայլեաց զերեսս իւր առաջի Աբիմելե_
քայ • և արձակեաց զնա , և գնաց :

2 Օրհնեցից զտր՟ յամենայն ժամ , յամենայն
ժամ օրհնութիւն նր՟ ի բերան իմ :
3 Ի տր՟ պարծեսցի անձն իմ • լուիցեն
հեզք , և ուրախ եղիցին :
4 Մեծ արարէք զտր՟ ինև • և բարձր ա_
րասցուք զանուն նորա ի միասին :
5 Խնդրեցի ի տնէ և լուաւ ինձ • յամ՟
նեղութեանց իմոց փրկեաց զիս :
6 Մատիք առ տր՟՝ և առէք զլոյս • և
երեսք ձեր մի ամաչեսցեն :
7 Այս աղքատ կարդաց առ տր՟ , և
տր՟ լուաւ սմա • յամ՟ նեղութեանց սորա
փրկ-

փրկեաց զնա ։
Բանակ հրեշտակաց տն շուրջ է զեր 8
կիւղածովք իւրովք, և պահէ զնս ։
Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր 9
է տր ․ երանեալ է այր՝ որ յուսայ
՚ի նա ։
Երկերուք ՚ի տնէ ամենայն սուրբք 10
նորա ․ զի ոչինչ է պակասութիւն եր_
կիւղածաց նորա ։
Մեծամեծք աղքատացան և քաղ_ 11
ցեան ․ բայց որք խնդրեն զտր, մի
պակասեսցէ ՚ի նոցանէ ամ բարութի ։
Եկա՛յք որդեակք իմ՝ և լուարուք 12
ինձ ․ և զերկիւղ տն ուսուցից ձեզ ։
Ո՞վ է մարդ՝ որ կամի զկեանս, սի_ 13
րէ զաւուրս իւր տեսանել ՚ի բա_
րութե ։
Լուցո՛ զլեզու քո ՚ի չարութէ ․ և 14
շրթունս քո մի խօսեսցին զնենգութի ։
Խոտորեա՛ ՚ի չարէ՝ և արա՛ զբարի ․ 15
խնդրեա՛ զխաղաղութի, և երթ զհետ
նորա ։
Աչք տն ՚ի վերայ արդարոց, և ա_ 16
կանջք նորա ՚ի վերայ աղօթից նց ։
Երեսք տն ՚ի վերայ չարագործաց ․ 17
սատակել յերկրէ զյիշատակս նց ։
Կարդացին արդարքն առ տր, և 18
տր

Տ̃ր լուաւ նոցա . յամենայն նեղութե̃
նոցա փրկեաց զնոսա ։
19 Մերձ է Տ̃ր առ այնոսիկ՝ որ մաշ-
շեալ են սրտիւք . և զխոնարհս հոգ-
ւով կեցուցանէ ։
20 Բազում նեղութիւնք են արդարոց .
յամենայնէ փրկէ զն̃ս Տ̃ր . և պահէ
զամենայն ոսկերս նոցա . և մի 'ի նո-
ցանէ մի՛ փշրեսցի ։
21 Մահ մեղաւորին չար է . բայց որ
ատեայ զարդարն , զղջասցի ։
22 Փրկէ Տ̃ր զանձինս ծառայից իւրոց .
մի՛ զղջասցին ամենեքեան՝ որք յու-
սացեալ են 'ի նա ։

## ՍԱՂՄՈՍ . ԼԴ .

1 'Ի կատարած . սաղմոս 'ի Դաւթի ։

2 Դատեա՛ Տ̃ր զայնոսիկ՝ որք
դատին զիս . մարտի՛ր ընդ
այնոսիկ , որ մարտնչին ը̃ իս ։
3 Ա՛ռ զզէն և զասպար քո , և արի՛
յօգնել ինձ . հա՛ն զսուր քո ընդ-
դէմ հալածչաց իմոց . արգե՛լ զնոսա .
և ասա՛ դու ցանձն իմ , թէ փրկութ̃
քո ես եմ ։
4 Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ որք խնդ-
րեն

րէին զանձն իմ. դարձցին յետս եւ
ամաչեսցեն, որ խորհէին ինձ չար։
Եղիցին նոքա ո՟պ փոշի առաջի հող- 5
մոյ. եւ հրեշտակ Տ՟ն նեղեսցէ զն՟ս։
Եղիցին ճանապարհք ն՟ց 'ի խաւար 6
եւ 'ի գայթագղութիւն, եւ հրեշտակ
Տ՟ն հալածեսցէ զն՟ս։
'Ի նանիր թագուցին ինձ որոգայթ 7
յապականութե՟ իւրեանց, եւ 'ի նա-
նիր նախատեցին զանձն իմ։
Հասցէ 'ի վ՟ր ն՟ց որոգայթ, զոր ո՛չ 8
գիտասցին. եւ որս՝ զոր թագուցին,
առցէ զոտս ն՟ց. եւ յորոգայթ 'ի նոյն
անկցին։
Այլ անձն իմ ցնծասցէ 'ի Տ՟ր. 9
ուրախ եղիցի 'ի փրկութե՟ նորա,
եւ ա՟մ ոսկերք իմ ասասցեն, Տ՟ր ո՞
նման է քեզ։
Զի փրկեաց զաղքատն 'ի ձեռաց 10
հզօրի, զաղքատն եւ զտնանկն յայն-
ցանէ՝ որ յափշտակեն զնա։
Յարեան 'ի վերայ իմ վկայք չար- 11
եաց. զոր ինչ ո՛չ գիտէի՝ հարցա-
նէին ցիս։
Հատուցին ինձ չար փոխանակ ընդ 12
բարւոյ. անժառանգել զանձն իմ
խորհեցան յորդւոց 'ի մարդկանէ։

Ես

13Ես 'ի նեղել նց̄ քուրձ զգենուի ․
խոնարհ առնէի պահօք զանձն իմ ․
և աղօթք իմ 'ի ծոց իմ դարձցին ։
14Որպէս զեղբայր և զընկեր՝ այսպէս
հաճոյ լինէի ․ որպէս սգաւոր և տր-
տում, այնպէս խոնարհ առնէի ։
15'Ի վերայ իմ ուրախ եղեն՝ և ժողո-
վեցան ․ ժողովեցան յիս տանջանք ,
և ես ոչ ծանեայ ․ ցրուեցան , և ոչ
զղջացան ։
16Փորձեցին զիս՝ և արհամարհեցին
արհամարհանօք ․ կրճտեցին 'ի վե-
րայ իմ զատամունս իւրեանց ․ Տր̄
երբ տեսցես ։
17'Ի բա՛ց արա զանձն իմ 'ի խորաման-
կութէ նոցա , և յառիւծուց զմիա-
մօրութիւն իմ ։
18Խոստովան եղէց քեզ Տր̄՝ յեկեղե-
ցիս մեծա-և 'ի ժողովս բազմաց օրհ-
նեցից զքեզ ։
19Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք
իմ, ոյք ատէին զիս 'ի տարապար-
տուց ․ ակնարկի առնէին յիս աչօք
իւրեանց ։
20Ընդ իս զխաղաղութի խօսէին ․ և
ինքեանք բարկութե̄ զնենգութիւն
խորհէին ։

Բա․

Բացին 'ի վերայ իմ զբերանս իւր- 21
եանց, և ասացին՝ այո՜ այո՜ տեսին
աչք մեր։
Տեսեր տ̃ր՝ և մի՛ լռեր. տ̃ր՝ մի՛ 'ի 22
բացեայ առնիր յինէն։
Զարթի՛ր և հայեա՛ց տ̃ր՝ յիրաւունս 23
իմ. ա̃ծ իմ և տ̃ր իմ 'ի դատաս-
տանս իմ. և իրաւ արա ինձ ըստ
արդարութեան քում, տ̃ր ա̃ծ իմ։
Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք 24
իմ. և մի՛ ասասցեն 'ի սիրտս իւր-
եանց, թէ վա՜շ վա՜շ անձանց մերոց,
զի ընկլուզաք զնա։
Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ որք 25
խնդային ընդ չար իմ. զգեցցին զա-
մօթ և զանարգանս՝ որք մեծաբա-
նէին 'ի վերայ իմ։
Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ 26
ամենեքեան, որք կամին ընդ արդա-
րութիւն իմ.
Ասասցեն յա̃մ ժամ, մեծ է ա̃ծ. և 27
որք կամին զխաղաղութիւն ծառայի քո։
Լեզու իմ խօսեսցի զարդարութիւն 28
քո. զօրհանապազ զգովութիւն քո։

# ՍԱՂՄՈՍ․ ԼԵ։

1 'Ի կատարած, ծառային Տն․ սաղմոս
'ի Դաւթի։

2 Ասէ անօրէնն 'ի մեղանչել ընդ
մտի իւր, թէ չիք երկիւղ այ
առաջի աչաց նորա։
3 Նենգեաց առաջի նորա, գտանել
զանօրէնութիւն, և ատել զնա։
4 Բանք բերանոյ նորա՝ անօրէնութիւն
և նենգութիւն են։
5 Ո՛չ կամեցաւ նա իմանալ զբարի․
զանօրէնութիւն խորհեցաւ յանկողնի
իւրում։
6 Եկաց նա յամ ճանապարհ, որ ո՛չ
է բարի․ և 'ի չարէ նա ո՛չ ձանձ-
րացաւ։
7 Տր յերկինս է ողորմութիւն քո․ ճշ-
մարտութիւն քո մինչև յամպս։
8 Արդարութիւն քո ոպ լերինք այ․
իրաւունք քո ոպ խորս բազումս․
զմարդիկ և զանասուն կեցուցանես
դու Տր։
9 Որպէս զի բազում արարեր զողոր-
մութիւն քո այ․ այլ որդիք մարդկան
'ի հովանի թևոց քոց յուսասցին։

Արբեցին նոքա 'ի պարարտութենէ 10
տան քո. և զուխս փափկութեան
քո տացես ըմպել նոցա:
'Ի քէն է տր աղբիւր կենաց. և 11
լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս:
Ձգեա զողորմութիւնս քո՝ որք ճա. 12
նաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ որ
ուղիղ են սրտիւք:
Մի եկեսցէ 'ի վերայ մեր ոտն ամ. 13
բարտաւանից. և ձեռք մեղաւորաց
մի դողացուսցեն զմեզ:
Անդ անկցին ամենեքեան՝ որք գոր. 14
ծեն զանօրէնութիւն. մերժեսցին և
այլ մի կարասցեն հաստատել:

❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖❖

## Օրհնութիւն Երկին Մովսէսի Ածատեսի մարգարէին: Բ. Օրհն. ԼԷ:

Մայեցարուք երկինք, և խօ. 1
սեցայց. լուիցէ երկիր բը.
պատգամս բերանոյ իմոյ:
Ընդունելի լիցի որպէս անձրև բար. 2
բառ իմ. և իջցէ որպէս ցօղ պատգա.
գամք իմ:
Որպէս զանձրև 'ի վերայ սիզոյ, և 3
որպ

ոպ տարափ 'ի վերայ խոտոյ • զի զա_
նուն տն կարդացուք • և տուք օրհ_
նութիւն տն այ մերոյ ։

4 Ած որոյ ճշմարտութի են գործք նր •
և ամ ճանապարհք նր իրաւամբք են ։

5 Ած հաւատարիմ է, և ոչ գոյ 'ի նմ
անիրաւութի • արդար և ճշմարիտ է
տր ։

6 Մեղան՝ և ոչ նմ՝ որդիքն արատոյ •
ծնունդք խոտորեալք և թիւրեալք ։

7 Ո՞չ այդ այն է՝ զոր տն հատուցա_
նէիք դուք՝ ժողովուրդք յիմարք և
ոչ իմաստունք ։

8 Ո՞չ սա ինքն է հայրն քո, որ ստացաւ
զքեզ, արար զքեզ՝ և ստեղծ զքեզ ։

9 Յո՛ւշ լիցին քեզ աւուրքն յաւիտե_
նից • իմացարո՛ւք զամս ազգաց մին_
չև յազգս ։

10 Հարցջի՛ր դու ցհայր քո, և պատ_
մեսցեն քեզ • ցծերս քո՝ և ասաս_
ցեն քեզ ։

11 'Ի ժամանակի՝ յորժամ բաժանէր
բարձրեալն զազգս ամ • ոպ սփռեաց
նա զորդիսն ադամայ ։

12 Կացոյց սահմանս հեթանոսաց, ըստ
թուոյ հրեշտակաց այ ։

13 Եղև բաժին տն ժողովուրդ իւր յա_
կոբ •

կոբ. և վիճակ ժառանգութեան իւրոյ
Իսրայէլ:
Բաւական եղև նմա յանապատի. 14
՚ի ծարաւ տօթոյ յանջրդւոջ պաշտ-
պանեաց զնա:
Խրատեաց զնա, և պահեաց որպէս 15
բիբ ական. որպէս զարծուի ՚ի թևս
իւր ընկալաւ զնա. և ոպ̃ ՚ի վերայ
ձագուց իւրոց գթացաւ:
Տարածեաց զթևս իւր, և ընկալաւ 16
զնա. և բարձեալ բերէր զնա ՚ի վե-
րայ միջնորդանց իւրոց:
Տ̃ր միայն ածէր զնոսա. և ոչ գոյր 17
ընդ նոսա աստուածս օտարս:
Ած եհան զնոսա ՚ի զօրութիւն երկ- 18
րի. և կերակրեաց զնս̃ արդեամբք
անդաստանաց:
Դիեցոյց նց̃ մեղր ՚ի վիմէ. և իւղ 19
յապառաժ վիմէ:
Իւղ կովուց՝ և կաթն մաքեաց, ճար- 20
պով հանդերձ խոյոց որթուց ցլուց
և նոխազաց:
Զօրարարութիւն երիկամանց ցորե- 21
նոյ. և զարիւն խաղողոյ արբ գինի:
Եկեր յակովբ և յագեցաւ, և ան- 22
գուշեաց զսիրելին:
Գիրացաւ՝ ստուարացաւ՝ լայնա- 23
ցաւ,

ցաւ, եթող զՏ̅ր ա̅ծ զարարիչ իւր.
եւ յետս եկաց յա̅յ փրկչէ իւրմէ ։
24 Բարկացուցին զիս օտարոտիւք իւ_
րեանց. եւ կռովք իւրեանց դառնա_
ցուցին զիս ։
25 Զոհեցին դիւաց՝ եւ ոչ ա̅յ. դիցն՝
զորս ոչ գիտէին. նորք եւ առ ժա_
մայնք, զորս բնաւ ոչ ճանաչէին
հարք ն̅ց ։
26 Թողին զՏ̅ր՝ որ ծնաւ զնոսա. մո_
ռացան զա̅ծ որ կերակրեաց զն̅ս ։
27 Ետես տ̅ր եւ նախանձեցաւ. սրամը_
տեցաւ 'ի վերայ ուստերաց եւ դըս_
տերաց նոցա, եւ ասէ ։
28 Դարձուցից զերեսս իմ 'ի նոցանէ.
եւ ցուցից նոցա զի՞նչ լինելոց իցէ յա_
պայ ժամանակի ։
29 Զի ազգ մի թիւր են ն̅ք՝ եւ որդիք
անհաւանք. ն̅ք նախանձեցուցին
զիս 'ի չաստուածս իւրեանց. եւ դառ_
նացուցին զիս 'ի կուռս իւրեանց ։
30 Արդ՝ եւ ես նախանձեցուցից զն̅ս
յազգ անպիտան. եւ անմիտ ազգաւ
զկծեցուցից զնոսա ։

## Մաղթանք ։

Տուք փառս Տն̃, տուք օրհնութիւն մարդասիրին Թագաւորին յաւիտենից, որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ ։

Մարդասէր Տր̃՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի. և վասն խաչի քոյ պատուականի, Տր̃ ընկա՛լ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ ։

Փառք և այժմ՝ Երկինք պատմեն և Տր̃ ապաւէն կանանացն ։

Վասն 'ի գիշերի և 'ի տուընջեան, և յամ̃ ժամու խօսել մեզ զբան Տն̃, զՏր̃ աղաչեսցուք ։ Տր̃ ողորմեա՛ ։
Վասն չանկանելոյ մեզ 'ի փորձութ̃ի, որում ոչ կարեմք հանդուրժել, զՏր̃ աղ ։
Վն̃ ամբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քն̃ի, զՏր̃ աղ ։
Վն̃ առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստ կենացն անվախճանից, զՏր̃ աղ ։
Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն՝ և երկնից արքայութ̃են, զՏր̃ ։
Վասն հոգւոցն հանգու ։ Եւ ևս միաբան ։ Զանձինս ։ Ողորմեա՛ց ։

Աղօթք ։

Աղօթք ։

Ի գիշերի և 'ի տուընջեան կենդանածա_մու զքեզ աղաչեմք, և 'ի քէն խնդ_րեմք մարդասէր Տէր ։ Լո՛ւր մեզ Տէր Փրկիչ մեր. խոնարհեցո՛ ունկն քո 'ի խնդրուածս մեր. զի մի՛ ունայն լիցին պատարագք ծառայից քոց, այլ համա_րեա՛ զաշխատութիւնս մեր 'ի գործ ար_դարութեան, և 'ի պտուղ Աստուածպաշտութեան ։ Ընկա՛լ Տէր՝ զաղօթս և զերկրպագութիւնս մեր, և հասո՛ մեզ զողորմութիւն քո առատապէս. ծածկեա՛ զմեզ ընդ հո_վանեաւ ամենազօր աջոյ քոյ. զօրացո՛ զմեզ Տէր՝ զօրութեամբ Ս. Հոգւոյդ. պահե_ա՛ զմեզ որպէս բիբ ական ։ Եւ արա՛ րու մեզ նշան բարի, 'ի գովեստ և 'ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ ։ Զի 'ի քո փառս կատարէ ամ' արարա_ծոց մշտնջենաւոր փառաբանութիւն 'ի բարձունս, Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Հովի՛ւ քաջ՝ հովի՛ւ բարի՝ և յաւիտե_նական, նայեա՛ և այց արա բանաւոր

Հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ դը-
թութ քով։ Զի քո առաջի կամք տր, և առ 'ի քէն ողորմութեանց և գթութեանց ակն ունիմք։ Զամենասեան օրհնեալ. զամենասեան իմաստնացոյ. զամենասեան լուսաւորեալ. և ամենեցուն պարգևեալ զերկնից արքայութիւն. վն զի դու ես տր կենաց, և ած ողորմութեանց. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Մաղթանք։

'Ի գիշերի և 'ի տուընջեան և յամ ժամու անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍբ Հոգին, այժմ և միշտ, և յաւիտեանս։

Օրհնեալ տր մեր յս քս. ամէն։

Հայր մեր որ։




Խաչելուն մերոյ փրկչին:

# ՍԱՂՄՈՍ· ԼԶ։

Սաղմոս ՚ի Դաւիթ։

1 ՄԻ՛ ՆԱԽԱՆՁԻՐ
ընդ չարս. և մի՛ ընդ այնո֊
սիկ՝ որ գործեն զանօրէ֊
նութիւն։
2 Զի որպէս խոտ վաղվաղակի ցամա֊
քեսցին. որպէս դալարի խոտոյ վաղ֊
վաղակի անցցեն։
3 Յուսա՛ ՚ի տ͞ր՝ և արա՛ զքաղցրու֊
թիւն. բնակեա՛ յերկրի, և հովուե֊
ցիս ՚ի մեծութեան նորա։
4 Փափկեա՛ ՚ի տ͞նէ, և նա տացէ քեզ
զխնդրուածս սրտի քո. յայտնեա՛
առաջի տ͞ն զճանապարհս քո, և
յուսա՛ ՚ի նա։
5 Նա արասցէ և հանցէ որպէս զլոյս
զարդարութիւն քո. և զիրաւունս քո
որպէս զօր հասարակ։

Հնազանդ լեր տն՝ և ծառայեա՛ նմա․ 6
և մի՛ նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց
առակեալ իցեն ճանապարհք իւր–
եանց , ընդ մարդոյ՝ որ գործէն զա–
նօրէնութիւն ։
Լռեա՛ ՚ի բարկութէ , և հանգի՛ր ՚ի 7
սրտմտութէ , և մի՛ նախանձիր ընդ
չարս ։
Զի չարք վաղվաղակի սատակեսցին․ 8
բայց որք համբերեն տն , նոքա ժա–
ռանգեսցեն զերկիր ։
Փոքր մի՝ և այլ ո՛չ եւս իցէ ամբա– 9
րիշտն․ խնդրեսցես զտեղի նր, և ո՛չ
գտցես ։
Այլ որ հեզքն են՝ նոքա ժառան– 10
գեսցեն զերկիր․ և փափկասցին ՚ի
բազում խաղաղութե իւրեանց ։
Սպասէ մեղաւոր արդարոյ , և կրճ– 11
տէ ՚ի վերայ նորա զատամունս իւր․
այլ տր ծիծաղեսցի զնովաւ ։
Քանզի յառաջագոյն տեսանէ․ զի 12
հասեալ է օր նորա ։
Սուր հանին մեղաւորք , և լարեցին 13
զաղեղունս իւրեանց՝ հարկանել զաղ–
քատն և զտնանկն․ սպանանել զայն՝
որ խոնարհսն է սրտիւ ։
Սուրք նց մտցեն ՚ի սիրտս նց , և 14
աղե–

աղեղունք նոցա փշրեսցին ։
15 Լաւ է սակաւն ինչ արդարոյ ,քան
զբազում մեծութիւն մեղաւորաց․ և բա_
զուկք ամպարշտաց խորտակեսցին ։
16 Հաստատէ տէր զարդարս , և ճա_
նաչէ զաւուրս ամբծից , ժառան_
գութիւն նց յաւիտեան եղիցի ։
17 Մի՛ ամաչեսցեն նոքա 'ի ժամանակս
չարութեան․ այլ յաւուրս սովոյ յա_
գեսցին ։
18 Ահա՛ մեղաւորք կորիցեն․ այլ թշնա_
միք տն 'ի փառաւորել և 'ի բարձ_
րանալ իւրեանց՝ պակասեսցին որպ
ծուխ , զի պակասէ ։
19 Փոխ առնու մեղաւորն՝ և ոչ հա_
տուցանէ․ այլ որ արդարն է՝ ողոր_
մի և տայ ։
20 Ոյք օրհնեն զտր՝ ժառանգեսցեն
զերկիր․ և ոյք անիծանեն , սատա_
կեսցին 'ի նմանէ ։
21 'Ի տնէ ուղղին գնացք առն․ զճա_
նապարհս նորա նա կամի յոյժ ։
22 Թէպէտ և գայթագղեսցի , նա մի
կործանեսցի․ զի տր ձեռնկալու է նր․
23 Մանուկ էի ես՝ և ծերացայ․ և ոչ
տեսի զարդարն արհամարհեալ , և
ոչ զաւակ նորա՝ թէ մուրանայ հաց։

Զօր․

Զօ. հանապազ ողորմի և տայ փոխ · 24
զաւակ նր̅ օրհնեալ եղիցի յաւիտեան:
Խոտորեա՛ 'ի չարէ, և արա՛ զբարի · 25
բնակեսցես յաւիտեանս յաւիտենից
'ի նմա :
Տէր սիրէ զիրաւունս, և ո՛չ ընդ 26
վայր հարկանէ զսուրբս իւր · այլ
յաւիտեան պահէ զնոսա :
Անօրէնք հալածեսցին 'ի միասին · 27
և զաւակ ամբարշտաց սատակեսցի:
Այլ արդարք ժառանգեսցեն զեր֊ 28
կիր · և բնակեսցեն յաւիտեանս յա֊
ւիտենից 'ի նմա :
Բերան արդարոյ խորհի զիմաստութ̅ի 29
և լեզու նր̅ խօսեսցի զիրաւունս :
Օրէնք ա̃յ իւրոյ են 'ի սրտի իւրում · 30
և մի՛ գայթագղեսցին գնացք նորա :
Հայի մեղաւորն ընդ արդար, և 31
խնդրէ սպանանել զնա · այլ տ̃ր ո՛չ
թողու զնա 'ի ձեռս նր̅, և ո՛չ դատա֊
պարտէ զնա՝ յորժամ դատի զնա :
Համբեր տ̃ն՝ և պահեա՛ զճանապար֊ 32
հս նորա · և բարձր արասցէ զքեզ
'ի ժառանգել զերկիր, և զսատա֊
կումն մեղաւորաց տեսցես :
Տեսի զամպարիշտն վերացեալ, և 33
բարձրացեալ որպէս զմայրսն լի֊
բա·

բանանու ։
34 Անցի՛ և ահա ո՛չ էր • խնդրեցի՛ և
ո՛չ գտաւ տեղի նորա ։
35 Պահեա՛ զանմեղութի • և տե՛ս զուղ֊
ղութի • զի գոն մնացո՛ւածք առն
խաղաղարարի ։
36 Անօրէնք հալածեսցին 'ի միասին • և
զաւակ ամպարշտաց կորիցէ ։
37 Փրկութի արդարոց 'ի տ՟նէ է • վերա֊
կացու է նց 'ի ժամանակս նեղութե ։
38 Օգնեսցէ նց տր՟' և փրկեսցէ զնս •
ապրեցուսցէ 'ի մեղաւորաց' և կե֊
ցուսցէ զնս , զի յուսացան 'ի նա ։

## ՍԱՂՄՈՍ. ԼԷ ։

1 Սաղմոս 'ի դաւիթ • առ 'ի յիշատակ
շաբաթու ։

2 Տ մի՛ սրտմտութբ քով յան֊
դիմաներ զիս • և մի՛ բար֊
կութբ քով խրատեր զիս ։
3 Զի նետք քո հարան յիս
և յիս հաստատեցաւ ձեռն քո ։
4 Ո՛չ գոյ բժշկութի մարմնոյ իմոյ յե֊
րեսաց բարկութե քոյ ։
5 Ո՛չ է խաղաղութի ոսկերաց իմոց •
յերեսաց մեղաց իմոց ։

Անց

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան 6
զգլուխ իմ. որպէս բեռն ծանր ծանրա-
ցան ՚ի վերայ իմ։
Նեխեցան եւ փտեցան վէրք իմ, յե- 7
րեսաց անզգամութեան իմոյ։
Տառապեցայ եւ խոնարհ եղէ յոյժ. 8
զօրհանապազ տրտում գնայի, զի
անձն իմ լի եղեւ չարչարանօք. եւ ոչ
գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։
Զարչարեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ 9
յոյժ. մռնչէի առ հեծութեան սրտի
իմոյ։
Տէր առաջի քո է ամ ցանկութիւն իմ. 10
եւ հեծութիւն իմ ՚ի քէն ոչ ծածկեցաւ։
Սիրտ իմ խռովեցաւ յիս, եւ եթող զիս 11
զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց. եւ
այս ոչ եղեւ ընդ իս։
Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ առ- 12
աջի իմ մերձեցան եւ կացին. եւ մեր-
ձաւորք իմ հեռի եղեն յինէն։
Բռնադատէին զիս եւ խնդրէին 13
զանձն իմ. որք խորհէին չար ՚ի վե-
րայ իմ, խօսեցան զանօրէնութիւն, եւ
զնենգութիւն զօրհանապազ խորհեցան։
Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ. որպէս 14
համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։
Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ. 15

եւ

Եւ ոչ գոն խօսք 'ի բերան նորա ։
16 Ես 'ի քեզ տ̃ր յուսացայ, և դու
լուիցես ինձ տ̃ր ա̃ծ իմ։
17 Ասացի՝ թէ մի՛ ուրախ եղիցին յիս
թշնամիք իմ. 'ի սասանել ոտից ի-
մոց՝ 'ի վ̃ր իմ մեծամեծս խօսեցան ։
18 Ես 'ի տանջանս պատրաստ եմ. և
ցաւք իմ առաջի իմ են յ̃մ ժամ։
19 Զանօրէնութիւնս իմ պատմեցից.
և հոգացայց վասն մեղաց իմոց ։
20 Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են.
և զօրացեալ են քան զիս. և բազում՛
էին, որք ատէին զիս 'ի տարապար-
տուց ։
21 Որք հատուցին ինձ չար փոխանակ
ընդ բարւոյ. չարախօսէին զինէն,
զի ես երթայի զհետ արդարութե ։
22 Մի՛ թողուր զիս տ̃ր ա̃ծ իմ. և մի՛
'ի բացեայ անկիր յինէն, հայեա՛ց
յօգնել ինձ՝ տ̃ր փրկութե իմոյ ։

## ՍԱՂՄՈՍ. ԼԸ.

1 'Ի կատարած. Իդիթումայ օրհնութիւն.
'Ի Դաւթի սաղմոս ։

2 Ասացի՝ թէ պահեցից զճանապար-
հս իմ. զի մի՛ մեղայց լեզուա-
իմով ։

իմով։

Եդի պահապան բերանոյ իմոյ՝ 'ի 3
հակառակել մեղաւորին առաջի իմ։
Խուլ եղէ եւ խոնարհեցայ. լռեցի 4
'ի բարութէ, եւ ցաւք իմ նորոգե-
ցան յիս։
Ջեռաւ սիրտ իմ 'ի փորի իմում. եւ 5
'ի խորհուրդս իմ վառեցաւ հուր։
Խօսեցայ լեզուաւ իմով եւ ասացի. 6
ցո՛յց ինձ Տ͞ր զվախճան իմ, եւ զ-
թիւ աւուրց իմոց՝ քանի՛ք են, զի
գիտացից թէ որչափ ինչ պակասա-
կալ է յինէն։
Ահա չափով եդիր զաւուրս իմ. եւ 7
կար զօրութե իմոյ ո͞մ ոչինչ է ա-
ռաջի իմ. սակայն ամենեւին ընդու-
նայն է ա͞մ մարդ մնեղի։
Այլաքէն որպէս 'ի պատկերի շրջի 8
մարդ, սակայն 'ի զուր խռովի. դա՛ն-
ձէ՝ եւ ո՛չ գիտէ ո՛ւմ ժողովէ։
Իսկ արդ ո՞վ է համբերութ͞ի իմ, 9
թէ ոչ դու Տ͞ր. կամ կար զօրութե
իմոյ՝ թէ ոչ 'ի քէն։
Յամենայն անօրէնութ͞է իմմէ փրկե- 10
ցեր զիս. նախատինս անզգամաց ա-
րարեր զիս։
Խուլ եղէ, եւ ո՛չ բացի զբերան իմ, 11

զի

զի դու արարեր ։
12 'Ի բա՛ց արա յինէն զտանջանս իմ.
զի 'ի զօրութէ ձեռին քո ես պակա-
սեցայ ։
13 Կշտամբութ վասն մեղաց խրատե-
ցեր զմարդ. մաշեցեր որպէս սարդի-
ոստայն զանձն նորա. աւասիկ ընդ-
ունայն է ամ մարդ ։
14 Լո՛ւր Տր աղօթից իմոց. ունկնդիր
խնդրուածաց իմոց, արտասուաց
իմոց մի՛ լռեր ։
15 Պանդուխտ եմ ես առաջի քո, նրժ-
դեհ և անցաւոր՝ որպէս ամ հարք իմ ։
16 Թո՛յլ տուր ինձ զի հանգեայց. մինչ-
չև երթեալ լիցեմ, ուստի ոչ ես գը-
տանիցեմ ։

## ՍԱՂՄՈՍ. ԼԹ ։

1 'Ի կատարած. սաղմոս 'ի դաւիթ ։

2 Համբերելով համբերի Տն, և նայ-
եցաւ առ իս. և լուաւ աղօ-
թից իմոց ։
3 Եհան զիս 'ի գբոյ տառապանաց,
'ի կաւոյ և 'ի տղմոյ ։
4 Հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս
իմ. և ուղղեաց զգնացս իմ ։

Արկ

Արկ՚ի բերան իմ օրհնութիւն նոր․ 5
զօրհնութիւն տ՟ն ա՟յ մերոյ։
Տեսցեն բազումք՝ եւ երկիցեն, եւ յու- 6
սասցեն ՚ի տ՟ր․ երանեալ է այր՝ որոյ
անուն տ՟ն յոյս է ն՟ր։
Ո՛չ հայեցաւ նա ՚ի նանրութիւն․ եւ 7
ո՛չ ՚ի մոլութիւն սուտ։
Բազում արարեր դու՝ տ՟ր ա՟ծ իմ 8
զսքանչելիս քո․ խորհրդոց քոց՝ ո՛չ
ոք է որ նման է քեզ։
Պատմեցի եւ խօսեցայ՝ եւ բազում 9
եղեն քան զթիւ․ ընդ զոհս եւ ընդ
պատարագս ո՛չ հաճեցար․ լսելիս
հաստատեցեր ինձ․ զողջակէզս եւ
զվասն մեղացն ո՛չ խնդրեցեր։
Յայնժամ ասացի՝ թէ ահաւասիկ 10
գամ ես․ ՚ի գլուխս գրոց գրեալ է
վասն իմ։
Առնել զկամս քո ա՟ծ իմ կամեցայ, 11
եւ զօրէնս քո ՚ի մէջ որովայնի իմոյ։
Աւետարանեցից զարդարութիւն քո 12
յեկեղեցիս մեծս․ ահա շրթունս
իմ ո՛չ արգելից ՚ի քէն։
Տ՟Ր դու գիտացեր, զի զարդարութիւն 13
քո ո՛չ ծածկեցի ՚ի սրտի իմում․
զճշմարտութիւն քո՝ եւ զփրկութիւն քո։
Ասացի՝ եւ ո՛չ թաքուցի զողորմու- 14

թիւ

թիս քո. և զճշմարտութիւնս քո ՚ի
ժողովրդենէ մեծէ:
15 Այլ դու Տր մի հեռի առներ զ-
գթութիս քո յինէն. զի ողորմութի
քո, և ճշմարտութի քո յամենայն
ժամ ընկալցի զիս:
16 Շուրջ եղեն զինև չարք՝ որոց ոչ
էր նց թիւ. հասին ինձ անօրէնու-
թիք իմ, և ես ոչ կարացի տեսանել:
17 Բազում եղեն քան զհեր գլխոյ ի-
մոյ. և սիրտ իմ եթող զիս:
18 Կամեաց Տր՝ փրկել զիս. և Տր յօգ-
նել ինձ նայեաց:
19 Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք
խնդրէին զանձն իմ բառնալ զնա.
դարձցին յետս և ամաչեսցեն՝ որք
խորհէին ինձ չար:
20 Առցեն զամօթ առ ժամայն վաղ-
վաղակի, որ ասէին ինձ վա՛շ վա՛շ:
21 Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ
ամենեքեան, որք խնդրեն զքեզ Տր:
22 Ասասցեն յամ ժամ, մեծ է Տծ,
և որք սիրեն զփրկութիս քո:
23 Ես աղքատ և տնանկ եմ, Տծ խոր-
հեաց զիս. օգնական և պաշտպան իմ
ես. և դու Տծ իմ մի յամենար:

# ՍԱՂՄՈՍ. Խ։

'ի կատարած. սաղմոս 1
'ի դաւիթ։

Երանի որ խորհի զաղքատն 2
եւ զտնանկն. յաւուր չարի
փրկէ զնա Տր։
Տր փրկէ զնա եւ կեցուցանէ. ե- 3
րանելի առնէ զնա 'ի վերայ երկրի.
եւ ոչ մատնէ զնա 'ի ձեռս թշնա-
մեաց իւրոց։
Տր օգնական է նմա 'ի մահճին ցա- 4
ւոց իւրոց. զամ անկողինս նորա
դարձուցանէ 'ի հիւանդութէ նորա։
Ես ասացի Տր ողորմեա՛ ինձ. բժշ- 5
կեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ։
Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ 6
իցէ՞ զի մեռցի, եւ կորիցէ անուն նր։
Մտանէր տեսանել զնանրութիւն, 7
խօսէր 'ի սրտի իւրում. եւ ժողովէր
զանօրէնութիւնս յանձն իւր։
Արտաքս ելանէր եւ զնոյն խօսէր. 8
զինէն շշնջէին ամ թշնամիք իմ։
Խորհեցան չար 'ի վերայ իմ. բան 9
անօրէնութեն եդին 'ի վերայ իմ.
Մի՞ թէ որ ննջիցէն, եւ այլ ոչ եւս 10

յաւելուցու յառնել. քանզի և այրն
խաղաղութեան իմոյ, յոր և ես յու_
սացայ:

11 Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց
առնել ինձ խաբէութիւն:

12 Այլ դու Տ̄ր ողորմեա ինձ, և
կանգնեա զիս. և ես հատուցից նոցա:

13 Յայսմ ծանեայ՝ թէ հաճեցար ը̄նդ իս.
զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ:

14 Այլ զիս յանմեղութեան իմում ընկա_
լար. և հաստատեցեր զիս առաջի
քո յաւիտեան:

15 Օրհնեալ Տ̄ր ա̄ծ իսրայէլի յաւի_
տեանս յաւիտենից, եղիցի եղիցի:

## ՍԱՂՄՈՍ. ԽԱ:

1 'Ի կատարած. իմաստութիւն որդւոցն
Կորխայ, սաղմոս 'ի դաւիթն:

2 Որպէս փափաքէ եղջերու յաղբե_
րըս ջուրց, այնպէս փափաքէ
անձն իմ առ քեզ ա̄ծ:

3 Ծարաւի է անձն իմ առ քեզ ա̄ծ,
հզօր և կենդանի. երբ եկից երևե_
ցայց երեսացդ ա̄յ:

4 Եղեն ինձ արտասուք իմ կերակուր
'ի տուէ և 'ի գիշերի. և այն զի ասէ_
ին

ին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է ած քո։
Զայս որպէս յիշէի, տառապէր յիս 5
անձն իմ. քաջալերէի՝ զի մտից ընդ
յարկաւ սքանչելեաց տանն այ։
'ի ձայն ցնծութե խոստովանութե. 6
և 'ի ձայն բարեկենդանութե։
Արդ՝ ընդէ՞ր տրտմեալ ես անձն իմ, 7
կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛
առ ած, խոստովանեա՛ նմա՝ փրկիչ
երեսաց իմոց ած է։
Անձն իմ յոյժ խռովեցաւ. վն այ- 8
սորիկ յիշեցի զքեզ յերկրէն յորդա-
նանու, 'ի հերմոնէ 'ի լեռնէ փոքուէ։
Խորք 'ի խորոց կարդացին առ քեզ. 9
'ի ձայն սահանաց քոց։
Ամենայն զբօսանք քո. և ալիք քո 10
անցին 'ի վերայ իմ.
'Ի տուէ պատուիրեաց տր զողոր- 11
մուն իւր, 'ի գիշերի զօրհնութի նոր.
և աղօթք իմ առ ած վն կենաց իմոց։
Ասացի այ՝ ընդունելի իմ ես. ըն- 12
դէ՞ր մերժեցեր զիս. ընդէ՞ր տըր-
տում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ
իմոյ։
'Ի փշրել ոսկերաց իմոց նախատե- 13
ցին զիս թշնամիք իմ. յասել ցիս
զօրհանապազ, թէ ո՞ւր է ած քո։

 Արդ՝

14 Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն
իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յու-
սա՛ առ ա̃ծ, խոստովանեա՛ նմա՝
փրկիչ երեսաց իմոց ա̃ծ է:

## ՍԱՂՄՈՍ. ԽԲ:

Սաղմոս ՚ի Դաւթի:

1 Դատ արա ինձ ա̃ծ. և իրաւ ա-
րա ինձ ՚ի դատաստանի իմում:
2 Յազգէ որ ոչ է ս̃բ, ՚ի մարդոյ մե-
ղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս:
3 Դու ա̃ծ հզօրիչ իմ ես. ընդէ՞ր մո-
ռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ
ես ՚ի նեղել թշնամւոյ իմոյ:
4 Առաքեա՛ տ̃ր զլոյս քո և զճշմար-
տութի քո. զի առաջնորդեսցեն ինձ,
և հանցեն զիս ՚ի լեառն ս̃բ և ՚ի
յարկս քո:
5 Մտից առաջի սեղանոյ ա̃յ առ ա̃ծ.
որ ուրախ առնէ զմանկութի իմ:
6 Խոստովան եղէց քեզ օրհնութ̃բ ա̃ծ
ա̃ծ իմ:
7 Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ,
կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ
ա̃ծ, խոստովանեա՛ նմա՝ փրկիչ ե-
րեսաց իմոց ա̃ծ է:

# ՍԱՂՄՈՍ. ԽԳ :

՚Ի կատարած, Իմաստութէ որդւոցն Կոր_ 1
խայ . սաղմոս ՚ի դաւիթ :

ԱԾ՝ ականջօք մերովք լուաք • 2
զոր հարքն մեր պատ_
մեցին մեզ :
Զգործն՝ զոր գործեցեր յաւուրս 3
նց յաւուրսն առաջինս :
Ձեռն քո խլեաց զհեթանոսս • և 4
զնս տնկեցեր • չարչարեցեր զժո_
ղովուրդս քո, և հաներ զնոսա :
Ո՛չ թէ սրով իւրեանց ժառանգե_ 5
ցին զերկիր • և ո՛չ բազուկ նոցա
թէ փրկեաց զնոսա :
Այլ աջ քո՝ և բազուկ քո՝ և լոյս 6
երեսաց քոց • զի հաճեցար դու ընն :
Դու ինքն ես՝ թագաւոր իմ և ած 7
իմ, որ հրամայեցեր զփրկութիւն յա_
կոբայ :
Քև զթշնամիս մեր հարցուք • և ան_ 8
ուամբ քով արհամարհեսցուք զյա_
րուցեալսն ՚ի վերայ մեր :
Ո՛չ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ, 9
և ո՛չ սուր իմ կեցուցանէ զիս :
Այլ դու փրկեցեր զմեզ ՚ի թշնա_ 10
մեաց

մեաց մերոց • և զատելիս մեր յա_
մօթ արարեր ։
11 Աստուծով պարծեսցուք զօրհա_
նապազ • և անուան նորա խոստո_
վան եղիցուք յաւիտեան ։
12 Բայց արդ՝ մերժեցեր և անարգե_
ցեր զմեզ • և ոչ ելեր ած̃ ը̃ զօրս մեր ։
13 Դարձուցեր զմեզ յետս ք̃ զթշնա_
միս մեր • և ատելիք մեր յափշտա_
կեցին զմեզ ։
14 Տուր զմեզ ոմ̃ զոչխար 'ի զենումն •
և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ ։
15 Վաճառեցեր զժողովուրդս քո ա_
ռանց գնոյ • և ոչ գոյ թիւ աղաղակի
մերոյ ։
16 Արարեր զմեզ նախատինս դրաց_
եաց մերոց • ծաղր և այպն կատա_
կանաց այնոցիկ որ շուրջ էին զմեւք ։
17 Արարեր զմեզ յառակս հեթանո_
սաց • 'ի շարժել զգլուխս ժողովրդոց ։
18 Զօր ամ̃ նախատինք իմ առաջի իմ
են • և ամօթ երեսաց իմոց ծած_
կեաց զիս ։
19 'Ի ձայնէ նախատողին և չարախօ_
սի յերեսաց թշնամւոյն և հալածչին ։
20 Այս ամ̃ եկն 'ի վերայ մեր , և մեք
զքեզ ոչ մոռացաք • և ոչ ստեցաք

 ուխ_

ուխտի քում, և ոչ դարձաք յետս
սրտիւք մերովք ։
Դարձուցեր զշաւիղս մեր 'ի ճա- 21
նապարհաց քոց . խոնարհ արարեր
զմեզ 'ի տեղի չարչարանաց . և ծած-
կեցին զմեզ ստուերք մահու ։
Թէ մոռացեալ իցէ մեր զանուն ա̃յ 22
մերոյ . կամ ձգեալ իցէ զձեռս մեր
առ աստուածս օտարս ։
Ապաքէն ա̃ծ խնդրէ զայս . զի նա 23
քննէ զգաղտնիս սրտից մերոց ։
Վասն քո մեռանիմք զօրհանապազ . 24
համարեցաք ո̃պ զոչխար 'ի զենումն ։
Զարթի՛ր ընդէ՞ր ննջես տ̃ր . արի՛ 25
և մի՛ մերժեր զմեզ իսպառ ։
Զի՞ դարձուցանես զերեսս քո 'ի 26
մէնջ . մոռանաս զաղքատութի̃ և
զնեղութի̃ս մեր ։
Խոնարհեցեալ մինչև 'ի հող անձինք 27
մեր . և յերկիր կցեցան մէջք մեր ։
Արի՛ տ̃ր օգնեա՛ մեզ, և փրկեա՛
զմեզ վասն անուան քո ։

# ՍԱՂՄՈՍ. ԽԴ ։

1 'Ի կատարած. վասն անցելոց ժամանակաց,
որդւոցն Կորխայ իմաստութե̄. սաղմոս օրհ-
նութե̄ վասն սիրելւոյն ։

2 Բղխեաց սիրտ իմ զպատգամս
քո բարիս. և ասացից զգործս
իմ թագաւորի ։
3 Լեզու իմ որպէս գրիչ արագագրի
դպրի, գեղեցիկ տեսանելով քան
զա̄մ որդւոց մարդկան ։
4 Սփռեցան շնորհք 'ի շրթանց քոց.
վասն այսորիկ օրհնեաց զքեզ ա̄ծ
յաւիտեան ։
5 Ա՛ծ զսուր ընդ մէջ քո հզօր, վայ-
ելչութե̄ և գեղոյ քոյ ։
6 Լարեա՛ ուղղեա՛ և թագաւորեա՛ վս̄
ճշմարտութե̄ հեզութե̄ և արդա-
րութե̄, և առաջնորդեսցէ քեզ ըս-
քանչելապէս աջ քո ։
7 Նետք քո սրեալ են հզօր, և ժողո-
վուրդք 'ի ներքոյ քո անկցին, 'ի
սիրտս թշնամեաց թագաւորի ։
8 Աթոռ քո ա̄ծ յաւիտեանս յաւի-
տենից, գաւազան ուղղութե̄ գա-
ւազան արքայութեան քո ։

Սիրեցէր զարդարութն, և ատեցէր 9
զանօրէնութին ։
Վն այսորիկ օծ զքեզ ած ած քո 10
իւղով ուրախութէն, առաւել քան
զընկերս քո ։
Զմուռս և ստաշխն և կասիայ 'ի ըզ- 11
գեստէ քումմէ . 'ի տաճարաց փղոս-
կրէից, ուստի ուրախ արարին զքեզ
դստերք թագաւորաց 'ի պատիւ ։
Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ՝ 'ի 12
հանդերձս ոսկեհուռս զարդարեալ
և պաճուճեալ ։
Լո՛ւր դուստր և տե՛ս՝ խոնարհեցո՛ 13
զունկն քո . մոռա՛ զժողովուրդ քո,
և զտուն հօր քո . զի ցանկացաւ թա-
գաւոր գեղոյ քո ։
Սա ինքն է Տր քո՝ երկիրպագցես նը- 14
մա . և դուստր ծուրայ երկիր պագցէ
նմա . և պրգօք զերեսս սորա աղաչ-
եսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց ։
Ամենայն փառք դստեր թագաւո- 15
րի 'ի ներքոյ . 'ի վերջաւորս ոսկե-
հուռս զարդարեալ և պաճուճեալ ։
Տարցին թագաւորի կուսանք զհետ 16
նր . և զընկերս նր տարցին նմա ։
Ածցեն ցնծութբ և ուրախութբ . 17
և տարցին 'ի տաճար թագաւորի .
և

և փոխանակ հարց քոց եղիցին որ-
դիք քո ։
18 Կացուսցես զնո իշխանս ընդ ամե-
նայն երկիր ․ և յիշեսցի անուն քո
ընդ ամենայն ազգս ազգաց ։
19 Վասն այսորիկ ժողովուրդք խոս-
տովան եղիցին առ քեզ յաւիտեան ,
և յաւիտեանս յաւիտենից ։

## ՍԱՂՄՈՍ․ ԽԵ։

1 'Ի կատարած ․ որդւոցն Կորխայ 'ի վերայ
գաղտնեաց ։

2 Ա՟ծ մեր ապաւէն և զօրութիւն ․ օգ-
նական 'ի վերայ նեղութեանց , որ
գտին զմեզ յոյժ ։
3 Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի
խռովել երկրի ․ 'ի փոփոխել լերանց
'ի սիրտս ծովու ։
4 Գոչեցին և խռովեցան ջուրք ն՟ց ․
խռովեցան լերինք 'ի զօրութէ ն՟ր ։
5 Գնացք գետոց ուրախ առնեն զքա-
ղաքն ա՟յ ․ և սուրբ արար զյարկս
իւր բարձրեալն ։
6 Ա՟ծ 'ի մէջ նորա , և նոքա մի սասա-
նեսցին ․ օգնեսցէ նմա ա՟ծ 'ի վա-
ղորդայնէ մինչև 'ի վաղորդայն ։
խռո

Խռովեցան հեթանոսք, և խոնար- 7
հեցան թագաւորութիւնք, ետ զձայն
իւր բարձրեալն՝ և խռովեցաւ եր-
կիր ։
Տէր զօրութեանց ընդ մեզ · ընդունե- 8
լի է մեր ա̃ծ յակովբայ ։
Եկա՛յք և տեսէ՛ք զգործս ա̃յ, որ ա- 9
րար զնշանս և զարուեստս 'ի վերայ
երկրի ։
Եհար զպատերազմ 'ի ծագաց մինչ 10
'ի ծագս երկրի · զաղեղունս փշրեաց,
զէնս խորտակեաց, և զասպարս այ-
րեաց հրով ։
Կանխեցէ՛ք և ծանի՛րուք, զի ես եմ 11
ա̃ծ · բարձր եղէց 'ի հեթանոսս, և
բարձրացայց 'ի վերայ երկրի ։
Տէր զօրութեանց ընդ մեզ · ընդունելի 12
է մեր ա̃ծ յակովբայ ։

## ՍԱՂՄՈՍ · ԽԶ ։

'Ի կատարած · վասն որդւոցն կորխայ, 1
սաղմոս 'ի դաւիթ ։

Ծափս հարէք ա̃մ հեթա- 2
նոսք, աղաղակեցէք առ
ա̃ծ 'ի ձայն ցնծութեան ։
Տ̃ր բարձրեալ և ահարկու, թա- 3
գա-

թագաւոր մեծ ՚ի վերայ ամ երկրի :

4 Հնազանդ. արար զժողովուրդս ընդ. մեզ . և զհեթանոսս ՚ի ներքոյ ոտից մերոց :

5 Ընտրեաց զմեզ իւր ՚ի ժառանգութիւն . զգեղեցկութիւնն յակոբայ զոր և սիրեաց :

6 Համբարձաւ ած օրհնութեամբ , և տր մեր ձայնիւ փողոյ :

7 Սաղմոս ասացէք այ մերում , սաղմոս ասացէք թագաւորին մերում . սաղմոս ասացէք :

8 Թագաւոր մեծ ՚ի վր ամ երկրի ած է , սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ :

9 Թագաւորեաց ած ՚ի վր հեթանոսաց . ած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ :

10 Իշխանք ժողովրդոց ժողովեցան ընդ այ աբրահամու , զի այ զօրութիւնք երկրի յոյժ համբարձան :

## ՍԱՂՄՈՍ . ԽԷ :

1 Սաղմոս օրհնութեան որդւոցն կորխայ . երկրորդ շաբաթուն :

2 Մեծ է տր , և օրհնեալ է յոյժ ՚ի քաղաքի այ մերոյ , ՚ի լեառն սուրբ

սուրբ նր̃։
Հաստարմատ ցնծացէ ցնծութ̃ ամ̃ 3
երկիր․ լերինք սիովնի, կողմանք հիւ_
սիսոյ՝ քաղաք Թագաւորի մեծի։
Ա̃ծ ’ի տաճարի իւրում յայտնի․ ’ի 4
ժամանակի ոչ̃ օգնական լինէր նց̃։
Ահաւասիկ Թագաւորութ̃ք երկրի 5
ժողովեցան, և անցին ’ի միասին։
Ինքեանք տեսին այսպէս՝ և զարմա_ 6
ցան․ խռովեցան սասանեցան, և
դողումն կալաւ զնոսա։
Անդ երկունք որպէս ’ի ծննդեան․ 7
’ի հողմ սաստիկ փշրեսցէ զնաւս ’ի
Թարսիս։
Որպէս լուաք, նոյնպէս և տեսաք 8
’ի քաղաք տն̃ զօրութեանց՝ ’ի քա_
ղաք այ̃ մերոյ։
Ա̃ծ հիմունս արկ նմա յաւիտեան․ 9
ընկալաք ա̃ծ զողորմութ̃ն քո ’ի մէջ
ժողովրդեան քո։
Ըստ անուան քում, նոյնպէս և 10
օրհնութ̃ն քո ընդ ամ̃ տիեզերս․
և արդարութ̃բ լի է աջ̃ քո։
Ուրախ եղիցի լեառն սիովն․ և ցն_ 11
ծասցեն դստերք յուդայ, վն̃ իրա_
ւանց քոց տր̃։
Շրջեցարուք զսիովնիւ, պաշա_ 12
րե_

րեցէք զնա. և պատմեցէք զաշտա-
րակս նորա։
13 Դիք զսիրտս ձեր 'ի վերայ զօրու-
թեն նր. բաժանեցէք զապարանսն նր,
զի պատմեսջիք յազգ յայլ։
14 Սա է Ած, Ած մեր յաւիտեանս յա-
ւիտենից. և սա հովուեսցէ զմեզ
մինչև յաւիտեան։

## ՍԱՂՄՈՍ. ԽԸ։

1 'Ի կատարած որդւոցն Կորխայ. սաղմոս
օրհնութեան 'ի դաւիթ։

2 Լուարուք զայս ամ ազգք, ուն-
կնդիր լերուք ամենեքեան,
որք բնակեալ էք յաշխարհի։
3 Ծնունդք երկրի և որդիք մարդկան,
'ի միասին մեծամեծք և տնանկք։
4 Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն,
և խորհուրդք սրտի իմոյ զհանճար։
5 Խոնարհեցուցից յառակս զունկն
իմ. բացից զառակս օրհնութեան 'ի
սկզբանէ։
6 Ընդէ՞ր բնաւ երկնչիմ ես յաւուր
չարի. զի անօրէնութիւնք գնացից ի-
մոց շուրջ եղեն զինև։
7 Յուսացեալքն 'ի զօրութիւն իւրեանց,
'ի

'ի բազմութիւն մեծութեան իւրեանց
պարծեսցին ։
Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ մարդ , 8
և ոչ տայ այ զփրկանս իւր ․ և ոչ
զգինս փրկանաց անձին իւրոյ ։
Վաստակեա՛յ յաւիտեան , և կեցցես 9
մինչ իսպառ ․ և ոչ տեսցես զապա-
կանութիւն ։
Յորժամ տեսցես՝ թէ իմաստունք 10
մեռանին , 'ի միասին անզգամք և
անմիտք կորիցեն ․ և թողցեն օտա-
րաց զմեծութիւն իւրեանց ․
Գերեզմանք տունք նոցա եղիցին 11
յաւիտեան , և յարկք նց ազգէ մին-
չև յազգ ․ և կարդասցեն անուանս
նոցա 'ի հողս իւրեանց ։
Մարդ 'ի պատուի էր՝ և ոչ իմա- 12
ցաւ , հաւասարեաց անասնոց ան-
բանից՝ և նմանեաց նոցա ։
Այս ճանապարհ է գայթագղութե 13
նց նոցին ․ յետ այսորիկ բերանովք
իւրեանց հաճեսցին ։
Որպ խաշն 'ի դժոխս մատնեսցին , 14
և մահ հովուեսցէ զնոսա ․ և տիրես-
ցեն նց ուղիղք ընդ առաւօտս ։
Օգնութիւնք նց մաշեսցին 'ի դժոխս ․ 15
և 'ի փառաց իւրեանց անկցին ։

16Բայց սակայն՝ ած փրկեսցէ զանձն
իմ 'ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդու-
նին զիս :
17Մի՛ երկնչիր՝ յորժամ մեծանայ
մարդ, և յորժամ բազում լինին
փառք տան նր :
18Զի ոչ թէ 'ի մեռանել իւրում
առցէ ընդ իւր զամ. և ոչ թէ իջ-
ցեն փառք տան նր ընդ նմա :
19Այլ անձն նր 'ի կեանս իւրում
օրհնեսցի. խոստովան եղիցի քեզ՝
յորժամ բարի արասցես դու նմա :
20Մտցէ նա մինչև յազգ հարց իւրոց.
մինչև յաւիտեան զլոյս մի՛ տեսցէ :
21Մարդ 'ի պատուի էր՝ և ոչ իմա-
ցաւ, հաւասարեաց անասնոց ան-
բանից՝ և նմանեաց նց :

## ՍԱՂՄՈՍ. ԽԹ :

Սաղմոս 'ի դաւիթ :

1 Ած ածոց տր խօսեցաւ, կո-
չեաց զերկիր՝ յարևելից
մինչև 'ի մուտս արևու :
2 'Ի սիովնէ մեծ վայելչութե փրկու-
թե գեղոյ նորա :
3 Ած մեր յայտնապէս եկեսցէ. և

ա̃ծ մեր մի՛ դադարեսցէ ։
Հուր առաջի նր̃ բորբոքեսցի , և 4
շուրջ զնովաւ մրրիկ յոյժ ։
Կոչեսցէ զերկինս 'ի վերուստ՝ և 5
զերկիր՝ 'ի դատել զժողովուրդ իւր,
ժողովել առ ինքն զսուրբս իւր , և
որք դնեն զպատարագս ուխտից 'ի
վերայ սեղանոյ նր̃ ։
Պատմեսցեն երկինք զարդարութի̃ 6
նր̃ , զի ա̃ծ դատաւոր է ։
Լուր ժողովուրդ իմ , և խօսեցայց 7
ընդ քեզ ․ և իսրայէլ՝ քեզ վկայե֊
ցից ․ զի ա̃ծ ա̃ծ քո ես եմ ։
Ո՛չ թէ վ̃ս պատարագաց քոց կշտամ֊ 8
բեմ զքեզ ․ զի ողջակէզք քո առա֊
ջի իմ են յամենայն ժամ ։
Ո՛չ ընդունիմ 'ի տանէ քումմէ զուա֊ 9
րակս ․ և ո՛չ 'ի հօտից քոց նոխազս ։
Իմ է ա̃մ գազան անտառի , երէ լե֊ 10
րանց և ա̃մ անասուն ։
Գիտեմ ես զա̃մ թռչունս երկնից ․ 11
գեղեցկութի̃ վայրի ընդ իս է ։
Թէ քաղցեայց , քեզ ի̃նչ ո՛չ ասա֊ 12
ցից ․ զի իմ է աշխարհ լրի̃ւ իւրով ։
Ո՛չ ուտեմ ես զմիս զուարակաց քոց ․ 13
և ո՛չ զարիւն նոխազաց քոց ըմպեմ ։
Մատո՛ ա̃յ պատարագ օրհնութե̃ ․ 14
կա֊

կատարեա՛ բարձրելոյն զուխտս քո ։
15 Կարդասջիր առ իս յաւուր նեղու-
թեան քո․ եւ փրկեցից զքեզ՝ եւ դու
փառաւոր արասցես զիս ։
16 Այլ մեղաւորին ասէ ա՟ծ․ իսկ
դու ընդէ՛ր բնաւ պատմես զար-
դարութիւն իմ, կա՞մ առնուս զուխտս
իմ ՚ի բերան քո ։
17 Զի դու ատեցեր զխրատ իմ․ մեր-
ժեցեր, եւ յետս ընկեցեր զամե-
նայն բանս բերանոյ իմոյ ։
18 Թէ տեսանէիր զգողս՝ ընթանայիր
ընդ նմա․ եւ ընդ շունս դնէիր զբա-
ժին քո ։
19 Բերան քո յաճախէր զչարութիւն,
եւ լեզու քո նիւթէր զնենգութիւն ։
20 Նստեալ՝ զեղբօրէ քումմէ չարա-
խօսէիր․ եւ ՚ի վերայ որդւոյ մօր քո
դնէիր զգայթագղութիւն ։
21 Զայս ամ՟ արարեր, եւ լռեցի քեզ․
կարծեցեր անօրէնդ ՚ի միտ քում,
թէ եւ ես քեզ նմանիցեմ ։
22 Արդ յանդիմանեցից եւ կացուցից
զայս ամ՟ առաջի քո․ իմացարուք ա-
մենեքեան՝ որոց մոռացեալ իցէ զա՟ծ ։
23 Գուցէ երբեք յափշտակիցէ, եւ ոչ
ոք իցէ՝ որ փրկիցէ ։

Պատարագ օրհնութեան փառաւոր ա_ 24
րասցէ զիս. և անդ է ճանապարհ,
ուր ցուցից նմա զփրկութիւն այ:

## ՍԱՂՄՈՍ. Ծ:

'Ի կատարած. սաղմոս 'ի Դաւիթ. 'ի ժա_ 1
մանակի ղն էկն առ նա Նաթան մարգարէ.
իբրև ղն մտեալ էր նա առ Բերսաբէէ:

Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողոր_ 2
մութեան քում. ըստ բազում գթու_
թեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ:
Առաւել լուա զիս յանօրէնութենէ 3
իմմէ. և 'ի մեղաց իմոց սբ արա զիս:
Զանօրէնութիւնս իմ ես ինքն գիտեմ. 4
և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:
Քեզ միայն մեղայ տր. և չար առա_ 5
ջի քո արարի:
Որպէս արդար եղիցես 'ի բանս քո. 6
և յաղթող 'ի դատել քեզ:
Անօրէնութբ յղացայ, և 'ի մեղս 7
ծնաւ զիս մայր իմ:
Դու տր զճշմարտութիւն սիրեցեր. 8
զանյայտս և զծածկեալս իմաստու_
թբ քով յայտնեցեր ինձ:
Ցօղեա յիս մշտկաւ, և սբ եղէց. 9
լուա, և քան զձիւն սպիտակ եղէց:
Լսե_

10Լսելի՛ արա ինձ զցնծութիւն և զու-
րախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ
տառապեալք ։
11Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց, և
զա̃մանօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն ։
12Սիրտ ս̃բ հաստատեա՛ յիս ա̃ծ, և
հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։
13Մի՛ ընկենուր զիս ՚ի յերեսաց քոց,
և զհոգի քո ս̃բ մի՛ հաներ յինէն ։
14Տո՛ւր ինձ ցնծութի̃ փրկութե̃ քոյ • և
հոգւովդ պետութեան քոյ հաստա-
տեա՛ զիս ։
15Ուսուցից անօրինաց զճանապարհս
քո • և ամպարիշտք առ քեզ դարձցին։
16Փրկեա՛ զիս յարենէ ա̃ծ ա̃ծ փրկու-
թե̃ իմոյ • ցնծասցէ լեզու իմ յար-
դարութե̃ քում ։
17Տ̃ր եթէ զշրթունս իմ բանաս, բե-
րան իմ երգեսցէ զօրհնութի̃ս քո ։
18Թէ կամեցեալ էիր • պատարագս
մատուցանէաք • բայց դու ընդ ող-
ջակէզս իսկ ոչ հաճեցար ։
19Պատարագ ա̃յ հոգի խոնարհ • ըղ-
սիրտ ս̃բ և զհոգի խոնարհ ա̃ծ ոչ
արհամարհէ ։
20Բարի՛ արա Տ̃ր կամօք քովք սիովնի •
և շինեսցին պարիսպք երուսաղէմի ։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատա- 21
րագս արդարութեան . ուխտից
պատարագս հանցեն 'ի սեղան քո
զուարակս :

## ՍԱՂՄՈՍ . ԾԱ :

*'Ի կատարած իմաստութեան , սաղմոս 'ի Դա- 1
ւթի . 'ի ժամանակի յորժամ եկն Դովեկ Եդով-
մայ , պատմեաց Սաւուղայ , թէ եհասանէր
Դաւիթ 'ի տուն Աբիմելեքայ է :*

Զի՞ պարծիցիս 'ի չարութեան հզօր՝ զա- 2
նօրէնութիւն . զօր հանապազ զա-
նիրաւութիւն խորհեցաւ 'ի լեզուի
իւրում :
Որպէս ածելի սուր՝ սրեաց զնեն- 3
գութիւն . սիրեաց զչարութիւն քան
զբարութիւն . զանօրէնութիւն քան զխօսս
արդարութե :
Սիրեացն զա՜մ խօսս կործանման , 4
և զլեզուս նենգաւորս :
Վ՟ այսորիկ ա՟ծ կործանեսցէ զնա 5
իսպառ . խլեսցէ և հանցէ զնա յար-
կաց իւրոց , և զարմատս նորա յերկ-
րէն կենդանեաց :
Տեսցեն արդարք և երկիցեն . զնո- 6
վաւ ծիծաղեսցին , և ասասցեն :

Ահա

7 Ահա այր է, որ ոչ արար զա՟ծ իւր
օգնական . այլ յուսացաւ նա 'ի բա֊
զում մեծութիւն իւր, և զօրացաւ 'ի
նանրութեան իւրում :
8 Այլ ես որպէս ձիթենի պտղալից
'ի տան ա՟յ . յուսացայ յողորմութիւն
ա՟յ յաւիտեան՝ և յաւիտեանս յա֊
ւիտենից :
9 Խոստովան եղէց քեզ տ՟ր յաւիտ֊
եան, զի արարեր . և համբերից ան֊
ուան քում, զի քաղցր ես առաջի
սրբոց քոց :

## ՍԱՂՄՈՍ . ԾԲ :

1 'ի կատարած . վասն մաղաղէթայ . ի֊
մաստութիւն 'ի Դաւիթ :

2 Ասաց անզգամն 'ի սրտի իւ֊
րում թէ ոչ գոյ ա՟ծ . ապա֊
կանեցան և պղծեցան
յանօրէնութիւն իւրեանց .
և ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն :
3 Ա՟ծ յերկնից նայեցաւ յա՟մ որդիս
մարդկան, տեսանել թէ իցէ ոք
իմաստուն՝ որ խնդրիցէ զա՟ծ :
4 Ամենեքեան խոտորեցան 'ի միասին,
և անպիտանացան :

Ոչ ո՛ք է որ առնէ զբարի, և չէ՛ ոք 5
մինչև ՚ի մի։
Որպէս ո՛չ ծանիցեն ամենեքեան, 6
որ գործեն զանօրէնութի̃։
Որք ուտէին զժողովուրդ իմ ո̃պ 7
կերակուր հացի. և առ ա̃ծ ո՛չ կար-
դացին։
Անդ երկիցեն երկիւղ՝ ուր ո՛չ իցէ 8
երկիւղ. զի ա̃ծ ցրուեսցէ զոսկերս
մարդահաճոյից։
Ամաչեսցեն և յամօթ լիցին, զի ա̃ծ 9
անարգեաց զնոսա։
Ո՞ տացէ ՚ի Սիօնէ զփրկութի̃ Իս- 10
րայէլի. ՚ի դարձուցանել տ̃ր զգե-
րութի̃ ժողովրդեան իւրոյ, ցնծասցէ
Յակոբ, և ուրախ եղիցի Իսրայէլ։

## ՍԱՂՄՈՍ. ԾԳ։

՚Ի կատարած. ընդ օրհնութիւնս իմաստութե̃ 1
՚ի Դաւթի. ՚ի ժամանակի զի եկին զի-
փացիքն, և ասէին ցՍաւուղ՝ ահաւասիկ
Դաւիթ թաքուցեալ նստի առ մեզ։

Ա̃ծ յանուան քում կեցո՛ զիս, և 2
՚ի զօրութե̃ քում իրաւ արա ինձ։
Ա̃ծ լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր 3
բանից բերանոյ իմոյ։

Օտարք

4 Օտարք յարեան 'ի վերայ իմ. և
հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ հա_
մարեցան զքեզ տէր առաջի իւրեանց:
5 Ահա տէր օգնական իմ. և տէր ըն_
դունելի հոգւոյ իմոյ:
6 'Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս
իմ, ճշմարտութբ քով սատակեա զնս:
7 Ես կամօք իմովք պատարագս մա_
տուցից քեզ. խոստովան եղէց ան_
ուան քում տէր, զի բարի է:
8 Յամ նեղութե իմմէ փրկեցեր զիս.
և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ:

## ՍԱՂՄՈՍ. ԾԴ:

1 'Ի կատարած. ընդ օրհնութիւնս իմաստութե.
սաղմոս 'ի դաւթ:

2 Ո՛ւնկնդիր տէր աղօթից իմոց. և մի
անտես առներ զխնդրուածս իմ:
3 Նայեաց առ իս և լուր ինձ. զի տրտմ_
եցայ ես 'ի ձանձրանալ իմում, և
խռովեցայ:
4 'Ի ձայնէ թշնամւոյն և 'ի նեղել մե_
ղաւորին, խոտորեցան յիս անիրա_
ւութբ. բարկութբ ոխս պահէին ինձ:
5 Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ
մահու անկաւ 'ի վերայ իմ:

Ահ և դողումն եկն 'ի վ՟ր իմ, և ծած_ 6
կեաց զիս խաւար ։
Ասէի տայր ոք ինձ թևս ոպ՟ ա_ 7
ղաւնւոյ ․ զի թռչէի՝ վերանայի, և
հեռացեալ դադարէի յանապատի ։
Ակն ունէի այ՟, որ փրկէր զիս 'ի 8
կարճմտութենէ 'ի զայրանալոյ՝ 'ի
մրրկեալ նեղութենէ ։
Ընկղմ՛ Տ՟ր և բաժանեա զլեզուս նց ․ 9
զի տեսի զանօրէնութի, և զհակա_
ռակութի 'ի քաղաքի ։
'Ի տուէ և 'ի գիշերի շուրջ եղեն 10
զպարսպօք նր՝ անօրէնութիք ․ չա_
րիք և մեղք են 'ի մէջ նց ․ և ոչ պա_
կասեաց 'ի հրապարակաց նց վաշխ
և նենգութի ։
Զի թէ թշնամւոյն նախատեալ էր, 11
համբերէի արդեօք ․ կամ ատելւոյն
մեծաբանեալ էր 'ի վերայ իմ, թագ_
չէի արդեօք 'ի նմանէ ։
Իսկ դու մարդ հաւասար իմ, ա_ 12
ռաջնորդ իմ և ծանօթ իմ ։
Ապաքէն՝ 'ի նոյն քաղցրացուցեր ինձ 13
և քեզ կերակուր ․ զի գնայաք միա_
բանութբ 'ի տան այ ։
Եկեսցէ մահ 'ի վ՟ր նց, և կենդան_ 14
ւոյն իջցեն 'ի դժոխս ․ զի չարութի է

'ի

'ի բնակութեան նց՝ և 'ի մէջ նց ։
15 Ես առ ած կարդացի, և լուաւ ինձ
յերեկոյս՝ 'ի վաղորդայն՝ և 'ի հա-
սարակ աւուր ։
16 Պատմեցի և ասացի և լուիցէ ձայ-
նի իմում, փրկեսցէ խաղաղութբ
զանձն իմ 'ի մերձաւորաց իմոց ․ զի
կարեօք հասին 'ի վերայ իմ ։
17 Լուիցէ ած՝ և խոնարհ արասցէ զնս․
որ յառաջն է քան զյաւիտեանս ։
18 Զի ոչ գոյր նոցա փոխանակ ․ և ոչ
երկեան յայ ։
19 Ձգեաց զձեռն իւր 'ի հատուցա-
նել նց․ և նոքա պղծեցին զօրէնս նր ։
20 Բաժանեցան 'ի սրտմտութէ երե-
սաց նր ․ և եհաս 'ի սիրտս նց ։
21 Կակուղ էին բանք նց քան զձէթ,
և ինքեանք որպէս նետք ։
22 Ընկեա 'ի տր զհոգս քո՝ և նա կե-
րակրէ զքեզ ․ և ոչ տայ յաւիտեան
սասանութին արդարոյ ։
23 Դու ած իջուսցես զնս 'ի գուբ ա-
պականութե ․ արք արիւնահեղք և
նենգաւորք մի հասարակեսցեն զա-
ւուրս իւրեանց ․ այլ ես 'ի քեզ տր
յուսացայ ։

## Օրհնութի̄ն Երկրին Մովսէսի ա̄ծատէս մար- գարէին : Բ · Օրհն · ԼԲ :

Ձի հուր բորբոքեցաւ ՚ի 31
բարկութէ̄ իմմէ · այրեսցէ
և իջցէ մինչ ՚ի դժոխս
ներքինս :
Կերիցէ զերկիր՝ և զա̄մ բոյս երկրի 32
նց̄ · վառեսցին հրով · բորբոքեսցին
հիմունք լերանց նոցա :
Կուտեցից զչարիս ա̄մ ՚ի վերայ նց̄ · 33
և նետիւք իմովք սպառեցից զն̄ս :
Մաշեալք և հիւծեալք ՚ի սովոյ · 34
գազանաբեկ գէշ անկեալ ամենայն
թռչնոց երկնից :
Լարս ատանց բժշկութէ̄ արձակե- 35
ցից ՚ի վերայ նոցա՝ զգազանս անա-
պատի · որ այսր՝ և անդր քարշեսս-
ցեն զնոսա ընդ երկիր :
Արտաքուստ մանկակոտորս արաս- 36
ցէ զնոսա սուր, և ՚ի ներքուստ շտե-
մարանաց նց̄ անտի արհաւիրք ահից:
Զերիտասարդս կուսանօք հան- 37
դերձ, և զտղայս հաստատելօք ծե-
րովք հանդերձ :

Ա.

38Ասացի թէ ցրեցից զնոսա · և դադա-
րեցուցից զյիշատակս նց յազգաց :
39Թէ ոչ վն բարկութեն սրտմտութեն
թշնամւոյն · զի մի երկայնակեացք
եղիցին , և մի բարձրասցին հպար-
տացեալ թշնամիքն , և ասասցեն :
40Թէ ձեռն մեր բարձր է , և բազուկ
մեր հզօր · և ոչ տր ած արար զայս ամ :
41Զի ազգ մի խորհրդակորոյս են նո-
քա · և ոչ գոյ ՚ի նոսա իմաստութն ,
և ոչ խորհեցան ՚ի միտ առնուլ զայս
ամենայն · և արդ՝ ընկալցին զամօթ
յանձինս իւրեանց :
42Զարմանք մի մեծ այս են · զիարդ
մի զհազարս հալածեսցէ · կամ եր-
կուք զբիւրս շարժեսցեն :
43Թէ ոչ տն ած մատնեալ էր զնոսա ,
և տուեալ լիցէ զնոսա ՚ի ձեռս թշնա-
մեաց նոցա :
44Զի ոչ են դիքն նց որպէս զած մեր ·
այլ թշնամիք մեր վատախորհուրդք :
45Յայգւոյն սոդոմայ էր որթ նոցա ,
և տունկ նոցա ՚ի գոմորայ :
46Խաղող նոցա խաղող դառնութե · և
ողկոյզ նոցա ՚ի դառնութե լեղւոյ :
47Սրտմտութի բարկութե վիշապաց
գինի նոցա · սրտմտութի իժից՝ ան-
հնա

Հնարին առանց բժշկութե͞ ։
Ո՞չ այս ա͞մ ժողովեալ է առ իս․ և 48
կնքեալ պահի 'ի գանձի իմում ։
Յաւուր վրիժուց հատուցման հա֊ 49
տուցից նոցա․ 'ի ժամանակի յո֊
րում հարցի շքարի ոտն ն͞ց ։
Մերձ է օր կորստեան ն͞ց․ հասեալ 50
է պատրաստութե͞ ա͞ր 'ի վ͞ր ն͞ց ։
Դատէ ա͞ր զժողովուրդ իւր․ և 'ի 51
ծառայս իւր մխիթարի ։
Զի ետես զնոսա լքեալս լուծեալս, 52
և մաշեալս 'ի գերութի ։
Եւ ասիցէ ա͞ր , ուր են դիքն ձեր՝ 53
յորս յուսացեալ էիք դուք 'ի սոսա․
զորոց զճարպ ստանդիցն ուտէիք ,
և ըմպէիք զգինի զոհիցն ։
Արդ՝ յարիցեն օգնեսցեն , և եղի֊ 54
ցին ձեզ թիկունք ։

Նորին [illegible] ։

Ծաներուք և տեսէք՝ զի ես եմ․ 55
և ոչ գոյ այլ ա͞ծ բաց յինէն ։
Ես սպանանեմ՝ և ես կեցուցանեմ․ 56
հարկանեմ՝ և ես բժշկեմ․ և ոչ ոք
իցէ՝ որ հանիցէ զձեզ 'ի ձեռաց իմոց ։
Համբարձի յերկինս զձեռս իմ․ 57
երդուայ աջով իմով , և ասացի թէ
կեն֊

կենդանի եմ ես յաւիտեան ։

58 Աղեցից ամ՟ փոյլակն զառասեր իմ. և ՚ի խնդիր վրիժուց արձակեցից զաչ իմ ։

59 Հատուցից զհատուցումն թշնամեաց իմոց. և ատելեաց իմոց հատուցից զհատուցումն նոցա նոցին ։

60 Արբեցուցից զնետս իմ յարենէ նց. և սուր իմ կերիցէ միս ՚յարենէ վիրաւորելոց գերելոց գլխոյ իշխանաց՝ թշնամեաց նոցա ։

61 Ուրախ եղիցին երկինք նովաւ. և երկիր պագցեն նմա ամ՟ որդիք այ՟ ։

62 Ուրախ եղերուք հեթանոսք ը՟ ժողովրդեան նր. և զօրացուսցեն զնա ամ՟ հրեշտակք այ՟ ։

63 Խնդրելով խնդրեցաւ վրէժ արեան որդւոց նոցա. հատուցումն թշնամեաց նոցա՝ հատուցաւ նց ։

64 Հատուցումն ատելեաց նոցա հատուցաւ նց. սրբեսցէ տր՟ զերկիր ժողովրդեան իւրոյ ։

Մաղթանք ։

Դու ես տր՟ մեր՝ դու ես քս՟ փրկիչ մեր, զքեզ օրհնեմն անձինք մեր ։ Մարդասէր տր՟ վասն սրբուհ-ւոյ

ւոյ անարատ մօր քոյ և կուսի. և վ՞ն
խաչի քոյ պատուականի, ո՞ր ընկալ
զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ:

Քարոզ և աղօթք՝ Մի նախանձիր, և
Խոստովան չարանացն:

Վասն ուղղելոյ զգնացս մեր 'ի ճա-
նապարհս խաղաղութե, զո՞ր ա-
ղաչեսցուք: Տ՞ր ողորմեա:
Վասն ցրելոյ 'ի մէնջ զա՞մ խորհուրդս
չարին, զո՞ր աղաչեսցուք:
Վասն պարգևելոյ մեզ աստուծ խոր-
հուրդս՝ և առաքինի վարս՝ զո՞ր աղ:
Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ
ամենազօր աջոյն իւրոյ, զո՞ր աղաչ:
Վասն խորտակելոյ զհակառակորդն
վաղվաղակի ը ոտիւք մերովք, զո՞ր
աղաչես:
Վ՞ն հոգւոյն հանգուցելոյ՝ որք ճըշ-
մարիտ և ուղիղ հաւատով 'ի քո՞ ննջե-
ցին, զո՞ր աղաչեսցուք:
Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և ո՞ւ
Զանձինս: Ողորմեաց:

Աղօթք:

ՏԷՐ երկնի և երկրի՝ արարիչ ամ
արարածոց երևելեաց և անե-
րևու-

բեւութիւնց։ Առ քեզ կարդամք յա՛մ ժամ. զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն քո, և արքայութիւն քո ամենեցուն տիրէ։ Շնորհեա՛ մեզ երկիւղիւ ՚ի պաշտօնս քո կանխել հանապազ. սիրել զքեզ ՚ի բոլոր սրտէ՝ և ՚ի բովանդակ մտաց. և յա՛մ զօրութէ մերմէ պահել զպատուիրանս քո։ Համբառնալ առ քեզ զձեռս մեր ՚ի սրբութի առանց բարկութե և երկմտութե. և գտանել ՚ի քէն զշնորհս և զողորմութի, և զառաքինասէր գործոցն յաջողութի։ Վասն զի դու ես Տր կենաց՝ և Տծ ողորմութեց. և քեզ վայելէն փառք իշխանութի և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութի ամենեցուն։

Առաւօտոյ երկրպագեսցուք։

Քում ամենազօր և յաղթող տէրութեդ կրկնի Տմ ծունր յերկրպագութիւն. և փառաւորի յամենեցունց թագաւորութի քո։ Նայեա՛ յերկրպագութիւս մեր, և ուսո՛ մեզ առնել զարդարութի ճշմարտութե։ Վասն զի դու ես Տծ խաղաղութե, որ բարձեր զթշնամութի ՚ի միջոյ, և արարեր խա-

ղա

պաղութն յերկինս և յերկրի · հեռա-
ւորաց և մերձաւորաց աւետարանե-
ցեր զնոր պարգևս քոյին բարեացդ ։
Որում և զմեզ մեծի շնորհացդ արժա-
նի արարեալս, դասելով ընդ ճշմարիտ
երկրպագուս.քո · ած մեր՝ և տր մեր,
և փրկիչ յս քս ։ Որ ես օրհնեալ ընդ
հօր և ընդ սբ հոգւոյդ · այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից · Ամէն։

Մաղթանք ։

Յերգս օրհնութե և՛ի ձայն սաղմոսաց
անդադար փառաւորեմք զհայր և զորդի
և զսբ հոգիդ, այժմ և միշտ, և յա-
ւիտեանս յաւիտենից · ամէն ։

Օրհնեալ տր մեր յս քս · ամէն ։
Հայր մեր որ ։



Սբ յարութիւն տն:

# ՍԱՂՄՈՍ. ԾԵ:

1 'Ի կատարած. վասն ժողովրդեանն, որ
'ի սրբոյն հեռացեալ էին. 'ի ժամանակի
ն կալան զնա այլազգիքն 'ի Գէթ. Յոր-
ջանագիր. սաղմոս 'ի Դաւթի:

2 ՈՂՈՐՄԵԱ՛ ԻՆՁ
Տէր, զի կոխեաց զիս մարդ.
զօրհանապազ պատերազ-
մունք նեղեցին զիս:
3 Կոխեցին զիս Թշնամիք իմ զօրհա-
նապազ. բազում եղեն՝ որք մարտն-
չէին ընդ իս 'ի բարձանց:
4 'Ի տուէ ես ոչ երկեայց, զի 'ի քո
յուսացայ. առաւօտուն գովեսցի
զբանս իմ. յԱծ յուսացայ՝ և ոչ եր-
կեայց, զի՞ արասցէ ինձ մարդ:
5 Զօրհանապազ զբանս իմ անարգե-
ցին. զինէն էին խորհուրդք նց 'ի
չարութիւն:

Պան

Պանդուխտք եղիցին , և Թաքթա֊ 6
քուրք շրջեսցին . ն՟ք գարշապարի
իմում սպասեսցեն՝ որ՟պ և սպասէին
անձին իմոյ :

Որպէս առ ոչինչ մերժեսցես զն՟ս . 7
բարկութեամբ զժողովուրդս հնազան֊
դեցուսցես :

Ա՟ծ զկեանս իմ պատմեցից քեզ . 8
եդից զարտասուս իմ առաջի քո ,
որ՟պ խոստացար դու ինձ :

Դարձցին թշնամիք իմ յետս իւր֊ 9
եանց . յաւուր յորում կարդացից
առ քեզ :

Ահա ծանեայ զի ա՟ծ իմ ես դու . 10
զա՟ծ օրհնեցից 'ի բանս իմ , և զտ՟ր
գովեցից 'ի խօսս իմ . յա՟ծ յուսացայ
և ոչ երկեայց , զի՞ արասցէ ինձ մ՟դ :

Յինէն են ուխտք իմ , զոր տացքեզ 11
օրհնութ՟ն ա՟ծ ա՟ծ իմ :

Փրկեցեր զանձն իմ 'ի մահուանէ , 12
զաչս իմ յարտասուաց , և զոտս իմ
'ի գայթագղութէ . հաճոյ եղէց ա֊
ռաջի ա՟ծ յերկրին կենդանեաց :

# ՍԱՂՄՈՍ. ԾԶ։

1 'Ի կատարած մի՛ ապականեր. 'Ի դաւիթ
յարձանագիր. 'Ի ծածանակի՝ զի փախու-
ցեալ թափառեալ էր նա յերեսաց Սաւու-
ղայ՝ յայրն անդ :

2 Ողորմեա ինձ ած՝ ողորմեա ինձ,
զի 'ի քեզ յուսացաւ անձն իմ :
3 'Ի հովանի թեւոց քոց յուսացայց,
մինչեւ անցցէ անօրէնութիւն :
4 Աղաղակեցի առ ած բարձրեալ,
առ ած բարերար իմ :
5 Առաքեաց յերկնից՝ եւ կեցոյց զիս.
ետ 'ի նախատինս՝ որ կոխէին զիս :
6 Առաքեաց ած զողորմութիւն եւ զճշ-
մարտութիւն իւր. եւ փրկեաց զանձն
իմ 'ի միջոյ գազանաց, զի ննջէի ես
խռովեալ :
7 Որդւոց մարդկան ատամունք իւր-
եանց զէն եւ նետք են, եւ լեզուք նց
ող սուր սուսերի :
8 Բարձրեալ ես դու յերկինս ած.
եւ յամ երկրի են փառք քո :
9 Որոգայթ պատրաստեցին ոտից ի-
մոց. խոնարհ արարին զանձն իմ.
փորեցին առաջի իմ խորխորատ, եւ

ան-

անկան ինքեանք 'ի նոյն ։
Պատրաստ է սիրտ իմ ա̄ծ, պատ_ 10
րաստ է սիրտ իմ. օրհնել և սաղ_
մոս ասել քեզ փառօք իմովք ։
Զարթիր փառք իմ, զարթիր սաղ_ 11
մոսիւք և օրհնութ̄բ. և ես զարթեայց
առաւօտուց ։
Խոստովան եղէց քեզ 'ի ժողո_ 12
վուրդս տ̄ր. և սաղմոս ասացից քեզ
յազինս ։
Մեծ եղև մինչև յերկինս ողորմութի 13
քո. մինչև յամպս ճշմարտութի քո ։
Բարձրեալ ես դու յերկինս ա̄ծ. 14
և յա̄մ երկրի են փառք քո ։

## ՍԱՂՄՈՍ. ԾԷ ։

I Ի կատարած. մի ապականներ. յարձանա_
գիր. սաղմոս 'ի դաւիթ ։

Թէ արդարև զարդարութի խօ_ 2
սէիք. և ուղիղս դատէիք որ_
դիք մարդկան ։
Քանզի և արդ իսկ 'ի սրտի ձերում 3
զանօրէնութի գործէիք յերկրի. ա_
նիրաւութի ձեռք ձեր նիւթեն ։
Օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ. խա_ 4
բեցան յարգանդէ, և խօսեցան սուտ ։

5 Սրտմտութիւն նոցա ըստ նմանութե՟
օձի • որպէս իժի և քարբի , զի
խցեալ է զականջս իւր :
6 Զի մի՛ լուիցէ նա զձայն թովչի ձար֊
տարի • և մի՛ առցէ դեղ 'ի դեղա֊
տուէ իմաստնոյ :
7 Ած փշրեսցէ զատամունս նոցա 'ի
բերանս իւրեանց • և զծանիս առ֊
իւծուց խորտակեսց Տր :
8 Անարգ եղիցին նոքա որպ ջուր՝ զի
հեղու • 'ի լարել աղեղան նր՝ տկա֊
րասցին որպէս մոմ զի հալի , և
սպառեսցին :
9 Անկաւ հուր՝ և ոչ տեսին զարև ,
մինչև 'ի միտ առեալ էր զփուշս իւ֊
րեանց • որպ զծնիկ բարկութբ՝ կեն֊
դանույն կլիցէ զնս :
10 Ուրախ եղիցի արդարն՝ յորժամ
տեսցէ զհատուցումն • և զձեռս իւր
լուասցէ յարեան մեղաւորի :
11 Եւ ասասցէ մարդ • թէ արդարև
գուցէ պտուղ արդարոյ , և է Ած
որ դատի զնս յերկրի :

# ՍԱՂՄՈՍ. ԾԸ։

՚Ի կատարած · մի՛ ապականիցեր · յարձանա_ 1
գիր · ՚ի ժամանակի զի առաքեաց Սաւուղ ·
և պահէին զտունն նորա, զի սպանցէ զնա·
սաղմոս ՚ի Դաւիթ ։

Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց ի_ 2
մոց ած, յայնցանէ որ յա_
րուցեալ են ՚ի վերայ
իմ, ապրեցո՛ զիս ։
Փրկեա՛ զիս յայնցանէ, որք գործեն 3
զանօրէնութի՛ · յարանց արիւնահե_
ղաց ապրեցո՛ զիս ։
Որսալ զանձն իմ կամեցան · և հա_ 4
սին ՚ի վերայ իմ հզօրք ։
Ո՛չ մեղք իմ՝ և ո՛չ յանցանք · առանց 5
մեղաց ընթացայ՝ և ուղիղ եղէ ։
Զարթի՛ր տր առաջ իմ, և տե՛ս դու 6
տր զօրութեանց ած իսրայէլի ։
Նայեա՛ց և ա՛յց արա ամ հեթանո_ 7
սաց, մի՛ ողորմիր ամենեցուն, որք
գործեն զանօրէնութի՛ ։
Դարձցի՛ն ընդ երեկոյս · սովեսցի՛ն 8
ոպ շունք , և շրջեսցի՛ն զքաղաքաւ ։
Նոքա զօղանջեսցեն բերանոք իւ_ 9
րեանց · և սուր է ՚ի շրթունս նոցա ·

իսկ

10Իսկ արդ՝ ո՞վ լուաւ զայս. զի դու
տ̅ր ծիծաղեցիս զնոքօք, և արհա-
մարհեսցես զա̅մ հեթանոսս:
11Զզօրութիւն իմ առ քեզ պահեցից,
զի ա̅ծ օգնական իմ է:
12Ա̅ծ իմ, ողորմութիւն ն̅ր՝ կանխեսցէ
առ իս. և ա̅ծ իմ ցոյց ինձ՝ ի թշ-
նամիս իմ:
13Մի՛ սպանաներ զնոսա, զի մի՛ մո-
ռասցին զժողովուրդս քո:
14Ցրուեա՛ զն̅ս զօրութ̅բ քով, և ընկ-
ճեա՛ զնոսա. զի դու ես պաշտպան
իմ տէր:
15Մեղք բերանոյ նոցա՝ և բանք շր-
թանց նոցա, ընկլցին նոքա յամբար-
տաւանութեան իւրեանց:
16Յանէծս և ՚ի ստուե̅ մատնեսցին.
՚ի կատարածի բարկութե̅ սպառես-
ցին, և մի՛ գայցին:
17Գիտասցեն՝ զի ա̅ծ տիրէ յակով-
բայ, և ա̅մ ծագաց երկրի:
18Դարձցին ընդ երեկոյս. սովեսցին
ո̅պ շունք, և շրջեսցին զքաղաքաւ:
19Նոքա սփռեսցին յուտել. ապա թէ
ոչ յագեսցին, տրտնջեսցեն:
20Ես օրհնեցից զօրհնութիւն ա̅ն. և
ցնծացայց առաւօտուց յողորմութե̅
քում:

քում։

Զի եղեր իմ պաշտպան՝ և տուն ա_ 21
պաւինի, յաւուր նեղութեան իմոյ
օգնական իմ։

Քեզ սաղմոս ասացից՝ ած ապաւէն 22
իմ. ած ողորմութիւն իմոյ։

## ՍԱՂՄՈՍ. ԾԹ։

՚Ի կատարած. պատասխանելոց ժամանակաց 1
առ ատամանն, ՚ի ժամանակին զի հրձիգ ա_
րար նա զՄիջագետս և զասորեստանն Սու_
բայ, և ՚ի դարձին հարկանէր յովաբ զՁորն
Աղից յերկոտասան հազարս։

Յարձանագիր. ասացեալ ՚ի դաւթէ։

Ած մերժեցեր և աւերեցեր զմեզ. 2
բարկացար, և գթացիր ՚ի մեզ։
Շարժեցեր զերկիր, և խռովեցու_ 3
ցեր զնա. բժշկեա՛ զխարուածս սո_
րա՝ զի սասանեցաւ։
Ցուցեր ժողովրդեան քում խստութի. 4
և ետուր ըմպել մեզ գինի յիմարութե։
Ետուր երկիւղածաց քոց նշան, զի 5
ապրեսցին յերեսաց աղեղան։
Որպէս փրկեսցին սիրելիք քո. կեցո՛ 6
աջով քո, և լուր մեզ։
Ած խօսեցաւ ՚ի սրբութեան իւրում. 7

բարձր

բարձր եղէց՝ բաժանեցայց զՍիւքէմ
և զհովիտն յարկաց չափեցից ։
8 Իմ է Գաղաադ, և իմ է Մանասէ․
Եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ ։
9 Յուդայ թագաւոր իմ․ Մովաբ ա-
ւազան յուսոյ իմոյ ։
10 Յեդովմէ ուղղեցից զգնացս իմ․ և
ինձ այլազգիք հնազանդ եղեն ։
11 Ո՞ տարցէ զիս 'ի քաղաք ամուր․
կամ ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչև
յեդովմ ։
12 Եթէ ոչ դու ա̃ծ, որ մերժեցեր
զմեզ, և ո՛չ ելեր ա̃ծ ը̃ զօրս մեր ։
13 Տո՛ւր մեզ օգնութիւն 'ի նեղութեան․
զի ընդունայն է փրկութիւն մարդոյ ։
14 Աստուծով արասցուք զօրութիւն․
և նա արհամարհեսցէ զայնոսիկ՝ որ
նեղեն զմեզ ։

## ՍԱՂՄՈՍ․ Կ ։

1 'Ի կատարած ընդ օրհնութեն․ սաղմոս 'ի
Դաւթի ։

2 Լո՛ւր ա̃ծ աղօթից իմոց․ և նայեաց
ը̃ր յաղօթս իմ ։
3 'Ի ծագաց երկրէ կարդացի առ քեզ,
մինչ 'ի վաստակել սրտի իմոյ ։

'Ի վէմն բարձր արարեր զիս • ա_ 4
ռաջնորդեցեր ինձ, և իմ եղեր յոյս՝
և աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց
թշնամւոյն ։
Բնակեցայց 'ի յարկս քո յաւիտեան • 5
և ծածկեցայց ընդ հովանեաւ թևոց
քոց ։
Դու ած, լուար աղօթից իմոց • 6
ետուր ժառանգութիւն, որք երկն_
չին յանուանէ քումմէ ։
Աւուրս յաւուրս յաւելեր թագա_ 7
ւորի ամաց նր, աւուրս ազգաց
մինչև յազգս նորա ։
Կայ և մնայ յաւիտեան առաջի այ 8
ողորմութիւն և ճշմարտութի, որք
խնդրեսցեն 'ի նմանէ ։
Այնպէս սաղմոս ասացից քեզ յաւի_ 9
տեանս յաւիտենից • և տաց քեզ
զաղօթս իմ օրըստօրէ ։

## ՍԱՂՄՈՍ • ԿԱ ։

'Ի կատարած • 'Ի վերայ Իդիթոմայ • 1
սաղմոս 'ի դաւթի ։

Բայց միայն այ հնազանդ լեր 2
անձն իմ • զի 'ի նմանէ է ինձ
փրկութիւն ։

Նա

3 Նա է ած իմ եւ փրկիչ իմ. աստուածն
իմ, զի մի սասանեցայց առաւել։
4 Մինչեւ յերբ յառնէք 'ի վերայ մար֊
դոյ՝ սպանանել ամենեքեան. ոպ յոր֊
մոյ թիւրելոյ՝ եւ 'ի ցանկոյ մերժելոյ։
5 Բայց միայն զպատիւ իմ խորհեցան
մերժել յինէն. եւ ընթացան 'ի ծա֊
րաւս իւրեանց։
6 Բերանովք իւրեանց օրհնէին, եւ սըր֊
տիւք 'անիծանէին։
7 Բայց սակայն այ հնազանդ լիցի
անձն իմ, զի 'ի նմանէ է ինձ համ֊
բերութի։
8 Նա է ած իմ եւ փրկիչ իմ, աստուածն
իմ. զի մի սասանեցայց։
9 Յայ է զօրութիւն իմ եւ փառք իմ.
ած օգնութե իմոյ, յոյս իմ է առ ած։
10 Յուսացարուք 'ի նա ամ ժողովք
ժողովրդոց. սփռեցէք առաջի նորա
զսիրտս ձեր, զի ած օգնական է
մեր յաւիտեանս ժամանակաց։
11 Սակայն ընդունայն են որդիք մարդ֊
կան. սուտ են որդիք մարդկան, 'ի
կշիռս իւրեանց մեղանչեն, եւ նո֊
քեանք յունայնութե են 'ի միասին։
12 Մի յուսայք յանիրաւութի, յափըշ֊
տակութե մի ցանկայք. եւ մեծութի
թէ

եթէ առուէին գայցէ, մի յօժարեսցին
սիրտք ձեր:
Մի անգամ խօսեցաւ Տծ, և երկուս 13
զայս լուայ:
Յայտ է զօրութիւն, և քո Տր ողոր- 14
մութի. և դու հատուցանես իւրա-
քանչիւր ըստ գործս նց:

## ՍԱՂՄՈՍ. ԿԲ:

Սաղմոս 'ի Դաւիթ. մինչդեռ նստէր նա 1
յանապատին անդ հրէաստանի:

Ած Ած իմ, ես առ քեզ առաւօտ 2
դառնամ. ծարաւեաց առ քեզ
հոգի իմ. քանի՛պատիկ ես և մար-
մին իմ:
Որպէս երկիր անապատ և անջուր, 3
ուր ոչ գոյ 'ի նմա ճանապարհ:
Այսպէս 'ի սբս երևեցայց քեզ տե- 4
սանել ինձ զզօրութին քո և զփառս քո:
Վասն զի լաւ է ինձ ողորմութին քո 5
քան զկեանս իմ. և շրթունք իմ գո-
վեսցեն զքեզ:
Այսպէս օրհնեցից զքեզ 'ի կեանս 6
իմ, և յանուն քո համբարձից ըզ-
ձեռս իմ:
Որպէս 'ի ճարպոյ պարարտութենէ 7
լցցէ

լցցի անձն իմ, շրթամբք ցնծութե-
օրհնեսցէ զքեզ բերան իմ։
8 Զի թէ յիշէի զքեզ յանկողնի ի-
մում, ընդ առաւօտս կանխեալ խօ-
սէի ընդ քեզ։
9 Զի եղեր իմ օգնական, 'ի հովանի
թեւոց քոց ցնծացայց։
10 Երկն զկնի քո անձն իմ. եւ զիս ըն-
կալաւ աջ քո. եւ նոքա 'ի նանիր
խնդրեցին զանձն իմ։
11 Մտցեն 'ի ներքոյ անդնդոց երկրի.
մատնեսցին 'ի ձեռս սրոյ, եւ բա-
ժինք աղուեսուց եղիցին։
12 Թագաւոր յուսասցէ 'ի Տր. գո-
վեսցին ամենեքեան՝ որ երդնուն
նովաւ. խցցին բերանք այնոցիկ՝ որք
խօսէին զանիրաւութիւն։

## ՍԱՂՄՈՍ. ԿԳ։

1 'Ի կատարած. սաղմոս 'ի Դաւիթ։

2 Լուր Տծ աղօթից իմոց յաղաչել
ինձ առ քեզ. յերկիւղէ թշնամ-
ւոյն փրկեա զանձն իմ։
3 Ծածկեսցես զիս 'ի ժողովոց չարաց.
'ի բազմութենէ՝ որք գործեն զանօրէնութի
4 Զի սրեցին որպէս սուսեր զլե-
զուս

զուս իւրեանց. լարեցին զաղեղունս
իւրեանց յիրս դառնութեն :

Զգել 'ի գաղտնիս այնոցիկ՝ որք ու- 5
ղիղ են սրտիւք. յանկարծակի ձգես-
ցեն 'ի նոսա , և ոչ երկիցեն :

Որք զօրացուցին յանձինս իւրեանց 6
զբանս չարութեան. խորհեցան թա-
գուցանել ինձ որոգայթ. և ասացին
ո՛չ տեսանէ զայս ոք :

Քննեցին զանօրէնութիւն, պատրաս- 7
տեցան 'ի քննել զքննութիւն :

Մատիցէ այր 'ի խորութիւն սրտի 8
իւրոյ , և բարձր եղիցի ած :

Նետք տղայոց եղեն վէրք նց . տկա- 9
րացան 'ի նս լեզուք իւրեանց , և
խռովեցին ամենեքեան՝ որք հայէ-
ին ընդ նս :

Երկեաւ ամ մարդ . և պատմեցին 10
զգործս այ , և զարարածս նորա 'ի
միտ առին :

Ուրա՛խ եղիցի արդար 'ի տր , և 11
յուսասցի 'ի նա . նովաւ գովեսցին
ամենեքեան , որք ուղիղ են սրտիւք :

⁂

# ՍԱՂՄՈՍ. ԿԴ:

1 'ի կատարած. սաղմոս 'ի դաւիթ. Օրհ-
նութիւն Երեմիայի՝ Եզեկիելի՝ և ժողովրդ-
եանն, յորժամ 'ի պանդխտութենէն
կամէին ելանել:

2 Քեզ վայել է օրհնութիւն Աստուած
'ի սիոն. և քեզ տացին
աղօթք յերուսաղէմ:
3 Լուր աղօթից իմոց, զի առ քեզ
ամենայն մարմին եկեսցէ:
4 Բանք անօրինաց զօրացան 'ի վերայ
մեր. զամբարշտութիւնս մեր դու
քաւեսցես:
5 Երանի զոր ընտրեցեր և ընկալար,
և բնակեսցեն 'ի գաւիթս քո:
6 Լցցուք մեք 'ի բարութեանց տան քո. սուրբ
է տաճար քո՝ սքանչելի արդարութեամբ:
7 Լուր մեզ Աստուած փրկիչ մեր, յոյս ամենայն
ծագաց երկրի, և որ 'ի ծով հեռի.
8 Որ պատրաստես զլերինս զօրութեամբ իւ-
րով. և զգեցեալ է զօրութիւն:
9 Որ խռովեցուցանես զմեծութիւն ծովու,
և զձայն ալեաց նորա ցածուցանես:
10 Խռովեսցին հեթանոսք, և երկիցեն
բնակիչք երկրի 'ի նշանաց քոց.

Յել

Յելս առաւօտու՝ ընդ երեկոյս զը. 11
ուարճասցիս · հայեցար յերկիր՝ ար-
բուցեր զնա, եւ բազում արարեր
զմեծութիւն նր ։
Գետն այ լի եղեւ ջուրբ · պատրաստ 12
արարեր զկերակուր նորա, զի այս-
պէս է պատրաստութիւն ։
Զակօսն նր արբեցուցեր, եւ բազում 13
արարեր զարմտիս նր ։
Ի ցօղել նր զուարթ եղիցի բոյս 14
նորա · օրհնեսցի պսակ տարւոյ
քաղցրութեան քոյ ։
Դաշտք քո լցցին պարարտութեա՛ ·15
պարարտասցին գեղեցկութիւնք անա-
պատի ։
Բլուրք ցնծութիւն զգեցցին, եւ զգեց- 16
ցին խոյք մաքեաց ։
Հովիտք բազում արասցեն ցորեան, 17
աղաղակեսցեն եւ օրհնեսցեն ։

## ՍԱՂՄՈՍ· ԿԵ ։

Ի կատարած · սաղմոս՚ի դաւիթ· յարութ ։ 1

Աղաղակեցէք առ այ ամ երկիր · 2
Սաղմոս ասացէք անուան նր,
եւ տուք զփառս օրհնութեան նորա ։
Ասացէք այ, որպէս զի ահեղ են 3

գործք քո . ՚ի բազում զօրութե̃ն
քում ստեցին քեզ թշնամիք քո ։
4 Ամենայն երկիր երկիրպագցեն քեզ .
սաղմոս ասասցեն քեզ , և սաղմոս
ասասցեն անուան քում ։
5 Եկա՛յք և տեսէ՛ք զգործս ա̃յ , որ̃
զի ահեղ են խորհրդովք՝ քան զա-
մենայն որդւոց մարդկան ։
6 Որ դարձոյց զծո՛վ ՚ի ցամաք . և ընդ
գետս անցցեն յոտանաւորք ։
7 Անդ ուրախ եղիցուք մեք ՚ի նա , որ
տիրէ զօրութ̃ իւրով յաւիտենից ։
8 Աչք նորա ՚ի հեթանոսս հային .
որք դառնացուցին զնա՝ մի՛ բարձ-
րասցին յանձինս իւրեանց ։
9 Օրհնեցէ՛ք հեթանոսք զա̃ծ մեր .
լսելի՛ արարէք զձայն օրհնութե̃ն նր̃ ։
10 Այն որ ետ զանձն իմ ՚ի կեանս ,
և ո՛չ ետ դողութի̃ ոտից իմոց ։
11 Փորձեցեր զմեզ ա̃ծ և քննեցեր ,
որպէս և քննի արծաթ ։
12 Իջուցեր զմեզ յորոգայթ , եդիր նե-
ղութի̃ ՚ի թիկունս մեր . և անցուցեր
զմարդիկ ՚ի վերայ գլխոց մերոց ։
13 Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր ,
և հաներ զմեզ ՚ի հանգիստ ։
14 Մտից ՚ի տուն քո պատարագօք .

տուց քեզ զուխտ իմ, զոր խոստա-
ցան քեզ շրթունք իմ, զոր բերան
իմ խօսեցաւ 'ի նեղութե՟:
Ողջակէզս ուղղալիցս մատուցից 15
քեզ՝ խոյօք և խնկօք. և քեզ մա-
տուցից զուարակս և նոխազս:
Եկա՛յք լուարո՛ւք ինձ՝ և պատմե- 16
ցից ձեզ ամենեքեան՝ ոյք երկնչիք
յա՟յ, զոր ինչ արար անձին իմոյ:
Առ նա բերանով իմով կարդացի. և 17
բարձր արարից զնա լեզուաւ իմով:
Զմեղս թէ տեսանէի 'ի սրտի իմում, 18
մի՛թէ լսէ՞ր ինձ տ՟ր:
Վասն այսորիկ լուաւ ա՟ծ, և նայե- 19
ցաւ 'ի ձայն խնդրուածաց իմոց:
Օրհնեալ է ա՟ծ՝ որ ո՛չ 'ի բացեայ 20
արար զաղօթս իմ, և ո՛չ զողորմութի՟
իւր յինէն:

## ՍԱՂՄՈՍ. ԿԶ:

'Ի կատարած. ընդ օրհնութիւնս, սաղմոս 1
երգոյ:

Ա՟Ծ ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ. 2
երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ՝ և
ողորմեա՛ մեզ:
Ճանաչել յերկրի զճանապարհս քո 3
յա.

յազգիս ամ՟ զփրկութիւն քո ։
4 Խոստովան եղիցին առ քեզ ժողո-
վուրդք ած՟, խոստովան եղիցին առ
քեզ ժողովուրդք ամ՟ ։
5 Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք.
զի դու դատիս զժողովուրդս յուղ-
ղութիւն. և ազգաց երկրի դու
առաջնորդես ։
6 Խոստովան եղիցին առ քեզ ժողո-
վուրդք ած՟. գոհասցին զքեն ժո-
ղովուրդք ամենայն ։
7 Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց
զմեզ ած՟ ած՟ մեր ։
8 Ած՟ մեր օրհնեսցէ զմեզ, և 'ի նմա-
նէ երկիցեն ամ՟ ծագք երկրի ։

## ՍԱՂՄՈՍ. ԿԷ ։

1 'Ի կատարած. սաղմոս 'ի դաւիթ ։
2 Յարիցէ տր՟ և ցրուեսցին
թշնամիք նր՟, փախիցեն
ատելիք նր՟ յերեսաց նորա ։
3 Որպէս պակասէ ծուխ՝ պակասեսցին.
որպէս հալի մոմ առաջի հրոյ, այնպէս
կորիցեն մեղաւորք յերեսաց այ՟ ։
4 Արդարք ուրախ եղիցին՝ և ցնծա-
ցեն առաջի նորա, և զուարճասցին

յուրախութիւն իւրեանց ։
Օրհնեցէք զա̃ծ՝ եւ սաղմոս ասացէք 5
անուան նր̃, ճանապարհ արարէք
այնմիկ՝ որ նստի ընդ արեւմուտս ։
եւ տ̃ր է անուն նորա ։
Ցնծասցեն առաջի նորա, եւ խռո- 6
վեսցին յերեսաց նորա ։
Որ հայրն է որբոց՝ եւ դատաւոր այ- 7
րեաց, ա̃ծ ՚ի տեղւոջ սրբութե̃
իւրում ։
Ա̃ծ բնակեցուցանէ զմիակրօնս ՚ի 8
տան, եւ հանէ զկապեալս քաջութ̃
իւրով. սոյնպէս եւ զդառնացօղս՝ որ
բնակեալ են ՚ի գերեզմանս ։
Ա̃ծ՝ ընդ ելանել քեզ առաջի ժողո- 9
վրդեան քո. ընդ անցանել քեզ ը̃
անապատ՝ երկիր շարժեցաւ ։
Քանզի եւ երկինք ցօղեցին յերե- 10
սաց ա̃յ ՚ի սինէ՝ առաջի ա̃յ իսրայէլի ։
Անձրեւ կամաց պատրաստեցեր ա̃ծ 11
ժառանգութե̃ քում. թէպէտ հի-
ւանդացաւ, սակայն դու հաստա-
տեցեր զնա, եւ գազանք քո բնակես-
ցեն ՚ի նմա ։
Պատրաստ արարեր քաղցրութ̃ քո 12
աղքատի ա̃ծ. տ̃ր տացէ զբան, որք
աւետարանեն զօրութբ̃ բազմաւ ։

Թա-

13 Թագաւոր զօրութեանց սիրելւոյ,
զգեղեցկութիւն տան քո բաժանեալ_
յաւարի · Թէպէտ և ննջիցէք ՚ի
մէջ վիճակաց :
14 Թևք աղաւնւոյ արծաթապատ, և
թիկնամէջք նր ՚ի գոյն ոսկւոյ :
15 ՚Ի գումարել երկնաւորին զթագա_
ւորս ՚ի վրնր, ձիւնասցին ՚ի սաղմոն :
16 Լեառն այ լեառն պարարտ, լեառն
մածեալ, և լեառն պարարտ · և զի՞նչ
կարծէք լերինք հպարատացեալք :
17 Լեառն, ընդ որ հաճեցաւ ած բնա_
կել ՚ի նմա · քանզի և տր իսկ բնա_
կեսցէ ՚ի նմա իսպառ :
18 Կառք այ բիւրապատիկք, հազարք
ուղղիչք, և տր ՚ի նոսա ՚ի սինէ սըր_
բութէ իւրմէ :
19 Ել ՚ի բարձունս՝ և գերեաց զգե_
րութիւն · առ առար՝ բաշխեաց պար_
գևս՝ և ես որդւոց մարդկան · քան_
զի թերահաւատից ևս բնակել ե_
ղիցի ՚ի նմա :
20 Տր ած օրհնեալ՝ օրհնեալ տր զօր_
հանապազ, առաջնորդեսցէ մեզ ած
փրկիչ մեր :
21 Ած մեր ած կենարար, և ՚ի տնէ
են ելք մահու :

Բայց սակայն՝ ած փշրեսցէ զգլուխս 22
Թշնամեաց մերոց. և զհերն կարճնո-
վին, որ գնան յանօրէնութ իւրեանց:
Ասաց տր՝ 'ի խորոց անդնդոց դար- 23
ձուցից, և 'ի միջոյ ժանեաց զայն
'ի դուրս կորզեցից:
Ոպ Թացցի ոտն քո յարեան, և լե- 24
զուք շանց քոց յարենէ Թշնամեաց
քոց:
Երևեցան գնացք քո ած, գնացք 25
այ Թագաւորին մերոյ սրբոյ:
Կանխեցին իշխանք հանել զօրհնու- 26
Թի, 'ի մէջ կուսանաց և գովչաց:
Յեկեղեցիս օրհնեցէք զած, և զտր 27
յաղբերացն իսրայէլի:
Անդ բենիամին 'ի աղայութե զար- 28
մանալի. իշխանք յուդայ առաջնորդք
նորա՝ իշխանք զաբուղոնի, և իշ-
խանք նեփԹաղիմայ:
Հրամայեա ած զօրութ քում. զօրա- 29
ցո զայս, զոր հաստատեցեր 'ի մեզ:
'ի տաճարէ քումմէ յերուսաղեմէ, 30
քեզ մատուսցեն Թագաւորք զպա-
տարագս:
Սաստեա 'ի գազան եղեգան, 'ի ժո- 31
ղովս զուարակաց և 'ի գասս երինջոց:
Խոտեսցին այնոքիկ՝ որ ընտրեալ 32
են

են արծաթով. ցրուեա՛ զհեթանոսս
և ոյք կամին ընդ պատերազմ։
33 Եկեսցեն հրեշտակք յեգիպտոսէ.
հնդիկք յառաջագոյն ձեռնտու լի-
ցին առ ա͞ծ։
34 Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք
զա͞ծ, և սաղմոս ասացէք տ͞ն։
35 Ձայնարկք արարէք այնմիկ, որ
նստի յերկինս երկնից ը͞ե յարևելս։
36 Ահա տացէ զձայն իւր ՚ի ձայն զօ-
րութե. և տուք զփառս տ͞ն։
37 ՚Ի վ͞ր իսրայէլի մեծ վայելչութի ն͞ր.
զօրութի ն͞ր մինչև յամպս երկնից։
38 Սքանչելի է ա͞ծ ՚ի վերայ սրբոց
իւրոց, ա͞ծ իսրայէլի։
39 Նա տացէ զօրութի հաստատութի
ժողովրդեան իւրոյ. օրհնեալ է ա͞ծ։

## ՍԱՂՄՈՍ. ԿԸ։

1 ՚Ի կատարած. վասն փոփոխելոցն.
սաղմոս ՚ի դաւիթ։

2 Կեցո՛ զիս ա͞ծ, զի հասին ջուրք
յանձն իմ. ընկլայ ես ՚ի խորս
անդնդոց, ուր ոչ գոյ ինձ
հանգիստ։
3 Եկի ես ՚ի խորս ծովու, և շրջանք

ընկղմեցին զիս ։
Վաստակեցի ես առ աղաղակել, և 4
կերկերեցաւ կոկորդ իմ։
Նուաղեցին աչք իմ, առ յուսալ 5
ինձ առ տ̅ր ա̅ծ իմ։
Բազումեղեն քան զհեր գլխոյ իմոյ, 6
որք ատէին զիս 'ի տարապարտուց ։
Զօրացան յիս թշնամիք իմ և ատե- 7
լիք իմ 'ի նանիր ․ ինչ զոր ոչ յա-
փշտակեալ էր՝ տուժէի նոցա ։
Ա̅ծ դու ծանեար զանզգամութի՛ւն 8
իմ ․ և յանցանք իմ 'ի քէն ոչ ծած-
կեցան ։
Մի ամաչեսցեն վասն իմ, որք համ- 9
բերեն քեզ տ̅ր՝ տ̅ր զօրութեց ․ մի
պատկառեսցեն վ̅ս իմ, որք խնդրեն
զքեզ ա̅ծ իսրայելի ։
Վասն քո համբերի նախատանաց, 10
և ծածկեաց ամօթ զերեսս իմ։
Օտար եղէ ես յեղբարց իմոց, և 11
հիւր որդւոց մօր իմոյ ։
Նախանձ տան քո եկեր զիս ․ նա- 12
խատինք նախատչաց քոց անկան 'ի
վերայ իմ ։
Խոնարհեցուցի պահօք զանձն իմ, 13
և եղեն ինձ այս նախատինք ․ արա-
րի զհանդերձս իմ քուրձ, և եղէ

ա-

առակ ՚նոցա ։
14 Զինէն խորհէին , ոյք նստէին առ-
դրունս · զիս այսն առնէին , ոյք
ըմպէին գինի ։
15 Ես յաղօթս կայի առ քեզ Տր , ՚ի
ժամանակի ընդունելի ։
16 Այ ՚ի բազում ողորմութե քում լուր
ինձ , ՚ի ճշմարտութեն փրկութե քո ։
17 Ապրեցո զիս ՚ի կաւոյ՝ զի մի ընկ-
ղայց · ապրեցայց ես յատելեաց ի-
մոց , և ՚ի խորոց ջուրց բազմաց ։
18 Մի ընկլյցեն զիս պտոյտք ջուրց ,
և մի ընկղմեսցեն զիս անդունդք խո-
րոց · ջրհոր մի կափուսցէ զբերան
իւր ՚ի վերայ իմ ։
19 Լուր ինձ Տր , զի քաղցր է ողորմու-
թիւն քո · ըստ բազում գթութե քո
հայեաց յիս , և մի դարձուցաներ զե-
րեսս քո ՚ի ծառայէ քումմէ · զի նե-
ղեալ եմ ես , վաղվաղակի լուր ինձ ։
20 Հայեաց յանձն իմ , և փրկեա զիս ·
և վն թշնամեաց իմոց ապրեցո զիս ։
21 Զի դու գիտես զնախատինս իմ ,
զամօթ իմ , և զպատկառանս իմ ։
22 Առաջի քո են ամենեքեան նեղիչք անձին ի-
մոյ · նախատանաց համբերէր սիրտ իմ ,
և թշուառութե ։

Այն ունէի՝ թէ ո՛ տրտմեսցի ընդ 23
ինս, և ոչ էր. և մխիթարիչ ինձ ոք
ոչ գտաւ:
Ետուն 'ի կերակուր ինձ լեղի. և 24
'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ:
Եղիցին սեղանք նոցա առաջի նց̄ 25
յորոգայթ, 'ի հատուցումն և 'ի
գայթագղութն:
Խաւարեսցին աչք նց̄, զի մի՛ տես 26
ցեն. և զթիկունս նոցա հանապազ
կորացո՛:
Արկցես 'ի վերայ նոցա զբարկու 27
թն̄ քո. սրտմտութն̄ բարկութե̄
քոյ հասցէ 'ի վերայ նց̄:
Եղիցին բնակութիք նց̄ աւերակ. և 28
'ի յարկս նց̄ մի՛ ոք իցէ՝ որ բնակիցէ:
Զի զոր դուն հարեր, հալածեցին. 29
և 'ի վէրս ցաւոց իմոց յաւելին:
Դի՛ր զմեղս 'ի վերայ մեղաց նց̄, 30
զի մի՛ մտցեն յարդարութն̄ քո:
Ջնջեսցին նոքա 'ի դպրուէ̄ քումմէ 31
կենաց. և ը̄ արդարս քո մի՛ գրեսցին:
Աղքատ և ցաւած եմ ես, փրկու 32
թն քո ա̄ծ ընկալցի զիս:
Օրհնեցից զանուն ա̄յ իմոյ օրհնու 33
թբ̄, և բարձր արարից զնա գովութբ̄:
Հաճոյ եղիցի ա̄յ քան զորթ մատաղ, 34

որ

որ թերթէ եղջիւրս և կճղակս ։
35 Տեսցեն աղքատք՝ և ուրախ եղի-
ցին ․ խնդրեցէ՛ք զԱծ, և կեցցեն
անձինք ձեր ։
36 Զի լուաւ Տր աղքատաց ․ և զկա-
պեալս իւր ոչ արհամարհեաց ։
37 Օրհնեսցեն զնա երկինք և երկիր,
ծով և ամ որ զեռայ ՚ի նոսա ։
38 Ած փրկէ զսիոն, և շինեսցին քա-
ղաքք հրէաստանի ․ շինեսցեն բնա-
կեսցեն՝ և ժառանգեսցեն ՚ի նմա ։
39 Զաւակ ծառայից քոց հաստատես-
ցի անդ ․ և որք սիրեն զանուն քո,
բնակեսցեն ՚ի նմա ։

## ՍԱՂՄՈՍ ․ ԿԹ ։

1 ՚Ի կատարած ․ ՚Ի դաւիթ՝ առ ՚ի յիշա-
տակ փրկելոյ զնա Տն ․ սաղմոս ։

2 Ած յօգնել ինձ նայեա՛ց ․ և Տր յըն-
կերել ինձ փութա՛ ։
3 Ամաչեսցեն և յամօթ լիցին, որ
խնդրէին զանձն իմ ․ դարձցին յետս
և ամաչեսցեն, որք խորհէին ինձ չար ։
4 Դարձցին առ ժամայն ամաչեցեալ ․
որ ասէին ինձ վա՛շ վա՛շ ։
5 Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ

ամենեքեան, որ խնդրեն զքեզ տր:
Ասասցեն յամ ժամ, մեծ է ած. 6
և ոյք սիրեն զփրկութիւն քո:
Ես աղքատ և տնանկ եմ, ած օգ- 7
նեա՛ ինձ. օգնական և փրկիչ իմ ես
և տր իմ՝ մի՛ յամենար:

## ՍԱՂՄՈՍ. Հ:

'Ի չափաւորած. որդւոցն յովնադաբայ. յէփ 1
առաջնոյ գերութեն. սաղմոս 'ի դաւիթ:

Ի քեզ տր յուսացայ, մի՛ ամա- 2
չեցից յաւիտեան, յարդա-
րութեն քում փրկեա՛ զիս և
ապրեցո՛ զիս:
Խոնարհեցո՛ առ իս զունկն քո, և 3
կեցո՛ զիս:
Լե՛ր իմ ած ապաւէն, և տեղի ամուր 4
կեցուցանել զիս. զի հաստատութիւն
իմ և ապաւէն իմ դու ես:
Ած իմ, փրկեա՛ զիս 'ի ձեռաց մե- 5
ղաւորի, 'ի ձեռաց անօրինի և ա-
նիրաւի:
Դու ես համբերութիւն իմ տր, տր 6
յոյս իմ 'ի մանկութէ իմմէ:
'Ի քեզ հաստատեցայ ես յարգան- 7
դէ. յորովայնէ մօր իմոյ դու ես
ա-

ապաւէն իմ. և առ 'ի քէն է օգ֊
նութիւն իմ յամենայն ժամ։
8 Որպէս զի նշաւակ եղէ ես բազմաց.
և դու օգնական իմ և հզօրիչ իմ։
9 Լցցի բերան իմ գովութեամբ, որպէս
օրհնեցից զփառս քո. զօրհանապազ
զմեծ վայելչութիւնս քո։
10 Մի՛ ընկենուր զիս որ 'ի ժամա֊
նակս ծերութե. 'ի պակասել զօրու֊
թե իմոյ մի՛ թողուր զիս։
11 Ասացին թշնամիք իմ ինձ. և որ
պաշարեցին զանձն իմ, խորհեցան
'ի միասին և ասացին։
12 Ած եթող զնա, հալածեցո՛ւք և
հասցո՛ւք նմա. զի ո՛չ ոք է որ փրկէ
զնա։
13 Ած իմ, մի՛ հեռի առնիր յինէն. և
ած յօգնել ինձ նայեա՛ց։
14 Ամաչեսցեն և պակասեսցին՝ որք
չարախօս կային զանձնէ իմմէ. զգեց֊
ցին զամօթ և զպատկառանս, որք
խնդրէին ինձ չար։
15 Ես յամ ժամ յուսացայց, և յաւե֊
լից յօրհնութիւնս քո։
16 Բերան իմ պատմեսցէ զարդարու֊
թիւնս քո, զօրհանապազ զգովու֊
թիւնս քո։

Որ

Որպէս ոչ թէ խարդախութիւն ինչ 17
գիտէի ես դպրութեան . այլ մտից 'ի
զօրութիւն տն . եւ տր՝ յիշեցի զար-
դարութիւն քո միայն :
Ած իմ, ուսուցեր զիս 'ի մանկու- 18
թէ իմմէ . եւ ցարդ ես պատմեցից
զարդարութիւն քո :
Մինչեւ յալեւորել եւ 'ի ծերանալ , 19
ած իմ մի թողուր զիս :
Մինչեւ պատմեսցի բազուկ քո՝ ազ- 20
գի ամենայնի որ գալոցն է :
Զզօրութիւն քո եւ զարդարութիւն 21
մինչ 'ի բարձունս , զոր արարեր
մեծամեծս . ած ո՞ նման է քեզ :
Որչափ ցուցեր ինձ նեղութիւն բա- 22
զում եւ չարչարանս, դարձար եւ մխի-
թարեցեր զիս . եւ 'ի խորոց անդն-
դոց երկրէ հաներ զիս :
Յաճախեցեր 'ի զօրուին քո , դար- 23
ձար մխիթարեցեր զիս . եւ 'ի խորոց
երկրէ միւսանգամ հաներ զիս :
Արդ՝ եւ ես խոստովան եղէց քեզ 24
'ի պատրաստութեն սաղմոսաց ճըշ-
մարիտ ած . սաղմոս ասացից քեզ
օրհնութիւն սուրբ իսրայելի :
Ցնծասցեն շրթունք իմ, յորժամ, 25
սաղմոս ասիցեմ քեզ . եւ անձն իմ

զոր և փրկեցեր։
26 Եւս՝ և լեզու իմ՝ զօրհանապազ
խօսեսցի զարդարութիւնս քո։
27 'Ի ժամանակի ոչ յամօթ լիցին և
ամաչեսցեն, որք խնդրէին ինձ չար։

## ՍԱՂՄՈՍ · ՀԱ։

'Ի սողոմոն սաղմոս։

1 ԱԾ զիրաւունս քո արքայի տուր,
և զարդարութիւնս քո որդւոյ
թագաւորի։
2 Դատել զժողովուրդս քո արդարու-
թբ, և զաղքատս քո իրաւամբք։
3 Առցեն լերինք զխաղաղութի ժողո-
վրդեան, և բլուրք զարդարութի։
4 Իրաւ արասցէ աղքատաց ժողովր-
դեան, և կեցուսցէ զորդիս տնան-
կաց, և խոնարհեցուսցէ զամբաս-
տանս։
5 Կացցէ և մնասցէ ընդ արեւու, յա-
ւաջ քան զլուսին ազգէ մինչև յազգ։
6 Իջցէ ոչ զանձրև 'ի վերայ գեղման,
որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։
7 Ծագեսցէ յաւուրս նորա արդա-
րութի, բազում խաղաղութի՝ մինչև
կատարեսցի լուսին։

Տիրեսցէ նա 'ի ծովէ մինչև 'ի ծով . 8
'ի գետոց մինչև 'ի ծագս աշխարհի :
Առաջի նր̅ նախ հնդիկք անկցին . 9
և Թշնամիք նր̅ հող կերիցեն :
Թագաւորք Թարսսի և կղզեաց՝ 10
պատարագս մատուսցեն նմա . Թա-
գաւորք արաբայ և սաբայ՝ պատա-
րագս բերցեն նմա :
Երկիրպագցեն նմա ա̃մ Թագաւորք 11
երկրի. և ա̃մ ազգք ծառայեսցեն նմ̃ :
Զի փրկեաց զաղքատն 'ի հզօրէ . 12
զաղքատն և զտնանկն , որոյ ոչ է
իւր օգնական :
Խնայեսցէ նա յաղքատն և 'ի տը- 13
նանկն . և զանձինս տնանկաց կե-
ցուսցէ . 'ի վաշխից չարեաց փրկես-
ցէ զանձինս նց̅ :
Պատուական է անուն նր̅ առաջի 14
նց̅ . կեցցէ , և տացի նմա յոսկւոյն
արաբացւոց :
Յաղօթս կայցեն առ նա յա̃մ ժամ . 15
և զօրհանապազ օրհնեսցեն զնա :
Եղիցի հաստատութի̃ ընդ ա̃մ եր- 16
կիր . և 'ի վերայ գլխոց լերանց :
Բարձրասցի քան զլիբանան պտուղ 17
նր̅ . ծաղկեսցի 'ի քաղաքի տն̅ ոպ̅
խոտ երկրի :

Երգ.

18Եղիցի անուն տն օրհնեալ յաւի-
տեան. զի յառաջ քան զարև է ա-
նուն նորա :
19՚Ի նա օրհնեսցին ամ ազգք երկրի,
և ամ ազինք երանիցեն նմա :
20Օրհնեալ տր ած իսրայէլի որ առ-
նէ սքանչելիս միայն. և օրհնեալ է
անուն տր փառաց նր յաւիտեան.
լցցի փառօք նր ամ երկիր. եղիցի
եղիցի :

Աղօթք աննայի մօրն սամուէլի :

1 Հաստատեցաւ սիրտ իմ ՚ի
տր, և բարձրացաւ եղջիւր
իմ յած փրկիչ իմ:
2 Ընդարձակեցաւ բերան իմ
՚ի վր թշնամեաց իմոց. ուրախ եղէց
՚ի փրկութե քում:
3 Զի ոչ գոյ տր ոպ զտր, և ոչ արդար
որպէս զած մեր. և չիք տր բաց յայ
մերմէ :
4 Մի պարծիք և մի խօսիք զամբար-
տաւանս. և մի ելցէ ընդ բերանս
ձեր բան հպարտ մեծաբանութե :
5 Ած գիտութեց՝ տր ած պատրաս-
տէ

տէ խորոյ իմաստութեամբ՝ զգիտութիւն
յարարածս իւր ։
Հզօրաց հաստ աղեղունք թուլա- 6
ցան, և տկարք վառեցան զօրութեամբ ։
Յագք և լիք հացիւ նուաղեցին. և 7
քաղցեալք լցին զերկիր ։
Ամուլն ծնաւ եօթն, և բազմածինն 8
նուաղեաց 'ի ծննդոց ։
Տէր մեռուցանէ, և նոյն կեցուցանէ. 9
իջուցանէ 'ի դժոխս՝ և հանէ ։
Տէր աղքատացուցանէ՝ և նոյն մեծա- 10
ցուցանէ. խոնարհ առնէ զամբար-
տաւանս մինչև յերկիր, և բարձր
առնէ զտառապեալս յաղբևաց ։
Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս 11
ժողովրդեան. և աթոռ փառաց ժա-
ռանգեցուցանէ նոցա ։
Կատարէ զուխտս ուխտաւորաց. 12
և օրհնեաց զամս արդարոց ։
Զի ոչ եթէ իւրով զօրութեամբ զօրա- 13
նայ հզօր. այլ Տէր տկար առնէ զհա-
կառակորդս իւր. Տէր սուրբ է ։
Մի պարծեսցի խորհրդականն 'ի 14
խորհուրդս իւր. և մի պարծեսցի
հզօրն 'ի զօրութիւն իւրում. և մի պար-
ծեսցի մեծն 'ի մեծութեան իւրում ։
Այլ որ պարծին, 'ի Տէր պարծես- 15
ցի.

ցի . 'ի խորհուրդս գիտութեան զՏ̄ր
ճանաչել ։

16 Առնել զիրաւունս , և գործել զար-
դարութիւն 'ի վ̄ր երեսաց երկրի ։

17 Տ̄ր ել յերկինս' և որոտաց . և ինքն
դատի առանց բարբառելոյ ։

18 Տայ զօրութիւն թագաւորաց մերոց . և
բարձր առնէ զեղջիւր օծելոյ իւրոյ ։

Մաղթանք ։

Բարձրացաւ եղջիւր իմ յա̄ծ փրկիչ
իմ . հաստատեցաւ սիրտ իմ 'ի
Տ̄ր' ուրախմբ և հաւատով ։

Մարդասէր Տ̄ր' վասն սրբուհւոյ ա-
նարատ մօր քոյ և կուսի . և վասն խա-
չի քոյ պատուականի , Տ̄ր ընկալ զա-
ղաչանս մեր , և կեցո զմեզ ։

Քարոզն աղօթք' Ողորմեայ , և 'ի
նեղութեան կանոնայն ։

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զ-
զօրութիւն 'ի բարերար Տ̄նէ մերմէ ,
զՏ̄ր աղաչեսցուք ։ Տ̄ր ողոր ։

Վասն փրկելոյ զմեզ 'ի զպարտու-
թենէ մարդկան' և յորոգայթից սա-
տանայի , զՏ̄ր աղաչեսցուք ։

Վ̄ն ա̄մ անձանց քրիստոնէից , և տանց
հա-

հաւատացելոց, զՏր աղաչեսցուք։
Վասն որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր,
զՏր աղաչեսցուք։
Վասն որք սաղմոսիւք և օրհնուբ կատարեն զամենայն ժամանակս կենաց
իւրեանց, զՏր աղաչեսցուք։
Վն հոգւոյն հանգուցելոց՝ որք Ճշմարիտ և ուղիղ հաւատով 'ի քՍ ննջեցին.
զՏր աղաչեսցուք։
Եւ ևս՝ միաբան վասն Ճշմարիտ և սբ հաւատոյս մերոյ զՏր աղաչեսցուք։
Զանձինս. Ողորմեա՛ց։

Աղօթ․ ։

Գոհանամք զքէն Տր ած մեր, որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութ քո։ Զարթ՛ զմիտս մեր արդարութեամբ առ քեզ Տր ած մեր, զի տեսցեն աչք մեր զփրրկութի քո։ Եկեսցէ և բնակեսցէ առ մեզ ճշութի քո. և ողորմութի քո հովանի և պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէիցս քոց։ Եւ զմեզ զծառայքս քո արժանի արա՛ 'ի տուէ և 'ի գիշերի և յամ ժամու միշտ խորհել 'ի սէր պատուէրանացս քոց։ Եւ գոհանալով փառաւո-

րել

բել զՀայր և զՈրդի և զՍ̃ուրբ Հոգին ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից . ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։
Աստուծոյ երկրպագեսցուք ։

Կենդանարար զօրութիւն և աղբիւր ան-
մահութեան , դու ես քս̃ ա̃ծ փրկիչ մեր ։
Որ շնորհեցեր մեզ 'ի մէջ գիշերիս յառա-
նել՝ և խոստովան լինել առ քեզ՝ վս̃
իրաւանց և արդարութեան քո ։ Եւ այժմ
աղաչեմք զքեզ Տ̃ր ա̃ծ մեր, որով զմեզ
արթունս և պատրաստս 'ի ժամ առա-
ւօտու ը̃ սէ̃ս քո ։ Եւ ընդ նոսին գո-
հանալով փառաւորեսցուք զքեզ ընդ
Հօր և ընդ Հոգւոյդ ս̃բ , այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից . Ամէն ։

Մաղթանք ։

Գոհութի̃ւ և շնորհիս խոստովանու-
թի̃ւ անդադար փառաւորեմք զՀայր և
զՈրդի և զՍ̃ուրբ Հոգին այժմ և միշտ , և
յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Օրհնեալ Տ̃ր մեր յս̃ քս̃ . ամէն ։
Հայր մեր որ ։



Աւետումն սբյ կուսին ։

# ՍԱՂՄՈՍ. ՀԲ։

1 Սաղմոս յԱսափ․ օրհնութիւն։

2 ԻԲՐԵՒ ԶԻ ԲԱՐԻ Է
Իսրայէլի ած, և որք ուղիղ
են սրտիւք։
3 Բայց զի իմ փոքր մի ևս սա-
սանեալ էին ոտք․ սակաւուիկ մի՝ և
գայթագղեալ էին գնացք իմ։
4 Նախանձեցայ ես ընդ անօրէնս,
զխաղաղութիւն մեղաւորաց որ̅ տե-
սանէի, զի ոչ գոյր վրէպ մահուն նց̅։
5 Հաստատուն էին տանջանք նց̅, 'ի
վաստակս մարդկան չէին նոքա․ և
ընդ մարդկան ոչ տանջեսցին։
6 Վասն այսորիկ կալաւ զնո̅ ամբար-
տաւանութիւն․ արկան զիւրեամբք
զամբարշտութիւն և զանիրաւութիւնս
իւրեանց։
7 Ելցէ որ̅ 'ի ճարպոյ անիրաւութիւնք
նց̅․

նց. զի գնացին նոքա ըստ խորհըր֊
դոց սրտից իւրեանց ։
Խորհեցան և խօսեցան չարութիւն. զա֊ 8
նիրաւութիւն 'ի բարձունս խորհեցան։
Եդին յերկինս զբերանս իւրեանց, և 9
զլեզուս իւրեանց անցին զերկրաւ ։
Վն այսորիկ ժողովուրդ իմ դարձ֊ 10
ցի այսրէն. և աւուրք իմ լի կատա֊
րեալ գտցին 'ի նոսա ։
Ասացին՝ զիարդ գիտաց ած. կամ 11
գուցէ՞ արդեօք գիտութիւն 'ի բարձ֊
րելոյն ։
Ահա մեղաւորք են և յաջողեալ է 12
նց, կան՝ և ունին զմեծութիւն աշխարհի։
Ասացի՝ 'ի զուր ուրեմն արդարա֊ 13
ցուցի զսիրտ իմ. լուացայց սրբու֊
թբ զձեռս իմ. և եղէ ես խոշտան֊
եալ զօրհանապազ. և կշտամբանք
իմ ընդ առաւօտս ։
Թէպէտ և ասէի՝ թէ այսպէս պատ֊ 14
մեցից. ահաւասիկ յազգ որդւոց
քոց՝ որոց և ուխտեցի ։
Դիմեցի, թէ սակայն և այս ջան 15
է առաջի իմ, մինչև մտից 'ի սրբութիւն
Այ. և 'ի միտ առից զկատարած նց ։
Սակայն վն նենգութեան նց տարագիր 16
արարեր զնոսա. և կործանեցեր

Թ զնո֊

զնոսա յամբարտաւանութեն իւրեանց։
17Իսկ զիա՞րդ եղեն յաւերյանկարծա-
կի, սատակեցան պակասեցան կո-
րեան վասն անօրէնութեն իւրեանց,
և եղեն որպէս երազք զարթուցե-
լոյ։
18Տր̃ ՚ի քաղաքի քում զպատկերս նց̃
անարգեսցես. զի հուր բորբոքե-
ցաւ ՚ի սրտի իմում, և երիկամունք
իմ այլափոխեցան։
19Ես արհամարհեալ եղէ, և ոչ գի-
տացի. ոչ̃ զանասուն համարեցայ ա-
ռաջի քո, և ես յա̃մ ժամ ը̃ քեզ եմ։
20Կալեր զաջոյ ձեռանէ իմմէ, ՚ի խոր-
հուրդս քո առաջնորդեցեր ինձ, և
փառօք ընկալար զիս։
21Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ՚ի
քէն զի՞նչ ևս խնդրեցից յերկրի։
22Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ.
ա̃ծ սրտի իմոյ. բաժին իմ ա̃ծ յա-
ւիտեան։
23Ահաւասիկ որք հեռի արարին զան-
ձինս իւրեանց ՚ի քէն, կորիցեն.
սատակեսցես զամենեսեան՝ որ ապս
տամբ եղեն ՚ի քէն։
24Ինձ մերձենալ առ ա̃ծ բարի է, և
դնել առ տր̃ զյոյս իմ։

Պատմել զամ օրհնութիւնս քո, 'ի դը_ 15
րունս դարուց յաւիտենից ։

## ՍԱՂՄՈՍ. ՀԳ ։

Իմաստութի̄ն յասափայ ։ 1

Ընդէ՞ր մերժեցեր ա̄ծ իսպառ. 2
բարկացաւ սրտմտութի̄ն քո 'ի
վ̄ր խաշին արօտի քո ։
Յիշեա՛ զժողովուրդ քո, զոր ստա_ 3
ցար 'ի սկզբանէ. փրկեցեր զվիճակ
ժառանգութե̄ քո ։
Լեառն Սիոն այս՝ ուր բնակեցեր 4
դու 'ի սմա. համբարձ զձեռն քո 'ի
վերայ ամբարտաւանութեան նոցա
իսպառ ։
Որ ինչ անիրաւեցաւ թշնամին 'ի 5
սրբութ̄ քում. պարծեցան ատելիք
քո 'ի մէջ բարեկենդանութե̄ իւրեանց ։
Եդին զնշանս իւրեանց 'ի նշանս. և ին_ 6
քեանք ոչ ծանեան զելս 'ի վերուստ ։
Որպ̄ յանտառի՝ փայտատօք կոտորե_ 7
ցին զդրունս նր̄, 'ի միասին փայտա_
տօք և մրճովք կործանեցին զնա ։
Այրեցին 'ի հուր զսրբութի̄ քո յերկ_ 8
րի. պղծեցին զխորան անուան քո ։
Ասացին 'ի սիրտս իւրեանց ազգք 9
նոցա

նոցա 'ի միասին, եկայք լուեցուս-
ցուք զա՛մ տօնս այ յերկրէ :
10 Նշանս մեր ինչ ո՛չ տեսաք, և ո՛չ ևս
գուցէ մարգարէ. և զմեզ ինչ ոք
ո՛չ ճանաչիցէ :
11 Մինչև յե՞րբ ա՛ծ նախատէ թշնամին
բարկացուցանէ հակառակորդն զա-
նուն սուրբ քո :
12 Ընդէ՞ր դարձուցանես զձեռն քո, և
զաջ քո 'ի միջոյ ծոցոյ քումմէ իսպառ :
13 Այ թագաւոր մեր յառաջ քան
զյաւիտեանս. որ արարեր զփրկու-
թի՛ 'ի մէջ երկրի :
14 Դու հաստատեցեր զօրութ՟ քով
զծով. դու խորտակեցեր զգլուխ
վիշապաց 'ի վերայ ջուրց :
15 Դու փշրեցեր զգլուխ վիշապին,
և ետուր զնա կերակուր զօրացն
հնդկաց :
16 Դու բղխեցուցեր զաղբիւրս և ըզ-
վտակս. դու ցամաքեցուցեր զգետս
սաստիկս :
17 Քո է տիւ, և քո է գիշեր. զլոյս
և զարև դու հաստատեցեր. և դու
հաստատեցեր զամենայն սահմանս
երկրի. զգարուն և զամառն դու
ստեղծեր :

Այս յուշ լիցի քեզ՝ զի թշնամին 18
նախատեաց զՏէր . ժողովուրդ անզ-
գամ բարկացոյց զանուն սուրբ քո :
Մի՛ մատներ գազանաց զանձն՝ որ 19
խոստովան առնի առ քեզ . և զան-
ձինս տնանկաց քոց մի՛ մոռանար իս-
պառ :
Հայեա՛ յուխտ քո . զի լցան տունք 20
ափշելոց յերկրի անիրաւութեան :
Մի՛ դարձցի տնանկն ամաչեցեալ . 21
այլ աղքատն և տնանկ օրհնեսցեն
զանուն սուրբ քո :
Արի՛ Տէր, և դատեա՛ զդատաստանս 22
քո . յիշեա՛ զնախատինս՝ որ յանզգա-
մէն զօրհանապազ :
Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից 23
քոց . ամբարտաւանութիւն ատելեաց
քոց վերասցի հանապազ :

# ՍԱՂՄՈՍ· ՀԴ:

1 'Ի կատարած · մի՛ ապականեր · ընդ օրհնու_
թեան : Սաղմոս յասափ · երգ առ_
ասորեստանեայս :

2 Խոստովան եղիցուք առ քեզ
ա͞ծ , խոստովան եղիցուք
և կարդասցուք զանուն ք͞ո :
3 Պատմեցից զա͞մ սքանչելիս քո ·
յորժամ ժամ առից՝ ես ուղիղ դա_
տեցայց :
4 Մաշեցաւ երկիր՝ և ա͞մ բնակիչք
ն͞ր · ես հաստատեցի զսիւնս ն͞ր :
5 Ասացի անօրինաց , թէ մի՛ անօրի_
նիք · և մեղաւորաց , թէ մի՛ բարձ_
րացուցանէք զեղջիւրս ձեր :
6 Մի՛ համբառնայք 'ի բարձունս զեղ_
ջիւրս ձեր · և մի՛ խօսիք զա͞յ անի_
րաւութ͞ի :
7 Զի ո՛չ յարևելից՝ և ո՛չ յարևմտից ,
և ո՛չ յանապատէ լերանց · այլ ա͞ծ
դատաւոր է :
8 Զայս խոնարհ առնէ , և զայն բարձ_
րացուցանէ · բաժակ 'ի ձեռին տ͞ն
գինի լի անապակ արկեալ · և խո_
նարհեցոյց յայսմանէ յայս ;

Սակայն մրուր նորա ո՛չ սպառեսցի․ 9
և արբցեն զնա ա̃մ մեղաւորք երկրի։
Ես ցնծացայց յաւիտեան․ սաղմոս 10
ասացից ա̃յ յակովբայ ։
Զա̃մ եղջիւրս մեղաւորաց փշրես- 11
ցես․ և բարձր եղիցի եղջիւր ար-
դարոյ ։

## ՍԱՂՄՈՍ․ ՀԵ։

՚Ի կատարած․ ընդ օրհնութիւն․ մի՛ ապա- 1
կաներ։ Սաղմոս յասափ․ երգ առ աս-
րեստանեայս ։

Յայտնի է ՚ի հրէաստանի ա̃ծ, և 2
յիսրայէլ մեծ է անուն նորա ։
Եղև խաղաղութեամբ տեղի նր̃․ և 3
բնակութիւն նր̃ սիովնի ։
Անդ խորտակեաց տ̃ր զզօրութիւն աղե- 4
ղան, զվէն զսուր և զճակատամարտ։
Լուսատու ես դու սքանչելապէս 5
լերանցն յաւիտենից․ խռովեսցին
ամենեքեան որ անմիտ են սրտիւք․
ննջեցին զքունս իւրեանց՝ և ինչ ո՛չ
գտին ։
Ամենայն արք՝ ՚ի մեծութեն ձեռաց 6
իւրեանց․ ՚ի սաստէ քումմէ ա̃ծ
յակոբայ ննջեցին, և ոյք հեծեալ
էին

էլին ՚ի ձիս :

7 Դու ահաւոր ես՝ եւ ո՞վ կարէ կալ
առաջի քո․ ոտ̃ երեւեցար դու յերկ-
նից, յայտնի եղեւ բարկութի̃ քո :

8 Երկիր երկեաւ եւ սարսեաց ը̃ յառ-
նելն ա̃յ ՚ի դատաստան․ ընդ ապ-
րեցուցանել զա̃մ հեզս երկրի :

9 Խորհուրդք մարդկան խոստովան
առնին առ քեզ․ եւ ծածկեալք ի-
մաստութ̃ք օրհնեսցեն զքեզ :

10 Ո՛ւխտս դիք՝ եւ կատարեցէ՛ք Տն̃ Այ̃
մերոյ, ամենեքեան որ շուրջ էք
զնովաւ :

11 Մատուցէ՛ք պատարագս ահաւո-
րին․ ո քաղէ զհոգիս իշխանաց, ա-
հաւոր է նա քան զա̃մ թագաւորս
երկրի :

## ՍԱՂՄՈՍ․ ՀԶ:

1 ՚Ի կատարած․ վասն Իդիթոմայ․ սաղմոս
յասափ :

2 Ձայնիւ իմով ես առ Տր կար-
դացի․ ձայնիւ իմով ես առ
Տծ, եւ նայեցաւ առ իս :

3 Յաւուր նեղութե̃ իմոյ զՏծ խնդ-
րեցի ձեռօք իմովք․ ՚ի գիշերի ա-
ռաջի

ռաջի նորա ոչ խաւսեցայ ։
Ո՛չ կամէր մխիթարել անձն իմ. յի- 4
շեցի զա̄ծ՝ և ուրախ եղէ. հոգայի,
և նուաղէր յիս հոգի իմ ։
Կանխեցին պահուց աչք իմ. խռո- 5
վեցայ և ոչ խօսեցայ. խորհեցայ զա-
ւուրսն զառաջինս. և զամս յաւի-
տենից յիշեցի ։
Խօսեցայ ՚ի գիշերի ը̄ սրտի իմում. 6
հոգայի՝ և տառապէր յիս հոգի իմ ։
Մի՛ թէ յաւիտենից մերժեսցէ՞ զիս 7
տ̄ր. և ո՞չ ևս յաւելուցու ՚ի հաճել
և ևս ։
Կամ իսպառ արգելցէ՞ զողորմութի̄ 8
իւր յինէն. կամ կատարեսցէ՞ զբան
իւր ազգէ մինչև յազգ ։
Կամ մոռասցի՞ գթալ ա̄ծ իմ և ևս. 9
կամ արգելցէ՞ զգթութի̄ իւր՝ բար-
կութ̄բ իւրով ։
Ասացի՝ թէ այժմ սկսայ. այս է 10
նորոգումն աջոյ բարձրելոյն ։
Յիշեցի զգործս տ̄ն ՚ի սկզբանէ. 11
յիշեցի զսքանչելիս նորա ։
Խորհեցայ յա̄մ գործս քո. և ՚ի ձե- 12
ռագործս քո խորհեցայ ։
Ա̄ծ ՚ի սրբութե̄ են ճանապարհք 13
քո. ով է ա̄ծ մե̄ծ՝ որ̄պ զա̄ծ մեր.

դու ես ա̃ծ , որ առնես զսքանչելիս:
14 Ցուցեր ժողովրդեան քում զզօրու-
թիւն քո . փրկեցեր բազկաւ քով
զժողովուրդս քո , զորդիսն յակո-
բայ՝ և յովսեփու :
15 Տեսին զքեզ ջուրք ա̃ծ , տեսին
զքեզ ջուրք՝ և երկեան . և խորք
խռովեցան 'ի ձայնէ ջուրց բազմաց:
16 Ձայն ետուն ամպք . քանզի և նետք
քո գնան 'ի ձայնէ որոտալոյ քո
անուոյ :
17 Երևեցան փայլատակունք քո տիե-
զերաց , խռովեցաւ և դողաց երկիր:
18 'Ի ծովու են ճանապարհք քո , շաւ-
իղք քո 'ի ջուրս բազումս . և հետք քո
ոչ երևին :
19 Առաջնորդեցեր որպէս խաշին ժո-
ղովրդեան քո . 'ի ձեռն մովսէսի և
ահարոնի :

## ՍԱՂՄՈՍ. ՀԷ:

1 'Ի կատարած . իմաստութիւն յասափ :

2 Նայեցարուք ժողովուրդք
յօրէնս իմ . խոնարհեցու-
ցէք զունկն ձեր 'ի բանս
բերանոյ իմոյ :

Բացից առակաւ զբերան իմ, խօ- 3
սեցայց զառակս 'ի սկզբանէ:
Որպէս լուաք՝ և ծանեաք զայս, և 4
հարքն մեր պատմեցին մեզ:
Ո՛չինչ ծածկեցաւ յորդւոց ն̃ց յազգ 5
յայլ, պատմել զօրհնութիւն տ̃ն, զզօ-
րութիւն և զսքանչելիս իւր՝ զոր արար:
Հաստատեաց զվկայութիւն իւր առ յա- 6
կոբ, և օրէնս եդ 'ի վերայ իսրայէլի:
Որ ինչ միանգամ պատուիրեաց հար- 7
ցըն մերոց, ցուցանել զայս որդւոց
իւրեանց. զի ծանիցեն յազգ յայլ:
Որդիք որ ծնանիցին՝ յարիցեն և պատ- 8
մեսցեն զայս որդւոց իւրեանց. զի
դիցեն առ ա̃ծ զյոյս իւրեանց, և
մի՛ մոռասցին զգործս ա̃յ:
Զպատուիրանս ն̃ր խնդրելով խնդ- 9
րեսցեն. և մի՛ եղիցին ո̃պ և հարք
իւրեանց:
Ազգ չար և դառնացօղ. ազգ որ 10
ո՛չ ուղղեաց զսիրտ իւր, և ո՛չ հաս-
տատեաց առ ա̃ծ զհոգի իւր:
Որդիք եփրեմի լիաձիգք և աղեղնա- 11
ձիգք, յաւուր պատերազմի կա-
պարճս դարձուցին:
Ո՛չ կացին նոքա յուխտի տ̃ն. և ըստ 12
իրաւանց ն̃ր ո՛չ կամեցան գնալ:

Մո-

13 Մոռացան զերախտիս նր̃, և զսքան-
չելիսն՝ զոր եցոյց նոցա։
14 Առաջի հարցն նց̃ զոր արար զսքան-
չելիս իւր, յերկրին եգիպտացւոց՝
և ՚ի դաշտին տայանու։
15 Հերձ զծովն՝ և անցոյց զնոսա․
կացոյց զջուրսն ող̃ ՚ի տիկս։
16 Առաջնորդեաց նց̃ ամպով ՚ի տուէ․
և զամ̃ գիշեր ՚ի լոյս հրոյ։
17 Հերձ զվէմն յանապատի, և ետ
ըմպել նց̃ ող̃ ՚ի խորոց մեծէ։
18 Հան զջուրսն ՚ի վիմէն․ և հոսեաց
որպէս զգետս զջուրսն։
19 Սակայն յաւելին ՚ի մեղանչել․ և
ևս բարկացուցին զբարձրեալն յան-
ջրդի։
20 Փորձեցին զած̃ ՚ի սիրտս իւրեանց,
՚ի խնդրել զկերակուր անձանց իւ-
րեանց։
21 Տրտնջեցին զնյ̃՝ և ասացին․ միթէ
կարօղ իցէ ած̃ պատրաստել սեղան
յանապատի։
22 Քանզի հարկանէր զվէմն՝ և հոսէին
ջուրք, և վտակք խաղային ՚ի նմանէ։
23 Ա՛ղէ հաց ևս կարասցէ տալ նա մեզ՝
կամ պատրաստեսցէ՞ սեղան ժողո-
վրդեան իւրոյ։

Վ՛ն այսորիկ լուաւ զայս Տ՛ր, և յա- 24
պաղեաց. հուր բորբոքեցաւ ՚ի յա-
կովբ, և բարկութիւն ել ՚ի վերայ
իսրայէլի ։
Զի ոչ հաւատացին յԱ՛ծ, և ո՛չ յու- 25
սացան ՚ի փրկութիւն նր՛ ։
Հրաման ետ ամպոց ՚ի վերուստ, 26
և զդրունս երկնից եբաց. և տեղ-
եաց ՚ի նոսա մանանայ ՚ի կերակուր ։
Զհաց երկնից ետ նց՛, զհաց հրեշ- 27
տակաց կերան մարդիկ. և իջոյց ՚ի
նոսա կերակուր ՚ի լիութիւն ։
Հան զհողմ հարաւոյ, և ած զօրութ՛բ 28
իւրով զհիւսիսին ։
Տեղեաց ՚ի նոսա միս ոպ՛ զհող. ոպ՛ 29
զաւազ ծովու զթռչունս թեւաւորս ։
Արկ ՚ի մէջ բանակի նոցա, և շուրջ 30
զվրանօք նոցա ։
Կերան և յագեցան յոյժ. զցանկու- 31
թիւն նց՛ ետ նց՛. և ոչի՛նչ կարօտ ե-
ղեն ՚ի ցանկութենէ իւրեանց ։
Մինչդեռ կերակուրք ՚ի բերանս 32
իւրեանց էին, բարկութիւն յԱ՛յ ել
՚ի վերայ նոցա ։
Սպան զբազումս ՚ի նոցանէ. և 33
զընտիր ընտիրս յիսրայելէ սատա-
կեաց ։

34Յայսմ ամի մեղան և ես. ոչ հաւ-
տացին սքանչելեաց նր ։
35Պակասեցան յունայնութե աւուրք
նց. և ամք նց փութապէս անցին ։
36Յորժամ սպանանէր զնոսա, խնդ-
րէին զնա. դառնային և առաւօտ
առնէին առ Ած ։
37Յիշեցին՝ զի Ած օգնական էր նց.
Ած բարձրեալ փրկիչ էր նոցա ։
38Սիրեցին զնա բերանովք իւրեանց,
և լեզուօք իւրեանց ստեցին նմա.
և սիրտք նց ոչ էին ուղիղ ը նմա,
և ոչ հաւատացին ուխտի նր ։
39Այլ նա ինքն գթած էր, քաւէր
զմեղս նց՝ և ոչ ապականէր ։
40Յաճախէր դարձուցանել զբարկու-
թն իւր. և ոչ բորբոքեաց զամենայն
սրտմտութիւն իւր ։
41Յիշեաց՝ թէ մարմին են նոքա. հոգի
որ երթայ՝ այլ ոչ ևս դառնայ ։
42Քանիցս անգամ դառնացուցին զնա
յանապատի. և բարկացուցին զբարձ-
րեալն յանջրդի ։
43Դարձան՝ և փորձեցին զԱծ. և զՍբն
Իսրայէլի զայրացուցին ։
44Ոչ յիշեցին զձեռն նորա. յաւուր
յորում փրկեաց զնոսա ՚ի ձեռաց

նեղչաց նոցա ։
Որպ՟ արար զնշանս՝ և զարուեստս 45
իւր յերկրին Եգիպտացւոց, և 'ի
դաշտին տայանու ։
Դարձոյց յարիւն զգետս նոցա ․ և 46
զանձրևս նոցա, զի մի՛ արբցեն ։
Առաքեաց 'ի նոսա շանաճանճ և 47
եկեր զն՟ս, և գորտիւք ապականեաց
զն՟ս ։
Ետ ժանկոյ զպտուղ ն՟ց, և զվաս֊ 48
տակս նոցա մարախոյ ։
Հար կարկտիւ զայգիս նոցա, և 49
զթզենիս նոցա եղեամբ ։
Մատնեաց 'ի կարկուտ զանասունս 50
նոցա ․ և զստացուածս նոցա հրով
դատեցաւ ։
Առաքեաց 'ի նոսա զսրտմտութի 51
բարկութե՟ իւրոյ, զսրտմտութի բար֊
կութի և զնեղութիւն ։
Առաքեաց 'ի նոսա տանջանս՝ 'ի 52
ձեռն հրեշտակի չարի ․ դիմեցոյց 'ի
ն՟ս զսրտմտութե բարկութե՟ իւրոյ ։
Ո՛չ անխայեաց 'ի մահուանէ զան֊ 53
ձինս նոցա ․ և զանասունս նոցա 'ի
մահ մատնեաց ։
Եհար զա՟մ անդրանիկս Եգիպտաց֊ 54
ւոց, զսկիզբն ա՟մ վաստակոց ն՟ց
'ի

'ի յարկս քամոյ ։

55 Հորդան եա որպէս խաշին ժողո-
վրդեան իւրոյ. և եհան զնս որպէս
հօտ յանապատ ։
56 Առաջնորդեաց նոցա յուսով, և
ոչ երկեան, և զԹշնամիս նոցա ծով
ծածկեաց ։
57 Եհան զնս 'ի լեառն սրբուԹեան
իւրոյ, լեառն այն՝ զոր ստացեալ
էր աջոյ նորա ։
58 Մերժեաց յերեսաց նոցա զհեԹա-
նոսս. վիճակեցոյց 'ի նոսա զվիճակ
ժառանգուԹե իւրոյ, և բնակեցոյց
'ի յարկս նոցա զազգն իսրայէլի ։
59 Փորձեցին՝ դառնացուցին զած բարձ-
րեալն, և զվկայուԹն նր ոչ պահեցին ։
60 Դարձան խոտորեցան ոմ և հարք
իւրեանց, դարձան՝ և եղեն որպէս
զաղեղն Թիւր ։
61 Դարձան բարկացուցին զնա 'ի բա-
գինս իւրեանց. և դրօշելովք իւ-
րեանց նախանձ արկին նմա ։
62 Լուաւ ած, և արհամարհեաց զնս.
և անարգեաց յոյժ զիսրայէլ ։
63 Մերժեաց յիւրմէ զխորանն 'ի սե-
լովմ. խորան, զոր բնակեցոյց 'ի մէջ
մարդկան ։

Մատնեաց 'ի գերութիւն զզօրութիւնց̃. 64
և զգեղ նց̃ 'ի ձեռս թշնամեաց նց̃:
Արգել 'ի սուր զժողովուրդ իւր. և 65
զժառանգութիւն իւր անտես արար:
Զերիտասարդս նոցա եկեր հուր, 66
և վ̃ կուսանաց նց̃ ոչ ոք սգացաւ:
Քահանայք նոցա անկան 'ի սուր. 67
և զայրիս նոցա ոչ ոք էր՝ որ լայր:
Զարթեաւ տր̃ 'ի քնոյ ի̃ր, որպէս 68
հզօր զի թափէ զգինի:
Եհար յետս զթշնամիս իւր, նախա- 69
տինս յաւիտենից արար զնս̃:
Մերժեաց նա զխորանն յովսեփու, 70
և զազգն եփրեմի նա ոչ ընտրեաց:
Այլ ընտրեաց նա զազգն յուդայ. 71
զլեառն սիոնի, զոր և սիրեաց:
Շինեաց տր̃ միեղջերոյ զսրբութիւնս. 72
յերկրի հաստատեաց զնա յաւիտեան:
Ընտրեաց զդաւիթ ծառայ իւր, և 73
ընկալաւ զնա 'ի հօտէ խաշանց. 'ի
վերջին ծննդոցն ընկալաւ զնա:
Հովուել զյակոբ ծառայ իւր, և 74
զիսրայէլ ժառանգութիւն իւր:
Արածէր զնոսա ի̃նստութ̃ սրտի 75
իւրոյ, յանմեղութիւն ձեռաց իւ-
րոյ առաջնորդէր նոցա:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՀԸ.

1 Սաղմոս յԱսափ :

2 Ած մտին հեթանոսք 'ի ժա_
ռանգութիւն քո . պղծեցին
զտաճար սուրբ քո :
3 Արարին զԵրուսաղէմ
որպէս հիղս մրգապահաց . արկին
զդիականս ծառայից քոց՝ գէշ
թռչնոց երկնից , և զմարմինս սր_
բոց քոց՝ գազանաց երկրի :
4 Հեղին զարիւն նոցա որպէս ջուր՝
շուրջ զԵրուսաղէմաւ , և ոչ ոք էր՝
որ թաղէր զնս :
5 Եղաք մեք նախատինք դրացեաց մե_
րոց . ծաղր և այպն կատականաց
այնոցիկ , որ շուրջ էին զմեօք :
6 Մինչև յե՞րբ տր՝ բարկանաս դու իս_
պառ . բորբոքեսցի որպէս հուր նա_
խանձ քո :
7 Հե՛ղ զբարկութիւն քո 'ի վր ազգաց՝
որ զքեզ ոչ ճանաչիցեն . 'ի վր թա_
գաւորաց որ զանուն քո ոչ կարդա_
ցին . զի կերան զյակովբ , և զտեղի
նորա աւերեցին :
8 Մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս .

 վաղ.

վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմութիւն
քո տէր • զի աղքատացաք յոյժ ։
Օգնեա՛ մեզ ած փրկիչ մեր, վասն 9
փառաց անուա՛ն քո ։
Տէր փրկեա՛ զմեզ՝ և քաւեա՛ զմեղս 10
մեր վասն անուա՛ն քո ։
Մի՛ երբեք ասասցեն 'ի հեթանոսս, 11
թէ ո՛ւր է ած նոցա ։
Նշան յայտնի լինիցի 'ի վերայ հե֊ 12
թանոսաց, առաջի աչաց մերոց • առ
'ի խնդրել զվրէժ արեան ծառայից
քոց՝ որ և հեղաւ ։
Մտցէ առաջի քո հեծութիւն կապե֊ 13
լոց • ըստ մեծութեան բազկի քո՝ շահեա՛
գու զորդիս սպանելոց ։
Հատո՛ դրացեաց մերոց եօթնպա֊ 14
տիկ 'ի ծոց նոցա, նախատինս զոր
նախատեցին զքեզ տէր ։
Մեք ժողովուրդք և խաշն արօտի 15
քոյ, խոստովան եղիցուք առ քեզ
յաւիտեան, ազգէ յազգ պատմես֊
ցուք զօրհնութիւնս քո ։

ՍԱՂ

# ՍԱՂՄՈՍ. Հ Թ.

1 'Ի կատարած. 'ի վերայ փոփոխելոցն վկայու–
թիւն. Ասափայ սաղմոս. 'ի վերայ Ասորես–
տանեայն :

2 Որ հովուեսդ իսրայէլի՝ նայեաց ,
որ առաջնորդես որպէս խաշին
յովսեփու :
3 Որ նստիս 'ի քրովբէս՝ յայտնեա՛
առաջի եփրեմի , բենիամենի և մա–
նասէի :
4 Զարթի՛ զզօրութիւնս քո , և եկ 'ի
կեցուցանել զմեզ :
5 ԱԾ զօրութեց դարձո՛ զմեզ , երևեցո՛
զերեսս քո 'ի մեզ՝ և կեցցուք :
6 Տր ած զօրութեց՝ մինչև յե՛րբ բար–
կանաս յաղօթս ծառայից քոց :
7 Ջամբեցեր մեզ հաց արտասուաց .
և արբուցեր մեզ արտասուս չափով :
8 Արարեր զմեզ նախատինս դրաց–
եաց մերոց, այպն կատականաց թշ–
նամեաց մերոց :
9 ԱԾ զօրութեց դարձո՛ զմեզ , երևեցո՛
զերեսս քո 'ի մեզ՝ և կեցցուք :
10 Այգի յեգիպտոսէ փոխեցեր . հա–
ներ զհեթանոսս՝ և զնո տնկեցեր .

և առաջնորդեցեր նմա ։
Հաստատեցեր զարմատս նր՝ և ելից 11
զերկիր ․ ծածկեաց զլերինս հովանի
նր, և բարունակք նր զմայրս այ ։
Ձգեաց զորթ իւր մինչև 'ի ծով․ 12
մինչև 'ի գետս են շառաւիղք նր ։
Ընդէ՞ր քակեցեր զցանկ նորա, և 13
կթեն զնա անցաւորք ճանապարհի։
Ապականեաց զնա խոզ անտառի, 14
և էրէ վայրի արածեցաւ 'ի նմա ։
Ած զօրութեց՝ դարձ, հայեա՛ց յերկ 15
նից և տես ․ այց արա այգւոյս այս_
միկ, և դարման տա՛ր սմա, զոր տըն_
կեաց աջ քո ։
'Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրա_ 16
ցուցեր զնա 'ի քեզ ․ այրեցեալ 'ի
հուր և աւերեալ, 'ի սաստէ քումմէ
կորիցէ ։
Եղիցի ձեռն քո 'ի վերայ առն, աջ 17
քո 'ի վերայ որդւոյ մարդոյ, զոր
զօրացուցեր զնա 'ի քեզ ։
Ո՛չ ևս 'ի բացեայ եղիցուք մեք 'ի 18
քէն ․ կեցուսցես դու զմեզ, և զա_
նուն քո տր կարդասցուք ։
Ած զօրութեց դարձո՛ զմեզ, երևեցո՛ 19
զերեսս քո 'ի մեզ՝ և կեցցուք ։

## ՍԱՂ․

# ՍԱՂՄՈՍ. Ձ։

1 'Ի կատարած. վասն հնձանաց. սաղմոս յասափ. հինգերորդ շաբաթուց ։

2 Ցնծացէ՛ք առ ած, օգնական է մեր. աղաղակեցէ՛ք առ ած յակոբայ.
3 Առէ՛ք սաղմոս, և տո՛ւք օրհնութի. սաղմոս սաստեցէք նմա 'ի ձայն քաղցրութե ։
4 Փո՛ղ հարէք'ի գլուխս ամսոցյաւուր նշանաւորի տարեկանաց մերոց ։
5 Հրաման է այս իսրայէլի, և իրաւունք են այ յակոբայ ։
6 Վկայութի յովսեփու՝ զոր ետ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն եգիպտացւոց, լեզու զոր ո՛չ գիտէր՝ լուաւ ։
7 'Ի բաց արար 'ի բեռանց զթիկունս նր. և ձեռս նր յորթ և 'ի թի ծառայելոյ ։
8 'Ի նեղութե կարդացեր առ իս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ 'ի գաղտնութէ մրրկին, և փորձեցի զքեզ 'ի վերայ ջուրցն հակառակութե ։
9 Լո՛ւր ժողովուրդ իմ'և վկայեմ քեզ.

և իսրայէլ՝ թէ լռեցես ինձ ։
Մի՛ ևս եղիցին քեզ աստուածք առ_ 10
ժամայնք . և մի՛ երկիր պագանիցես
դու աստուծոյ օտարի ։
Ես եմ տ̃ր ա̃ծ քո՝ որ հանի զքեզ 11
յերկրէն եգիպտացւոց . բա՛ց զբե_
րան քո՝ և լցից զդա ։
Ժողովուրդ իմ ո՛չ լուաւ ձայնի ի_ 12
մում, և իսրյէլ յիս ինչ ո՛չ նայեցաւ ։
Բարձի թողի զն̃ս երթալ զհետ կա_ 13
մաց սրտից իւրեանց . զի գնասցին
նոքա ըստ կամս անձանց իւրեանց ։
Զի թէ ժողովրդեան իմոյ լուեալ 14
էր ինձ, կամ իսրայէլի զճանապարհս
իմ գնացեալ էր ։
Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր 15
իմ զթշնամիս նր̃, 'ի վերայ նեղչաց
նորա արկեալ էր զձեռն իմ ։
Թշնամիք տ̃ն ստեցին նմա, և եղի_ 16
ցին ժամանակք նոցա յաշխարհի ։
Կերակրեաց զն̃ս 'ի պարարտութ̃է 17
ցորենոյ, և 'ի վիմէ մեղր յագեցոյց
'ի ն̃ս ։

# ՍԱՂՄՈՍ. ՁԱ.

1 Սաղմոս յասափ ։

2 Ա՟Ծ եկաց ՚ի ժողովս աստուածոց,
եւ ՚ի միջի նոց՟ դատէր զնոսա ։
3 Մինչեւ յե՞րբ դատիք անիրաւութի՟ ,
եւ ակն առնուք մեղաւորաց ։
4 Դատ արարէք որբոյ եւ այրւոյ .
իրաւունս արարէք տնանկին եւ խո-
նարհի ։
5 Ազատեցուցէ՛ք զաղքատն եւ զտնանկն,
՚ի ձեռաց մեղաւորի փրկեցէ՛ք զնոսա։
6 Ո՛չ իմացան եւ ո՛չ ՚ի միտ առին , ՚ի
խաւարի գնացին , եւ շարժեսցին ա-
մենայն հիմունք երկրի ։
7 Ես ասացի՝ թէ աստուածք իցէք .
կամ որդիք բարձրելոյ ամենեքեան։
8 Դուք ահաւասիկ ո՟պ մարդիկ մեռա-
նիք . եւ ո՟պ զմի յիշխանաց անկանիք ։
9 Արի՛ Ա՟Ծ , եւ դատեա՛ զերկիր . զի
դու ժառանգեսցես զա՟մ հեթանոսս։

# ՍԱՂՄՈՍ. ՁԲ.

Օրհնութիւն . սաղմոս Ասափայ : 1

Ածո՛. քեզ նմանիցէ . մի՛ լռեր 2
և մի՛ դադարեր Ած :
Զի ահա թշնամիք քո 3
գոչեցին, և ատելիք քո
համբարձին զգլուխս իւրեանց :
'Ի վերայ ժողովրդեան քո խորամանկեցին 4
զգիտութիւն . խորհեցան 'ի վերայ
սրբոց քոց , և ասացին :
Եկա՛յք սատակեսցուք զնոսա յազգաց, 5
և մի՛ յիշեսցի անուն Իսրայէլի և ևս:
Խորհեցան միաբանութեամբ 'ի միասին . 6
'ի վերայ քո ուխտ արարին :
Բնակք Եդովմայեցւոց՝ և Իսմայելա- 7
ցիք , Մովաբ և Հագարացիք :
Գեբաղ՝ Ամո՛ն՝ Ամաղէկ , և այլազ- 8
գիքն ընդ բնակչօքն հանդերձ Ծուրայ:
Նաև Ասուր եկեալ էր ընդ նոսա . ա- 9
մենեքեան սոքա զօրավիգն էին որդ-
ւոցն Ղովտայ :
Արա զնոսա որպէս զՄադիամ, որպէս զՍիսա- 10
րայ , որպէս զՅաբին՝ 'ի ձորձորսն
Կիսոնի :
Սատակեցան նոքա յԱյենդովրայ. 11

և

և եղեն իբ՟ զաղբ երկրի։

12 Արա՛ զիշխանս նոցա իբ՟ զորէբն,
զէբն, զզէբէէ, զսաղմանա, և զա-
մենայն իշխանս նոցա։

13 Որք ասացին՝ ժառանգեսցուք 'ի
մեզ զսրբութիւն ա՟յ։

14 Ա՟ծ իմ՝ արա՛ զնոսա իբ՟ զանիւ,
որպէս զեղէգն առաջի հողմոյ։

15 Որպէս հուր՝ զի այրէ զանտառս,
որպէս բոց՝ զի կիզու զլերինս։

16 Այնպէս հալածեսցես զն՟ս մրրկաւ
քով. և բարկութ՟ քով խռովեսցուս-
ցես զն՟ս։

17 Լից զերեսս նոցա անարգանօք, և
խնդրեսցեն զանուն քո Տ՟ր։

18 Ամաչեսցեն և խռովեսցին յաւի-
տեանս յաւիտենից, և ամօթալից
կորիցեն։

19 Ծանիցեն զի անուն քո Տ՟ր է. և
դու միայն բարձրեալ ես 'ի վ՟ր ա՟մ
երկրի։

## ՍԱՂՄՈՍ. ՁԳ։

1 'Ի կատարած. վասն հնձանացն. որդւոցն
կորխայ սաղմոս։

2 Որպէս սիրելի են յարկք քո Տ՟ր
զօրութեանց. ցանկայ և փափագէ
անձն

անձն իմ 'ի գաւիթս քո ։
Սիրտ իմ և մարմին իմ՝ ցնծացէ 3
առ ա̃ծ կենդանի ։
Քանզի ճնճղուկ եգիտ իւր տուն. 4
տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս
իւր ։
Սեղան քո տ̃ր զօրուե̃ց, թագաւոր 5
իմ և ա̃ծ իմ ։
Երանի՜ ամենեցուն՝ որ բնակեալ 6
են 'ի տան տ̃ն. յաւիտեանս յաւի֊
տենից օրհնեսցեն զքեզ ։
Երանեալ է այր՝ որոյ օգնութ̃ի իւր 7
'ի քէն է. ելս եդ 'ի միտս իւրում
'ի հովիտս արտասութե̃ 'ի տեղւոջ՝
յորում ուխտեաց ։
Զօրհնութ̃ի տացէ՝ որ զօրէնս դնէ. 8
գնասցէ նա 'ի զօրուէ 'ի զօրութ̃ի. և
երևեսցի ա̃ծ հրեշտակաց 'ի սիոնի.
Տ̃ր ա̃ծ զօրութե̃ց՝ լո՛ւր աղօթից 9
իմոց. ունկն դիր ա̃ծ յակոբայ ։
Ընդունելի ես դու մեր. տե՛ս ա̃ծ 10
և նայեա՛ յերեսս օծելոյ քոյ ։
Վասն զի լաւ է ինձ՝ մի օր 'ի գա֊ 11
ւիթս քո, քան զհազարս ։
Ընտրեցի ընդ աղբ դալ 'ի տան ա̃յ 12
առաւել, քան բնականալ 'ի յարկս
մեղաւորաց ։

Զո

13 Զողորմութի̄ն և զճշմարտութի̄ն սիրէ տ̄ր
ա̄ծ մեր․ շնորհս և զփառս տացէ ։
14 Տ̄ր ոչ պակաս առնէ զողորմութի̄ն
իւր յայնցանէ, որ գնան յանբծութե̄ն։
15 Տ̄ր ա̄ծ զօրութե̄ց, երանեալ է այր՝
որ յուսայ 'ի քեզ ։

## ՍԱՂՄՈՍ․ ՁԴ ։

1 'Ի կատարած․ որդւոցն Կորխայ սաղմոս ։

2 Հաճեցար տ̄ր ընդ երկիր քո, և
դարձուցեր զգերութի̄ն յակոբայ։
3 Թողեր զանիրաւութի̄ն ժողովրդեան
քոյ, ծածկեցեր զա̄մ մեղս նոցա ։
4 Լռեցուցեր զա̄մ սրտմտութի̄ս քո,
դարձար 'ի բարկութե̄ սրտմտութե̄ քո։
5 Դարձ առ մեզ ա̄ծ փրկիչ մեր, և
դարձո զսրտմտութի̄ս քո 'ի մէնջ ։
6 Մի՞ յաւիտեան բարկանար մեզ տ̄ր․
և մի՞ ձգեր զբարկութի̄ն քո ազգէ
մինչև յազգ ։
7 Ա̄ծ դու դարձեալ կեցուսցես զմեզ․
ժողովուրդ քո ուրախ եղիցի 'ի քեզ։
8 Ցոյց մեզ տ̄ր զողորմութի̄ս քո, և
զփրկութի̄ս քո տուր մեզ ։
9 Լուայց զի՞նչ խօսի տ̄ր ա̄ծ մեր․ խօ-
սեսցի զխաղաղութի̄ն ժողովրդեան իւ-

բոյ առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ,
որ դարձեալ են առ նա սրտիւք ։
Սակայն մերձ է առ երկիւղածս իւր 10
փրկութիւն նորա․ բնակել փառաց նր̅
յերկրի մերում ։
Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահես- 11
ցին․ արդարութիւն և խաղաղութիւն
համբուրեսցին ։
Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ․ ար- 12
դարութիւն յերկնից երևեցաւ ։
Տ̅ր տացէ զքաղցրութիւն, և երկիր 13
մեր տացէ զպտուղ իւր․ արդարութիւն
առաջի նր̅ գնասցէ․ դիցէ ՚ի ճա-
նապարհի զգնացս իւր ։

## ՍԱՂՄՈՍ․ ՁԵ ։

Սաղմոս ՚ի Դաւիթ․ աղօթք ։

Խոնարհեցո Տ̅ր զունկն քո՝ 1
և լուր ինձ․ զի աղքատ և
տնանկ եմ ես ։
Պահեա զանձն իմ սուրբ Տ̅ր․ փր- 2
կեա զծառայս քո Ա̅ծ իմ, որ ՚ի
քեզ յուսացայ ։
Ողորմեա ինձ Տ̅ր, զի առ քեզ աղա- 3
ղակեցի զօրհանապազ․ ուրախ արա
զանձն ծառայի քո, զի առ քեզ Տ̅ր
համ

համբարձի զանձն իմ։
4 Զի դու Տ͞ր քաղցր և ուղիղ ես. բա֊
զումողորմ առ ամենեսեան, որ կար֊
դան առ քեզ։
5 Ո՛ւնկն դիր Տ͞ր աղօթից իմոց, և
նայեա՛ ՚ի ձայն խնդրուածաց իմոց։
6 Յաւուր նեղութ͞ե իմոյ կարդացի
առ քեզ, և լուար ինձ։
7 Ոչ ո՛ք է նման քեզ յաստուածս Տ͞ր.
և ոչ ո՛ք է ըստ գործս քո։
8 Զամենայն ազգս զոր արարեր՝ եկես֊
ցեն և երկիր պագցեն առաջի քո,
և փառաւոր արասցեն զանուն քո
յաւիտեան։
9 Մեծ ես դու Տ͞ր՝ և առնես սքան֊
չելիս. և դու միայն ես Ա͞ծ։
10 Առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհի
քում, և գնացից ՚ի ճշմարտութ͞ե
քում, և ուրախ եղիցի սիրտ իմ՝
յերկնչել յանուանէ քումմէ։
11 Խոստովան եղէց առ քեզ Տ͞ր Ա͞ծ
իմ յամենայն սրտէ իմմէ. փառաւոր
արարից զանուն քո յաւիտեան։
12 Մեծ եղև ՚ի վերայ իմ ողորմութ͞ի
քո, փրկեցեր զանձն իմ ՚ի դժոխոց
ներքնոց։
13 Ա՜ծ. անօրէնք յարեան ՚ի վ͞ր իմ.

և

և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն
իմ. և ոչ համարեցան զքեզ տէր ա-
ռաջի իւրեանց ։
Այլ դու տէր Աստուած իմ, գթած ես և ո- 14
ղորմած, երկայնամիտ բազումողորմ
և ճշմարիտ. Նայեաց առ իս և ողոր-
մեաց ինձ ։
Տուր զզօրութիւն ծառայի քո. կեցո՛ 15
զորդի աղախնոյ քո. և արա առ իս
նշան բարութեան ։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. 16
զի դու տէր օգնեցեր ինձ, և մխի-
թարեցեր զիս ։

## ՍԱՂՄՈՍ․ ՁԶ։

Սաղմոս օրհնութե. որդւոցն Կորխայ ։ 1

Հիմունք նր̅ 'ի լեառն սբ նր̅. սի- 2
րէ տէր զդրունս սիովնի առաւել
քան զամենայն յարկս յակոբայ ։
Փառաւորեալ խօսեցաւ վասն քո, 3
ահաւասիկ քաղաքդ այ̅ ։
Յիշեցի զռահաբ և զբաբելոնի՛ որք 4
ճանաչեն զիս. ահա այլազգիք և
ծուր՝ և ժողովուրդք հնդկաց, սոքա
եղեն անդ ։
Սիովնի ասի մայր, և մարդ ծնաւ 5
'ի

'ի նմա. և ինքն հիմունս արկ 'ի նմա
Բարձրեալն:
6 ՏԷՐ պատմեսցէ գրովք ժողովրդեան,
իշխանացս այսոցիկ՝ որ եղեն անդ:
7 Որպէս ուրախ լիցին 'ի քեզ ա-
մենեքեան. որոց բնակութիւն իւ-
րեանց 'ի քէն է:

## ՍԱՂՄՈՍ. ՁԷ:

1 'Ի կատարած. վ՛ն մաղաղէթայ իմաստու-
թէ. ըն էփ պատասխանի եման իմաստու-
թէ իսրայէլի:

2 ՏԷՐ ա՛ծ փրկութեան իմոյ, 'ի տուէ
կարդացի և գիշերի առաջի
քո:
3 Մտցեն աղօթք իմ առաջի քո տ՛ր,
խոնարհեսցի ունկն քո 'ի խնդր-
ուածս իմ:
4 Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և
կեանք իմ 'ի դժոխս մերձեցաւ. և
համարեցայ ես ընդ այնոսիկ, որք
իջանեն 'ի գուբ:
5 Եղէ ես ո՛պ մարդ առանց օգնակա-
նի, և 'ի մեռեալս ազատ:
6 Որպէս վիրաւորս, որ ննջեն 'ի գե-
րեզմանս:

Զորս

Զորս դուն ո՛չ յիշեցեր, նոքա 'ի 7
ձեռանէ քումմէ մերժեցան:
Եդին զիս 'ի գբին ներքնումն' 'ի խա- 8
ւարի և 'ի ստուերս մահու:
Յիս հաստատեցաւ սրտմտութի̃ն քո. 9
զա̃մ զբօսանս քո ածեր 'ի վ̃ր իմ:
Հեռի արարեր յինէն զծանօթս իմ: 10
և եդին զիս նշաւակ իւրեանց:
Մատնեցայ' և ո՛չ ելանէի, աչք իմ 11
տկարացան յաղքատութե̃ն:
Աղաղակեցի առ տ̃ր զօր հանապազ, 12
և համբարձի առ քեզ զձեռս իմ:
Մի թէ մեռելո՞ց առնիցես սքանչե- 13
լիս քո. կամ բժիշկք յարուցանիցե՞ն'
խոստովան առնիցին առ քեզ:
Մի թէ պատմեսցէ՞ ոք երբէք 'ի գե- 14
րեզմանի զողորմութի̃ւն քո, կամ զճշ-
մարտութի̃ւն քո 'ի կորստեան:
Մի թէ ճանաչիցի՞ն 'ի խաւարի 15
սքանչելիք քո, կամ արդարութի̃ւն
քո յերկրի մոռացելոյ:
Ես առ քեզ տ̃ր աղաղակեցի. ա- 16
ռաւօտու աղօթք իմ ժամանեսցեն
առ քեզ:
Ընդէ՞ր տ̃ր մերժես զանձն իմ. կամ 17
դարձուցանես զերեսս քո յինէն:
Տնանկ և վաստակաւոր եմ ես 'ի 18
մանկ

մանկութենէ իմմէ. 'ի բարձրութենէ
խոնարհեցայ և տագնապեցայ :
19 Յիս հաստատեցաւ բարկութիւն քո •
արհաւիրք քո խռովեցուցին զիս :
20 Շրջեցան զինև որպէս ջուր, զօր ա-
մենայն պաշարեցին զիս 'ի միասին :
21 Հեռի արարեր յինէն զբարեկամս
իմ և զծանօթս իմ, վն̄ թշուառու-
թե̄ իմոյ :

## ՍԱՂՄՈՍ. ՁԸ :

1 Իմաստութեան Եթանայ Եզրայե-
լացւոյ :

2 Զողորմութիւնս քո Տ̄ր յաւի-
տեան օրհնեցից ազգէ
յազգ պատմեցից զճշ-
մարտութիւնս քո բե-
րանով իմով :
3 Ասացեր՝ թէ աշխարհս ողորմութ̄բ
շինեսցի• յերկինս պատրաստ եղիցի
ճշմարտութիւն քո :
4 Եդի ուխտ ընտրելոց իմոց • երդ-
ուայ Դաւթի ծառայի իմոյ :
5 Յաւիտեան հաստատեցից զաւակ քո
և շինեցից ազգէ յազգ զաթոռ քո :
6 Խոստովան եղիցին երկինք սքանչե-
լեաց

լեաց քոց տր, եւ ճշմարտութի քո
յեկեղեցիս սրբոց ։
Ո՞վ է յամպս որ հաւասարէ քեզ. 7
կամ ո՞վ նմանիցէ տն յորդիս այ ։
Այն փառաւորեալ է 'ի խորհուրդս 8
սրբոց իւրոց. մեծ եւ ահաւոր 'ի վր
ամենեցուն որ շուրջ են զնովաւ ։
Տր ած զօրութեանց, ո՞ նման է քեզ. 9
հզօր ես դու տր՝ եւ ճշմարտութիւն
քո շուրջ է զքեւ ։
Դու տիրես զօրութեանց ծովու. եւ 10
զխաղաղութի ալեաց նր դու ցածու-
ցանես ։
Դու խոնարհեցուցանես ոպ վիրա- 11
ւորս զամբարտաւանս. 'ի զօրութե
բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո ։
Քո են երկինք՝ եւ քո է երկիր. 12
զաշխարհս լրիւ իւրով դու հաստա-
տեցեր. զհիւսիս եւ զհարաւ դու ա-
րարեր. Թաբոր եւ Հերմոն յանուն
քո ցնծասցեն ։
Քո է բազուկ՝ եւ քո է զօրութի. զօ- 13
րասցի աջ քո՝ եւ բարձր եղիցի ձեռն
քո ։
Յարդարութի եւ յիրաւունս հաս- 14
տատեալ է աթոռ քո. ողորմութի եւ
ճշմարտութի գնասցէ առաջի երե-
սաց

սաց քոց ։
15 Երանի՛ ժողովրդեան , որ գիտեն
զօրհնութիւն քո Տր . 'ի լոյս երեսաց
քոց գնասցեն, և յանուն քո ցնծա_
ցեն զօրհանապազ , և յարդարութե
քում բարձր եղիցին ։
16 Պարծանք զօրութեց մերոց դու ես
Տր . և 'ի կամս քո բարձր եղիցի եղ_
ջիւր մեր ։
17 'Ի Տնէ է օգնութիւն սրբոյն Իս_
րայէլի՝ թագաւորին մերոյ ։
18 Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ
որդիս քո , և ասացեր . եդից զօգ_
նութիւն իմ 'ի վր հզօրին , և բարձր
արարից զընտրեալն 'ի ժողովրդե_
նէ իմմէ ։
19 Գտի զԴաւիթ ծառայ իմ, իւղով
սրբով իմով օծի զնա ։
20 Ձեռն իմ ընկալցի զնա . և բազուկ
իմ զօրացուսցէ զնա ։
21 Մի՛ մեղիցէ նմա թշնամին , և որդի
անօրէնութե մի չարչարեսցէ զնա ։
22 Հարից առաջի նր զթշնամիս նր .
և զատելիս նր 'ի պարտութի մատ_
նեցից ։
23 Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն իմ
ընդ նմա . և յանուն իմ բարձր եղիցի
եղ_

եղջիւր նորա ։

Եդից 'ի ծովու զձեռն նորա . և 'ի 24
վերայ գետոց զաջ նորա ։

Նա կարդասցէ առ իս՝ Հայր իմ ես 25
դու , ած ընդունելի փրկութե իմոյ ։

Եւ ես անդրանիկ արարից զնա , և 26
բարձր քան զամ թագաւորս երկրի ։

Յաւիտեան պահեցից նմա զողոր- 27
մութիւն իմ , և ուխտ իմ հաւատա-
րիմ ընդ նմա ։

Հաստատեցից յաւիտեանս յաւի- 28
տենից զզաւակ նորա . և զաթոռ
նր որպէս զաւուրս երկնից ։

Թէ թողցեն որդիք նր զօրէնս իմ, և 29
յիրաւունս իմ ոչ կամեսցին գնալ ։

Թէ զարդարութիս իմ անարգեսցեն, 30
և զպատուիրանս իմ ոչ պահեսցեն ։

Հարից գաւազանաւ զանօրէնութիս 31
նց , տանջանօք զանիրաւութիս նց ։

Բայց զողորմութե իմ ոչ արգելից 32
'ի նոցանէ . և ոչ նենգեցից ճշմար-
տութե իմում , և ոչ անարգեցից
զուխտ իմ . և ինչ որ ելանէ ընդ
շրթունս իմ , զայն ոչ արհամարհե-
ցից ։

Միանգամ երդուայ 'ի սրբութիւն 33
իմ , թէ դաւթի ես ոչ ստեցից ։

34 Զաւակ նր̅ յաւիտեան կայցէ և ա-
թոռ նր̅ ոպ̅ արեգակն առաջի իմ. ոպ̅
լուսին, որ հաստատեալ է յաւի-
տեան վկայ հաւատարիմ յերկինս:
35 Իսկ արդ՝ դու մերժեցեր և անար-
գեցեր. և ը̅ վայր հարեր զօծեալ
քո:
36 Դարձուցեր զուխտ ՚ի ծառայէ
քումմէ. պղծեցեր յերկրի զսրբու-
թիւն նորա:
37 Քակեցեր զա̅մ պարիսպս նր̅, և
եդիր զամուրս նորա ՚ի դողումն:
38 Յափշտակեցին զնա անցաւորք ճա-
նապարհի. եղև նա նախատ դրա-
ցեաց իւրոց:
39 Բարձր արարեր զաջ նեղչաց նր̅. ու-
րախ արարեր զա̅մ թշնամիս նորա:
40 Դարձուցեր զօգնութի ՚ի սրոյ նր̅. և
ոչ ընկալար զնա ՚ի պատերազմի:
41 Անարգեցեր զսրբութիւն նր̅, և
զաթոռ նր̅ յերկիր կործանեցեր:
42 Նուազ արարեր զաւուրս ժամանա-
կաց նր̅. և հեղեր զնովաւ զամօթ:
43 Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս
քո իսպառ. բորբոքեսցի ո̅պ հուր
բարկութիւն քո:
44 Իսկ արդ յիշեա և տես՝ թէ ով է

իմ՝ հանդիստ. միթէ ՚ի զո՞ւր ինչ
ստեղծեր զա̃մ որդիս մարդկան:
Ո՞վ է մարդ որ կեցցէ՝ և ո՛չ տեսցէ 45
զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ՚ի
ձեռաց դժոխոց:
Ո՞ւր են ողորմութիւնք քո տ̃ր ա- 46
ռաջինք, զոր երդուար դաւթի
ճշմարտութե̃բ քով:
Յիշեա՛ զնախատինս ծառայի քոյ, 47
զոր ընկալայ ՚ի ծոց իմ յազգաց բազ-
մաց:
Զոր նախատեցին թշնամիք քո տ̃ր. 48
նախատեցին փոխանակ օծելոյ քոյ:
Օրհնեալ տ̃ր ա̃ծ յաւիտեանս յա- 49
ւիտենից. եղիցի եղիցի:

Օրհնութիւն Եսայեայ որդւոյն Ամովսայ:
Եսայեայ. իը:

Ի գիշերաց կանխէ հոգի իմ՝ 1
առաւօտ առնել առ քեզ ա̃ծ:
Վասն զի լոյս են հրամանք 2
քո ՚ի վ̃ր երկրի. ուսարո՛ւք զար-
դարութի̃ բնակիչք երկրի:
Կատարեցաւ ամպարիշտն, և այլ ո՛չ 3
եւս ուսցի առնել յերկրի զարդա-
րու-

րութիւն ճշմարտութե՟ն :

4 Բարձցի ամբարշտութի՛ւն յերկրէ, և մի՛
ոք տեսցէ զփառս ա՟յ :

5 Տ՟ր բարձր ես՝ և բազուկ քո հզօր •
և նոքա ո՛չ գիտացին :

6 Ծանիցեն՝ ամաչեսցեն, և նախանձ
անկցի անխրատ ժողովրդեան • և
արդ հուր զթշնամիս քո կերիցէ :

7 Տ՟ր ա՟ծ մեր՝ տո՛ւր մեզ զխաղաղութի՟ւ
քո • զի ըստ ամենայն գործոց մերոց
հատուցաւ մեզ :

8 Տ՟ր ա՟ծ մեր՝ ստացի՛ր զմեզ • զի բաց
'ի քէն զայլ ոք ո՛չ գիտեմք • և զանուն
քո անուանեմք զօրհանապազ :

9 Խաւարդ՝ մեռեալք զկենդանութի՟
այլ ո՛չ տեսանիցեն • և ո՛չ բժիշկք
յարուցանիցեն :

10 Վ՟ս այսորիկ ածեր հարեր՝ սատա_
կեցեր ջնջեցեր՝ զա՟մ արու մանուկ
նոցա :

11 Յաւե՛լ՟ր զչար 'ի վերայ չարի Տ՟ր •
և ա՛ծ զչար 'ի վ՟ր անօրինաց երկրի :

12 Տ՟ր 'ի նեղութե՟ յիշեցաք զքեզ • զի
փոքր մի նեղութիւն է խրատ քո 'ի
վերայ մեր :

13 Որ՟պ երկունք յղւոյ՝ զի հասեալ իցէ
ժամանակ ծննդեան, և առ ցաւս

իւր ճչիցէ :
Այնպէս եղաք սիրելւոյ քում. յահ14
և յերկիւղ.քո յղացեալ երկնեցաք ,
և ծնաք զհոգի փրկութեն քո :
Ո՛չ ևս կործանեսցուք մեք , այլ կոր-15
ծանեսցին բնակիչք երկրի :
Յարիցեն մեռեալք · և կենդանա-16
ցին ամենեքեան , որ եդեալ են 'ի
գերեզմանս :
Զարթիցեն ցնծասցեն , և ուրախ ե-17
ղիցին դադարեալք յերկրի :
Վ՟ն զի՛ ցօղ որ ցօղէ 'ի քէն՝ , այդ18
բժշկութիւն է ն՟ց · բայց երկիրն ամ-
բարշտեալ սատակեսցի :
Խոյս տուր ժողովուրդ իմ · գնա՛19
մուտ 'ի շտեմարանս քո · փակեա՛
զդրունս քո առաջի երեսաց քոց :
Փախիր և թագի՛ր առ ժամանակ20
մի՛ մինչև անցցէ բարկութիւն տ՟ն :

Մաղթանք :

Խաղաղութեան տուօղ քո՟՝ զխաղա-
ղութիւն և զերկնային ողորմութի՟
քո պարգևեա՛ յարարածս քո :
Մարդասէ՛ր տ՟ր՝ վասն ողորմութեան :

Ջատագովն և պաշտօնս 'ի վերջին Երանեաւ
կանոնին գտցես 'ի 37 · երեսն :



Ամենասուրբ Երրորդութիւն:

# ՍԱՂՄՈՍ. ՁԹ:

Աղօթք ՚ի Մովսէսէ յայրն Այ :

1 ՏԱՊԱՒԷՆ ԵՂԵՐ
մեր ազգէ մինչեւ յազգ.
մինչչեւ լերինք հաստա-
տեալ էին, մինչչեւ ստեղ-
ծեալ զերկիր՝ եւ զամենայն տիեզերս:
2 Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու
ես. եւ մի դարձուցաներ զմարդ ՚ի
տառապանս. եւ ասացեր, դարձա-
րուք առխ որդիք մարդկան:
3 Հազար ամ յաչս քո որպէս օր երէ-
կի՝ զի անց. որպ պահ մի գիշերոյ.
եւ ամք նոցա անարգութիւն եղիցին:
4 Ընդ առաւօտս որպ դալարի բուս-
ցին. ընդ առաւօտս որպ դալարի
զուարճասցին եւ ծաղկեսցին. ընդ
երեկոյս թառամեսցին՝ չորասցին
եւ անկցին:

Նուա-

Նուաղեցաք մեք 'ի բարկութէ քում_ 5
մէ, եւ 'ի սրտմտութէ քումմէ խռո_
վեցաք ։
Եդիր զմեղս մեր առաջի քո, եւ ըղ_ 6
կեանս մեր 'ի լոյս երեսաց քոց ։
Ամենայն աւուրք մեր նուաղեցան. 7
եւ 'ի բարկութէ քումմէ խռովեցաք ։
Ժամանակ ամաց մերոց անդադար 8
ոստ սարդի. եւ թիւ աւուրց ամաց
մերոց 'ի նոսա՝ եօթանասուն ամ ։
Ապա թէ առաւել եւս՝ ութսուն 9
ամ. որ ինչ աւելի քան զայն, ցաւօք
եւ հեծութեամբ ։
Եկն 'ի վր մեր հեծութի, եւ խրատե_ 10
ցաք. իսկարդ՝ ո՞ գիտասցէ զզօրութի
բարկութե քո, կամ յահէ քումմէ
զսրտմտութիւն քո համարեսցի ։
Այսպէս ցո՛յց ինձ զաջ քո. եւ որ խո_ 11
նարհ են սրտիւք, զիմաստութիւն քո ։
Դարձ Տր՝ մինչեւ յե՛րբ. մխիթարեա՛ 12
'ի ծառայս քո ։
Լցաք առաւօտու ողորմութ քո. ցն_ 13
ծացաք եւ ուրախ եղաք՝ զամ աւուրս
կենաց մերոց ։
Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, 14
որ խոնարհ արարեր զմեզ, եւ ամացն՝
յորս տեսաք զչարչարանս ։

Հայեա

15 Հայեա՛ տր̄ 'ի ծառայս քո՝ և 'ի
գործս ձեռաց քոց, և առաջնորդեա՛
որդւոց նոցա. և եղիցի լոյս տն̄ այ̄
'ի վերայ մեր:
16 Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա
'ի մեզ տր̄. զգործս ձեռաց մերոց
յաջողեա՛ մեզ:

## ՍԱՂՄՈՍ. Ղ:

Օրհնութիւն գովութեան 'ի դաւիթ:

1 Որ բնակեալն է յօգնութիւն բարձ-
րելոյն, ընդ հովանեաւ այ̄ յեր-
կինս հանգիցէ:
2 Ասասցէ տն̄՝ ընդունելի իմ ես, ապա-
ւէն իմ ած̄, և ես յուսամ 'ի նա:
3 Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսո-
ղին, և 'ի բանիցն խռովութէ̄:
4 'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ.
'ի հովանի թևոց նր̄ յուսասցիս:
5 Ոպ̄ զէն շուրջ եղիցի զքև՝ ճշմար-
տութիւն նորա:
6 Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի,
և ո՛չ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուէ:
7 Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի գայ-
թագղութէ դիւի՛ 'ի հասարակ աւուր:
8 Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք,
և

և բիւրք ընդաջմէ քումմէ • որ առ
քեզ ինչ ոչ մերձեսցին :
Բայց միայն աչօք քով հայեսցես դու, 9
և զհատուցումն մեղաւորաց տես_
ցես • զի դու տէր յոյս իմ ես :
Զբարձրեալն արարեր քեզ ապա_ 10
ւէն • ոչ հասցեն առ քեզ չարք , և
տանջանք մի մերձեսցին՝ ի յարկս քո:
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ 11
է վա քո , պահել զքեզ յամ ճա_
նապարհս քո :
՚Ի բազուկս իւրեանց ընկալցին ըզ_ 12
քեզ զի մի երբեք հարցես զքարի
զոտն քո :
՚Ի վերայ իժից և քարբից գնասցես 13
դու. և առ ոտն կոխեսցես զառիւծն
և զվիշապն :
Քանզի յիս յուսացաւ , և փրկեցից 14
զնա • հովանի եղէց նմա , զի ծա_
նեաւ զանուն իմ :
Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմ. 15
և առ նմա եղէց ՚ի նեղութե :
Փրկեցից և փառաւոր արարից զնա. 16
երկայն աւուրբք լցուցից , և ցու_
ցից նմա զփրկութիւն իմ :

# ՍԱՂՄՈՍ. ՂԱ ։

1 Սաղմոս օրհնութեան աւուր շաբաթուց
'ի դաւիթ ։

2 Բարի է խոստովան լինել տն̃,
սաղմոս ասել անուան քում
բարձրեալ ։
3 Պատմել առաւօտու զողորմութիւն
քո, և զճշմարտութիւն քո 'ի գիշերի ։
4 Տասնաղեաւ սաղմոսարանաւ, 'ի
ձայն օրհնութեան գովել ։
5 Ուրախ արարեր զիս տր̃ յարարածս
քո և 'ի գործս ձեռաց քոց ցնծա-
ցայց ։
6 Որպէս զի մեծ են գործք քո տր̃, և
յոյժ խոր են խորհուրդք քո ։
7 Այր անզգամ զայս ոչ ծանիցէ. և
անմիտն զայս ոչ առնու 'ի միտ ։
8 'Ի բուսանել մեղաւորաց որպ̃ խոտ.
'ի ծաղկել այնոցիկ՝ որ գործեն զա-
նօրէնութիւն ։
9 Սատակեսցին յաւիտեանս յաւիտե-
նից. և դու բարձրեալ ես յաւիտեանս
տէր ։
10 Զի ահա թշնամիք քո տր̃. զի ահա
թշնամիք քո կորիցեն, ցրուեսցին ա-
մե-

մենեքեան՝ ոյք գործեն զանօրէնութիւն:
Բարձր եղիցի որպ՟ միեղջերւոյ եղջիւր 11
իմ, և ծերութիւն իմ 'ի հէճթ պա-
րարտութեան:
Ետես ակն իմ 'ի թշնամիս իմ, ոյք 12
յարուցեալ են 'ի վերայ իմ չարու-
թ՟ք, 'ի նմ՟ լուիցէ ունկն իմ:
Արդարքն որպ՟ զարմաւենիս ծաղ- 13
կեսցին. որպէս մայրքն լիբանանու
բազումք եղիցին:
Տնկեալք եղիցին 'ի տան Տ՟ն, և 'ի 14
գաւիթս ա՟յ մերոյ ծաղկեսցին:
Եւս և բազումք եղիցին 'ի ծերութե՟ 15
պարարտութ՟ե. գիրգք և փափուկք
եղիցին՝ 'ի պատմել, ուղիղ է տէր
ա՟ծ մեր, և ո՛չ գոյ 'ի նմա անիրաւու-
թիւն:

## ՍԱՂՄՈՍ. ՂԲ:

Յաւուրն առաջին շաբաթու, յոր հաս-
տատեցաւ երկիր. օրհնութիւն գովութե
'ի դաւթի:

Տէր թագաւորեաց՝ վայելչու- 1
թի զգեցաւ, զգեցաւ տ՟ր զօ-
րութի՝ ը՟ մէջ իւր ածաւ:
Հաստատեաց զաշխարհս՝ զի մի սա- 2

ժ՟ք                                   սա-

սանեսցի․ պատրաստ է աթոռ քո՝
՚ի սկզբանէ յաւիտենից դու ես ։
3 Ամբարձան գետք տ̃ր, եւ ամբարձին
գետք զձայնս իւրեանց․ յարիցեն
գետք ՚ի գնացս իւրեանց ։
4 ՚Ի ձայնէ ջուրց բազմաց, զքանչելի
եղեն զբօսանք ծովու ։
5 Սքանչելի ես դու տ̃ր ՚ի բարձունս․
վկայութեանց քոց մեք յոյժ հաւա_
տացայք ։
6 Տան քում վայելէ սրբութիւն տ̃ր՝
ընդ երկայն աւուրս ։

## ՍԱՂՄՈՍ․ ՂԳ․ ։

Սաղմոս ՚ի Դաւիթ․ չորեքշաբաթու ։

1 Ած վրէժխնդիր․ տ̃ր ած՝ վրէժ_
խնդիր յայտնեցար ։
2 Բարձր լեր որ դատիս զերկիր․ հա_
տո զհատուցումն ամբարտաւանից ։
3 Մինչեւ յերբ մեղաւորք տ̃ր, մինչեւ
յերբ մեղաւորք պարծեսցին ։
4 Բարբառեալ խօսէին զանիրաւու_
թիւն․ խօսեսցին ամենեքեան՝ որ
գործեն զանօրէնութիւն ։
5 Զժողովուրդս քո տ̃ր խոնարհ ա_
րարին, եւ զժառանգութի քո չար_

չարեցին ։

Զայրին՝ և զպանդուխտն սպանին, 6
զորբսն կոտորեցին, և ասացին. ոչ
տեսանէ զայս Տէր, և ոչ 'ի միտ առ-
նու Ած յակոբայ ։

Իմացարուք անզգամք ժողովրդոց՝ 7
և անմիտք, մինչև յե՞րբ ոչ առնուք
'ի միտ ։

Որպէս զի թէ որ տնկեաց զունկն՝ 8
ինքն ոչ լուիցէ. կամ որ ստեղծ զակն՝
ինքն ոչ տեսանիցէ ։

Որ խրատէ զազգս, ո՞չ թէ ոչ յան- 9
դիմանեսցէ. որ ուսուցանէ մարդոյ
զգիտութիւն. Տէր ճանաչէ զխորհուրդս
մարդկան՝ զի են ընդունայն ։

Երանի՜ մարդոյ՝ զոր խրատես դու 10
Տէր. և յօրինաց քոց ուսուցանես
դու նմա ։

Ցածուցանես դու նմա զաւուրս 11
չարութեան, մինչև փորեսցի խորխորատ
մեղաւորի ։

Ո՛չ մերժէ Տէր զժողովուրդ իւր, և 12
զժառանգութիւն իւր ոչ առնէ անտես ։

Մինչև դարձցին իրաւունք յար- 13
դարութիւն. ընկալցին զնա ամե-
նեքեան որ ուղիղ են սրտիւք ։

Ո՞ յարիցէ ընդ իս 'ի վերայ չարաց. կամ 14

ո

ո՞ հաւասարեսցէ ինձ 'ի վ՟ր այնո֊
ցիկ, որ գործեն զանօրէնութի՟ւ:
15 Թէ ոչ Տ՟ն օգնական էր ինձ, փոքր մի
եւ բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս:
16 Եթէ ասէի՝ թէ ահա սասանեցան
ոտք իմ, ողորմութի՟ւ քո Տ՟ր օգնէր
ինձ:
17 Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխի֊
թարութի՟ք քո ուրախ առնէր զանձն
իմ:
18 Մի՛ հաւասարեսցէ քեզ աթոռ ա֊
նօրէնութե՟ն, ո՛ պատճառէ զվաս֊
տակս ընդդէմ հրամանի:
19 Որսացան զանձն արդարոյ. եւ զա֊
րիւն անբիծ պարտաւոր առնէին:
20 Եղեւ տէր ապաւէն իմ. Ա՟ծ օգնա֊
կան յուսոյ իմոյ:
21 Հատուսցէ նց Տ՟ր ըստ անօրէնու֊
թեան նց. ըստ չարութե՟ն նց կործա֊
նեսցէ զնոսա Տ՟ր Ա՟ծ մեր:

## ՍԱՂՄՈՍ. ՂԴ:

Օրհնութիւն գովութեան 'ի Դաւթէ:

1 Եկայք ցնծասցուք 'ի Տ՟ր, աղա֊
ղակեսցուք առ Ա՟ծ փրկիչ մեր:
2 Կանխեսցուք առաջի նորա խոստո֊

վանութեն · սաղմոսիւք աղաղակես-
ցուք առ նա:
Ած մեծ է տր · թագաւոր մեծ 'ի 3
վերայ ամ երկրի:
'Ի ձեռս նր են ամ ախեզերք երկրի, 4
և բարձրութիւնք լերանց նր են:
Նորա է ծով՝ և նա արար զնա, և 5
զցամաք ձեռք նր ստեղծին:
Եկայք երկիրպագցուք նմա · անկ- 6
ցուք և լացցուք առաջի տն արար-
չին մերոյ:
Նա ինքն է տր ած մեր · մեք ժո- 7
ղովուրդք ձեռին նորա, և խաշն ա-
րօտի նորա:
Այսօր եթէ ձայնի նր լուիցէք, մի 8
խստացուցանէք զսիրտս ձեր՝ որպ
'ի դառնութե:
Յաւուրն փորձութե յանապատին · 9
ուր փորձեցին զիս հարքն ձեր · քննե-
ցին զիս՝ և տեսին զգործս իմ զքա-
ռասուն ամ:
Զանացայ ը ազգին ընդ այնմիկ, և 10
ասացի՝ միշտ մոլորեալ են սրտիւք · և
նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ:
Որպ երդուայ 'ի բարկութե իմում · 11
թէ մտցեն 'ի հանգիստ իմ:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՂԵ։

1 Սաղմոս 'ի Դաւիթ. 'ի ժամանակին զի տա_
ճարն շինեցաւ:

2 Օրհնեցէք զտ՟ր յօրհնութիւն
նոր. օրհնեցէք զտ՟ր ամ՟
երկիր:
3 Օրհնեցէք զտ՟ր և օրհնեցէք զանուն
նորա. աւետարանեցէք օրըստօրէ
զփրկութիւն նորա:
4 Պատմեցէք 'ի հեթանոսս զփառս
նորա, յամ՟ ժողովուրդս զսքանչե_
լիս նորա:
5 Մեծ է տ՟ր՝ և օրհնեալ է յոյժ.
ահաւորկու է նա 'ի վ՟ր ամ՟ կռոց:
6 Ամենայն կուռք հեթանոսաց դևք
են. և տ՟ր զերկինս արար:
7 Խոստովանութիւն և վայելչութիւն է
առաջի նր՟, սրբութի և մեծ վայելչու_
թիւն 'ի սրբութեան նր՟:
8 Մատուցէք տ՟ն տոհմք ազգաց. մա_
տուցէք տ՟ն զփառս և զպատիւ. մա_
տուցէք տ՟ն զփառս անուան նր՟:
9 Առէք պատարագս՝ և մտէք՝ 'ի սրահս
նր՟. երկի՛ր պագէք տ՟ն 'ի գաւիթս
սրբութեան նր՟. և խռովեսցի յերեսաց

նո՛ր ամ երկիր :
Ասացէ՛ք 'ի հեթանոսս՝ թէ տէր 10
թագաւորեաց • հաստատեաց զաշ-
խարհս զի մի՛ սասանեսցի • և դատի
զժողովուրդս իւր ուղղութեամբ :
Ուրա՛խ եղիցին երկինք՝ և ցնծասցէ՛ 11
երկիր • զուարճասցի՛ ծով լրի՛ւ իւ-
րով • ցնծասցե՛ն դաշտք՝ և ա՛մ որ
է 'ի նոսա :
Յայնժամ ցնծասցեն ա՛մ ծառք ան- 12
տաւի յերեսաց տ՛ն՝ զի գայ, և գայ
նա 'ի դատել զերկիր :
Դատի զտիեզերս իրաւամբք, և 13
զժողովուրդս ա՛մ ճշմարտութե՛ իւ-
րով :

## ՍԱՂՄՈՍ • ՂԶ •

Սաղմոս 'ի դաւիթ • 'ի ժամանակի ուր եր- 1
կիրն հաստատեցաւ :

ՏԷՐ թագաւորեաց՝ ցնծասցէ՛ եր- 2
կիր • ուրա՛խ եղիցին կղզիք
բազումք :
Ամպ և մէգ շուրջ է զնովաւ • յիրա- 3
ւունս և յարդարութիւն ուղղեալ
է աթոռ նորա :
Հուր առաջի նորա գնասցէ, այրես- 4
ցէ

ցէ շուրջ զթշնամիս նորա ։
5 Երեւեցան փայլատակունք նր՟ տիե-
զերաց.ետես՝ և սասանեցաւ երկիր ։
6 Լերինք ոպ՟ մոմ հալեցին յերեսաց
տն՟, յերեսաց տն՟ ամ՟ երկրի ։
7 Պատմեցեն երկինք զարդարութի՟
նորա. տեսին ամենայն ժողովուրդք
զփառս նորա ։
8 Ամաչեսցեն ամենեքեան՝ որ երկիր
պագանեն կռոց, և որք պարծին
՚ի դրօշեալս իւրեանց ։
9 Երկիրպագցեն նմա ամ՟ հրեշտակք
նր՟, զի լուաւ և ուրախ եղև սիոն.
և ցնծասցեն դստերք յուդայ վասն
իրաւանց քոց տր՟ ։
10 Զի դու բարձրեալ ես ՚ի վր՟ ա-
մենայն երկրի. յոյժ բարձրացար
՚ի վերայ ամենայն կռոց ։
11 Որք սիրէք զտր՟՝ ատեցէք զչարութի՟.
պահէ տր՟ զանձինս սրբոց իւրոց.
՚ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ զնո-
սա ։
12 Լոյս ծագեաց արդարոյ. ուղղոց
սրտից եղև ուրախութիւն ։
13 Ուրախ եղերուք արդարք ՚ի տր՟.
խոստովան եղերուք յիշատակի սըր-
բութեան նորա ։

# ՍԱՂՄՈՍ. ՂԷ:

Սաղմոս 'ի դաւիթ օրհնութեան:

Օրհնեցէք զՏր յօրհնութն նոր. 1
զի սքանչելիս արար:
Փրկեաց զնա աջ իւր, և բազուկ 2
սուրբ իւր:
Եցոյց Տր զփրկութն իւր, առաջի ազ֊ 3
գաց յայտնեաց զարդարութն իւր:
Յիշեաց ողորմութբ իւրում զյակոբ, 4
Ճշմարտութբ իւրում զտունն Իսրայէ֊
լի. և տեսին ամ ծագք երկրի զփր֊
կութիւն Այ մերոյ:
Աղաղակեցէք առ Տր ամ երկիր. 5
օրհնեցէք ցնծացէք և սաղմոս ա֊
սացէք:
Սաղմոս ասացէք Այ մերում օրհնու֊ 6
թբ, օրհնութբ և 'ի ձայն սաղմոսաց:
'ի ձայն օրհնութե կռածոյ փողոց. 7
օրհնութբ ցնծութբ' և 'ի ձայն եղջեր
փողոյ. և աղաղակեցէք առաջի թա֊
գաւորին Տն:
Խռովեսցի ծով լրիւ իւրով, տիե֊ 8
զերք և ամ բնակիչք նորա. և գետք
ծափս հարցեն 'ի միասին ձեռամբ:
Լերինք ցնծասցեն առաջի Տն, զի 9

գայ

գայ և հասեալ է տր ՚ի դատել
զերկիր ։
10 Դատել զաշխարհս արդարութ, և
զժողովուրդս իւր ուղղութ ։

## ՍԱՂՄՈՍ. ՂԲ ։

Սաղմոս Դաւթի ։

1 Տէր թագաւորեաց, բարկա-
ցան ժողովուրդք՝ որ նս-
տիս ՚ի քրովբէս, սասա-
նեսցին երկիր ։
2 Տր ՚ի սիոն մեծ է, և բարձր է ՚ի
վերայ ամ ժողովրդոց ։
3 Խոստովան եղիցուք անուան քում
մեծի, զի ահաւոր և սուրբ է. և պա-
տիւ թագաւորի զիրաւունս սիրէ ։
4 Դու պատրաստեցեր զուղղութի՝
զիրաւունս և զարդարութի յակով-
բայ դու արարեր ։
5 Բարձր արարէք զտր ած մեր. եր-
կիր պագէք պատուանդանի ոտից
նորա՝ զի սուրբ է ։
6 Մովսէս և Ահարոն երիցունք նր.
սամուէլ ընդ այնոսիկ, որ կարդան
զանուն նորա ։
7 Կարդային առ տր, և նա լսէր նց.

և 'ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա ։
Պահէին զվկայութիւն նորա, և զհրա- 8
մանս՝ զոր ետ նոցա ։
Տ՛ր ած մեր՝ դու լսէիր նոցա, ած՝ 9
դու քաւիչ լինէիր․ վրէժխնդիր
'ի վր ամենայն գործոց նոցա ։
Բա՛րձր արարէք զտր ած մեր․ եր- 10
կի՛ր պագէք 'ի լեառն սուրբ նր․
զի սուրբ է տր ած մեր ։

## ՍԱՂՄՈՍ․ ՂԹ ։

Սաղմոս խոստովանութեան 'ի դաւիթ ։

Ա՛ղաղակեցէ՛ք առ տր ամ երկիր․ 1
ծառայեցէ՛ք տն ուրախութբ ։
Մտէ՛ք առաջի նորա ցնծութբ․ ծա- 2
ներո՛ւք զի նա է տր ած մեր ։
Նա՛ արար զմեզ, և ոչ մեք էաք․ մեք 3
ժողովուրդք և խաշն արօտի նորա ։
Մտէ՛ք ը դրունս նր խոստովանու- 4
թբ, և օրհնութբ 'ի յարկս նորա ։
Խոստովա՛ն եղերուք տն, և օրհնե- 5
ցէ՛ք զանուն նորա ։
Քաղցր է տր յաւիտեան է ողորմու- 6
թիւն նորա․ ազգէ մինչև յազգ է
ճշմարտութիւն նորա ։

# ՍԱՂՄՈՍ. Ճ.

## Սաղմոս ՚ի Դաւթի ։

1 Ողորմութիւն և յիրաւունս օրհ-
նեցից զքեզ տէ՞ր · սաղմոս ասա-
ցից, և ՚ի միտ առից ։
2 Ճանապարհ ամբիծ մինչև եկեսցէ
առ իս · զի գնայի ես յամբծութե
սրտի իմոյ՝ ՚ի մէջ տան իմոյ ։
3 Ո՛չ եդի առաջի աչաց իմոց իրս ա-
նիրաւութե · ոյք առնէին զուրացու-
թիւն, ատեցի ։
4 Ո՛չ մերձեցաւ առ իս՝ որ թիւրն էր
սրտիւ · խոտորեալ յինէն անզգա-
մին, և ես ինչ ո՛չ փոյթ առնէի ։
5 Որ խօսէր գաղտ զընկերէ իւրմէ,
զնա բացէ ՚ի բաց հալածէի ։
6 Որ ամբարտաւան էր աչօք՝ և ագահ
սրտիւ, ընդ նմա և հաց ո՛չ ուտէի ։
7 Աչք իմ ՚ի հաւատացեալս երկրի,
զի նստցին նոքա ընդ իս ։
8 Որ գնայր ՚ի ճանապարհ ամբիծ,
նա պաշտէր զիս ։
9 Ո՛չ բնակէր ՚ի մէջ տան իմոյ՝ որ
առնէր զամբարտաւանութիւն · որ
խօսէր զանիրաւութի, չէր յաջողեալ

Նմա առաջի աչաց իմոց:
Ընդ առաւօտս սպանանէի զամ մե_ 8
ղաւորս երկրի. սատակեցից ՚ի քա_
ղաքէ տն զամենեսեան՝ որ գործեն
զանօրէնութիւն:

## ՍԱՂՄՈՍ. ՃԱ:

Աղօթք աղքատի. երբ յանձրանայր՝ առաջի 1
Տն հեղոյր զխնդրուածս
իւր:

Տէր լուր աղօթից իմոց. ա_ 2
ղաղակ իմս առ քեզ եկես_
ցէ. մի դարձուցաներ
զերեսս քո յինէն:
Յաւուր նեղութեն իմոյ խոնարհեցո 3
առ իս զունկն քո. յորում աւուր
կարդամ առ քեզ՝ փութապէս լուր
ինձ:
Սպառեցան ոպ ծուխ աւուրք իմ. 4
և ոսկերք իմ ոպ խուխ չորացան:
Հարաւ որպէս խոտ՝ և ցամաքեաց 5
սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ
՚ի ձայնէ հեծութեան իմոյ:
Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ. նմա_ 6
նեցայ ես հաւալուսն յանապատի.
Եղէ ես ոպ բու յաւերակի. արթնե_ 7
ցայ՝

ցայ՝ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն
'ի տանիս ։
8 Նախատեցին զիս թշնամիք իմ զօր-
հանապազ, և գովիչք իմ լինէ երդ-
նուին ։
9 Զմոխիր որպէս հաց կերայ ․ և զըմպելի
իմ արտասուօք խառնեցի ։
10 Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո ․
զի դու բարձրացուցեր, և խոնար-
հեցուցեր զիս ։
11 Աւուրք իմ որպէս հովանի անցին ․ և
ես որպէս խոտ ցամաքեցայ ։
12 Դու տէր յաւիտեան կաս, և յիշա-
տակ քո յազգէ մինչև յազգ ։
13 Դու յարուցեալ գթասցիս 'ի Սի-
ովնի ․ ժամանակ գթալոյ նորա հա-
սեալ է ժամ ։
14 Հաճեցան ծառայք քո ընդ քարինս
նորա, և 'ի հողս նորա գթասցին ։
15 Երկիցեն հեթանոսք յանուանէ
քումմէ ․ և ամենայն թագաւորք
երկրի 'ի փառաց քոց ։
16 Շինէ տէր զսիոն, և երևեսցի փա-
ռօք իւրովք 'ի նմա ։
17 Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և
ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա ։
18 Գրեսցի այս յազգ յայլ ․ ժողովուրդ
զոր

զոր ստացեալ է՝ օրհնեսցէ տր̄ ։
Հայեցաւ նա՛ 'ի բարձանց՛ 'ի սրբու_19
թե՛ իւրմէ · տր̄ յերկնից յերկիր
հայեցաւ ։
Լսել զհեծութիւն կապելոց, և ար_20
ձակել զորդիս մահապարտաց ։
Պատմել՛ 'ի սիոն զանուն տն̄, և զօրհ_21
նութիւնս նորա յերուսաղէմ ։
Ժողովել ժողովրդոց 'ի միասին, և 22
թագաւորաց ծառայել տն̄ ։
Պատասխանի ետ նմա 'ի ճանապար_23
հի զօրութե՛ իւրոյ · զնուա՛զութի
աւուրց իմոց ասա՛ ինձ, և մի՛ հաներ
զիս 'ի կէս աւուրց իմոց · զի ազգէ
յազգ են ամք քո ։
Իսկզբանէ տր̄ զհիմունս երկրի հաս_24
տատեցեր · և գործք ձեռաց քոց
երկինք են ։
Նոքա անցանեն, և դու կաս՝ և մնաս 25
յաւիտեան ։
Ամենեքեան որ̄պ ձորձս մաշեսցին ·26
որ̄պ վերարկուս փոխեսցես զնոսա,
և փոխեսցին ։
Բայց դու նոյն իսկ ես, և ամք քո 27
ոչ անցանեն · որդիք ծառայից քոց
բնակեսցեն 'ի նմա · և զաւակի նց̄
յաւիտեան յաջողեսցի ։

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՃԲ.

Սաղմոս 'ի Դաւիթ:

1 Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և ամ-
ոսկերք իմ՝ զանուն սուրբ նորա:
2 Օրհնեա՛ անձն իմ զՏէր. և մի՛ մոռա-
նար զամ տուրս նորա:
3 Որ քաւէ զմեղս քո. բժշկէ զամե-
նայն հիւանդութիւնս քո:
4 Որ փրկէ յապականութենէ զկեանս
քո. պսակէ զքեզ ողորմութեամբ
և գթութեամբ:
5 Որ լնու 'ի բարութենէ զցանկութիւն
քո. նորոգեսցի որպէս արծուոյ
մանկութիւն քո:
6 Առնէ ողորմութիւնս Տէր, և իրաւունս
ամենայն զրկելոց:
7 Ցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէ-
սի, և որդւոցն Իսրայէլի զկամս
իւր:
8 Գթած ողորմած է Տէր, երկայնա-
միտ և բազումողորմ:
9 Ո՛չ իսպառ բարկանայ մեզ Տէր, և
ո՛չ յաւիտեան պահէ ոխս:
10 Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ
Տէր, և ո՛չ ըստ անօրէնութեան մերում
հա-

հատոյց մեզ։
Այլ որպէս բարձր են երկինք 11
յերկրէ, այնպէս զօրացոյց Տր զո-
ղորմութի իւր 'ի վերայ երկիւղա-
ծաց իւրոց։
Որչափ հեռի են արեւելք յարեւմ- 12
տից, այնպէս հեռի արար 'ի մէնջ
զանօրէնութիւնս մեր։
Որպէս գթայ հայր 'ի վերայ որդ- 13
ւոց իւրոց, այնպէս գթացի Տր
յերկիւղածս իւր։
Զի նա գիտաց զստեղծուածս մեր 14
եւ յիշեաց թէ հող եմք։
Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք 15
իւր. որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս
ծաղկի։
Շնչէ 'ի նմա հողմ, եւ ոչ է՝ եւ ոչ 16
եւս երեւի տեղի նորա։
Բայց ողորմութի Տն յաւիտեանս 17
յաւիտենից 'ի վերայ երկիւղածաց
իւրոց, եւ արդարութի նր յորդւոց
մինչեւ յորդիս։
Որք պահեն զուխտ նր, յիշեն զզ- 18
պատուիրանս նր՝ եւ առնեն զնա։
Տր յերկինս պատրաստեաց զաթոռ 19
իւր. արքայութիւն նր ամենեցուն
տիրէ։

20 Օրհնեցէ՛ք զՏր̅ ամենայն հրեշտակք
նորա՝ հզօրք զօրութեամբ. որ առ-
նէք զբան նր̅ 'ի լսել ձայնի պատ-
գամաց նորա:

21 Օրհնեցէ՛ք զՏր̅ ամենայն զօրութիք
նր̅, պաշտօնեայք և արարօղք կա-
մաց նորա:

22 Օրհնեցէ՛ք զՏր̅ ամ̅ գործք նր̅. ը̅
ամենայն տեղիս է տէրութե̅ նր̅.
օրհնեա՛ անձն իմ զՏր̅:

## ՍԱՂՄՈՍ. ՃԳ:

1 Սաղմոս 'ի դաւիթ. 'ի վերայ աշխարհա-
գործ արարածոց:

2 Օրհնեա՛ անձն իմ զՏր̅. Տր̅
Ած̅ իմ մեծ եղեր յոյժ:
3 Խոստովանութիւն և մեծ-
վայելչութիւն զգեցար. արկեր զլոյս
որ̅պ զօթոց, ձգեցեր զերկինս որ̅պ
խորան. և յարկեր 'ի վերայ ջուրց
զվերնայարկս նորա:
4 Որ դնէ յամպս զգնացս իւր. և շրջի
նա 'ի վերայ թևոց հողմոց:
5 Որ առնէ զհրեշտակս իւր հոգիս, և
զպաշտօնեայս իւր 'ի հուր կիզիչ.
6 Հաստատեաց զերկիր 'ի վր̅ հաս-

տատութեան իւրոյ , զի մի՛ սասա-
նեսցի յաւիտեան :
Խորք ոպ՟ զգեստ վերարկու է նր՟ . 7
'ի վերայ լերանց կացցեն ջուրք :
'ի սաստէ քումմէ փախիցեն , և 'ի 8
ձայնէ որոտալոյ քումմէ սարսիցեն:
Ելանեն լեռնանան՝ և իջանեն դաշ- 9
տանան , 'ի տեղի յոր հաստատեցեր
զնոսա :
Սահման եդիր՝ և ոչ անցանեն , և 10
ոչ ևս դառնան 'ի ծածկել զերկիր :
Առաքեցեր զաղբիւրս ը̅ ծործորս . 11
'ի մէջ լերանց գնասցեն ջուրք :
Արբուցանել զամ՟ գազանս վայրի . 12
յագեսցին ցիռք 'ի ծարաւս իւր-
եանց :
Անդ թռչունք երկնից բոյնս դի- 13
ցեն . և 'ի միջոյ վիմաց տացեն ըղ-
ձայնս իւրեանց :
Արբուցանէ զլերինս 'ի շտեմարա- 14
նաց իւրոց . 'ի պտղոյ գործոց իւրոց
լցցի երկիր :
Բուսուցեր զխոտ 'ի լերինս , զդա- 15
լարի 'ի ծառայութի՟ մարդկան :
Հանել զհաց յերկրէ . գինի ուրախ 16
առնէ՝ իւղ զուարթ, և հաց հաստա-
տէ զսիրտ մարդոյ :

Յա.

17 Յագեսցին ծառքն տն, և մայրքն
Լիբանանու՝ զորս դու տնկեցեր ։
18 Ընդ թռչունք երկնից ձագս հան-
ցեն. և բոյն արագլի առաւէն է
նոցա ։
19 Լերինք բարձունք են եղջերուաց,
և վէմք ապաւէնք նապաստակաց ։
20 Արարեր զլուսին ի ժամանակի.
արեգակն ծանեաւ զժամ մտանե-
լոյ իւրոյ ։
21 Արարեր զխաւար՝ և եղև գիշեր.
'ի նմա գնան ամ գազանք անտառի ։
22 Կորիւնք առիւծուց մռնչեն՝ և յափշ-
տակել. և խնդրել յայ զկերակուրս
իւրեանց ։
23 'ի ծագել արևու ժողովին, և 'ի
մորխս իւրեանց դադարեն ։
24 Ելանէ մարդ 'ի գործս իւր, և 'ի
վաստակս ձեռաց իւրոց մինչև յե-
րեկոյ ։
25 Որպէս զի մեծ են գործք քո տր.
զամ ինչ իմաստութբ արարեր. և
լցաւ երկիր ստեղծուածովք քովք.
26 Այս ծով մեծ և անդորր. 'ի սմա
են սողունք, որ ո՛չ գոյ թիւ, գա-
զանք մեծամեծք և մանունք. 'ի սմա
և նաւք գնան. վիշապն զոր ստեղծեր
խա.

խաղալ նովաւ ։
Ամենեքեան քեզ սպասեն. եւ դու 27
տաս կերակուր նց 'ի ժամու ։
Տաս դու նոցա՝ եւ կերակրին. բա֊ 28
նաս զձեռն քո, կերակրես զամենե֊
սեան կամօք քովք ։
Դարձուցանես զերեսս քո 'ի նոցա֊ 29
նէ՝ եւ խռովին. հանես զոգի 'ի նո֊
ցանէ, պակասին եւ 'ի հող դառնան։
Առաքես զոգի քո՝ եւ ստանան զնս. 30
եւ նորոգես զերեսս երկրի ։
Եղիցին փառք տն յաւիտեան. տր 31
ուրախ եղիցի յարարածս իւր ։
Որ հայի յերկիր, եւ տայ դողալ սմա. 32
մերձի 'ի լերինս՝ եւ ծխեսցին ։
Օրհնեցից զտր 'ի կեանս իմ. սաղ֊ 33
մոս ասացից այ իմոյ մինչեւ եմ ես ։
Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ. 34
եւ ես ուրախ եղէց 'ի տր ։
Պակասեսցին մեղաւորք յերկրէ, եւ 35
ամպարիշտք մի եւս գտցին 'ի նմա. օրհ֊
նեա անձն իմ զտր ։

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՃԴ.

Ալէլուիա։

1 Խոստովան եղերուք Տն՝ եւ կար-
դացէք զանուն նորա. պատ-
մեցէք 'ի հեթանոսս զգործս նր։
2 Օրհնեցէք՝ եւ սաղմոս ասացէք նմա.
պատմեցէք զամ սքանչելիս նր. եւ
գովեցարուք յանուն սբ նորա։
3 Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որ
խնդրեն զՏր. խնդրեցէք զՏր՝ եւ
հզօրք եղերուք. խնդրեցէք զերեսս
նորա յամենայն ժամ։
4 Յիշեցէք զսքանչելիս նորա՝ զոր
արար. զարուեստս եւ զիրաւունս
բերանոյ նր։
5 Զաւակն աբրահամեան ծառայք նր
որդիք յակոբայ ընտրեալք նորա։
6 Նա ինքն է Տր Ած մեր. յամ երկրի
են իրաւունք նորա։
7 Յիշեաց յաւիտենից զուխտ իւր,
եւ զբանն՝ զոր պատուիրեաց մինչեւ
'ի հազար ամ։
8 Զուխտն զոր եդ ընդ աբրահամու.
եւ զերդումն իւր ընդ սահակայ։
9 Հաստատեաց առ յակոբ զհրաման
իւր.

իւր. և առ իսրայէլ զուխտ իւր
յաւիտենից:
Ասէ՝ ձեզ տաց զերկիրն քանանու, 10
զվիճակ ժառանգութեն ձերոյ:
Զի էին նոքա թուով սակաւք, նու_ 11
աղք և պանդուխտք 'ի նմա:
Անցին նոքա ազգէ յազգ, 'ի թա_ 12
գաւորութէ 'ի ժողովուրդ յայլ:
Ո՛չ եթող մարդկան մեղանչել նց. 13
կշտամբեաց զթագաւորս վն նց:
Մի՛ մերձենայք ասէ՝ յօծեալս իմ. 14
և 'ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք:
Կոչեաց սով յերկիր նց. զամենայն 15
զօրութիւն հացի եբեկ:
Առաքեաց առաջի նց այր, 'ի ծա_ 16
ռայութի վաճառեցաւ յովսէփ:
Խոնարհ արարին 'ի կապանս զոտս 17
նր. և անց ընդ երկաթս անձն նր:
Մինչև եկեսցէ բան նորա. և բան 18
տն փորձեաց զնա:
Առաքեաց թագաւորն՝ և եբոյծ 19
զնա. իշխան ժողովրդեան եթող
զնա:
Կացոյց զնա տէր տան իւրոյ. իշ_ 20
խան 'ի վր ամ ստացուածոց իւրոց:
Խրատել զիշխանս նց որպէս զինքն. 21
և զծերս նց իմաստունս արասցէ:

Եմուտ

22Եմուտ իսրայէլ յեգիպտոս · յա_
կովբ պանդխտեցաւ յերկիր քամայ:
23Աճեցոյց զժողովուրդ իւր յոյժ , և
զօրացոյց զնա քան զթշնամիս իւր :
24Դարձոյց զսիրտս նոցա ատել զժո_
ղովուրդ իւր , և 'ի նենգել զծա_
ռայս իւր :
25Առաքեաց զմովսէս ծառայ իւր , և
զահարոն ընտրեալ իւր :
26Եդ նոցա զբան նշանաց իւրոց , և
զարուեստս իւր յերկիր քամայ :
27Առաքեաց խաւար՝ և խաւարեցոյց
զնա · զի դառնացուցին զբան նր :
28Դարձոյց յարիւն զջուրս նց · և
սպան զամ ձկունս նց :
29Եռաց յերկիր նոցա գորտ , և 'ի
շտեմարանս թագաւորաց նոցա :
30Ասաց՝ և եկն շանաճանճ , և մժեխ
ընդ ամ սահմանս նց :
31Դարձոյց զանձրևս նց 'ի կարկուտ ·
և հուր յերկիր նոցա բորբոքեցաւ :
32Եհար զայգիս և զթզենիս նց · և
փշրեաց զամ ծառս սահմանաց նց :
33Ասաց՝ և եկն մարախ , և խառնիճ
զի ոչ գոյր թիւ :
34Եկեր զամ խոտ երկրի նոցա · ապա_
ռակեաց զամ պտուղ անդոյ նոցա :

Եհար

Եհար զամ անդրանիկս եգիպտացւ-35
ւոց , զսկիզբն ամ վաստակոյ նց ։
Եհան զնս ոսկւով և արծաթով . և36
ոչ գոյր յազգի նոցա հիւանդ ։
Ուրախ եղև եգիպտոս ընդ ելանել37
նց . զի անկաւ ահ ոն 'ի վր նց ։
Սփռեաց ամպ՝ հովանի առնել նց38
'ի տուէ . և հրով լոյս տալ նոցա
'ի գիշերի ։
Խնդրեցին՝ և եկն լորամարգի . և39
հացիւ երկնից լցոյց զնոսա ։
Եհար զվէմն՝ և բղխեցին ջուրք , և40
գնացին գետք ընդ անջրդիս ։
Յիշեաց զբան իւր սուրբ , որ ընդ41
աբրահամու ծառայի իւրում ։
Եհան զժողովուրդ իւր ցնծութբ ,42
և զընտրեալս իւր ուրախութբ ։
Ետ նոցա զգաւառս հեթանոսաց .43
'ի վաստակս ժողովրդոց ժառան-
գեցոյց զնս ։
Զի պահեսցեն զվկայութս նորա .44
և զօրէնս նորա խնդրեսցեն ։

# ՍԱՂՄՈՍ. ՃԵ։

Ալէլուիա։

1 Խոստովան եղերուք Տն̃՝ զի
քաղցր է. զի յաւիտեան է
ողորմութիւն նորա։
2 Ո՞ խօսեսցի զզօրութի̃ Տն̃. լսելի
արասցէ զա̃մ օրհնութիւնս նորա։
3 Երանի՝ որք պահեն զիրաւունս, և
առնեն զարդարութի̃ յա̃մ ժամ։
4 Յիշեա զմեզ Տր̃ ընդ հաճոյս ժողո-
վրդեան քոյ. և այց արա մեզ՝ ի
փրկութեան քում։
5 Տեսցուք մեք զքաղցրութի̃ ընտրելոց
քոց. ուրախ եղիցուք յուրախութե̃
ազգի քոյ. և գովեսցուք մեք՝ ի ժա-
ռանգութե̃ քում։
6 Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօ-
րինեցաք և յանցեաք։
7 Հարքն մեր յեգիպտոս ոչ իմացան
զսքանչելիս քո. և ոչ յիշեցին զբա-
զում ողորմութիւնս քո։
8 Բարկացուցին զքեզ յանցանելն իւ-
րեանց ընդ ծով կարմիր. փրկեաց
զնոսա վասն անուան իւրոյ. զի ծա-
նիցեն զզօրութիւնս նորա։

Սաստեաց 'ի ծովն կարմիր՝ եւ ցամա֊ 9
քեցաւ. առաջնորդեաց նոցա ընդ
անդունդս որպ՟ ընդ անապատ։
Ապրեցոյց զն՟ս 'ի ձեռաց ատելեաց նց՟, 10
եւ փրկեաց զն՟ս 'ի ձեռաց թշնամեաց
նոցա։
Ծածկեաց ծով զնեղիչս նց՟. եւ մի 11
'ի նոցանէ ոչ ապրեցաւ։
Հաւատացին 'ի բան նորա. եւ օրհ֊ 12
նեցին զօրհնութիւնս նորա։
Վաղվաղեցին եւ մոռացան զգործս 13
նր՟. եւ ոչ անսացին խորհրդոց նր՟։
Ցանկացան ցանկութիւն յանապա֊ 14
տի. եւ փորձեցին զԱ՟ծ յանջրդի։
Ետ նոցա զխնդրուածս նց՟. առա֊ 15
քեաց լիութիւն յանձինս նոցա։
Բարկացուցին զՄովսէս 'ի բանակին, 16
եւ զԱհարոն սուրբ տ՟ն։
Բացաւ երկիր՝ եւ եկուլ զԴաթան. 17
եւ ծածկեաց զբանակն զԱբիրոնի։
Հուր վառեցաւ 'ի ժողովս նոցա. 18
եւ բոց մաշեաց զմեղաւորս։
Արարին զորթ 'ի Քորեբ, երկիր պա֊ 19
գին պատկերի. եւ փոխեցին զփառս
իւրեանց 'ի նմանութիւն որթու խո֊
տակերի։
Մոռացան զԱ՟ծ կենարար իւրեանց 20

որ

որ արար զմեծամեծս իւր յեգիպ-
տոս , զսքանչելիս իւր յերկրին քա-
մայ , և զահ իւր 'ի վերայ կարմիր
ծովուն :
21 Ասաց սատակել զնս · եթէ ոչ մով-
սէս ընտրեալ կայր առաջի նորա ·
22 Դարձաւ առ Տր՝ և անցոյց զբար-
կութին Տն · զի մի սատակեսցին նոքա :
23 Անարգեցին զերկիրն ցանկալի · և
ոչ հաւատացին բանի նորա :
24 Տրտնջեցին 'ի բանակս իւրեանց ·
և ոչ լուան ձայնի Տն :
25 Համբարձ զձեռն իւր 'ի վերայ նց ·
հարկանել զնս յանապատի :
26 Ցրուեսցի զաւակ նց ը հեթանոսս ·
ցրուեսցի զաւակ նց ը գաւառս :
27 Պղծեցան նոքա 'ի բէլփեգովր · զի
կերան զոհեալ և զմեռելոտի :
28 Բարկացուցին զնա 'ի գործս իւր-
եանց · յաճախեաց 'ի մէջ նոցա բե-
կումն :
29 Ապա եկաց 'ի մէջ փենեհէս , քաւ-
եաց և արգելաւ մահն · համարեցաւ
նմա յարդարութի ազգէ յազգ մինչև
յաւիտեան :
30 Բարկացուցին զնա 'ի ջուրսն հա-
կառակութե · չարչարեցաւ մովսէս

վն նց, զի դառնացուցին զոգի նր։
Հրամայեաց շրթամբք իւրովք. և 31
ոչ սատակեցին զազգսն՝ զոր ասաց
նոցա Տէր։
Խառնակեցան ընդ հեթանոսս, և 32
ուսան զգործս նոցա. ծառայեցին
կռոց նոցա, և եղև նոցա 'ի գայ-
թակղութիւն։
Զոհեցին զուստերս և զդստերս իւր 33
եանց դիւաց. և հեղին արիւն անբիծ։
Արիւն ուստերաց և դստերաց իւր 34
եանց զոր զոհեցին կռոցն քանանու։
Շաղախեցաւ երկիր յարենէ նոցա, 35
և պղծեցաւ 'ի գործոց նոցա. զի
պոռնկեցան 'ի գնացս իւրեանց։
Բարկացաւ սրտմտութբ Տր 'ի վր 36
ժողովրդեան իւրոյ. և գարշեցոյց
զժառանգութն իւր յոյժ։
Մատնեաց զնս 'ի ձեռս հեթանո- 37
սաց. տիրեցին նց ատելիք իւրեանց,
և թշնամիք իւրեանց նեղեցին զնս.
և խոնարհ եղեն 'ի ներքոյ ձեռաց
նոցա։
Բազում անգամ փրկեաց զնս, և 38
նքա դառնացուցին զնա 'ի խորհուր-
դս իւրեանց. և կորացան յանօ-
րէնութեան իւրեանց։

Հայե-

39 Հայեցաւ տր ՚ի նեղութիւնս նոցա.
՚ի լսել ձայնի աղօթից նոցա։
40 Յիշեաց զուխտ իւր, և զղջացաւ
ըստ բազում ողորմութեն իւրում.
ետ զնոսա ՚ի գթութիւնս առաջի
ամենայն գերչաց նոցա։
41 Փրկեա՛ զմեզ տր ած մեր. և ժողո-
վեա՛ զմեզ ՚ի հեթանոսաց։
42 Խոստովան եղիցուք անուան քում
սբյ. և պարծեսցուք յօրհնութիւնս քո։
43 Օրհնեալ տր ած իսրայէլի. յա-
ւիտեանս յաւիտենից։
44 Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն.
եղիցի եղիցի։

Աղօթք Եզեկիայ արքային յաւուրս
Եսայեայ. ԼԸ։

1 Ես ասացի ՚ի վերանալ յինէն
աւուրց իմոց, թէ գնացից
ես ՚ի դրունս դժոխոց։
2 Թողի զամ յետին իմ, և ասացի՝
թէ այլ ոչ ևս տեսից զփրկութի տն
յերկրին կենդանեաց. և ոչ ևս տե-
սից զմարդ բնակչօք իւրովք հնդ։
3 Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ.

այսուհետև թողի լքի զամենայն
զկեանս իմ:

Եւ գնաց՝ մեկնեցաւ յինէն հոգի իմ, 4
որպէս զայն՝ որ քակէ զտաղաւար.
և եղէ ես որպէս զոստայն ոստա_
րաց՝ մերձ 'ի հատանել:

Յաւուր յայնմիկ՝ մատնեցայ ես յա_ 5
ռաւօտէ որպէս 'ի ձեռս առիւծու.
այնպէս խորտակեաց մանրեաց զոս_
կերս իմ. զի յառաւօտէ մինչ 'ի գի_
շեր մատնեցայ:

Որպ ծիծառն՝ այնպէս ճչեցի, որպ 6
զաղաւնի՝ այնպէս մնչեցի. զի նուա_
ղեցին աչք իմ 'ի տեսանելոյ:

Հայեցայ 'ի բարձունս առ Տր ած 7
իմ, որ փրկեաց զիս. և փարատեցոյց
յինէն զցաւս անձին իմոյ:

Տր վն այսորիկ պատմեցաւ քեզ. 8
զարթուցեր զանձն իմ, դարձուցեր
զհոգի իմ. մխիթարեցայ և կեցի:

Ահա 'ի խաղաղութ դարձաւ դառ_ 9
նութ իմ. փրկեցեր զանձն իմ, զի մի
կորեայց. և ընկեցեր յետոյ զամե_
նայն զմեղս իմ:

Զի ոչ թէ որ 'ի դժոխս են, խոստո_ 10
վան առնին առ քեզ. և ոչ մեռեալք
օրհնեսցեն զքեզ, և ոչ յուսասցին

'ի

'ի ճշմարտութիս քո ամենեքեան, որք իջանեն 'ի դժոխս :

11 Այլ կենդանիքս օրհնեսցուք զՔեզ՝ Տէր. որպ և ես այսուհետև մանկունս ծնայց, որ պատմեսցեն զարդարութիս քո՝ Տէր փրկութեան իմոյ :

12 Ես ոչ ես դադարեցից օրհնել զՔեզ յօրհնութիւն նոր զամենայն աւուրս կենաց իմոց՝ յանդիման տաճարիդ Տն :

Մաղթանք :

Յոյս կենդանութեան, յոյս և ապաւէն փրկութեան Տէր յիս փրկիչ. փրկեա և փարատեցո զցաւս անձին իմոյ. Մարդասէր Տէր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի. և վասն խաչի քոյ պատուականի, Տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ.

Զերրորդն պաշտօնս 'ի հերցն Երեկոյք պատմեն կանոնին գտցես 'ի 81. երեսն.



# ՍԱՂՄՈՍ. ՃԶ:

Ալէլուիա:

1 ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԵ-
րուք տն՝ զի քաղցր է, զի
յաւիտեան է ողորմութի նր:
2 Ասասցեն փրկեալք տն, զորս փըր-
կեաց 'ի ձեռաց թշնամւոյն:
3 Ցամենայն գաւառաց ժողովեաց
զնոսա. յարևելից և յարևմտից՝ 'ի
հիւսիսոյ և 'ի ծովէ:
4 Մոլորեցան նոքա յանապատի յան-
ջրդի ճանապարհի. քաղաք բնակու-
թեան ոչ գտին:
5 Քաղցեան և ծարաւեցան. և ան-
ձինք նոցա 'ի նոսին նուաղեցան:
6 Աղաղակեցին առ տր 'ի նեղութե իւր-
եանց. 'ի վշտաց նց փրկեաց զնս:
7 Առաջնորդեաց նոցա 'ի ճանապարհ
ուղիղ. զի երթիցեն 'ի քաղաք բնա-
կու-

կութե՛ իւրեանց ։
Խոստովան եղիցին տն ողորմութեց 8
նորա . սքանչելեաց նորա որդւք
մարդկան ։
Զի յագեցոյց զանձինս քաղցեալս . 9
և զանձինս կարօտեալս լի արար
բարութեամբ ։
Որք նստէին ՚ի խաւարի և ՚ի ըստ-10
ուերս մահու . կապեալ էին յաղքա-
տութեան որպէս յերկաթս ։
Զի դառնացուցին զբանն այ, և 11
զխորհուրդս բարձրելոյն բարկա-
ցուցին ։
Խոնարհ եղեն ՚ի ցաւոց սիրտք նո-12
ցա . տկարացան, և ոչ ոք էր՝ որ
օգնէր նոցա ։
Աղաղակեցին առ տր ՚ի նեղութե 13
իւրեանց . ՚ի վշտաց նոցա եհան
զնոսա ։
Փրկեաց զնոսա ՚ի խաւարէ՝ և ՚ի 14
ստուերաց մահու, և խզեաց զկա-
պանս նոցա ։
Խոստովան եղիցին տն ողորմութեց 15
նորա . սքանչելեաց նորա որդւք
մարդկան ։
Զի փշրեաց զդրունս պղնձիս, և 16
զնիգս երկաթիս խորտակեաց ։

Օգ.

17Օգնեաց նոցա 'ի ճանապարհէ անօ-
րէնութե իւրեանց. զի վասն մեղաց
իւրեանց խոնարհ եղեն յոյժ:
18Յամ կերակրոց գարշէին սիրտք
նոցա. մերձեցան մինչև 'ի դրունս
մահու:
19Աղաղակեցին առ տր 'ի նեղութե
իւրեանց, 'ի վշտաց նց ապրեցոյց
զնոսա:
20Առաքեաց զբան իւր՝ և բժշկեաց
զնս. և փրկեաց զնս յապականու-
թէ իւրեանց:
21Խոստովան եղիցին տն ողորմութեց
նր. աքանչելեաց նր որդւոց մարդ-
կան:
22Մատուսցեն նմա պատարագ օրհ-
նութեան. և պատմեսցեն զգործս
նր ցնծութբ:
23Որք իջանէին 'ի ծով նաւովք. և
առնէին զգործս 'ի ջուրս բազումս.
24Նոքա տեսին զգործս տն. և զսքան-
չելիս նորա 'ի խորս անդնդոց:
25Ասաց՝ և յարեաւ հողմ և մրրիկ.
և բարձրացան ալիք նորա:
26Ելանէին յերկինս՝ և իջանէին յան-
դունդս. և անձինք նոցա յանձինս
իւրեանց մաշեցան:

Խռո

Խռովեցան սասանեցան որպէս ար֊ 27
բեալք. և ամենայն իմաստութիւն նց՟
ընկլաւ:
Աղաղակեցին առ Տր՟ ՚ի նեղութե՟ 28
իւրեանց. ՚ի վշտաց նց՟ կեցոյց զնս՟:
Դարձոյց մրրկին յօդ՝ և դադարե֊ 29
ցին ալիք նր՟. ուրախ եղեն զի դա֊
դարեցին. և առաջնորդեաց նց՟ ՚ի
նաւահանգիստ կամաց իւրեանց:
Խոստովան եղիցին Տն՟ ողորմութեց 30
նորա. սքանչելեաց նորա որդւք
մարդկան:
Բարձր արասցեն զնա ՚ի ժողովս 31
ժողովրդոց. և յաթոռս ծերոց օրհ֊
նեսցեն զնա:
Զի դարձոյց զգետս ՚ի ցամաք, և 32
զգնացս ջուրց յերկիր ծարաւուտ:
Արար զերկիրն պտղաբեր՝ յաղա 33
տուտս, վս՟ չարութե՟ բնակչաց նոցա:
Արար զանապատն ՚ի ճահիճս ջուրց 34
և զերկիրն ծարաւուտ ՚ի գնացս
ջուրց:
Բնակեցոյց ՚ի նմա քաղցեալս. և 35
շինեցին քաղաք բնակութե՟ իւրեանց:
Վարեցին արտս՝ և տնկեցին այգիս. 36
և արարին պտուղ արմտեաց իւր֊
եանց:

37Օրհնեաց զնոսա՝ և բազմացան յոյժ.
և անասունք նց̄ ոչ նուազեցան :
38Նուազեցան նոքա և չարչարեցան,
'ի նեղութենէ չարեաց և 'ի վշտաց :
39Եհեղ անարգութ̄ի 'ի վերայ իշխանաց
նոցա. մոլորեցոյց զն̄ս յանապատի՝
և ոչ 'ի ճանապարհի :
40Օգնեաց տնանկին յաղքատութե̄.
առաջնորդեաց որպէս խաշին ազգի
նոցա :
41Տեսցեն ուղիղք. և ուրախ եղիցին.
և ամ̄ անօրէն խցցէ զբերան իւր.
42Ո՞վ է իմաստուն, որ պահեսցէ
զայս. և 'ի միտ առցէ զողորմու-
թիւնս տն̄ :

## ՍԱՂՄՈՍ. ՃԷ :

1 Օրհնութ̄ի սաղմոսաց 'ի դաւթի :

2 Պատրաստ է սիրտ իմ ած̄,
պատրաստ է սիրտ իմ օրհ-
նել՝ և սաղմոս ասել քեզ
փառօք իմովք :
3 Զարթի՛ր փառք իմ, զարթի՛ր՝ սաղ-
մոսիւք և օրհնութ̄. և ես զարթեայց
առաւօտուց :
4 Խոստովան եղիցուք քեզ 'ի ժողովուրդս

տր. և սաղմոս ասացից քեզ յազինս։
Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն 5
քո, մինչև յամպս ճշմարտութիւն քո։
Բարձրեալ ես դու յերկինս ած. 6
և յամ երկրի են փառք քո։
Որպէս փրկեսցին սիրելիք քո. կեցո 7
աջով քով՝ և լուր մեզ։
Ած խօսեցաւ ՚ի սրբութեան իւրում. 8
բարձր եղեց՝ բաժանեցայց զսիկեմ,
և զհովիտս յարկաց չափեցից։
Իմ է գաղաադ և իմ է մանասէ. 9
եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ։
Յուդայ թագաւոր իմ. մովաբ աւ 10
ւազան յուսոյ իմոյ։
Յեդովմ ուղղեցից զկօշիկս իմ, և 11
ինձ այլազգիք հնազանդ եղեն։
Ո՞ տարցէ զիս ՚ի քաղաք ամուր. 12
կամ ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչև
յեդովմ։
Ո՞չ դու ած, որ մերժեցեր զմեզ 13
և ոչ ելեր ած ընդ զօրս մեր։
Տուր մեզ օգնութիւն ՚ի նեղութենէ 14
զի ունայն է փրկութիւն մարդոյ։
Աստուծով արասցուք զօրութիւն. և 15
նա յամօթ արասցէ զթշնամիս մեր։

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ · ԺԲ ·

1 'Ի կատարած · սաղմոս 'ի Դաւիթ :
2 Ա̅ծ օրհնութեան իմոյ մի լռեր , զի
բերան մեղաւորի՝ բերան նենգ_
աւորի բացաւ 'ի վերայ իմ :
3 Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւո_
րաւ · և բանիւ ատելութե̅ պաշա_
րեցին զիս :
4 Մարտեան ընդ իս 'ի տարապար_
տուց · փոխանակ սիրոյ իմոյ մատ_
նէին զիս , այլ ես յաղօթս կայի :
5 Հատուցին ինձ չար փոխանակ ընդ
բարւոյ , ատելութիւն փոխանակ
սիրոյ իմոյ :
6 Կացո 'ի վերայ նր̅ մեղաւոր · սա_
տանայ կացցէ ընդ աջմէ նորա :
7 'Ի դատաստանէ իւրմէ ելցէ դա_
տապարտեալ · և աղօթք նր̅ 'ի մեղս
դարձցին :
8 Եղիցին աւուրք նր̅ նուազ · և զայ_
ցելութիւն նր̅ , զայն այլ առցէ :
9 Եղիցին որդիք նր̅ որբ , և կին նր̅
այրի · սասանեսցին փոփոխեսցին , որ_
դիք նր̅ մուրողք եղիցին · և ելցեն
'ի բնակութէ̅ իւրեանց :
10 Քննեսցէ փոխատու զամենայն ինչս

նր̄ . յափշտակեսցեն օտարք զվաս֊
տակս նորա ։
Մի՛ գտցի օգնական նմա . և մի՛ ոք 11
ողորմեսցի 'ի վերայ որբոց նորա ։
Եղիցին որդիք նր̄ 'ի սատակումն, 12
և յազգէ ջնջեսցի անուն նր̄ ։
Յիշեսցին մեղք հօր նր̄ առաջի տն̄ . 13
և մեղք մօր նր̄ մի՛ ջնջեսցին . և եղի֊
ցին առաջի տն̄ յամենայն ժամ ։
Սատակեսցի յերկրէ յիշատակ նր̄ . 14
փոխանակ զի ոչ յիշեաց առնել զո֊
ղորմութիւն ։
Հալածեաց զայր աղքատ և զտնանկ . 15
սպանանել զայն, որ խոնարհ է
սրտիւ ։
Սիրեաց զանէծս՝ և եկցէ նմա . ոչ 16
կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղի֊
ցի 'ի նմանէ ։
Զգեցաւ զանէծս ոպ̄ հանդերձ . 17
մտցէ ոպ̄ ջուր 'ի փոր նորա . ոպ̄
ձէթ ընդ ոսկերս նորա ։
Եղիցի նմա որպէս հանդերձ զի ա֊ 18
գանիցի . ոպ̄ գօտի՝ որ ածի հանապազ
ընդ մէջ ։
Այս գործ է այնոցիկ, որ չարա֊ 19
խօս կային զինէն առ տր̄ . և որք
խօսէին չար զանձնէ իմմէ ։

Այլ

20 Այլ դու Տ̄ր՝ Տ̄ր՝ արա՛ ը̄ իս ըստ
անուան քում, զի քաղցր է ողոր-
մութիւն քո. և փրկեա՛ զիս՝ զի աղ-
քատ և տնանկ եմ ես:
21 Սիրտ իմ խռովեցաւ ՚ի փորի ի-
մում. և ես որպէս ստուեր ՚ի խո-
նարհել իմում սպականեցայ. և թօ-
թափեցայ որպէս մարախ:
22 Ծունկք իմ տկարացան ՚ի պահոց.
և մարմին իմ այլագունեաց յիւղոյ:
23 Եղէ ես նախատինս նոցա. տեսին զիս՝
և շարժեցին զգլուխս իւրեանց:
24 Օգնեա՛ ինձ Տ̄ր Ա̄ծ իմ, և փրկեա՛
զիս՝ ըստ ողորմութե̄ն քում:
25 Ծանիցեն զի ձեռն քո այս է, և
դու Տ̄ր արարեր զայս:
26 Նոքա անիծանիցեն, և դու օրհ-
նեսցես. որք յարուցեալ են ՚ի վ̄ր
իմ ամօթ կրեսցեն. այլ ծառայ քո
ուրախ եղիցի ՚ի քեզ:
27 Զգեցցին զամօթ՝ որ չարախօս կային
զանձնէ իմմէ. և արկցեն որպ̄ կրկ-
նոց՝ զամօթ իւրեանց զիւրեամբք:
28 Այլ ես խոստովան եղէց առ Տ̄ր
յոյժ բերանով իմով. ՚ի մէջ բազ-
մաց օրհնեցից զնա:
29 Զի եկաց նա ընդ աջմէ տնանկին,

'ի փրկել զիս յայնցանէ, որք հա-
լածէին զանձն իմ:

## ՍԱՂՄՈՍ. ՃԹ:

'Ի կատարած. սաղմոս 'ի Դաւիթ: 1

Ասաց Տ̅ր ցՏ̅ր իմ, նիստ ը̅ աջմէ 2
իմմէ, մինչեւ եդից զթշնամիս
քո պատուանդան ոտից քոց:
Գաւազան զօրու̅ե առաքեսցէ քեզ 3
Տ̅ր 'ի Սիոնէ. եւ տիրեսցես դու
'ի մէջ թշնամեաց քոց:
Ընդ քեզ է ինձ սկիզբն աւուրց զօ- 4
րութեան. 'ի վայելչութիւն սրբոց
քոց՝ յարգանդէ յառաջ քան զա-
րուսեակ ծնայ զքեզ:
Երդուաւ Տ̅ր՝ եւ ոչ եւս զղջասցի. 5
թէ դու ես քահանայ յաւիտեան ը̅
կարգին Մելքիսեդեկի. եւ Տ̅ր ընդ
աջմէ քումմէ:
Խորտակեսցէ յաւուր բարկութե̅ 6
զթագաւորս. դատի զհեթանոս.
եւ բազմասցէ զհարուածս. եւ խոր-
տակեսցէ զգլուխս բազմաց յերկրի:
Ջուղխս 'ի ճանապարհի արբուսցէ. 7
վասն այսորիկ եւ բարձր արասցէ
զգլուխս:

ՍԱՂ

# ՍԱՂՄՈՍ. ՃԺ.

Ալէլուիա:

1 Խոստովան եղէց քեզ Տր՛ բո֊
լորովսրտիւ իմով, 'ի խոր֊
հուրդս ուղղոց, 'ի ժողո֊
վուրդս մեծ են գործք Տն. և քննեալ
են յամենայնի կամք նորա:
2 Խոստովանութի և վայելչութի են
գործք նր • արդարութիւնն նր մնայ
յաւիտեանս յաւիտենից:
3 Յիշատակ արար սքանչելեաց իւրոց
ուղղոց • ողորմած գթած է Տր, կե֊
րակուր տայ երկիւղածաց իւրոց:
4 Յիշեաց յաւիտենից զուխտ իւր •
զզօրութեն գործոց իւրոց պատմէ֊
րեաց ժողովրդեան իւրում:
5 Տալ նոցա ժառանգութի հեթանո֊
սաց. և գործք ձեռաց նր արդարու֊
թիւն և իրաւունք են:
6 Հաւատարիմ են յամենայնի պատո֊
ւիրանք նր • հաստատեալ են յա֊
ւիտեանս յաւիտենից. արարեալ են
ճշմարտութբ և ուղղութբ:
7 Փրկութի առաքեաց Տր ժողովրդեան
իւրում. պատուիրեաց յաւիտենից

զուխտ իւր. սբ̅ և ահեղ է անուն նր̅:
Սկիզբն զգօնութե̅ երկիւղ տն̅. իմաս- 8
տութիւն բարի ամենեցուն՝ որ առնեն
զնա. և օրհնութիւն նր̅ մնայ յաւի-
տեանս յաւիտենից :

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԱ:

Ալէլուիա. 'Ի վերայ ապաշխարութեան,
Անգեայ և Զաքարիայ :

Երանեալ է այր՝ որ երկնչի 'ի տն̅է. 1
զպատուիրանս նր̅ նա կամի յոյժ:
Հզօր եղիցի յերկրի զաւակ նորա. 2
և ազգ ուղղոց օրհնեսցի :
Փառք և մեծութիւն են 'ի տան նր̅. 3
արդարութիւն նր̅ մնայ յաւիտեանս
յաւիտենից :
Ծագեաց 'ի խաւարի լոյս ուղղոց. 4
ողորմած գթած՝ և արդար է տր̅ :
Քաղցր այր՝ ողորմի և տայ փոխ, 5
յօրինէ զբան իւր 'ի դատաստանի.
զի յաւիտեան նա մի սասանեսցի :
Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն 6
'ի համբաւէ չարէ նա մի երկիցէ :
Պատրաստ է սիրտ նորա յուսալ 7
առ տր̅ :
Հաստատեալ է սիրտ նորա. և նա 8
մի

մի՛ երկիցէ մինչև տեսցէ 'ի թշնա-
միս իւր :
9 Սփռեաց՝ և ետ աղքատաց · արդա-
րութի՟ն նր՟ մնայ յաւիտեանս յաւիտե-
նից · և եղջիւր նորա բարձր եղիցի
փառօք :
10 Մեղաւորն տեսցէ՝ և բարկասցի ·
զատամունս իւր կրճտեսցէ, և հա-
լեսցի · և ցանկութիւն մեղաւորաց
կորիցէ :

## ՍԱՂՄՈՍ · ՃԺԲ :

Ալէլուիա :

1 Օրհնեցէ՛ք մանկունք՝ զՏ՟ր · և
օրհնեցէ՛ք զանուն Տ՟ն :
2 Եղիցի անուն Տ՟ն օրհնեալ, յայսմ՟
հետէ մինչև յաւիտեան :
3 Յարևելից մինչև 'ի մուտս արևու՝
օրհնեալ է անուն Տ՟ն :
4 Բարձր է 'ի վերայ ա՟մ ազգաց Տ՟ր ·
և յերկինս են փառք նորա :
5 Ո՞վ է ո՟ք Տ՟ր Ա՟ծ մեր 'ի բարձունս
բնակեալ. և զխոնարհս տեսանէ յեր-
կինս և յերկրի :
6 Յարուցանէ զաղքատս յերկրէ · և
բարձր առնէ զտառապեալս յաղ-

բեւաց:
Նստուցանէ զն՟ ը՟ իշխանս՝ ը՟ իշխանս 7
ժողովրդեան իւրոյ:
Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան ու- 8
րախամիտ, ոպ՟ մայր որդւոց բերկ-
րեալ:

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԳ:

Ալէլուիա:

Յելանելն Իսրայէլի յԵգիպտոսէ. 1
տանն Յակոբայ ՚ի ժողովրդե-
նէ այլազգեաց:
Եղեւ Հրէաստան սրբութիւն նորա, եւ 2
Իսրայէլ իշխանութիւն նորա:
Ծով ետես եւ փախեաւ, եւ Յորդա- 3
նան անդրէն դարձաւ:
Լերինք ցնծացին որպէս խոյք. եւ 4
բլուրք որպէս գառինք մաքեաց:
Զի՞ է քեզ ծով, զի՞ տեսեր եւ փա- 5
խեար. կամ դու Յորդանան՝ զի՞ դար-
ձար անդրէն:
Լերինք՝ ցնծացէ՛ք որպէս խոյք, եւ 6
բլուրք ոպ՟ գառինք մաքեաց:
Յերեսաց Տն՟ սասանեցաւ երկիր. 7
յերեսաց Այ՟ Յակոբայ:
Որ դարձոյց զվէմն ՚ի լճակս ջուրց, 8
եւ

և զապաւաժն յաղթերականուն :
9 Մի՛ մեզ տր՝ մի՛ մեզ. այլ անուան
քում տուր զփառս, վս ողորմութե
և ճշմարտութե քոյ :
10 Մի՛ երբէք ասասցեն 'ի հեթանոսս,
թէ ուր է ած նոցա :
11 Ած մեր յերկինս և յերկրի, զամ
զոր ինչ կամեցաւ՝ և արար :
12 Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ
են. ձեռագործ են որդւոց մարդ-
կան :
13 Բերան ունին՝ և ոչ խօսին. աչս
ունին՝ և ոչ տեսանեն :
14 Ականջս ունին՝ և ոչ լսեն. ռունգս
ունին՝ և ոչ հոտոտին :
15 Ձեռս ունին՝ և ոչ շօշափեն. ոտս
ունին՝ և ոչ գնան. և ոչ գոյ բար-
բառ 'ի կոկորդս նոցա :
16 Նման նոցա եղիցին, որք արարին
զնոսա. ամենեքեան որ յուսացեալ
են 'ի նոսա :
17 Տուն իսրայէլի յուսացաւ 'ի տր.
օգնական ընդունելի է նոցա :
18 Տուն ահարոնի յուսացաւ 'ի տր.
օգնական ընկերելի է նոցա :
19 Երկիւղածք տն յուսացան 'ի տր.
օգնական և փրկիչ է նոցա :

Յիշեաց զմեզ Տր և օրհնեաց զմեզ . 20
օրհնեաց Տր զտունն Իսրայէլի .
օրհնեաց Տր զտունն Ահարոնի ։
Օրհնեաց տէր զերկիւղածս իւր , 21
զփոքրկունս և զմեծամեծս ։
Յաւելցէ 'ի ձեզ Տր , 'ի ձեզ՝ և յորդ- 22
գիս ձեր ։
Օրհնեա՟լ էք դուք 'ի Տնէ , որ արար 23
զերկինս և զերկիր ։
Երկինք երկնից Տն են . և զերկիրս 24
ետ որդւոց մարդկան ։
Ո՛չ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ , 25
և ո՛չ ամենեքեան՝ որ իջանեն 'ի դժոխս ։
Այլ կենդանիքս օրհնեսցուք զՏր . 26
յայսմ հետէ մինչև յաւիտեան ։

## ՍԱՂՄՈՍ . ՃԺԴ ։

Ալէլուիա ։

Սիրեցի՝ զի լուիցէ Տր զձայն 1
աղօթից իմոց . խոնարհեցոյց
զունկն իւր առ իս , և ես
յաւուրս իմ կարդացի առ նա ։
Շրջեցան զինև երկունք մահու . և 2
վիշտք դժոխոց գտին զիս ։
Զնեղութիւն և զանձկութիւն գտի , և 3
զանուն Տն կարդացի ։

Ո՛ր

4 Ո՛ Տ՟ր՝ փրկեա՛ զանձն իմ. ողորմած
Տ՟ծ մեր ողորմի՛ և պահէ զտղայս Տ՟ր։
5 Ես խոնարհ եղէ՝ և Տ՟ր կեցոյց զիս.
դա՛րձ անձն իմ 'ի հանգիստ քո.
զի Տ՟ր օգնեաց քեզ։
6 Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ,
զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ
'ի գայթագղութենէ, հաճոյ եղէց
առաջի Տ՟ն յերկրին կենդանեաց։

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԵ։

Ալէլուիա։

1 Հաւատացի զոր և խօսեցայ. և
ես խոնարհ եղէ յոյժ։
2 Ես ասացի 'ի զարմանալ իմում, թէ
ամ՟ մարդ սուտ է։
3 Զի՞նչ տաց փոխարէն Տ՟ն ընդ ամե-
նայնի՝ զոր և ետ ինձ։
4 Բաժակ փրկութե՟ ընկալայց, և զա-
նուն Տ՟ն կարդացից։
5 Զաղօթս իմ Տ՟ն տաց՝ առաջի ամե-
նայն ժողովրդեան նորա։
6 Պատուական է առաջի Տ՟ն մահ սրբ՟ց
իւրոց. ո՛ Տ՟ր ես ծառայ քո եմ, ծա-
ռայ և որդի աղախնոյ քո։
7 Հատեր զկապանս իմ. քեզ մատու-
ցից

ցից պատարագ օրհնութ̃ե, և զանուն
տն կարդացից։
Զուխտս իմ տն տաց առաջի ամ 8
ժողովրդեան նր. ՚ի գաւիթս տան
տն, և ՚ի մէջ քո Երուսաղէմ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԶ։

Ալէլուիա։

Օրհնեցէք զտր ամ ազինք. գո- 1
վեցէք զնա ամ ժողովուրդք։
Զօրացաւ ողորմութիւն նորա ՚ի վր 2
մեր. ճշմարտութիւն տն մնասցէ
յաւիտեան։

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԷ։

Ալէլուիա։

Խոստովան եղերուք տն, զի քաղց 1
է. զի յաւիտեան է ողորմու-
թիւն նորա։
Ասասցէ տուն Իսրայէլի՝ զի քաղց 2
է. զի յաւիտեան է ողորմութ̃ն նր։
Ասասցէ տուն Ահարոնի՝ զի յաւի- 3
տեան է ողորմութիւն նորա։
Ասասցեն երկիւղածք տն՝ զի քաղց 4
է, զի յաւիտեան է ողորմութ̃ն նր։

5 Ի նեղութեան կարդացի առ տր, և
լուաւ ինձ յանդորր :
6 Տր է իմ օգնական. և ես ոչ եր-
կեայց, զի՞ արասցէ ինձ մարդ :
7 Տր է իմ օգնական. և ես տեսից
'ի թշնամիս իմ:
8 Բարի է յուսալ 'ի տր՝ քան յուսալ
'ի մարդիկ. բարի է յուսալ 'ի տր՝
քան յուսալ յիշխանս :
9 Ամենայն ազինք շրջեցան զինև, և
անուամբ տն յաղթեցի նոցա :
10 Շրջելով շրջեցան զինև, պաշարե-
ցին զիս 'ի միասին. և անուամբ տն
վանեցի զնոսա :
11 Շուրջ եղեն զինև որպ մեղուք, վա-
ռեցան բորբոքեցան որպ փուշք 'ի
հուր և անուամբ տն՝ մերժեցի
զնոսա :
12 'Ի մերժելն դրդուեցայ, և եղէ
մերձ 'ի գլորել. և տր ընկալաւ զիս.
13 Զօրութիւն իմ՝ և օգնութիւն իմ տր,
և եղև ինձ 'ի փրկութիւն :
14 Ձայն ցնծութեան փրկութեան՝ 'ի յարկս
արդարոց :
15 Աջ տն արար զօրութիւն. աջ տն բարձր
արար զիս. և աջ տն արար զօրութիւն :
16 Ոչ մեռայց, այլ կեցից՝ և պատ-
մեցից

մեցից զգործս Տն :

Խրատելով խրատեաց զիս Տր . եւ 17
'ի մահ ոչ մատնեաց :

Բացէք ինձ զդրունս արդարութե ,18
զի մտից 'ի այն՝ եւ խոստովան ե-
ղեց Տն :

Այս դուռն Տն է, եւ արդարք մտա-19
նեն ընդ սա :

Խոստովան եղէց քեզ Տր , զի լուար 20
ինձ . եւ եղեր ինձ 'ի փրկութի :

Վէմն՝ զոր անարգեցին շինողքն , նա 21
եղեւ գլուխ անկեան :

'Ի Տնէ եղեւ այս . եւ է սքանչելի ա-22
ռաջի աչաց մերոց :

Այսօր է՝ զոր արար Տր . եկայք 23
ցնծասցուք եւ ուրախ եղիցուք 'ի
նմա :

Ո՜ Տր փրկեա՛ ո՜ Տր առաջնորդեա՛ . 24
օրհնեալ որ գալոցդ ես յանուն Տն .
եւ օրհնեցաք զքեզ 'ի տանէ Տն :

Տր Ած մեր երեւեցաւ մեզ . արա-25
րէք տօնս ուրախութե կանխաւ ,
մինչեւ յանկիւնս սեղանոյ :

Ած իմ ես դու՝ խոստովան եղէց 26
քեզ . Ած իմ ես դու՝ եւ բարձր ա-
րարից զքեզ :

Խոստովան եղէց քեզ Տր՝ զի լուար 27
ինձ ,

ինձ, և եղեր ինձ 'ի փրկութիւն ։
28 Խոստովան եղերուք տն, զի քաղցր
է. զի յաւիտեան է ողորմութիւն նր ։

# ՍԱՂՄՈՍ. ՃԺԸ ։

Ալէլուիա ։

1 Երանեալ են անբիծք 'ի ճա-
նապարհի, և որք գնան
յօրէնս տն ։
2 Երանի՛, որք քննեն զվկայութիւնս նր.
բոլորով սրտի՛ւ իւրեանց խնդրես-
ցեն զնա ։
3 Ո՛չ թէ որք գործեն զանօրէնութիւն,
'ի ճանապարհս նր գնացեն ։
4 Դու պատուիրեցեր զպատուիրանս
քո՛ 'ի պահել ինձ յոյժ ։
5 Երանի՛ թէ յաջողեալ էին ինձ ճա-
նապարհք իմ, 'ի պահել ինձ զար-
դարութիւնս քո ։
6 Յայնժամ ես ո՛չ ամաչէի, 'ի զգու-
շանալ ինձ 'ի պատուիրանս քո ։
7 Խոստովան եղէց քեզ տր յուղղու-
թիւն սրտի իմոյ. որ ուսայց զի-
րաւունս արդարութե քո ։
8 Զիրաւունս քո պահեցի. մի՛ թո-
ղուր զիս մինչ իսպառ ։

Ի՞ւ ուղղեսցէ երիտասարդ զճանա- 9
պարհս իւր. այլ ՚ի պահել զբանս քո։
Բոլորով սրտիւ իմով խնդրեցի ըզ- 10
քեզ. մի՛ մերժեր զիս ՚ի պատուիրա-
նաց քոց։
Ի սրտի իմում թագուցի զբանս 11
քո, ո՛չ զի մի՛ մեղայց քեզ։
Օրհնեալ ես դու տէր. ուսո՛ ինձ 12
զարդարութիւնս քո։
Շրթամբք իմովք պատմեցից զա՛մ 13
իրաւունս բերանոյ քո։
Ի ճանապարհս վկայութեանց քոց 14
զուարճացայ, ո՛պ յա՛մ ՚ի մեծութե։
Ի պատուիրանս քո հոգացայ. և 15
զգուշացայ ՚ի ճանապարհս քո։
Յիրաւունս քո խոկեցայ, և ո՛չ մո- 16
ռացայ զբանս քո։
Հատո՛ ծառայի քում, զի կեցից և 17
պահեցից զբանս քո։
Յարթո՛ զաչս իմ, և նայեցայց ՚ի 18
սքանչելիս օրինաց քոց։
Պանդուխտ եմ ես յերկրի. մի՛ թա- 19
քուցաներ յինէն զպատուիրանս քո։
Փափագեաց անձն իմ, ՚ի ցանկալ 20
ինձ յիրաւունս քո յա՛մ ժամ։
Սաստեցեր ամբարտաւանից. անի- 21
ծեալ՝ որք խոտորեցան ՚ի պատուի-
րա.

բանից քոց ։

22 Ի բաց արա յինէն զնախատինս և
զարհամարհանս ․ զի զվկայութիւնս
քո խնդրեցի ։

23 Քանզի նստան իշխանք՝ և չարա֊
խօսէին զինէն ․ այլ ծառայ քո խոր֊
հէր յիրաւունս քո ։

24 Զի վկայութիւնք քո խօսք իմ էին ․
և խորհուրդք իմ արդարութիւնք քո ։

25 Մերձեցաւ անձն իմ ի հող ․ տէր
կեցո զիս ըստ բանի քում ։

26 Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝
և լուար ինձ ․ ուսո ինձ զարդա֊
րութիւնս քո ։

27 Ի ճանապարհս արդարութեանց քոց
իմաստուն արա զիս ․ և քննեցից
զսքանչելիս քո ։

28 Տքնեցաւ անձն իմ առ ի ձանձրա֊
նաց ․ հաստատեա զիս ի բանս քո ։

29 Զճանապարհս մեղաց ի բաց արա
յինէն ․ և յօրէնս քո ողորմեա ինձ ։

30 Զճանապարհս ճշմարտութեան քո
ընտրեցի ․ և զիրաւունս քո ես ոչ
մոռացայ ։

31 Մերձեցայ ես ի վկայութիւնս քո ․
տէր մի յամօթ առներ զիս ։

32 Ի ճանապարհս պատուիրանաց քոց

ըն֊

ընթացայ. զի անդորր արարեր սրտի
իմոյ:

Օրէնսդէտ արա զիս Տէր, 'ի Ճանա- 33
պարհս իրաւանց քոց. և խնդրեցից
զնա յամենայն ժամ:

Իմաստուն արա զիս. և քննեցից զօ- 34
րէնս քո, և պահեցից զնա բոլորով
սրտիւ իմով:

Առաջնորդեա՛ ինձ 'ի շաւիղս պատ- 35
ուիրանաց քոց. զի զնա հաճեցայ:

Խոնարհեցո՛ զսիրտ իմ 'ի վկայու- 36
թիւս քո, և մի՛ յագահութիւն:

Դարձո՛ զաչս իմ, զի մի՛ տեսից զնան- 37
րութիւն. 'ի Ճանապարհս քո կեցո՛ զիս:

Հաստատեա՛ ծառայի քում՝ զբան 38
քո յերկիւղ քո:

Հա՛ն յինէն զնախատինս, զոր և կար- 39
ծեցի. զի դատաստանք քո քաղցր են:

Ահա ցանկացայ պատուիրանաց 40
քոց, յարդարութեան քում կեցո՛ զիս:

Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութիւն քո 41
Տէր. և փրկութիւն քո ըստ բանի քում:

Տաց պատասխանի որք նախատեն 42
զիս բանիւք. զի ես 'ի բանս քո յու-
սացայ:

Մի՛ 'ի բացէ առներ 'ի բերանոյ 43
իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ.

զի

զի յիրաւունս քո յուսացայ ։
44 Պահեցի զօրէնս քո յմ̃ ժամ, յաւի֊
տեան՝ և յաւիտեանս յաւիտենից ։
45 Գնայի ես յանդորրու․ զի պատուի֊
րանս քո խնդրեցի ։
46 Խօսէի զվկայութիւնս քո առաջի թա֊
գաւորաց , և ոչ ամաչէի ։
47 Խորհէի 'ի պատուիրանս քո , զոր
սիրեցի ։
48 Համբարձի զձեռս իմ 'ի պատուի֊
րանս քո՝ զոր սիրեցի․ և խորհէի
յարդարութեան քում։
49 Յիշեա՛ զբան ծառայի քո , յոր և
յուսացուցեր զիս ։
50 Սա մխիթարեաց զիս 'ի խոնարհու֊
թե̃ իմում․ զի բան քո կեցոյց զիս ։
51 Ամբարտաւանք անիրաւեցան յիս
յոյժ , այլ յօրինաց քոց ես ոչ խո֊
տորեցայ ։
52 Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից
տ̃ր , և մխիթարեցայ ։
53 Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւո֊
րաց , և ոյք թողին զօրէնս քո ։
54 Գովելի են ինձ իրաւունք քո , 'ի
տեղւոջ պանդխտութե̃ իմոյ ։
55 Յիշեցի 'ի գիշերի զանուն քո տ̃ր․ և
պահեցի զօրէնս քո ։

Սա

Սա եղեւ ինձ Ճանապարհ ’ի կեանս 56
զի զարդարութիւնս քո խնդրեցի ։

Բաժին իմ ես դու Տէր, ասա 57
ցի պահել ինձ զօրէնս քո ։
Աղաչեցի զերեսս քո բոլո 58
րով սրտիւ իմով․ ողորմեա ինձ ըստ
բանի քում ։
Խորհեցայ ’ի Ճանապարհս իմ․ և 59
դարձուցի զոտս իմ ’ի վկայութիւնս քո ։
Պատրաստեցայ և ոչ խռովեցայ․ զի 60
պահեցի զպատուիրանս քո ։
Ծուղք մեղաց պատեցան զինև․ 61
այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ ։
’ի մէջ գիշերի յառնէի խոստովան 62
լինել առ քեզ․ վասն իրաւանց և
արդարութեան քո ։
Հաղորդ էի ես ամենայն երկիւղա 63
ծաց քոց․ որոց պահեալ է զպատ
ուիրանս քո ։
Ողորմութիւն Տն լի եղև երկիր․ զար 64
դարութիւնս քո ուսո ինձ ։
Քաղցրութիւն արարեր ընդ ծառայիս 65
քում Տր, ըստ բանի քում ։
Քաղցրութիւն, զխրատ, և գիտութ 66
իւն ուսո ինձ․ զի ’ի պատուիրանս
քո

քո ես հաւատացի:

67 Մինչեւ խոնարհեալ էի ես՝ մեղայ.
վն̃ այսորիկ զբանս քո պահեցի յոյժ:
68 Քաղցր ես դու Տ̃ր, եւ քաղցրու-
թ̃բ քով ուսո ինձ զարդարութիւնս քո:
69 Բազմացան յիս անիրաւութիւնք ամ-
բարտաւանից. այլ ես բոլորով սր-
տիւ իմով քննեցի զպատուիրանս քո:
70 Մածեաւ որ̃պ կաթն սիրտք նոցա.
այլ ես զօրէնս քո խօսեցայ:
71 Բարի է ինձ, զի խոնարհ արարեր
զիս. որ̃պ ուսայց զարդարութիւնս քո:
72 Բարի են ինձ օրէնք բերանոյ քո,
քան զհազարս ոսկւոյ եւ արծաթոյ:
73 Ձեռք քո արարին՝ եւ ստեղծին զիս.
իմաստունս արա զիս՝ եւ ուսայց զպ-
պատուիրանս քո:
74 Երկիւղածք քո տեսցեն զիս՝ եւ ու-
րախ եղիցին. զի ես 'ի բանս քո
յուսացայ:
75 Ծանեայ Տ̃ր զի արդարութեամբ
են դատաստանք քո. յիրաւի խո-
նարհեցուցեր զիս:
76 Եղիցի ողորմութիւն քո 'ի մխիթարել
զիս. ըստ բանի քում, ծառայի քո:
77 Եկեսցեն յիս գթութիւնք քո՝ եւ կե-
ցից. զի օրէնք քո խօսք իմ են:

Ամա-

Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որ 'ի 78
տարապարտուց անիրաւեցան յիս.
այլ ես հոգացայց 'ի պատուիրանս քո։
Խրատեսցեն զիս երկիւղածք քո, 79
և որք ճանաչեն զվկայութիւնս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարու- 80
թեան քում. զի մի ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ 'ի փրկութիւն 81
քո. զի ես 'ի բանս քո յուսացայ։
Սպառեցին աչք իմ բանի քում. 82
ասացի՝ երբ մխիթարեսցես զիս։
Եղէ ես որպէս տիկ 'ի պարզի. զի զար- 83
դարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո. 84
երբ արասցես ինձ իրաւունս 'ի հա-
լածչաց իմոց։
Պատմեցին ինձ անօրէնք զխորհուր- 85
դս. այլ ոչ որպէս զօրէնս քո։
Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ 86
են. 'ի նանիր հալածեցին զիս, օգ-
նեա ինձ։
Փոքր մի եւս՝ և կորուսանէին զիս 87
յերկրի. այլ ես ոչ թողի զպատուի-
րանս քո։
Ըստ ողորմութեան քում կեցո զիս. և 88
պահեցից զվկայութիւնս բերանոյ քո։
Յաւիտեան Տէր՝ բան քո կայ յեր- 89
կինս.

կինս · ազգէ մինչեւ յազգ է ճշմար_
տութիւն քո :

90 Հաստատեցեր զերկիր՝ եւ կայ :

91 Հրամանի քում՝ մնայ տիւ · զի ա_
մենայն ծառայ քո է :

92 Եթէ ոչ օրէնք քո խոկք իմ էին,
կանխաւ եւս արդեօք կորուսեալ էի
'ի խոնարհութեան իմում :

93 Յաւիտեան ոչ մոռացայց զարդա_
րութիւնս քո · զի նոքօք կեցուցեր զիս :

94 Քո եմ ես, եւ կեցո զիս · զի զար_
դարութիւնս քո խնդրեցի :

95 Ինձ սպասեցին մեղաւորք 'ի կո_
րուսանել · զի զվկայութիւնս քո ես 'ի
միտ առի :

96 Յամենայն կատարածի տեսի զվախ_
ճան · յոյժ անդորր էին ինձ պատ_
ուիրանք քո :

97 Որպէս սիրեցի զօրէնս քո · զօր_
հանապազ խոկք իմ էին :

98 Քան զթշնամիս իմ իմաստուն արա_
րեր զիս 'ի պատուիրանս քո · զի
յաւիտեան իմ էին :

99 Քան զամենայն ուսուցիչս իմ իմաս_
տուն եղէ · զի վկայութիւնք քո խոկք
իմ էին :

100 Քան զծերս իմաստուն եղէ · զի

զպատուիրանս քո քննեցի ։
Յա̃մ ճանապարհաց չարաց արգե_ 101
լի զոտս իմ. որպէս զի պահեցից
զբանս քո ։
Յիրաւանց քոց ես ո՛չ խոտորեցայ. 102
զի դու օրէնսդէտ արարեր զիս ։
Ո̃ զի քաղցր են 'ի քիմս իմ բանք 103
քո քան զմեղր՝ բերանոյ իմոյ ։
'Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ա_ 104
տեցի զա̃մ ճանապարհս չարաց. զի
դու օրէնսդէտ արարեր զիս ։
Ճրագ է բանն քո ոտից իմոց, և լոյս 105
տոյ շաւղաց իմոց ։
Երդուեայ և հաստատեցի. զի պա_ 106
հեցից զա̃մ իրաւունս արդարու_
թեան քո ։
Խոնարհեցայ մինչև յոյժ. Տ̃ր՝ կեցո՛ 107
զիս ըստ բանի քում ։
Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեա՛ 108
Տ̃ր. և զիրաւունս քո ուսո՛ ինձ ։
Անձն իմ 'ի ձեռս քո յա̃մ ժամ. 109
և զօրէնս քո ես ո՛չ մոռացայ ։
Եդին ինձ մեղաւորք որոգայթ. 'ի 110
պատուիրանաց քոց ես ո՛չ մոլորե_
ցայ ։
Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւի_ 111
տեան. զի ցնծութիւն է սրտի իմոյ ։

Խո_

112Խոնարհեցուցի զսիրտ իմ, առնել
զարդարութիւնս քո յաւիտեան ,
վասն հատուցման :
113Զանօրէնս ատեցի , և զօրէնս քո
սիրեցի :
114Օգնական և փրկիչ իմ ես դու .
և ես 'ի բանս քո յուսացայ :
115'Ի բաց եղերուք յինէն չարք . և
քննեցից զպատուիրանս ա͞յ իմոյ :
116Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, և
կեցո՛ զիս . և մի՛ յամօթ առներ զիս
'ի յուսոյ իմմէ :
117Օգնեա՛ ինձ , և ապրեցո՛ զիս . և
խորհեցայց յիրաւունս քո յամե-
նայն ժամ :
118Անարգեցեր զամենեսեան' որ ա-
պստամբ եղեն յարդարութեանց
քոց . զի անիրաւութեամբ էին
խորհուրդք նոցա :
119Յանցաւորս համարեցայ զա͞մ մե-
ղաւորս երկրի . վ͞ն այսորիկ' սիրե-
ցի զպատուիրանս քո :
120Բևեռեա՛ ի͞ երկիւղքո զմարմինս
իմ . զի 'ի դատաստանաց քոց եր-
կեայց յոյժ :

Արարի իրաւունս և արդա- 121
րութի՛ն. մի՛ մատներ զիս
՚ի ձեռս նեղչաց իմոց։
Ընկա՛լ զծառայս քո ՚ի բարի. զի մի՛ 122
ամբարտաւանք զրկեսցեն զիս։
Սպառեցին աչք իմ փրկութե քում 123
տր, և բանից արդարութե քո։
Արա՛ ընդ ծառայի քում տր ըստ 124
ողորմութեան քում. զարդարու-
թի՛ս քո ուսո՛ ինձ։
Ծառայ քո եմ ես, իմաստո՛ւն ա- 125
րա զիս, և ծանեայց զվկայութի՛ս քո։
Ժամ է պաշտել զտր. խափանեցին 126
զօրէնս քո։
Վասն այսորիկ սիրեցի զպատուի- 127
րանս քո, քան զամենայն ոսկի և
զտպազիոն։
Ամենայն պատուիրանք քո յաջո- 128
ղեցան ինձ. զի ատեցի ես զճանա-
պարհս չարաց։
Սքանչելի են վկայութի՛ք քո, վն 129
այսորիկ սիրեաց զնս անձն իմ։
Յայտնութի բանից քոց լուսաւոր, 130
և իմաստուն առնէ զտղայս։
Զբերան իմ բացի, և առի զհո- 131
գի.

գի · 'ի պատուիրանս քո փափա_
գեաց անձն իմ:
132Նայեաց առ իս և ողորմեաց ինձ, ըստ
իրաւունս սիրողաց անուան քո:
133Զճանապարհս իմ ուղի՛ղ արա ինձ
ըստ բանի քում. և մի՛ տիրեսցեն
ինձ ամ̃ մեղք:
134Փրկեա՛ զիս 'ի զրպարտութէ̃ մարդ_
կան · և պահեցից զպատուիրանս
քո:
135Երևեցո՛ զերեսս քո 'ի ծառայս
քո, և ուսո՛ ինձ զարդարութիս քո:
136Վտակք ջուրց իջին յաչաց իմոց ·
զի ո՛չ պահեցին զօրէնս քո:
137Արդար ես դու տ̃ր, և ուղիղ են
դատաստանք քո:
138Պատուիրեցեր զարդարութի̃ վկայ_
ութեց քոց · և ճշմարիտ են յոյժ:
139Մաշեաց զիս նախանձ քո, զի մո_
ռացան զբանս քո թշնամիք իմ:
140Ընտրեալ է բան քո յոյժ, և ծա_
ռայ քո սիրեաց զսա:
141Մանուկ եմ ես և արհամարհեալ ·
և զարդարութիս քո ես ո՛չ մոռացայ:
142Արդարութի̃ քո՝ արդարութի̃ յաւի_
տենից · և օրէնք քո ճշմարիտ են:
143Նեղութիք և վիշտք գտին զիս · և

պատուէրանք քո խօսք իմ էին ։
Արդարութիւն են վկայութիւնք 144
քո յաւիտեան. իմաստուն արա և
կեցո՛ զիս ։
Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ 145
իմով. լո՛ւր ինձ Տէր, զի զարդարու-
թիւնս քո խնդրեցից ։
Աղաղակեցի առ քեզ՝ և փրկեա՛ 146
զիս. և պահեցից զվկայութիւնս քո ։
Կանխեցի տարաժամու՝ աղաղակե- 147
ցի. և ես ՚ի բանս քո յուսացայ ։
Կանխեցին աչք իմ առաւօտու. ՚ի 148
խօսել ինձ զբանս քո ։
Զձայնի իմում լո՛ւր Տէր՝ ըստ ողորմու- 149
թեան քում. Տէր յիրաւունս քո կե-
ցո՛ զիս ։
Մերձեցուցին յիս հալածիչք իմ 150
զանօրէնութիւն. զի յօրինաց քոց
հեռի եղեն ։
Մերձ ես դու Տէր. և ամենայն պատուէ- 151
րանք քո ճշմարիտ են ։
Իսկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց 152
քոց. զի յաւիտեան հաստատե-
ցեր զնոսա ։
Տե՛ս զխոնարհութիւն իմ, և փրկեա՛ 153
զիս. զի զօրէնս քո ես ոչ մոռացայ ։
Դատեա՛ զդատաստանս իմ, և 154

փրկ.

փրկեա՛ զիս . և ըստ բանի քում
կեցո՛ զիս :
155 Հեռի է 'ի մեղաւորաց փրկութի՛ւն,
զի զիրաւունս քո ոչ պահեցին :
156 Գթութիւնք քո բազում են տ̃ր, և
ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս :
157 Բազումեն, որ հալածեն և նեղեն
զիս . 'ի վկայութեանց քոց ես ոչ
խոտորեցայ :
158 Հայէի յանագորոյնս՝ և մաշէի, զի
զպատուիրանս քո ոչ պահեցին :
159 Տե՛ս՝ զի զպատուիրանս քո սիրեցի.
տ̃ր՝ ողորմութ̃բ քո կեցո՛ զիս :
160 Սկիզբն բանից քոց ճշմարտութի՛ւն է .
յաւիտեան են ամ̃ իրաւունք ար-
դարութեան քո :
161 Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր .
և 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ :
162 Ցնծացայ ես 'ի բանս քո, ոպ̃ այն՝
որ գտանէ աւար բազում :
163 Զմեղս ատեցի և անարգեցի, և զօ-
րէնս քո սիրեցի :
164 Եօթն անգամ յաւուր օրհնեցից
զքեզ վասն իրաւանց և արդարու-
թեան քո :
165 Խաղաղութի՛ւն բազում է այնոցիկ,
որ սիրեն զօրէնս քո, և ոչ գոյ 'ի
նո-

Նոցա գայթագղութիւն ։

Սպասեցի փրկութեան քում տ՟ր, և 166
զպատուիրանս քո սիրեցի ։

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, 167
և սիրեաց զն՟ յոյժ ։

Պահեցից զպատուիրանս՝ և զվկայ- 168
ութիւնս քո ․ զի ամենայն ճանապարհք
իմ առաջի քո են ։

Մերձեսցին խնդրուածք իմ առա- 169
ջի քո տէր ․ ը՟ս բանի քում իմաս-
տուն արա զիս ։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ՟ր ․ 170
և բանիւ քո փրկեա զիս ։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու- 171
թիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ
զարդարութիւնս քո ։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո ․ զի 172
ա՟մ պատուիրանք քո արդարու՟թ
են ։

Եղիցի ձեռն քո՝ ի կեցուցանել զիս ․ 173
զի զպատուիրանս քո ընտրեցի ։

Յանկացայ փրկութեան քում տ՟ր, և 174
օրէնք քո խօսք իմ էին ։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ ․ 175
և իրաւունք քո օգնեսցեն ինձ ։

Մոլորեցայ ես ո՟պ ոչխար կո- 176
րուսեալ ․ խնդրեա զծառայս քո,

զի զպատուէրանս քո ես ոչ մո-
ռացայ:

## Օրհնութիւն Եսայեայ մարգարէի: Եսայեայ. ԽԲ:

1 Օրհնեցէք զա̃ծ յօրհնութիւն
նոր. զի իշխանութ̃ին ն̃ր 'ի
բարձունս փառաւորի:
2 Եւ անուն ն̃ր փառաւորեալ է՝ 'ի
ծագաց մինչև 'ի ծագս երկրի:
3 Որք իջանէին 'ի ծով նաւօք. կղզիք
և ա̃մ բնակիչք նոցա ընդ ն̃մ:
4 Ուրախ եղիցի անապատն՝ և ա̃մ բնա-
կիչք իւր. ուրախ եղիցին բանակք՝
և բակք կեդարու. և ուրախ եղիցին
բնակիչք վիմին:
5 'Ի գլխոց լերանց գոչեսցեն, տա-
ցեն զփառս ա̃յ. և զքաջութ̃ին նորա
կղզիք պատմեսցեն:
6 Տ̃ր ա̃ծ զօրուե̃ց դիմեալ գայ զար-
թուցանել զպատերազմ, յարուցա-
նել զնախանձ. փող հարկանել՝ և
գոչել 'ի վերայ թշնամեաց իւրոց
զօրութեամբ բազմաւ:
7 Ուրախ եղիցին երկինք 'ի վերուստ

և

Ու ամպք ցօղեսցեն զարդարութիւն ։
Բղխեսցէ երկիր զողորմութիւն և զար- 8
դարութիւն՝ առ հասարակ բղխեսցէ ։

Աղօթք յովնանու մարգարէին ։

Ի նեղութեան իմում ես առ Տր կար- 1
դացի ․ լուաւ Ած յանդնդոց
դժոխոց աղաղակի իմում ։
Լուր Տր ձայնի իմում, զի ընկեցեր 2
զիս 'ի խորս ծովու ․ և շրջանք գե-
տոց պաշարեցին զիս ։
Ամենայն զբօսանք քո՝ և ալիք քո ան- 3
ցին 'ի վր իմ ․ և ասացի, թէ մերժե-
ցայ ուրեմն յերեսաց աչաց քոց ։
Արդ՝ իցէ՞ թէ յաւելից հայել 'ի տա- 4
ճար սուրբ քո ․ զի հեղձան զինև ջուրք
մինչև յանձն իմ ․ և անդունդք անհը-
նարինք պաշարեցին զիս ։
Եմուտ գլուխ իմ 'ի փապարս լե- 5
րանց ․ իջի ես 'ի խորս երկրի, և
տեսի զնիգս նր, զի էին ոչ ալիք
յաւիտենից ․ և ելցեն յապակա-
նութէ կեանք իմ ։
Առ քեզ Տր Ած իմ, 'ի նուաղել 6
անձին իմոյ կարդացի, և զքեզ Տր
յիշեցի ․ և մտցեն աղօթք իմ 'ի տա-
ճար սբ քո ։

7 Չև ուք պահէին զունայնութիւն
և զստութիւն, յողորմութենէ իւ_
րեանց մերժեցան։
8 Այլ ես 'ի ձայն օրհնութեան խոստո_
վան եղէց քեզ. մատուցից պատա_
րագս իմ, և կատարեցից զուխտ իմ
'ի փրկութեան։

Մաղթանք։

Լսեսցեն աղօթք մեր 'ի տաճար
ս͞ր քո. խոնարհեսցի ունկն քո
'ի խնդրուածս մեր։ Մարդա՛։
Զփառսն և զաղօթսն 'ի վերջն Մի նախան_
ձիր կանոնին գտցես 'ի 127. երեսն։





Ս՟ Գրիգոր Լուսաւորիչ:

# ՍԱՂՄՈՍ. ՃԺԹ։

Օրհնութիւն Աստիճանաց։

1 ԻՆԵՂՈՒԹԵԱՆ
իմում եւ առ Տէր կարդացի,
եւ լուաւ ինձ Տէր. փրկեա
զանձն իմ 'ի շրթանց նեն-
գաւորաց, եւ 'ի լեզուէ չարէ։
2 Զի՞ տացի քեզ՝ կամ զինչ յաւելցի,
լեզու նենգաւոր։
3 Որպէս նետք հզօրի, զի մխեալ են
կայծակամբք կաղնւոյ։
4 Վա՜յ ինձ զի է երկար եղեւ պանդըխ-
տութիւն իմ. զի բնակեցայ ես 'ի
վրանս կեդարու։
5 Բազում անգամ բնակեաց անձն իմ
ընդ այնոսիկ, որք ատէին զողջոյն։
6 Ես էի խաղաղարար. յորժամ խօ-
սէի, մարտնչէին ընդ իս։

## ՍԱՂՄՈՍ. ՃԻ:

Օրհնութիւն Աստիճանաց :

Համբարձի զաչս իմ ՚ի լերինս , 1
ուստի եկեսցէ ինձ օգնութիւն :
Օգնութիւն ինձ ՚ի Տեառնէ եկեսցէ , որ 2
արար զերկինս և զերկիր :
Մի՛ տար ՚ի սասանութիւն զոտն քո . 3
և մի՛ նինջեսցէ պահապան քո :
Որպէս ոչ նինջէ՛ և ոչ ՚ի քուն երթայ 4
պահապան Իսրայէլի :
Տէր պահեսցէ զքեզ , և Տէր ընկալցի 5
աջով ձեռամբն իւրով :
Արեգակն ՚ի տուէ քեզ մի՛ մեղիցէ , 6
և մի՛ լուսին ՚ի գիշերի :
Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ . պա- 7
հեսցէ Տէր զանձն քո :
Տէր պահեսցէ զմուտ և զել քո՛ 8
յայսմ հետէ մինչև յաւիտեան :

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԱ:

Օրհնութիւն Աստիճանաց :

Ուրախ եղէ ես՛ որք ասէին ցիս , 1
՚ի տուն Տն երթիցուք մեք :
Հաստատուն կային ոտք մեր առ դրունս 2
քո

քո Երուսաղէմ։
3 Զերուսաղէմ շինեալ ոպ̃ քաղաք․
և բնակութիւն իւր շուրջ զնովաւ։
4 Անդ ելին ազգ՝ ազգ տն̃․ վկայու֊
թիւն իսրայէլի, խոստովան լինել
անուան տն̃։
5 Անդ արկեալ էր աթոռ դատաստա֊
նի․ աթոռս արկեալ՝ ի տան դաւթի։
6 Հարցէք զողջունէ զերուսաղէմի,
և զշինութե̃՝ որք սիրէք զնա։
7 Եղիցի խաղաղութիւն ՚ի զօրութե̃
քում, և շինութիւն յաշտարակս
յամուրս քո։
8 Վասն եղբարց և ընկերաց իմոց խօ֊
սեցայ զխաղաղութե̃․ վասն քոյ և
վասն տան տն̃ այ̃ մերոյ խնդրեցաք
զբարութիւն ՚ի քէն։

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԲ.

### Օրհնութիւն Աստիճանաց։

1 Առ քեզ տր̃ համբարձի զաչս իմ․
որ բնակեալդ ես յերկինս։
2 Որպէս աչք ծառայի ՚ի ձեռն տն̃
իւրոյ․ ոպ̃ աչք աղախնոյ ՚ի ձեռն
տիկնոջ իւրոյ։
3 Այնպէս են աչք մեր առ քեզ տր̃

ած մեր. մինչև ողորմեսցիս ՚ի վե-
րայ մեր։
Ողորմեա՛ մեզ Տ՟ր ողորմեա՛ մեզ. զի 4
բազում լցաք արհամարհանօք։
Եւս առաւել լցան անձինք մեր նա- 5
խատանօք, որ նախատէին զմեզ. և
արհամարհանօք ամբարտաւանից։

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԳ.

Օրհնութիւն Աստիճանաց։

Եթէ ո՛չ Տ՟ր էր առ մեզ, ասասցէ 1
Իսրայէլ, եթէ ո՛չ Տ՟ր էր առ
մեզ։
Ընդ յառնել մարդկան ՚ի վ՟ր մեր. 2
կենդանւոյն կամեցան կլանել զմեզ։
՚Ի բարկանալ սրտմտութ՟ք նոցա ՚ի 3
վերայ մեր. ապա և ջուրք ուրեմն
ընկղմեցին զմեզ։
Ընդ ուղխս անցին անձինք մեր. ան- 4
ցին անձինք մեր՝ ը՟ ուղխս անդա-
դարս։
Օրհնեալ է Տ՟ր. որ ո՛չ ետ զմեզ 5
յորս ատամանց նոցա։
Անձինք մեր ապրեցան ո՟պ ճնճ- 6
ղուկ՝ յորոգայթէ որսողաց։
Որոգայթք նոցա փշրեցան, և մեք 7
ապրե-

ապրեցաք :

8 Օգնութիւն է մեզ յանուանէ տ՟ն ,
որ արար զերկինս և զերկիր :

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԴ:

Օրհնութիւնք Աստիճանաց :

1 Որ յուսայ 'ի տ՟ր, նման լեառն սիովնի,
մի՛ սասանեսցի յաւիտեան՝ որ
բնակեալն է յերուսաղէմ:
2 Լերինք շուրջ են զնովաւ. տ՟ր շուրջ
է զժողովրդեամբ իւրով՝ յայսմհե-
տէ մինչեւ յաւիտեան :
3 Ո՛չ թողու տ՟ր զգաւազան մեղաւո-
րաց 'ի վիճակս արդարոց. և ար-
դարք մի՛ ձգեսցեն զձեռս իւրեանց
յանօրէնութիւն :
4 Բարի առնէ տ՟ր բարեաց. և այնո-
ցիկ, որք ուղիղ են սրտիւք :
5 Իսկ զթիւրեալսն յափշտակութե ,
տանի զնոսա տ՟ր ընդ այնոսիկ որք գոր-
ծեն զանօրէնութիւն. խաղաղութիւն
'ի վերայ Իսրայէլի :

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԵ.

Օրհնութիւն Աստիճանաց։

Ի դարձուցանել տեառն զգե- 1
րութին սիոնի, և եղաք մեք
մխիթարեալք։
Յայնժամ լցան բերանք մեր խնդու- 2
թբ, և լեզուք մեր ցնծութբ։
Յայնժամ ասասցեն 'ի հեթանոս, 3
մեծ արար տր զառնել իւր ը ննս․
մեծ արար տր զառնել իւր ը մեզ․
և մեք եղաք բերկրեալք։
Դարձո տր զգերութիւս մեր՝ ոպ 4
զուղխս 'ի հարաւոյ․ որք վարէին
արտասուօք, ցնծութբ հնձեսցեն։
Երթալով երթային՝ և լային, որք 5
բարձեալ տանէին զսերմանս իւ-
րեանց։
Գալով եկեսցեն՝ և ցնծասցեն, որք 6
առեալ բերիցեն զորայս իւրեանց։

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԶ։

Օրհնութիւն Աստիճանաց։

Եթէ ոչ տր շինէ զտուն, 'ի նա- 1
նիր վաստակին շինօղք նր։

2 Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդու-
նայն տքնին պահապանք նորա :
3 'Ի նանիր է ձեզ յառնել կանխաւ ·
արդ՝ արիք մինչեւ էք ննջեցեալ ·
որք ուտէք զհաց ցաւոց :
4 'Ի ժամանակի, ուր տացէ քուն սի-
րելեաց իւրոց · ժառանգութիւն տեառն
որդիք են · որոյ վարձք իւր են, այն
է պտուղ որովայնի իւրոյ :
5 Որպէս նետք 'ի ձեռս հզօրի · այն-
պէս են եւ որդիքն թօթափելոց :
6 Երանի՜, որ ելից զցանկութիւն իւր 'ի
նոցանէ · մի՛ ամաչեսցեն՝ յորժամ
խօսեսցին թշնամիք նոցա ընդ նոսա առ
դրանն :

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԷ:

### Օրհնութիւն Աստիճանաց :

1 Երանի՜ ամենեցուն՝ որք երկնչին
'ի Տեառնէ, եւ գնան 'ի ճանապարհս
նորա :
2 Զվաստակս ձեռաց քոց կերիցես ·
երանի՜ է քեզ, եւ բարի եղիցի :
3 Կին քո որպէս այգի վայելուչ յան-
կիւնս տան քո · որդիք քո որպէս նո-
րատունկ ձիթենւոյ՝ շուրջ զսե-

զանուն քո ։

Այսպէս օրհնեսցի ամենայն մարդ, 4
որ երկնչի 'ի տ՟նէ․ օրհնեսցէ զքեզ
տ՟ր 'ի սիոնէ ։

Եւ տեսցես դու զբարութիւնն յե- 5
րուսաղէմ՝ զա՟մ աւուրս կենաց քոց։

Տեսցես դու զորդիս որդւոց քոց․ 6
խաղաղութիւն 'ի վերայ իսրայէլի ։

## ՍԱՂՄՈՍ․ ՃԻԸ։

### Օրհնութիւն Աստիճանաց ։

Բազում անգամ մարտեան ը՟ իս 1
'ի մանկութէ իմմէ, ասասցէ իս-
րայէլ ։

Բազում անգամ մարտեան ը՟ իս 'ի 2
մանկութէ իմմէ, և ինձ ոչ յաղ-
թեցին ։

Զթիկունս իմ հարին մեղաւորք․ 3
ընդ երկար արարին զանօրէնութիւն
իւրեանց ։

ՏՐ արդար է, և խորտակէ զուլն 4
մեղաւորաց ։

Ամաչեսցեն և յետս դարձցին ա- 5
մենեքեան՝ որք ատեն զսիոն ։

Եղիցին նորա որպէս խոտ տանեաց․ որ 6
մինչչև 'ի բուսն եկեալ՝ չորացաւ ։

Ուստի

7 Ուստի ոչ ելից զբուռն իւր հնձօղն, և ոչ զգիրկս իւր՝ որ զորայն ժո-
ղովէր։
8 Ո՛չ ասացին ամենեքեան՝ ոյք անցա-
նէին առ նոքօք, Թէ օրհնութիւն
տ̃ն ընդ ձեզ է. և օրհնեցաք զձեզ
յանուն տ̃ն։

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԹ։

Օրհնութիւն Աստիճանաց։

1 'Ի խորոց կարդացի առ քեզ տ̃ր՝
տ̃ր՝ լուր ձայնի իմում։
2 Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն
աղօթից իմոց։
3 Թէ զանօրէնութիւնս քննես տ̃ր՝ տ̃ր,
իսկ ո՞ կարէ կալ առաջի քո. զի 'ի
քէն է քաւութիւն։
4 Վասն անուան քո համբերի տ̃ր.
համբեր անձն իմ բանի քում. յու-
սացաւ անձն իմ 'ի տ̃ր։
5 'Ի պահէ առաւօտու՝ մինչև յերե-
կոյ. 'ի պահէ առաւօտու՝ յուսա-
ցաւ իսրայէլ 'ի տէր։
6 'Ի տ̃նէ է ողորմութի̃ բազում. 'ի
նմանէ է փրկութի̃. և նա փրկեաց
զիսրայէլ յամ̃ նեղութեանց նր̃։

## ՍԱՂՄՈՍ․ ՃԼ․

Օրհնութիւն Աստիճանաց ։

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ․ 1
և ոչ զբօսան աչք իմ։
Ո՛չ գնացի ես ընդ մեծամեծս․ և 2
ոչ ընդ այնոսիկ, որ սքանչելի եղեն
քան զիս ։
Բայց թէ խոնարհեցայ ես՝ ոչ մա_ 3
նուկ սարտուցեալ ՚ի ստենէ մօր իւ_
րոյ․ և դարձ ն̃ր անդրէն ՚ի նոյն ։
Այլ թէ հպարտացուցի արդեօք 4
զանձն իմ, այսպէս եղիցի հատու_
ցումն անձին իմոյ․ յուսասցէ իս_
րայէլ ՚ի տ̃ր յայսմհետէ մինչև յաւի_
տեան ։

## ՍԱՂՄՈՍ․ ՃԼԱ․

Երգ ըղձոյ ։

Յիշեա տ̃ր զդաւիթ, և զամե_ 1
նայն հեզութիւն նորա ։
Որպէս երդուաւ տ̃ն․ և ուխտս 2
եդ ա̃յ յակոբայ ։
Թէ ոչ մտից ՚ի յարկս տան իմոյ․ 3
թէ ելից յանկողինս մահճաց իմոց ։

Թէ

4 Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ
արտեւանանց իմոց. կամ հանգիստ
իրանաց իմոց. մինչեւ գտից զտեղի
յարկի տն̃ այ̃ յակովբայ։
5 Ահա լուաք զնմանէ յեփրաթայ. եւ
գտաք զնա 'ի դաշտս մայրեաց։
6 Մտցուք 'ի յարկս նր̃. երկիր պագ-
ցուք 'ի տեղւոջ՝ ուր կացեալ են
ոտք նր̃։
7 Արի՛ տր̃ 'ի հանգիստ քո՝ դու եւ
տապանակ կտակի սրբութե̃ քո։
8 Երիցունք քո զգեցցին զարդարու-
թե̃. եւ սուրբք քո ցնծալով ցնծաս-
ցեն։
9 Վասն դաւթի սիրելւոյ քո, մի՛
դարձուցաներ զերեսս քո յօծելոյ
քումմէ։
10 Երդուաւ տր̃ դաւթի ճշմարտութե̃՝
եւ ո՛չ ստեաց նմա. 'ի պտղոյ որովայ-
նէ քումմէ նստուցից յաթոռ քո։
11 Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս
իմ. եւ զվկայութիս իմ, զոր ուսու-
ցից նոցա։
12 Որդիք նց̃ նստցին յաւիտեանս յա-
ւիտենից յաթոռ քո։
13 Հաճեցաւ տր̃ ընդ սիոնի. եւ ընտ-
րեաց բնակել 'ի նմա. ասէ՝ այս է

Հանգիստ իմ յաւիտեանս յաւիտե-
նից. 'ի սմա բնակեցայց՝ զի հաճե-
ցայ ընդ սա։
Զորս սորա օրհնելով օրհնեցից. 14
և զաղքատս սորա լցուցից հացիւ։
Զքահանայս սորա զգեցուցից զփրկու- 15
թիւն. և սուրբք սորա ցնծալով
ցնծասցեն։
Անդ ծագեցից զեղջիւր 'ի դաւիթ. 16
պատրաստեցի զճրագ օծելոյ
իմոյ։
Թշնամեաց նորա զգեցուցից զա- 17
մօթ. այլ 'ի վերայ նորա ծաղկեսցի
սրբութիւն իմ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԼԲ։

### Երգ աստ՛ճ։

Զի՛ բարի, կամ զի՛ վայելուչ, զի 1
բնակեն եղբարք 'ի միասին։
Որպէս իւղ զի իջանէ 'ի գլուխ՝ և 'ի 2
մօրուսն ահարոնի. 'ի մօրուացն
իջանէ 'ի գրապանս զգեստու նորա։
Որպէս ցօղ՝ զի ցօղէ 'ի հերմոնէ 'ի 3
վերայ լերին սիոնի։
Զի անդ պատուիրեաց զօրհնութիւն, 4
և զկեանսն յաւիտենից։

# ՍԱՂՄՈՍ. ՃԼԳ.

Երգ ուղ՟ոց:

1 Աստ օրհնեցէք ա՟մ ծառայք տ՟ն
զտ՟ր. որ կայք ՚ի տուն տ՟ն, և
՚ի գաւիթս ա՟յ մերոյ:
2 ՚Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր
՚ի սրբութի՟. և օրհնեցէք զտ՟ր:
3 Օրհնեսցէ զքեզ տ՟ր ՚ի սիոնէ. որ
արար զերկինս և զերկիր:

# ՍԱՂՄՈՍ. ՃԼԴ:

Ալէլուիա:

1 Օրհնեցէք զանուն տ՟ն. օրհնե-
ցէք ծառայք տ՟ն զտ՟ր. որ կայք
՚ի տուն տ՟ն, ՚ի գաւիթս ա՟յ մերոյ:
2 Օրհնեցէք զտ՟ր՝ զի բարի է. սաղմոս
սացէք անուան ն՟ր՝ զի քաղցր է:
3 Զյակովբ ընտրեաց իւր տ՟ր, և զիս-
րայէլ ժառանգութիւն իւր:
4 Ես ծանեայ՝ զի մեծ է տ՟ր. և տ՟ր
մեծ է քան զա՟մ կուռս:
5 Զամենայն զոր ինչ կամեցաւ՝ և
արար տ՟ր. յերկինս և յերկրի՝ ՚ի
ծով և յա՟մ խորս:

Հա

Հանէ զամպս ՚ի ծագաց երկրէ . 6
զփայլատակունս իւր յանձրևս ա-
րար . և հանէ զհողմ ՚ի շտեմարա-
նաց իւրոց ։
Եհար զա͞մ անդրանիկս եգիպտաց- 7
ւոց , ՚ի մարդոյ մինչև յանասուն ։
Առաքեաց զնշանս և զարուեստս 8
իւր ՚ի մէջ քո եգիպտոս , ՚ի փարա-
ւովն՝ և յամենայն զօրս իւր ։
Եհար զազգս բազումս . և սպան 9
զթագաւորս հզօրս ։
Զսեհովն թագաւոր ամովրհացւոց,10
զովգ թագաւոր բասանու , և զա͞մ
թագաւորութի͞ս քանանացւոց ։
Ետ զերկիր ն͞ց ՚ի ժառանգութ͞ն .11
ժառանգութ͞ն իսրայէլի ժողովր-
դեան իւրոյ ։
Տ͞ր անուն քո յաւիտեան . տ͞ր՝ յիշա- 12
տակ քո ազգէ մինչև յազգ ։
Դատի տ͞ր զժողովուրդ իւր . և ՚ի 13
ծառայս իւր մխիթարի ։
Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ 14
են , ձեռագործք են որդւոց մարդ-
կան ։
Բերան գոյ՝ և ոչ խօսին . աչք են՝ 15
և ոչ տեսանեն ։
Ականջք են՝ և ոչ լսեն . և ոչ գոյ 16
շունչ

շունչ ՚ի բերանս նոցա :
17 Նման նոցա եղիցին որք արարին
զնս · ամենեքեան որք յուսացեալ
են ՚ի նս :
18 Տուն իսրայէլի օրհնեցէք զտէր ·
տուն ահարոնի օրհնեցէք զտր :
19 Տուն ղեւեայ օրհնեցէք զտր · երկիւ-
ղածք տն օրհնեցէք զտր :
20 Օրհնեալ տր ՚ի սիոնէ · որ բնա-
կեալն է յերուսաղէմ :

## ՍԱՂՄՈՍ · ՃԼԵ :

Ալէլուիա :

1 Խոստովան եղերուք տն · զի
բարի է · զի յաւիտեան է
ողորմութիւն նր :
2 Խոստովան եղերուք այն աստու-
ծոց · զի յաւիտեան է ողորմութի
նորա :
3 Խոստովան եղերուք տն տերանց ·
զի յաւիտեան է ողորմութի նր :
4 Արար զսքանչելիս մեծամեծս միայն
զի յաւիտեան է ողոր :
5 Զերկինս արար իմաստութբ իւրով ·
զի յաւիտեան է ողոր :
6 Հաստատեաց զերկիր ՚ի վր ջուրց ·
զի

զի յաւիտեան է ողոր •
Արար զլուսաւորս մեծամեծս մի֊ 7
այն • զի յաւիտեան է ողոր ։
Զարեգակն արար իշխանական ա֊ 8
ուընջեան • զի յաւիտեան է ողոր ։
Զլուսին և զաստեղս իշխանական 9
գիշերոյ • զի յաւիտեան է ողոր ։
Եհար զերկիրն եգիպտացւոց անդ֊ 10
րանկօք իւրովք հանդերձ • զի յաւ ։
Եւ եհան զիսրայէլ ՚ի միջոյ նր • զի 11
յաւիտեան է ողոր ։
՚Ի ձեռն բարձր՝ և ՚ի բազուկ հզօր • 12
զի յաւիտեան է ողոր ։
Եհերձ զծովն մեծ, և բաժանեաց 13
յերկուս մասունս • զի յաւիտ ։
Եւ անցոյց զիսրայէլ ընդ մէջ նր • 14
զի յաւիտեան է ողոր ։
Ընկղմեաց զփարաւոն և զզօրս իւր 15
՚ի ծով կարմիր • զի յաւիտ ։
Եւ եհան զժողովուրդ իւր յանա֊ 16
պատ • զի յաւիտեան է ողոր ։
Եհար զազգս մեծամեծս միայն • զի 17
յաւիտեան է ողոր ։
Եւ սպան զթագաւորս հզօրս • զի 18
յաւիտեան է ողոր ։
Զսէհոն թագաւոր ամովրհացւոց • 19
զի յաւիտեան է ողորմութին նր ։

Զովգ

20 Զովգ թագաւոր բասանու. զի յա-
ւիտեան է ողորմ:
21 Եւ ետ զերկիր նց̃ 'ի ժառանգութի̃ւ.
զի յաւիտեան է ողորմ:
22 Ժառանգութի̃ւ իսրայէլի ծառայի
իւրոյ. զի յաւիտեան է ողորմ:
23 Յիշեաց զմեզ Տր̃ 'ի խոնարհութե̃
մերում. զի յաւիտեան է ողորմ:
24 Եւ փրկեաց զմեզ 'ի ձեռաց թշնա-
մեաց մերոց. զի յաւիտեան է ողորմ:
25 Որ տայ կերակուր ամ̃ կենդանեաց.
զի յաւիտեան է ողորմ:
26 Խոստովան եղերուք Այ̃ երկնաւո-
րի. զի յաւիտեան է ողորմութի̃
նորա:

## ՍԱՂՄՈՍ. ՃԼԶ:

'Ի Դաւիթ. 'Ի ձեռն Երեմիայի. աննշան
յեբրայեցւոցն:

1 Առ գետս բաբելացւոց, անդ նըս-
տէաք և լայաք. որ̃ յիշեցաք
մեք անդ զսիոն:
2 'Ի մէջ ուռեացն կախեցաք զկտա-
կարանս մեր:
3 Անդ հարցանէին գերիչք մեր ըղ-
քանս օրհնութե̃. գերեվարք մեր
սաղ̃.

ստիպէին զմեզ՝ և ասէին ։
Օրհնեցէք մեզ յօրհնութէ սիոնի . 4
իսկ զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւն
Տն՝ յերկիր օտար ։
Թէ մոռասցայց զքեզ Երուսաղէմ. 5
մոռասցի զիս աջ իմ ։
Կցեսցի լեզու իմ ՚ի քիմս իմ, թէ ո՛չ 6
յիշեցից զքեզ. թէ ո՛չ նախ նախադե_
ցից զքեզ Երուսաղէմ, սկիզբն ու_
րախութեան իմոյ ։
Յիշեա՛ Տէր զորդիսն Եդովմայ՝ յա_ 7
ւուրն Երուսաղէմի ։
Որք ասէին՝ քակեցէք քակեցէք, 8
մինչև ՚ի հիմն հասուցէք ։
Դուստր Բաբելացւոց թշուառա_ 9
կան . երանի՛ որ հատոյց զհատու_
ցումն քո, զոր դու մեզ հատուցեր ։
Երանի՛ որ կալաւ զմանկունս քո, 10
և եհար զքարի ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԼԷ.

Սաղմոս ՚ի Դաւիթ ։

Խոստովան եղէց քեզ Տր՝ բոլորով 1
սրտիւ իմով . առաջի հրեշտա_
կաց սաղմոս ասացից քեզ ։
Զի լուար զբանս բերանոյ իմոյ. եր_ 2
կիր

կիր պագից 'ի տաճար սրբ քո. և խոս_
տովան եղէց անուան քում վասն ո_
ղորմութե և ճշմարտութե քոյ :
3 Մեծ արարեր յամի զանուն սբ քո.
յորում աւուր կարդամ առ քեզ,
վաղվաղակի լուր ինձ. և բազում ա_
րասցես զօրութիս յանձն իմ:
4 Խոստովան եղիցին առ քեզ ամ
թագաւորք երկրի, զի լուան ըզ_
բանս բերանոյ քո և օրհնեսցեն
զճանապարհս քո :
5 Մեծ են փառք տն, բարձր է տր.
զխոնարհս տեսանէ, և զբարձունս
'ի հեռաստանէ ճանաչէ :
6 Թէ գնացից ես 'ի մէջ նեղութեց,
կեցուսցես զիս 'ի բարկուէ թշնամ_
ւոյն :
7 Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեսց զիս
աջ քո. և տր հատուսցէ ընդ իմ:
8 Տր ողորմութի քո յաւիտեան. ըզ_
գործս ձեռաց քոց մի անտես առ_
ներ :

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ· ՃԼԸ։

'Ի կատարած. սաղմոս 'ի
Դաւթի։

Տր փորձեցեր զիս՝ և ծա- 1
նեար զիս. դու ծանեար
զնստել իմ, և զյառնել
իմ։

'Ի միտ առեր զխորհուրդս իմ 'ի հե- 2
ռաստանէ. զշաւիղս իմ և զվիճակս
իմ դու քններեր, և զամ ճանապար-
հս իմ յառաջագոյն տեսեր. զի ոչ
գոյ նենգութի 'ի լեզուի իմում։
Ահա դու տր՝ ծանեար զյետինն իմ, 3
և զառաջինն իմ. դու ստեղծեր զիս.
և եդիր զձեռն քո 'ի վերայ իմ։
Սքանչելի եղև գիտութի քո յինէն. 4
զօրացաւ, և ոչ հանդարտեմ սմա։
Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ. կամ 5
յերեսաց քոց ես յո՞ փախեայց։
Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես. 6
և թէ իջանեմ 'ի դժոխս, և անդր
մօտ ես։
Թէ առից զթևս իմ ը առաւօտս, 7
և բնակեցայց յեզերս ծովու։
Սակայն և անդ ձեռն քո առաջնոր- 8
դես.

գնեսցէ ինձ, և աջ քո ընկալցի զիս ։
9 Ասացի՝ խաւար ուրեմն արդեօք
ծածկեաց զիս, կամ գիշեր փոխա֊
նակ լուսոյ փափկութե̃ իմոյ ։
10 Խաւարն 'ի քէն ոչ խաւարեսցի․
և գիշերն ոպ̃ տիւ լուսաւոր եղիցի․
և խաւար նր̃ ոպ̃ զլոյս նորա ։
11 Դու ստացար զերիկամունս իմ․ և
ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ ։
12 Խոստովան եղէց քեզ տր̃, զի ահեղ
և սքանչելի ես․ սքանչելի են գործք
քո, և անձն իմ սիրեաց յոյժ ։
13 Ո՛չ թաքեաւ ոսկր իմ 'ի քէն՝ զոր
արարեր 'ի ծածուկ․ և կար զօրու֊
թե̃ իմոյ ընդ ստորինս երկրի ։
14 Զանգործս իմ տեսին աչք քո․ և
'ի գիրս քո ամենեքեան գրեցան ։
15 'ի տուէ մոլորեցան․ և ոչ ո՛ք էր
որ առաջնորդէր նոցա ։
16 Ինձ յոյժ մեծարոյ եղեն՝ բարեկամք
քո ա̃ծ․ և յոյժ զօրացան իշխանք նց̃ ։
17 Թուեցից զն̃ո՝ և քան զաւազ բազ֊
մասցին, զարթեայ՝ և արդ ընդ
քեզ եմ ։
18 Թէ սպանանես զմեղաւորս՝ ա̃ծ․
ա՛րք արեան 'ի բա՛ց եղերուք յինէն ։
19 'ի հակառակութե̃ և 'ի նախանձ,
առ֊

առցեն 'ի նանիր զքաղաքս քո :
Զատելիս քո տ̃ր՝ ատեցի , և 'ի վ̃ր 20
թշնամեաց քոց մաշեցայ :
Կատարելութիւն կատարեալ ատեցի 21
զնոսա , և եղեն ինձ թշնամիք :
Փորձեա՛ զիս ա̃ծ՝ և ծանի՛ր զսիրտ 22
իմ , քննեա՛ զիս՝ և ծանի՛ր զշաւիղս
իմ · և տես թէ իցեն անօրէնութիք 'ի
ճանապարհս իմ · և առաջնորդեա՛
ինձ 'ի ճանապարհս քո յաւիտենից :

## ՍԱՂՄՈՍ · ՃԼԹ ·

'Ի կատարած · սաղմոս 'ի դաւիթ : 1

Ապրեցո՛ զիս տ̃ր 'ի մարդոյ չարէ · 2
Յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս :
Խորհեցան զանօրէնութի̃ 'ի սիրտս 3
իւրեանց · զօր ամենայն պատրաս-
տեցան 'ի պատերազմ :
Սրեցին զլեզուս իւրեանց որպէս 4
զօձի · և թոյնք իժից 'ի ներքոյ շըր-
թանց նոցա :
Պահեա՛ զիս տ̃ր 'ի ձեռաց մեղաւո- 5
րի , և 'ի մարդոյ չարէ փրկեա՛ զիս :
Խորհեցան խափանել զգնացս իմ · 6
Թաքուցին ամբարտաւանք որոգայթ
ինձ :

7 Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց.
շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ գայ-
թագղութի :
8 Ասացի՝ տր̄ ած իմ ես դու. ունկն
դիր տր̄՝ ձայնի աղօթից իմոց :
9 Տր̄ տր̄ զօրութիւն փրկութեան իմոյ.
հովանի գլխոյ իմոյ յաւուր պատե-
րազմի :
10 Մի՛ մատներ զիս տր̄ 'ի ցանկութե
մեղաւորաց , զի խորհեցան վս̄ իմ.
մի՛ ընդ վայր հարկաներ զիս :
11 Զի մի՛ երբէք բարձրասցին , և խոր-
հուրդք նց̄ մի՛ կատարեսցին. վախ-
ճան կատարածի նց̄՝ վաստակ շրր-
թանց իւրեանց ծածկեսցէ զնոսա :
12 Արկցես 'ի վերայ նց̄ կայծակունս
հրոյ , և կործանեսցես զնս̄. 'ի տա-
ռապանաց մի՛ կարասցեն կեալ :
13 Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի
'ի վր̄ երկրի. զայր մեղաւոր՝ չարիք
իւր որսասցեն 'ի կորուստ :
14 Ծանեայ զի առնես տր̄՝ դատաստան
աղքատի , և իրաւունս տնանկի :
15 Արդարք գոհասցին զանուանէ
քումմէ. և բնակեսցեն ուղիղք ա-
ռաջի երեսաց քոց :

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՃԼԹ։

Սաղմոս 'ի դաւիթ։

Տէր կարդացի առ քեզ՝ և լուր 1
ինձ, նայեաց 'ի ձայն աղօթից
իմոց՝ 'ի կարդալ իմում առ քեզ։
Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ 2
առաջի քո Տէր. համբարձումն ձե-
ռաց իմոց՝ պատարագ երեկոյի։
Դի՛ր Տէր՝ պահապան բերանոյ իմոյ. 3
և դուռն ամուր շրթանց իմոց. զի մի՛
խոտորեսցի սիրտ իմ բանից չարութեան։
Պատճառել զպատճառս մեղաց ընդ 4
մարդս, որ գործեն զանօրէնութիւն.
և ոչ եղէց կցորդ ընտրելեաց նոցա։
Խրատեսցէ զիս արդարն ողորմու- 5
թեամբ՝ և յանդիման արասցէ. իւղ մե-
ղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, և ա-
ղօթք իմ 'ի կամս նոցա։
Արգելան մերձ առ վիմին դատա- 6
ւորք նոցա. լուիցեն բանից իմոց՝
և քաղցրասցին։
Որպէս թանձրութիւն հողոյ, զի սփռեալ 7
է 'ի վերայ երկրի. ցրուեսցին ոսկերք
նոցա մերձ 'ի դժոխս։
Առ քեզ Տէր Տէր՝ են աչք իմ. 'ի քեզ 8

յուսացայ, մի՛ հաներ զհոգի իմ:
9 Պահեա՛ զիս յորոգայթէ՝ որ թագու_
ցաւ ինձ, ՚ի գայթագղութէ գործո_
ղին զանօրէնութիւն:
10 Անկցին ՚ի ցանցս իւր մեղաւորք,
միայն եմ ես՝ մինչև անցից:

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԱ:

1 Իմաստութիւն ՚ի Դաւթի. Աղօթք, ՚ի ժա_
մանակի զի էր նա յայրի անդ:

2 Ձայնիւ իմով ես առ տր կարդա_
ցի. ձայնիւ իմով զտր աղաչեցի:
3 Սփռեցից առաջի տն զաղօթս իմ.
և զնեղութիւնս իմ առաջի նորա
պատմեցից:
4 ՚Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու
տր ծանեար զշաւիղս իմ. ՚ի ճանա_
պարհայր և գնայի, թագուցաւ ինձ
որոգայթ:
5 Հայէի յաջմէ՝ տեսանէի, և ոչ ոք
ճանաչէր զիս. կորեաւ յինէն փա_
խուստ իմ, և ո՛չ գտաւ խնդրող ան_
ձին իմոյ:
6 Աղաղակեցի առ քեզ տր՝ և ասա_
ցի, դու ես յոյս և բաժին իմ յերկ_
րին կենդանեաց:

Նայեա՛ց տ̃ր յաղօթս իմ, զի ես խո_ 7
նարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս 'ի
հալածչաց իմոց, զի հզօր եղեն
քան զիս ։
Տ̃ր հա՛ն 'ի բանտէ զանձն իմ. գո_ 8
հանամ զանուանէ քումմէ ։
Ինձ սպասեն արդարք՝ մինչև հա_ 9
տուսցես ինձ ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԲ ։

Սաղմոս 'ի դաւիթ, 'ի ժամանակին յոր հա_ 1
լածէր զնա աբիսողոմ որդի նորա ։

Տէր լո՛ւր աղօթից իմոց. 2
ունկն դիր խնդրուածոց
իմոց ճշմարտութ̃բ քով ։
Լո՛ւր ինձ արդարութ̃բ քով, 3
և մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ
ծառայի քում. զի ոչ արդարանայ
առաջի քո ա̃մ կենդանի ։
Հալածեաց թշնամին զանձն իմ. խո_ 4
նարհ արար յերկիր զկեանս իմ. նըս_
տոյց զիս 'ի խաւարի ո̃պ մեռեալ
յաւիտենից ։
Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ 5
իմ խռովեցաւ յիս ։
Յիշեցի զաւուրսն զառաջինս. խոր_ 6
հե

հեցայ յա̄մ գործս քո . յարարածս
ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի
առ քեզ զձեռս իմ:

7 Անձն իմ ո̄պ երկիր ծարաւի է առ
քեզ . վաղվաղակի լո́ւր ինձ տ̄ր , զի
նուաղեաց յինէն հոգի իմ:

8 Մի́ դարձուցաներ զերեսս քո յի-
նէն . նմանիցեմ այնոցիկ , որ իջա-
նեն 'ի գուբ :

9 Լսելի́ արա ինձ առաւօտու զողոր-
մութի́ս քո , զի ես 'ի քեզ տ̄ր յու-
սացայ :

10 Ցո́յց ինձ ճանապարհ՝ յոր գնա-
ցից . զի առ քեզ տ̄ր համբարձի
զանձն իմ:

11 Փրկեա́ զիս 'ի թշնամեաց իմոց տ̄ր .
զի զքեզ ապաւէն ինձ արարի:

12 Ուսո́ ինձ առնել զկամս քո . զի դու
ես ա̄ծ իմ:

13 Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ
յերկիր ուղիղ:

14 Վասն անուա́ն քո տ̄ր՝ կեցուսցես
զիս , արդարութ̄ե քով հանցես 'ի
նեղութ̄է զանձն իմ:

15 Ողորմութ̄բ քով սատակեսցես զթշնա-
միս իմ . կորուսցես զա̄մ նեղիչս ան-
ձին իմոյ . զի ես ծառայ քո եմ:

# ՍԱՂՄՈՍ. ՃԽԳ։

'Ի Դաւիթ. առ Գողիաթ :

Օրհնեալ Տ̃ր Ա̃ծ իմ. որ ուսոյց 1
զձեռս իմ 'ի պատերազմ, և
զմատունս իմ 'ի ճակատամարտ :
Ողորմութիւն իմ և ապաւէն իմ, օգ- 2
նական իմ և փրկիչ իմ. ապաւէն իմ,
և ես յուսամ 'ի նա :
Որ հնազանդ առնէ զժողովուրդս ը̃ 3
ինև. Տ̃ր՝ ո՞վ է մարդ՝ զի յայտնեցար
դու նմա. կամ որդի մարդոյ՝ թէ
համարիս ինչ զնա :
Մարդ նանրութեան նմանեցաւ. և 4
աւուրք նորա ոպ̃ հովանի անցին :
Տ̃ր խոնարհեցո՛ զերկինս՝ և էջ. մեր- 5
ձեա՛ 'ի լերինս՝ և ծխեսցին :
Փայլատակեա՛ զփայլատակունս քո, 6
և խռովեա՛ զն̃ա. առաքեա՛ զնետս քո՝
և ցրուեա՛ զնոսա :
Առաքեա՛ զձեռն քո 'ի բարձանց, և 7
փրկեա՛ զիս 'ի ջրոց բազմաց, և 'ի
ձեռաց որդւոց օտարաց :
Որոց բերանք իւրեանց խօսեցան 8
զնանրութի̃. և աջ ն̃ց աջ է մեղաց :
Ա̃ծ յօրհնութի̃ նոր օրհնեցից զքեզ. 9

տաս

տասնաղեաւ սաղմոսարանաւ սաղ֊
մոս ասացից քեզ ։
10 Որ տայցէ զփրկութիւն թագաւորաց
մերոց ․ որ փրկելոյն իցէ զդաւիթ
ծառայ իւր ՚ի սրոյ չարէ ։
11 փրկեա՛ զիս՝ և ապրեցո՛ զիս ՚ի ձե֊
ռաց որդւոց օտարաց ։
12 Որոց բերանք իւրեանց խօսեցան
զնանրութի ․ և աջ նց̃ աջ է մեղաց ։
13 Որոց ուստերք իւրեանց ոպ̃ նորա֊
տունկ հաստատուն են ՚ի մանկութ̃է
իւրեանց ․ դստերք նց̃ զարդարեալ՝ և
պաճուճեալ ՚ի նմանութ̃ի տաճարի ։
14 Շտեմարանք նց̃ լի՛ են՝ և բղխեն
՚ի միմեանս ․ խաշինք նց̃ բազմա֊
ծինք են՝ և բազմանան ՚ի գնացս
իւրեանց ․ և անդեայք նոցա պա֊
րարտք են ։
15 Ո՛չ գոյ խրամատութ̃ի ցանկոյ նց̃ ․
և ո՛չ աղաղակ ՚ի հրապարակս նց̃ ։
16 Արդ երանեցին ժողովրդեան՝ ո֊
րոց այս այսպէս է ․ նա երանի ժո֊
ղովրդեան, որոյ տ̃ր ա̃ծ է նց̃ ։

# ՍԱՂՄՈՍ. ՃԽԴ։

## Օրհնութեանց Սաղմոս ՚ի Դաւիթ։

Բարձր առնեմ զքեզ ած իմ, եւ 1
Թագաւոր իմ. եւ օրհնեմ զա-
նուն քո յաւիտեան՝ եւ յաւիտեանս
յաւիտենից։
Զօրհանապազ օրհնեցից զքեզ. եւ 2
գովեցից զանունն քո, յաւիտեան եւ
յաւիտեանս յաւիտենից։
Մեծ է տր՝ եւ օրհնեալ է յոյժ. եւ 3
մեծութեան նորա ոչ գոյ չափ։
Ազգք՝ եւ ազգք՝ գովեսցեն զգործս 4
քո. եւ զզօրութիւնս քո պատմեսցեն։
Զմեծ վայելչութիւն փառաց սրբութեան 5
քո խօսեսցին. եւ զսքանչելիս քո
պատմեսցեն։
Զզօրութիւն ահի քո ասասցեն. եւ 6
զմեծութիւն քո պատմեսցեն։
Զյիշատակ բազում քաղցրութեան 7
քո բղխեսցեն. եւ արդարութեամբ
քո ցնծասցեն։
Գթած ողորմած է տր, երկայնա- 8
միտ եւ բազումողորմ։
Քաղցր է տր առ ամենեսեան, եւ 9
գթութիւն նորա ՚ի վերայ ամենայն

արարածոց իւրոց ։
10 Խոստովան եղիցին առ քեզ տ՟ր՝ ա՟մ
գործք քո ․ և սր՟բ քո օրհնեսցեն
զքեզ ։
11 Զփառս արքայութեան քո ասասցեն ,
և զզօրութիւն քո պատմեսցեն ։
12 Ծանուցանել որդւոց մարդկան զզօրու-
թիւն քո ․ և զփառս մեծ վայելչութ՟ե
արքայութեան քո ։
13 Արքայութիւն քո արքայութիւն ա՟մ
յաւիտենից ․ և տէրութիւն քո ազգէ
մինչև յազգ ։
14 Հաւատարիմ է տէր յա՟մ ՚ի բանս
իւր, և արդար է յա՟մ ՚ի գործս իւր ։
15 Հաստատէ տ՟ր զա՟մ գայթագղեալս ․
և կանգնէ զա՟մ գլորեալս ։
16 Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան , և
դու տաս կերակուր նց՟ ՚ի ժամու ։
17 Տաս դու նց՟ և կերակրես ․ բանաս
զձեռն քո , և լցուցանես զամենեա-
եան քաղցրութ՟բ կամօք քով ։
18 Արդար է տ՟ր յա՟մ ճանապարհս
իւր ․ և ս՟ր է յա՟մ ՚ի գործս իւր ։
19 Մերձ է տ՟ր առ ամենեսեան , որ
կարդան առ նա ․ առ ամենեսեան՝
որ կարդան առ նա ճշմարտութ՟բ ։
20 Զկամս երկիւղածաց իւրոց առնէ
տէր ․

տէր. աղօթից նոցա լսէ՝ և կեցու-
ցանէ զն՟ս ։
Պահէ տ՟ր զամենեսեան որք սիրեն 21
զնա. և զամ՟ մեղաւորս սատակէ տ՟ր ։
Զօրհնութիւն տ՟ն խօսեսցի բերան 22
իմ. օրհնեսցէ ամ՟ կենդանի զանուն
ս՟բ նորա յաւիտեան, և յաւիտեանս
յաւիտենից ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԵ ։

Ալէլուիա. Անգէայ և Զաքարիայ ։

Օրհնեա՛ անձն իմ զտ՟ր. օրհ- 1
նեցից զտ՟ր ՚ի կեանս իմ.
սաղմոս ասացից ա՟յ իմոյ՝ մինչև եմ
ես ։
Մի՛ յուսայք յիշխանս՝ յորդիս մարդ- 2
կան. զի ոչ գոյ փրկութի՛ ՚ի նոսա ։
Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձցին 3
անդրէն ՚ի հող. և յայնմ աւուր կո-
րիցեն ամ՟ խորհուրդք նոցա ։
Երանի՛ ազգի՝ որում տ՟ր ա՟ծ յակո- 4
բայ օգնական է նմա. և յոյս ն՟ր ՚ի
տէր ա՟ծ է ։
Որ արար զերկինս և զերկիր, զծով 5
և զամ՟ որ է ՚ի նոսա ։
Որ պահէ զճշմարտութի՛ յաւիտեան. 6
և

և առնէ իրաւունս զրկելոց ։
7 Տայ հաց քաղցելոց . և արձակէ
զկապեալս տէր ։
8 Տր բանայ զաչս կուրաց . և կանգնէ
զգլորեալս տէր ։
9 Տր սիրէ զարդարս . տէր պահէ
զպանդուխտս . զորբս՝ և զայրիս
ընդունի տր . և զճանապարհս ամ-
բարշտաց կորուսանէ ։
10 Թագաւորեսցէ տր յաւիտեան, ած
քո սիոն՝ ազգէ մինչև յազգ ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԶ ։

Ալէլուիա . անգեայ և զաքարիայ ։

1 Օրհնեցէք զտր զի բարի են սաղ-
մոսք . այ մերում քաղցր եղի-
ցի օրհնութիւն ։
2 Շինէ զերուսաղէմ տէր . և զցրը-
ուեալսն իսրայէլի ժողովէ ։
3 Բժշկէ զբեկեալ սիրտս , և պատէ
զամենայն վէրս նոցա ։
4 Ոթուէ զբազմութիւն աստեղաց . և զա-
մենեսեան զնոսա յանուանէ կոչէ ։
5 Մեծ է տր , և մեծ է զօրութիւն նր .
իմաստութե նորա ոչ գոյ թիւ ։
6 Ընդունի զհեզս տր . և խոնարհ առ-
նէ

նէ զամբարտաւանս մինչեւ յերկիր :
Օրհնեցէք զՏր խոստովանութբ . 7
սաղմոս ասացէք Նմա օրհնութբ :
Որ զգեցոյց զերկինս ամպովք . պատ֊ 8
րաստ արար զանձրեւ իւր յերկիր :
Բուսոյց զխոտ 'ի լերինս , զդալար՝ 9
'ի ծառայութն մարդկան :
Որ տայ անասնոց կերակուր . ձագուց 10
ագռաւուց՝ որ կարդան առ Նա :
Ոչ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կա֊ 11
մեցաւ Տր . եւ ոչ ընդ իրանս առն
սկայի հաճեցաւ :
Այլ հաճեցաւ Տր ը երկիւղածս 12
իւր . եւ ընդ այնոսիկ՝ որք յուսան
յողորմութն նորա :

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԷ:

Ալէլուիա . Անգեայ եւ Զաքարեայ :

Գովեա Երուսաղէմ զՏր : 1
Եւ օրհնեա զԱծ քո՝ Սիովն : 2
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց , եւ 3
օրհնեաց զորդիս քո 'ի քեզ :
Որ եդ զսահմանս քո 'ի խաղաղութն . 4
պարարտութբ ցորենոյ լցոյց զքեզ :
Առաքէ զբան իւր յերկիր . վաղվաղ 5
ընթանան պատգամք նորա :

Դնէ

6 Դնէ զձիւն ոպ՟ զասր, եւ զմէգ ոպ՟
մոխր ցանեաց։
7 Արկանէ զսառն ոպ՟ պատառս. ա-
ռաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։
8 Առաքէ զբան իւր՝ եւ հալէ զնս՟·
շնչեսցեն հողմք՝ եւ գնասցեն ջուրք։
9 Պատմէ զբան իւր յակոբայ, զար-
դարութիւն եւ զիրաւունս իսրայէլի։
10 Ո՛չ այսպէս արար ամ՟ ազգաց որ·
եւ զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց
նոցա։

## Աղօթք ամբակումայ մարգարէի։

1 Տ զլուր քո լուայ՝ եւ եր-
կեայ· տր՟՝ հայեցայ ՚ի
գործս քո՝ եւ զարհու-
րեցայ։
2 ՚ի մէջ երկուց կենդա-
նեացն ծանիցիս դու, ՚ի մերձենալ
ամացն յայտնեսցիս, ՚ի հասանել
ժամանակին երեւեսցիս։
3 ՚ի խռովել անձին իմոյ՝ ՚ի ժամանա-
կի բարկութե՟, զողորմութիւն յիշես-
ցես։
4 Ած՟ ՚ի հարաւոյ եկեսցէ, եւ սրբն՟ ՚ի
փա-

փառան լռանէ ։
Յայտնեսցեն երկինք զվայելչութի 5
փառաց նորա ․ և օրհնութեամբ նր
լցան տիեզերք ։
Ճառագայթք որպէս զլոյս հատան 6
'ի նմանէ ․ և եղջիւրք 'ի ձեռին նր
դտան ․ և անդ հաստատեցաւ զօ-
րութիւն փառաց նորա ։
Յերեսաց նորա ելցեն հարուածք ․ 7
և զհետ շաւղաց նորա երթիցեն մե-
ծամեծք 'ի թռչնոց ։
Եկաց՝ և չափեաց զերկիր ․ հայեցաւ 8
և գիտեաց զհեթանոսս ։
Լերինք հալեսցին, և անտառք վատ- 9
նեսցին ․ յաւիտենից Ճանապարհք՝
որ 'ի սկզբանէն էին, կուրասցին ․
և 'ի նմանէ դողասցի ամ երկիր ։
Տեսի զբանակս քուշացւոց ․ խռովե- 10
ցին բնակիչք վրանացն մադիամու ։
Մի՞ թէ 'ի վր գետոց բարկասցիս 11
դու տր ․ կամ սրտմտութի քո 'ի վր
գետոց ․ կամ բարկութի քո 'ի վե-
րայ ծովու ։
Ելեր դու 'ի կառս քո ․ հեծելութի 12
քո փրկութիւն եղև յելանելդ քո ։
Զարթեաւ աղեղն քո ․ զնետս կա- 13
պարճից քոց արբուցեր, զգետս

ցրուեցեր • զերկիր դողացուցեր՝ 'ի
սաստկութենէ անձրևի • որ անցա-
նեն ընդ սա ։
14 Անդունդք աղաղակեցին մեծա-
ձայնս • լոյս փայլումն արեգական
արգելաւ, և ծագումն լուսնին
դադարեաց ։
15 Ով 'ի նշոյլս սլաքացքոց գնացես,
ով 'ի լոյս փայլատակման սրոյ քո ։
16 Բարկութ̄ զարթիցես 'ի վ̄ր երկրի •
և դողութ̄ կասեցես զհեթանոսս ։
17 Երևեցար 'ի փրկութիւն ժողովր-
դեան քո, 'ի փրկել զընտրեալս քո ։
18 Նետաձիգ եղեր 'ի գլուխս մարդ-
կան ամբարտաւանից • մինչև յան-
դունդս ծովու ընկղմեցան ։
19 Խնդրեցեր զվրէժ զօրութ̄ քով՝ 'ի
զօրագլխացն մեղաւորաց, որք յու-
սացեալ էին յանդգնութիս իւրեանց •
զի կերան զաղքատն 'ի գաղտնիս ։
20 Առաքեցեր 'ի վ̄ր ծովու զերիվարս
քո, խռովեցան յաղթ ջուրք անդն-
դոց ։
21 Կացի ես՝ և դեղան աղիք իմ 'ի
ձայնէ բերանոյ իմոյ • եմուտ դո-
ղումն յոսկերս իմ, և ես յանձն իմ
խռովեցայ ։

Զայս պահեսցես յաւուր նեղութե. 22
ածել 'ի վերայ ազգի, որ մարտն.
չին ընդ ժողովրդեան քում:
Թզենի ոչ տացէ զպտուղ իւր, և 23
յայգւոյ բեր մի՛ գտցի. ձիթենիք
անասցին, և երկիր մի՛ բուսուսցէ
զդալարի:
Պակասեսցին հօտք 'ի ճարակաց. 24
և եզինք մի՛ գտցին առ մսուրս:
Ես 'ի տր յուսացայ. ցնծացայց՝ և 25
ուրախ եղէց յած փրկիչ իմ:
Տր տր ետ ինձ զօրութի, և կացոյց 26
զոտս իմ 'ի հաստատութե. 'ի վր
պարանոցի թշնամւոյն կացոյց զիս
և հանգոյց զիս երագ երագ:

### Աղօթք:

Լուր մեզ տր լուր մեզ, ածային ո-
ղորմութբ և գթութբ քո խնայեա
յարարածս քո:

Զերրորդն և չորրորդն 'ի վերջն Ողորմեայ
կանոնին գտցես 'ի 163. երեսն:

# ՍԱՂՄՈՍ. ՃԽԸ։

Ալէլուիա. անգէայ և զաքարեայ։

1 Օրհնեցէք զՏ՟ր յերկնից. օրհ-
նեցէք զնա ՚ի բարձանց։
2 Օրհնեցէք զնա ամ՟ հրեշ-
տակք նր՟. օրհնեցէք զնա ամ՟ զօրու-
թիւնք նր՟։
3 Օրհնեցէք զնա արեգակն և լուսին.
օրհնեցէք զնա ամ՟ աստեղք և լոյսք։
4 Օրհնեցէք զնա երկինք երկնից.
ջուրք որ ՚ի վերոյ քան զերկինս,
օրհնեցէք զանուն Տն՟։
5 Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝
և հաստատեցան։
6 Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտե-
նից. սահման եդ՝ և ոչ անցանեն։
7 Օրհնեցէք զՏ՟ր յերկրէ՝ վիշապք և
ամ՟ խորք։
8 Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝
հողմ և մրրիկ, որ առնեն զբան նր՟։
9 Լերինք՝ և ամենայն բարձունք՝ ծառք
պտղաբերք՝ և ամ՟ մայրք։
10 Գազանք՝ և ամ՟ անասունք. սողունք

և ամ թռչունք թեւաւորք ։
Թագաւորք երկրի և զօրք իւրեանց․ 11
իշխանք և ամ դատաւորք երկրի ։
Երիտասարդք և կուսանք, ծերք և 12
տղայք՝ օրհնեցէք զանուն տն ։
Բարձրացաւ անուն նր միայն․ խոս_ 13
տովանութի նմա յերկինս և յերկրի ։
Բարձր առնէ տէր զեղջիւր ժողո_ 14
վրդեան իւրոյ․ օրհնութի ամ սրբոց
նմա․ յորդւոցն իսրայէլի ժողո_
վուրդ՝ որ մերձ է առ տէր ։

## ՍԱՂՄՈՍ․ ՃԽԹ ։

Ալէլուիա․ անգէայ և զաքարիայ ։

Օրհնեցէք զտր յօրհնութի նոր․ 1
օրհնութի նմա յեկեղեցիս սրբոց ։
Ուրախասցի իսրայէլ յարարիչ իւր․ 2
որդիք սիոնի ցնծասցեն 'ի թա_
գաւորն իւրեանց ։
Օրհնեսցեն զանուն նր օրհնութբ․ 3
սաղմոսիւք և օրհնութեամբ սաղմոսա
սասցեն նմա ։
Հաճի տր ընդ ժողովուրդ սբ իւր, 4
և բարձր առնէ զհեզս 'ի փրկութե ։
Պարծեսցին սրբքն փառօք՝ և ցնծա_ 5
ցեն 'ի հանգիստս իւրեանց․ և բարձր
արաս_

արասցեն զա̃ծ բերանովք իւրեանց :
6 Սուր երկսայրի եւ 'ի ձեռս նց̃ ,
առնուլ հատուցումն 'ի հեթանոսաց,
յանդիմանութիւն ա̃մ ժողովրդոց :
7 'Ի կապել զթագաւորս նց̃ կապանօք
զզօրավարս նց̃ ձեռնակապօք երկա-
թեօք :
8 Առնել նց̃ դատաստան 'ի գրոց ·
փառք այս են ա̃մ սրբոց նր̃ :

## ՍԱՂՄՈՍ· ՃԾ:

Ալէլուիա · անգէայ և զաքարիայ :

1 Օրհնեցէք զա̃ծ 'ի սրբութեան նր̃ ·
օրհնեցէք զնա 'ի հաստատութեան
'ի զօրութեան նորա :
2 Օրհնեցէք զնա 'ի զօրութեան նր̃ · օրհ-
նեցէք զնա 'ի բազում մեծութեան նր̃ :
3 Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնութեան ·
օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնու-
թեամբ :
4 Օրհնեցէք զնա ցնծութբ̃ , գովեցէք
զնա ուրախութբ̃ :
5 Օրհնեցէք զնա 'ի բանու ջաղցր · գո-
վեցէք զնա 'ի բարբառ ըսելի :
6 Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութեան ·
ա̃մ հոգիք օրհնեցէք զտ̃ր :

Այս սաղմոս ինքնագիր Դաւթի արտա-
քոյ թուոյ: ՚Ի ժամանակին զի եւ նա նա-
հատակ ընդդէմ Գողիաթու, առաջի Սա-
ւուղայ, եւ ա̃մ զօրացն Իսրայէլի:

Փոքր էի ես յեղբարս իմ, եւ 1
կրտսեր ՚ի տան հօր իմոյ.
արածէի զխաշինս հօր իմոյ:
Ձեռք իմ արարին սաղմոսարան. եւ 2
մատունք իմ կազմեցին զործի օրհ-
նութեան:
Իսկ արդ՝ ո՞ պատմեսցէ զայս Տ̃ն ի- 3
մում. ինքնին Տ̃ր Ա̃ծ լուիցէ զիմ:
Նա առաքեաց Տ̃ր զհրեշտակ իւր. 4
եւ համբարձ զիս ՚ի հօտէ խաշանց հօր
իմոյ. եւ օծ զիս յօծութիւն իւղոյ իւրոյ:
Եղբարք իմ մեծամեծք եւ գեղեցիկք. 5
եւ ոչ հաճեցաւ ընդ նոսա Տ̃ր:
Ելի ես ընդ առաջ այլազգւոյն, եւ 6
նզովեցի զկուռս ն̃ր:
Հանի զսուսերն ՚ի նմանէ, եւ հատի 7
զգլուխ նորին. եւ բարձի զնախա-
տինս յորդւոցն Իսրայէլի:

ՕՐՀ.

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

## Երից մանկանց։ Դանիէլի․ Գ։

Օրհնեալ ես տ̃ր ա̃ծ հարցն մերոց․ օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեանս։

Յիրաւունս անցուցեր զայս ամ̃ ը̃ մեզ․ արդար ես դու տ̃ր․ և ամենայն գործք քո ճշմարիտ են։

Ճանապարհք քո ուղիղ են, և ամ̃ դատաստանք քո արդար են։

Դատաստան արդարութե̃ ածեր ՚ի վ̃ր մեր․ ըստ ամ̃ի զոր ինչ ածեր ՚ի վ̃ր մեր, և քաղաքի սրբոյ հարցն մերոց երուսաղէմի։

Արդարութ̃բ և իրաւի ածեր զայս ամ̃ ՚ի վ̃ր մեր՝ վ̃ս մեղաց մերոց։

Անօրինեցաք՝ և յանցեաք ապստամբ լինել ՚ի քէն․ մեղաք յամ̃ի՝ և պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք։

Ոչ պահեցաք և ոչ արարաք՝ ո̃պ պատուիրեցեր դու մեզ, զի զբարիս գըտցուք մեք ՚ի քէն։

Արդ՝ զա՟մ զոր արարեր՝ և զոր ինչ ածեր 'ի վ՟ր մեր, արդար դատաստանաւ արարեր :

Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց. անօրինաց՝ խստաց և ապստամբողաց :

'Ի ձեռս թագաւորի անօրինի և չարի քան զա՟մ երկիր, մատնեցեր զմեզ :

Եւ արդ՝ ո՛չ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր. այլ ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից :

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ՝ վ՟ն անուա՟ն քո. մի՛ ցրեր զուխտ քո. և մի՛ 'ի բացեայ առներ զողորմութիւնս քո 'ի մէնջ :

Վ՟ն աբրահամու սիրելւոյ քո, իսահակայ ծառայի քո, և իսրայէլի սրբոյ քո :

Խոստացար նց՟՝ և ասացեր, բազմացուցից զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմութ՟բ. և ո՟պ զաւազ առ եզր ծովու :

Եւ արդ տ՟ր՝ նուաղեցաք մեք քան զա՟մ ազգս. և եմք տառապեալ յա՟մ երկրի այսօր՝ վասն մեղաց մերոց :

Ո՛չ գոյ 'ի ժամանակի յայսմիկ՝ իշխան մարգարէ և առաջնորդ. ո՛չ ողջակէզ պատարագաց, ո՛չ խունկ օրինաց, և

ո՛չ

ոչ տեղի պատարագս մատուցանելոյ
առաջի քո • և զողորմութիւն գտանել
՚ի քէն ։

Այլ անձամբ խոնարհեալ՝ և հոգւով
տառապանաց, ընդունելի լիցուք մեք
որպ՟ զողջակէզս խոյոց և զուարակաց, և
որպ՟ բիւրաւորս գառանց պարարտաց ։
Այնպէս ընդունելի լիցին պատարագ-
մեր այսօր առաջի քո, զի կատարեալ
գտցուք զկնի քո, և չիք ամօթ յուսա-
ցելոց ՚ի քեզ ։

Եւ արդ՝ գամք զհետ քո ամ՟ սրտիւք
մերովք, երկնչիմք ՚ի քէն, և խնդրեմք
զերեսս քո • տր՟ մի յամօթ առներ զմեզ ։
Այլ արա առ մեզ ըստ հեզութե՟ քում,
և ըստ բազում ողորմութե՟ քում • փրկ-
եա զմեզ վն՟ սքանչելեաց քոց, և փա-
ռաւորեսցի անուն քո յաւիտեան ։
Յամօթ լիցին ամենեքեան, որ չարչա-
րեն զծառայս քո • ամաչեսցեն լիցին
բռնութ՟ք նոցա, և ամ՟ զօրութ՟ք նոցա
խորտակեսցին ։

Եւ ծանիցեն՝ զի դու ես տր՟ ած՟ մի-
այն, որ փառաւորեալդ ես ՚ի վերայ
ամ՟ տիեզերաց ։

Օրհնեալ ես դու տէր ած՟ հարցն
մերոց • գովեալ՝ և առաւել բարձ

բացեալ յաւիտեան ։
Եւ օրհնեալ է անուն ս̅բ փառաց քոց֊
գովեալ և առաւել բարձրացեալ յա֊
ւիտեան ։
Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սըր֊
բութեն քո ․ գովեալ ։
Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ ար֊
քայութեն քո ․ գովեալ ։
Օրհնեալ ես՝ որ նայիս 'ի քերովբէս՝
և հայիս յանդունդս ․ գովեալ ։
Օրհնեալ ես 'ի վերայ հաստատութե̅
երկնից ․ գովեալ ։
Օրհնեցէ՛ք ա̅մ գործք տ̅ն զտ̅ր ․ օրհ֊
նեցէ՛ք և բա՛րձր արարէք զնա յաւի֊
տեան ։
Օրհնեցէ՛ք երկինք զտ̅ր ․ օրհնեցէ՛ք և
բա՛րձր արարէք ։
Օրհնեցէ՛ք հրեշտակք տ̅ն ․ ջուրք որ
'ի վերոյ երկնից զտ̅ր ․ օրհնե ։
Օրհնեցէ՛ք զօրութիւնք տ̅ն ․ արեգակն
և լուսին զտ̅ր ․ օրհնե ։
Օրհնեցէ՛ք աստեղք երկնից ․ անձրևք
և ցօղք զտ̅ր ․ օրհնե ։
Օրհնեցէ՛ք ամենայն հողմք հուր և ջեր
զտ̅ր ․ օրհնե ։
Օրհնեցէ՛ք ցուրտ և սօթ , ցօղ և ձիւ֊
նաբեր զտ̅ր ․ օրհ ։

Օրհ֊

Օրհնեցէ՛ք սառն և պարզ, եղեամն և
ձիւն զՏ̃ր · օրհ ։
Օրհնեցէ՛ք տի՛ւք և գիշերք, լոյս և խա֊
ւար զՏ̃ր · օրհ ։
Օրհնեցէ՛ք ամպք և փայլատակունք՝
և երկիր զՏ̃ր · օրհ ։
Օրհնեցէ՛ք լերինք և բլուրք, և ամե֊
նայն բոյսք երկրի զՏ̃ր · օրհ ։
Օրհնեցէ՛ք աղբիւրք ծովք և գետք
զՏ̃ր · օրհ ։
Օրհնեցէ՛ք կէտք և ա̃մ կայտառք, որ
'ի ջուրս, և թռչունք երկնից զՏ̃ր · օրհ ։
Օրհնեցէ՛ք գազանք և անասունք, և
որդիք մարդկան զՏ̃ր · օրհ ։
Օրհնեսցէ՛ իսրայէլ զՏ̃ր · օրհնեսցէ՛
և բա՛րձր արասցէ զնա յաւիտեան ։
Օրհնեցէ՛ք քահանայք զՏ̃ր · օրհնե֊
ցէ՛ք և բար ։
Օրհնեցէ՛ք ծառայք Տ̃ն զՏ̃ր · օրհնե֊
ցէ՛ք և բար ։
Օրհնեցէ՛ք անձինք, և շունչք արդա֊
րոց զՏ̃ր · օրհնե ։
Օրհնեցէ՛ք ս̃բք՝ և խոնարհք սրտիւք
զՏ̃ր · օրհնե ։
Օրհնեցէ՛ք անանիա ազարիա և միսայ֊
էլ զՏ̃ր · օրհնեցէ՛ք և բա՛րձր արարէ՛ք
զնա յաւիտեան ։

## Օրհնութիւն մարիամու ա͞ծածնին :

Ղուկ. ա͞ :

Մեծացուսցէ անձն իմ զտ͞ր ·
և ցնծասցէ հոգի իմ աստու-
ծով փրկչաւ իմով :
Այց արար ՚ի վերայ խոնարհութե͞
աղախնոյ իւրոյ · այսուհետև երանի-
ցեն ինձ ա͞մ ազգք :
Արար ընդ իս մեծամեծս հզօրն · և
ս͞բ է անուն նորա :
Ողորմութի͞ արար ազգաց յազգս եր-
կիւղածաց իւրոց · արար զօրութիւն
բազկաւ իւրով :
Ցրուեաց զամբարտաւանս ՚ի մտաց
սրտից · և քակեաց զհզօրս յաթոռոց :
Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս ե-
լից բարութ͞բ · և զմեծատունս արձա-
կեաց ունայնս :
Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւ-
րոյ, յիշելով զողորմութիւն իւր :
Ո͞պ խօսեցաւ առ հարսն մեր, ը͞ աբ-
րահամու, և զաւակի ն͞ր յաւիտեան :

Օրհնութիւն պատարագաց հօրն յովհաննու
Միրզէ ։ Ձայն․ ա՟ ։

Օրհնեալ տ՟ր ա՟ծ իսրայէլի, որ յայց
ել․ և արար փրկութիւն ժողո֊
վրդեան իւրոյ ։
Յարոյց մեզ եղջիւր փրկութ՟ 'ի տանէ
դաւթի ծառայի իւրոյ․ որպէս խօսե֊
ցաւ բերանով սրբոցն՝ որ յաւիտենից
մարգարէքն էին ։
Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց, և
'ի ձեռաց ա՟մ ատելեաց մերոց ։
Առնել ողորմութ՟ առ հարսն մեր, և
յիշել զկտակարանս սրբութ՟ իւրոյ ։
Երդումն՝ զոր երդուաւ աբրահամու
հօր մերոյ․ տալ մեզ առանց երկիւղի
զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց ։
Պաշտել զնա սրբութ՟ և արդարութ՟ ա֊
ռաջի ն՟ր․ զա՟մ աւուրս կենաց մերոց ։
Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրե֊
լոյն կոչեսջիր․ գնասցես առաջի տ՟ն
պատրաստել զճանապարհս նորա ։
Տալ զգիտութ՟ փրկութ՟ ժողովրդեան
իւրոյ․ 'ի թողութ՟ ամենայն մեղաց
մերոց ։
Վ՟ս գթոյ ողորմութեանց ա՟յ մե֊
րոյ, որով երևեցաւ մեզ արեգակն 'ի
բար֊

բարձանց , լուսաւոր առնել զխաւարս մեր ։

Ծագել լոյս 'ի վ՛ր այսոցիկ , որ նըս-տեալք 'ի խաւարի , և 'ի ստուերս մա-հու . ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս խաղաղութե՛ ։

## Աղօթք ընթերցուածին ծնընդեանն ։ Ղուկ . Բ ։

Արդ արձակեա՛ զծառայս քո տէր՝ ըստ բանի քում 'ի խաղաղութի՛ . զի տեսին աչք իմ զփրկութի՛ քո , զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժո-ղովրդոց ։

Լոյս յայտնեցար հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում իսրայէլի ։



## Աղօթք Մանասէի Թագաւորին ։

Տ ամենակալ տ͞ծ աբրահամու իսահակայ յակովբայ՝ և զաւակի նոցա արդարոց · ամենակալ տ͞ր՝ թող զմեղս իմ ։

Որ արարեր զերկինս՝ և զերկիր , և զա͞մ զարդ նոցա · ամենակալ տէր ։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանաւ քո · փակեցեր զխորս , կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով · ամե ։

Որ ամենայն ինչ սարսէ և դողայ յերեսաց ահի զօրութե քո · ամենակալ տ͞ր ։

Անբաւ է մեծ վայելչութիւն փառաց սրբութե քո · սաստիկ է բարկութի սպառնալեացքոց 'ի վ͞ր մեղաւորաց · անչափ և անքննին են ողորմութիք աւետեաց քոց · ամենակալ ։

Դու տ͞ր բարձրեալ՝ գթած , երկայնամիտ , բազումողորմ · և զղջանաս 'ի վ͞ր չարեաց մարդկան · ամենակալ ։

Դու տ͞ծ՝ ոչ եդիր ապաշխարութիւն վ͞ն արդարոցն՝ աբրահամու իսահակայ և յակովբայ , որ ոչ մեղան քեզ · ամե ։

Այլ

Այլ եդիր ապաշխարութիւն վ՟ն իմ մե-ղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամէն:

Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից, 'ի բազմութենէ ա-նօրէնութեան իմոյ. ամենակալ:

Կորացեալ եմ ես 'ի բազմէ կապանաց երկաթեաց. և ոչ գոյ ինձ հանգիստ. ամէն:

Բարկացուցի զսրտմտու՟ն, և չար ա-ռաջի քո արարի. կանգնեցի պատկերս և բազմացուցի զցասումն. ամենակալ:

Եւ արդ տ՟ր խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, և խնդրեմ 'ի քաղցրութենէ քումմէ. ամենակալ:

Մեղայ՝ տ՟ր մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ:

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝ թո՛ղ ինձ տ՟ր, թո՛ղ ինձ. և մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամենակալ:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ տէր, և մի՛ յիշեր զչարիս իմ. և մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն 'ի ներքոյ երկրի չա-րեօք. ամէն:

Զի դու ա՟ծ՝ ա՟ծ ապաշխարողաց ես. և յիս ցո՛յց զբարերարութիւն քո, որ

ա-

անարժան եմ. ամենակալ :
Կեցուցես զիս ըստ բազում ողորմութե
քում . և օրհնեցից զքեզ զամենայն ա֊
ւուրս կենաց իմոց . ամենակալ :
Զքեզ տր՝ օրհնեն ամ զուարթունք
երկնից . և քո են փառք յաւիտեանս՝
ամէն :

Փառք հօր, և որդւոյ : Այժմ և
միշտ և :

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն տր, թող
ինձ զմեղս իմ :
Բազումողորմ տէր, ողորմեա ինձ :
Ած՝ քաւեա զիս զմեղաւորս ՚ի մե֊
ղաց, և կեցո :
Արարիչ իմ և յոյս ած, դթա յիս ՚ի
մեղուցեալ ծառայս . և ողորմեա ինձ
բազմամեղիս :
Ամենօրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս
ածածին մարիամ . բարեխօսեա առ
տէր վասն իմ մեղաւորիս :
Ամենայն սուրբք այ՝ բարեխօսեցէք
առ հայր ՚ի յերկինս վն մեր մեղաւո֊
րացս :
Քն որդի այ անոխակալ, ընկալ զա֊
ղաչանս մեր . զի ՚ի քեզ են ապաւի֊
նեալ անձինք մեր :
Յաղթօղ զօրութե՝ սուրբ և կենդա֊
նա

Նարար և պատուական խաչին քո տր՝
պահպանեա զմեզ:
Առաքեա՛ տր զհրեշտակ խաղաղութե̃
քո • որ եկեալ պահեսցէ զմեզ անխը-
ռովս 'ի տուէ և 'ի գիշերի:
Եւ մարդասիրութե̃ քո յիշեա զմեզ
տէր՝ յիշեա՛ զմեզ, յորժամ գաս ար-
քայութե̃ քո, և ողորմեա՛ մեզ:



## Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոյ 'ի Քրիստոս :

### Զոր արարեալ է սրբոյ տեառն Ներսիսի Հայոց կաթուղիկոսին :

Հաւատով խոստովանիմ, և երկրպագանեմ քեզ Հայր և Որդի՝ և Սուրբ Հոգի. անեղ և անմահ բնութեան, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս :

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ՝ և հալածիչ խաւարի. հալածեա 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց՝ և զանգիտութեան. և լուսաւորեա զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ 'ի հաճոյս, և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա ինձ բազմամեղիս :

Հայր երկնաւոր Տէր Ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդին քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ

յեր-

յերկինս և առաջի քո․ ընկա՛լ զիս ոպ̃ զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջինն՝ զոր մերկացայ մեղօք․ և ողորմեա՛ քո արարածոց, և ինձ բազմամեղիս ։

Որդի՛ այ̃ ած̃ ճշմարիտ, որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ՝ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն մարիամայ, վա̃ մերոյ փրկութե̃․ խաչեցար՝ և թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց՝ և համբարձար առ հայր․ մեղայ յերկինս և առաջի քո․ յիշեա՛ զիս ոպ̃ զաւազակն յորժամ գաս արքայութե̃ քով․ և ողորմեա ։

Հոգի՛ այ̃ ած̃ ճշմարիտ, որ իջեր 'ի յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութե̃ ըր̃ աւազանին․ մեղայ յերկինս և առաջի քո․ մաքրեա՛ զիս վերստին ա̃ծային հրով քո՝ որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն․ և ողորմեա ։

Անե՛ղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով․ մի̃ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ․ և ողորմեա ։

Տեսո՛ղ ամ̃ի, մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով․ ջնջեա՛ զձեռագիր յան-

յանցանաց իմոց, և դրեա՛ զանուն իմ՝ 'ի դպրութեն կենաց. և ողորմեա՛: Քննօղ գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութբ և անգիտութբ. Թողութեն շնորհեա՛ մեղաւորիս. զի 'ի ծննդենէ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի Ածութեանդ քո զգայարանօք իմովք, և ամենայն անդամովք մարմնոյս. և ողորմեա՛:

Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո Տր՝ ոչ ևս հայել յաղտս, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեն, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, և սրտի իմոյ ոչ խորհել զչարութեն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա՛:

Հո՛ւր կենդանի Քս, զհուր սիրոյ քո՝ զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութե քո 'ի սրտի

իմ.

իմում. և ողորմեա՛ ։

Իմաստութիւն Հօր յս͞. տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել՝ և խօսել՝ և գործել առաջի քո յա͞մ ժամ. 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա՛ զիս. և ողորմեա՛ ։

Կամեցո՛ղ բարեաց տ͞ր կամարար, մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա՛ ։

Արքայ երկնաւոր, տո՛ւր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս. և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողորմեա՛ ։

Խնամո՛ղ արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քո՝ զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փորձութենէ դիւաց, և 'ի մարդոց անիրաւաց, և յա͞մ վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա՛ ։

Պահապան ա͞մ քս͞, աջ քո հովանի լիցի 'ի վ͞ր իմ, 'ի տուէ և 'ի գիշերի՝ 'ի նստել 'ի տան՝ և 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել. զի մի՛ երբէք սասանեցայց. և ողորմեա՛ ։

Ա͞ծ իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս զա͞մ արարածս ողորմութե͞բ քով. քեզ

յանձն

յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ՝ յայսմհետէ մինչև յաւիտեան և ողորմեա՛ :

Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ զիս ՚ի չար սովորութե̃ց իմոց ՚ի բարի սովորութի. և բևեռեա՛ յոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենին, և զսէր արքայութե̃. զի զզջացայց ՚ի մեղաց, և գործեցից զարդարութի. և ողորմեա՛ :

Աղբի՛ւր անմահութե̃, աղբերացո՛ ՚ի որովայնէ իմմէ զարտասուս ապաշխարութե̃՝ որ̃պ պոռնկին. զի լուա՛ցից զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմեա՛ :

Պարգևի՛չ ողորմութե̃, պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով. և ս̃բ մարմնոյ և արեանն քո հաղորդութե̃ գալ առ քեզ. և ողորմեա՛ :

Բարերա՛ր տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս, քաղցրութե̃ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ը̃ չարութի այսոցն, որ են ՚ի ներքոյ երկնից. և ողորմեա՛ :

Լո՛յս ճշմարիտ ք̃ս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութե̃ տեսանել զլոյս

փառ-

փառաց քոց 'ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթեանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեան քո. և ողորմեա՛:

Դատաւո՛ր արդար, յորժամ գաս փառօք հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայիս քո, այլ փրկեա՛ զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսելի տուր ինձ զերանաւէտ կոչումն արդարոց՝ յերկնից արքայութիւն. և ողորմեա՛:

Ամենողո՛րմ տ՟ր՝ ողորմեա՛ ա՟մ հաւատացելոց 'ի քեզ, իմոց և օտարաց՝ ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց. և դարձո՛ զն՟ս 'ի չարեացն, զոր ունին վ՟ս իմ. զի ողորմու՟է քում արժանի եղիցին. և ողորմեա՛:

Փառաւորեալ տ՟ր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա՛ 'ի բարի զխնդրուա՛ծս իմ. բարեխօսութ՟բ ս՟բ ա՟ծածնին, և յովհաննու մկրտչին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային, և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին: Եւ սրբոց առաքելոցն՝ և մարգարէիցն և մարտիրոսացն. և սրբոց հայրապետաց՝

տաց՝ և ճգնաւորաց՝ և կուսանաց, և ամենայն սրբոց քոց՝ երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն՝ անբաժանելի որ երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից։ Ամէն.



# ՄԱՂԹԱՆՔ ՋՕՐԱՒՈՐՔ՝

Աւրհնաբաց Գեղեցրայնոյ ։

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ ։

Բան . ԾԷ ։

Ընկալ քաղցրութիւն տէր մեծ հզօր՝ զդառնացողիս զաղաչանս . մատի՛ր գթութիւն՝ առ ապաշխառեալս զիմօք ։ Փարատեա՛ ամենապարգեւ՝ զամօթական տխրութիւնս . բա՛րձ յինէն ողորմած՝ զանբերելի ծանրութիւնս . անջրպետեա՛ հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս . աւարեա՛ միշտ յաղթող՝ զխաբողին հաճութիւնս . բացադրեա՛ վերնային՝ զմոլելոյն մառախուղ . կնքեա՛ կեցուցիչ՝ զկործանչին ընթացմունս . ցրուեա՛ ծածկատես՝ զըմբռնողին չար դրամունս . խորտակեա՛ անքննին՝ զմարտողին դիմեցմունս ։ Տեառնադրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդյարկիս . պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարիս . գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս .

կեր-

կերպացն զքո նշանդ՝ 'ի հետս ելից
մաղթողիս • ամրացն քո աջովդ՝ ըղ-
հանգստեանս խշտի • մաքրեսցես 'ի
հաղբից՝ զծածկարան անկողնոյս •
պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ
անձն ոգւոյս • անխարդախ արտա-
ցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս •
կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ
երկնայնոյ • կարգեսցես 'ի դիմի՝ ընդ-
դէմ դիւացն դասու: Տուր հանգիստ
բերկրութեան մահահանդոյնս նիրհ-
ման՝ 'ի խորութեն գիշերիս, բարեխօ-
սութբ հայցուածոց սրբոյ ածածնիդ՝
և ամենայն ընտրելոց: Ամփոփեալ
պարուրեա զպատուհան տեսութեց
զգայարանացս իմաստից՝ անզարհու-
րելի զետեղմամբ 'ի ծփական խռո-
վութեց, կենցաղական զբաղմանց,
անրջական երազոց, խօլականաց ցնո-
րից, յիշատակաւ քո յուսոյդ անմխա-
ռելի պաշտպանեալ: Եւ սթափեալ
վերստին 'ի ննջմանէ ծանրութե՝ ամե-
նազգաստ արթնութեամբ, հոգեւո-
րոդ զուարթութեամբ 'ի քեզ արձա-
նացեալ, զայս ձայն մաղթանաց՝
բուրմամբ հաւատոց, քեզ ամենօրհ-
նեալ Թագաւոր փառաց անճառից՝

փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամ արարածոց՝ յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

## ԱՂՕԹՔ ԶՕՐԱՒՈՐ։

Նորին սրբոյն Գրիգորի։

Բան. խ։

Որդի այ կենդանւոյ օրհնեալ յամենայնի, հօրդ ահաւորի անքննին ծնունդ. որ անկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ։ Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փառաց, հալին մեղք. հալածին դեւք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանանային մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիւնք. տեղի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախչին խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մռայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան

նոն չարիքն . հալածին յուսահատու-
թիւքն . և թագաւորէ ձեռն քո ամե-
նակալ քաւիչդ ամենայնի ։ Որ ո՛չ
եկիր կորուսանել զմարդկան ոգիս՝
այլ կեցուցանել . Թո՛ղ ինձ զանթիւ
չարիսն իմ՝ բազում ողորմութ̅եդ .
զի դու միայն ես յերկնի անճառ , և
յերկրի անզննին . 'ի տարր գոյի՝ և
յեզրս ծագաց աշխարհի . սկիզբն ա-
մենայնի՝ և յամենայնի , ո՛մ լրմամբ
օրհնեալ 'ի բարձունս ։ Եւ քեզ ընդ
հօր և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝
յաւիտեանս ։ Ամէն ։

# ՑԱՆԿ ՍԱՂՄՈՍԱՑ՝

Ըստ կարգի այբուբէնից ։


Աղաղակեցէք առ ած՟ . կե ։
աղաղակեցէք առ տր՟ . ղթ ։
ապրեցո զիս տր՝ զի նուաղ . ժա ։
ապրեցո զիս տր՟ 'ի մարդոյ . ճլթ ։
առ գետս բաբելացւոց . ճլզ ։
առ քեզ տր՟ կարդացի ած՟ . իէ ։
առ քեզ տր՟ համբարձի զանձն . իդ ։
առ քեզ տր՟ համբարձի զաչս . ճիբ ։
ասաց անզգամն 'ի սրտի . ժդ ։
ասաց անզգամն 'ի սրտի . ծբ ։
ասաց տր՟ ցտր՟ իմ, նիստ ը՟ . ճթ ։
ասացի թէ պահեցից . լը ։
ասէ անօրէնն 'ի մեղանչել ը՟ . լե ։
ած՟ ականջօք մերովք . խդ ։
ած՟ ած՟ իմ՝ ես առ քեզ . կբ ։
ած՟ ած՟ իմ նայեաց առ իս . իա ։
ած՟ աստուծոց տր՟ խօսեցաւ . խթ ։
ած՟ եկաց 'ի ժողովս աստուծ . ձա ։
ած՟ զիրաւունս քո արքայի . հա ։
ած՟ մեր ապաւէն, և զօրութի . խե ։
ած՟ մերժեցեր, և աւերեցեր . ծթ ։

Ած մտին հեթանոսք 'ի ժառ. հը:
Ած յանուն քում կեցո. ծդ:
Ած յօգնել ինձ նայեաց. կթ:
Ած ողորմեաց մեզ, և օրհն. կզ:
Ած ո՞ քեզ նմանիցէ, մի. ձբ:
Ած վրէժխնդիր, տր ած. ղգ:
Ած օրհնութեն իմոյ, մի. ճը:
ասա օրհնեցէք զտր ծառայք: ճլգ:
Բազում անգամ մարտեան. ճիը:
բայց միայն՝ այ հնազանդ. կա:
բանից իմոց ունկն դիր տր. ե:
բարի է խոստովան լինել. ղա:
բարձր առնեմ զքեզ ած. ճխդ:
բարձր առնեմ զքեզ տր. լթ:
բղխեաց սիրտ իմ զբան. խդ:
Գոհացայց զքէն տր բոլոր. թ:
գովեա եմ զտր, և. ճխէ:
Դատ արա ինձ ած, և. խբ:
դատ արա ինձ տր, զի. իե:
դատեա տր զայնոսիկ՝ ոյք. լդ:
Եթէ ոչ տր էր առ մեզ. ճիգ:
Եթէ ոչ՝ տր շինէ զտուն. ճիզ:
Եկայք ցնծասցուք 'ի տր. ղդ:
Երանեալ են անբիծք 'ի. ճժը:
Երանեալ է այր, որ երկնչի. ճժա:
Երանեալ է այր, որ ոչ գնաց. ա:
Երանի ամենեցուն, ոյք եր. ճիէ:

երա

Երանի՛ որ խորհի զաղքատն · խ :
Երանի՛ ում թողութիւն · լա :
Երկինք պատմեն զփառս · ժը :
Զի՛ բարի, կամ զի՛ վայել · ճլբ :
Զի՛ պարծի 'ի չարութիւն · ծա :
Զողորմութիւնս քո տր յաւ · ձը :
Ընդէր խռովեցան հեթա · բ :
Ընդէր մերժեցեր ած · հգ :
Թէ արդարև զարդարութիւն · ծէ :
Իբրև զի բարի է իէլի · հբ :
'Ի դարձուցանել տն զգերի · ճիե :
'Ի խորոց կարդացի առ քեզ · ճիթ :
'Ի կարդալ իմում լուար · դ :
'Ի նեղութեան իմում ես առ · ճժթ :
'Ի տր յուսացայ, որպէս · ժ :
'Ի քեզ տր յուսացայ՝ մի · լ :
'Ի քեզ տր յուսացայ՝ մի · հ :
Լուարուք զայս ամ ազգք · խը :
Լուիցէ քեզ տր յաւուր · ժթ :
Լուր ած աղօթից իմոց յաղ · կգ :
Լուր ած աղօթից իմոց՝ և · կ :
Լուր տր արդարութեան · և · ժզ :
Խոնարհեցո տր զունկն քո · ձե :
Խոստովան եղերուք տն՝ և · ճդ :
Խոստովան եղերուք տն, զի · ճժէ :
Խոստովան եղերուք տն, զի · ճլե :
Խոստովան եղերուք տն, զի · ճե :

խոս

խոստովան եղերուք տն , զի . ՃԶ :
խոստովան եղէց քեզ բոլ . ՃԺ :
խոստովան եղէց քեզ բոլ . ՃԼԷ :
խոստովան եղիցուք ած . ՀԴ :
Ծափս հարէք ամ հեթա . ԽԶ :
Կեցո զիս ած , զի հասին . ԿԸ :
Հաճեցար տր ը երկիր քո . ՁԴ :
համբարձի զաչս իմ . ՃԻ :
համբերելով համբերի տն . ԼԹ :
հաւատացի զոր և խօսե . ՃԺԵ :
հիմունք նորա 'ի լեառն սբ . ՁԶ :
Ձայնիւ իմով ես առ տր . ՀԶ :
ձայնիւ իմով ես առ տր . ՃԽԱ :
Մատուցէք տն՝ որդիք այ . ԻԸ :
մեծ է տր . և օրհնեալ է . ԽԷ :
մի նախանձիր ընդ չարս . ԼԶ :
մինչև յերբ տր մոռանաս . ԺԲ :
Յայտնի է 'ի հրէաստանի . ՀԵ :
յարիցէ ած , և ցրուեսս . ԿԷ :
յելանելն իէլի յեգիպտ . ՃԺԳ :
յիշեա տր զդաւիթ , և զամ . ՃԼԱ :
յողորմութի՝ և յիրաւունս . Ճ :
Նայեցարուք ժողովուրդք . ՀԷ :
Ողորմեա ինձ ած . զի կոխ . ԾԵ :
ողորմեա ինձ ած , ողորմ . ԾԶ :
ողորմեա ինձ ած՝ ըս մեծի . Ծ :
ո յուսայ 'ի տր՝ ոպ լեառն . ՃԻԴ :

որ

որ բնակեալ է յօգնութեն · Ղ :
որ հովուեսդ իսրայէլի · Հ՟Թ :
ո՜րչ սիրելի են յարկք · Ձ՟Գ :
ո՜րչ փափագէ եղջերու · Խ՟Ա :
ունկնդիր ա՟ծ աղօթից · Ծ՟Դ :
ուրախ եղէ ես որք ասէին · Ճ՟Ի՟Ա :
Պահեա՛ զիս ա՟ծ իմ, զի · Ժ՟Ե :
պատրաստ է սիրտ իմ · Ճ՟Է :
Սիրեցի՝ զի լուիցէ տ՟ր · Ճ՟Ժ՟Դ :
սիրեցից զքեզ՝ տ՟ր զօրութեն · Ժ՟Է :
Տեառն է երկիր լրիւ · Ի՟Գ :
տ՟ր ապաւէն եղեր մեր · Ձ՟Թ :
տ՟ր ա՟ծ իմ՝ 'ի քեզ յուսա · Է :
տ՟ր ա՟ծ փրկութեն իմոյ · Ձ՟Է :
տ՟ր՝ զի բազում եղեն : Գ :
տ՟ր թագաւորեաց, բար · Ղ՟Ը :
տ՟ր թագաւորեաց, զվայել · Ղ՟Բ :
տ՟ր թագաւորեաց · ցնծաս · Ղ՟Զ :
տ՟ր՝ 'ի զօրութեն քում · Ի :
տ՟ր լոյս իմ, և կեանք իմ · Ի՟Զ :
տ՟ր լուր աղօթից իմոց՝ ուն · Ճ՟Խ՟Բ :
տ՟ր լուր աղօթից իմոց՝ և աղ · Ճ՟Ա :
տ՟ր, կարդացի առ քեզ · Ճ՟Խ :
տ՟ր հովուեսցէ զիս, և ինձ · Ի՟Բ :
տ՟ր՝ մի՛ սրտմտութբ քով · Լ՟Է :
տ՟ր՝ մի՛ սրտմտութբ քով · Զ :
տ՟ր՝ ո՛չ բարձրացաւ · Ճ՟Լ :

տ՟ր՝

Տր̅՝ մի՛ կացցէ 'ի խորանի․ ժէ։
տր̅ տր̅ մեր՝ զի սքանչելի է․ ը։
տր̅ փորձեցեր զիս, և ծան։ ճլը։
Ցնծացէ՛ք առ ա̅ծ, օգ․ ճ։
ցնծացէ՛ք արդարք 'ի տր̅․ լը։
Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց․ ծը։
Քեզ վայելէ՛ օրհնութի․ կդ։
Օրհնեա՛ անձն իմ զտր̅, տր̅․ ճդ։
օրհնեա՛ անձն իմ զտր̅, և ամ̅․ ճբ։
օրհնեա՛ անձն իմ զտր̅, օրհն․ ճխե։
օրհնեալ տր̅ ա̅ծ իմ, որ․ ճխդ։
օրհնեցէ՛ք զանուն տն̅․ օրհ․ ճլդ։
օրհնեցէ՛ք զա̅ծ 'ի սրբութե․ ճծ։
օրհնեցէ՛ք զտր̅ ամ̅ ազինք․ ճժզ։
օրհնեցէ՛ք զտր̅, զի բարի է․ ճխզ։
օրհնեցէ՛ք զտր̅ յերկինս․ ճխը։
օրհնեցէ՛ք զտր̅ յօրհնութի նոր․ ճխթ։
օրհնեցէ՛ք զտր̅ յօրհնութի նոր․ ղէ։
օրհնեցէ՛ք զտր̅ յօրհնութն նոր․ ղե։
օրհնեցէ՛ք մանկունք զտր̅․ ճժբ։
օրհնեցից զտր̅ յամ̅ ժամ․ լդ։

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ։

Որդ՝ արձակեա՛ զծառայս․ 338
Ես ասացի 'ի վերանալ․ 245
Զի հուր բորբոքեցաւ․ 120

'ի

| | |
|---|---|
| ՚Ի գիշերայ կանխէ հոգի · | 206 |
| ՚Ի նեղութեան իմում ես առ · | 286 |
| Ծաներուք և տեսէք, զի | 122 |
| Հաստատեցաւ սիրտ իմ · | 161 |
| Մեծացուսցէ անձն իմ · | 336 |
| Նայեցարուք երկինք · | 74 |
| Տ̃ր ամենակալ Ա̃ծ · | 391 |
| Տ̃ր զլուր քո լուայ · | 323 |
| Փոքր էի ես յեղբարս · | 330 |
| Օրհնեալ ես Տ̃ր Ա̃ծ · | 331 |
| Օրհնեալ Տ̃ր Ա̃ծ իսրայէլի | 337 |
| Օրհնեսցուք զՏ̃ր, զի · | 34 |
| Օրհնեցէք զԱ̃ծ յօրհ · | 285 |


Եօթն սաղմոսք ապաշխարութեան ։


| | |
|---|---|
| Տ̃Ր, մի՛ սրտմտութ̃բ քով · | Զ ։ |
| Երանի, ում թողութիւն եղև · | ԼԱ ։ |
| Տ̃ր, մի՛ սրտմտութ̃բ քով · | ԼԷ ։ |
| Ողորմեաց ինձ Ա̃ծ, ըստ · | Ծ ։ |
| Տ̃ր, լուր աղօթից իմոց, և · | ՃԱ ։ |
| ՚Ի խորոց կարդացի առ քեզ · | ՃԻԹ ։ |
| Տ̃ր, լուր աղօթից իմոց · | ՃԽԲ ։ |